



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ն Ո Ր

ԱԳՍԹՈՍԳԻՐԳԻ ՀԱՅԵՐԷՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ



Ն Ո Ր

ԱՂՕԹԱԳԻՐԻՔ ՀԱՅԵՐԷՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Ի Հ. ԳԱԻԻԹ Վ. ՈՒԶՈՒՆԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ




Վ Ի Ե Ն Ն Ա

Ի ՎԱՆՍ Պ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1859.

33953



ԱՌ ԱՂՕԹԱՍԷՐՍ

Ահա քեզի նոր աղօթագիրք,
կամ թէ ըսեմ գործի աստուած
ծային փառաբանութեան,
որ աս երկրի վրայ զԱս-
տուած օրհնես գովես հրեշ-
տակաց պէս իր անչափ բա-
րութեան համար: Ինչ մեծ
շնորհք կը սեպէիր քեզի, թէ
որ անանկ բարեկամ մը ունե-
նայիր, որ ուզած ատենդ քեզ
թագաւորին առջին հանէր,
ու անոր հետ խօսակցել տար:
Աս աղօթից գիրքն ըլլայ քե-
զի ան հաւատարիմ ու սիրելի
բարեկամը, որ քեզ չէ թէ
երկրաւոր թագաւորին, այլ
թագաւորաց թագաւորին հա-

մարձակ միշտ կը ներկայացը-
նէ, ու զթաժ հօր պէս սիրտդ
անոր բանալ կու տայ, ու զա-
նազան շնորհքներ կ'ընդունի
քեզի համար: Ա՛տռնու քեզ
սուրբ Աստուածածնայ կը տա-
նի, որդիական ընտանու-
թեամբ իր հետը խօսել կու
տայ. ու քեզ անոր մայրական
պաշտպանութեանը կը յան-
ձնէ, որ փորձանք մըն ալ
չհանդիպի քեզի: Տես հիմա,
որչափ հարկաւորութիւն ու-
նիս ասանկ բարեկամի մը՝ որ է
աղօթքը. ինչպէս Քրիստոս
ալ իր օրինակաւը ու խօսքովը
քեզ կը խրատէ. Յաղօթս
կայէք:

Արպէս զի զիւրին ըլլայ

քեզի հասկընալը, ու բոլոր ը-
 րած աղօթքներդ իմանաս, ու
 անով աւելի ջերմեռանդու-
 թեամբ ընես, աշխարհաբար
 դրած կը գտնաս աս նոր աղօ-
 թագիրքը: Աղօթք ըսելն ու-
 թիշ բան չէ, բայց եթէ, Աս-
 տուծոյ հետ խօսիլ. թէ որ
 ըսածդ դուն չես հասկընար,
 ու ըրածդ չես գիտեր, ինչպէս
 աղօթք ըրած կ'ըլլաս: Ասոր
 համար շատ անգամ սատա-
 նան աղօթքի ատեն ձանձրու-
 թիւն կը բերէ վրայդ, աղօթքդ
 մէկդի ձգել կու տայ. ինչու
 որ ըսածներդ չհասկընալուդ
 միտքդ ուրիշ տեղ կ'երթայ,
 ու դուն ուրիշ տեղ կ'ըլլաս,
 սրտիդ մէջ աղօթքի սէրը կը

մարի, ու խեղճ հոգիդ զուրկ
կը մնայ Աստուծոյ պարգեւ-
ներէն, որնոր պիտի ընդունէիր :

Աս ամէն չարեաց դէմ աս
միայն բաւական ըլլայ քեզի :
Յառաջ քան աղօթքի սկսիլդ
խելքդ վրադ ժողովէ, ու միաքդ
բեր աստուածային ներկայու-
թիւնը, որ Աստուծոյ առջին
կեցեր կը խօսիս, որ սրտիդ
մէջը եղածներն ալ կը տեսնէ
ու կը քննէ : Թէպէտ Աս-
տուած ամէն տեղ միշտ ներ-
կայ է, բայց աղօթք ըրած ա-
տեն բոլորովին հոն է, ու քեզ
մտիկ կ'ընէ : Աս գրքին մէջ
գրած աղօթքները կարդացած
ատենդ՝ գրավարժութիւն ը-
ներու պէս չկարդաս . այլ հան-

գարտ ու մտադրութեամբ,
 եւ սրտիդ մէջէն բղխեն աղօթք-
 ները: Աւ պարգեւատուն Աս-
 տուած երբոր ասանկ ջերմե-
 ռանդ աղօթքդ կը տեսնէ, ու-
 զածէդ աւելի խնդիրքդ կը կա-
 տարէ, ինչպէս որ կ'ըսէ սուրբ
 Ներսէս Ենորհալին:

Ան ատենը քու աղօթք-
 ներդ ալ հրեշտակ ամենա-
 կալին ոսկի խնկանոցի մէջ ի-
 բրեւ անուշահոտ խօւնկ Աս-
 տուծոյ առջին կը հանէ, որ
 միշտ պատրաստ է մեր հեծու-
 թիւնները ու աղաչանքները
 լսելու: Յիշէ Յիսուսին ըսա-
 ծը. արդեօք կը գտնուի մէ-
 ջերնիդ կ'ըսէ մէկ հայր մը՝ որ
 իր տղան հաց խնդրէ իրմէն,

ու ան ալ հացի տեղ քար
 տայ, կամ ձուկ ուղէ, ու օձ
 տայ: Թէ որ երկրաւոր հայ-
 րերը իրենց զաւակները կը սի-
 րեն, ու անոնց աղէկ պարգե-
 ներ կու տան, որչափ աւելի
 հայրն երկնաւոր իր սիրելի որ-
 դիներուն մեծ մեծ բարիքներ
 կը պարգեւէ, երբոր բոլոր սրբ-
 տանց իր հայրական գթու-
 թեանը կը դիմեն խոնարհու-
 թեամբ: Միայն ջանա՛ որ՝ ա-
 ղօթքիդ միշտ փոյթ ըլլաս,
 չըլլայ թէ կամաց կամաց թու-
 լանաս, այլ յարատեւէ միշտ,
 յոյսդ Աստուծմէ մի կարեր,
 ու դարձեալ աղօթք ըրէ:
 Թէպէտ խնդիրքնիս չառնունք
 նէ ալ կ'ըսէ Ասկեբերան հայ-

րապետը, շարունակենք ա-
ղօթքնիս որպէս զի առնունք .
ընդունելէն վերջն ալ շարու-
նակենք, ինչու որ առինք :

Սուրբ հայրերուն հասարակ
խօսքն է, թէ աւելի Աստուած
կ'ուզէ մեզի բարիք տալ, քան
թէ մենք իրմէ կը խնդրենք .
անանկ է նէ երբոր շնորհք մը
կ'ուզենք Աստուծմէ՝ ու չենժ
ընդունիր, նշան է թէ՛ ինչպէս
որ պէտք է չենք խնդրած : Եւ
թէ ինչ պիտի խնդրենք Աս-
տուծմէ, Վրիստոս մեզի կը
սորվեցրնէ . նախ Աստուծոյ
արքայու թիւնը խնդրեցէք կ'ը-
սէ . ինչու որ մարմնաւոր բա-
ները արդէն Աստուած կու
տայ ձեզի :

Ա երջապէս աս է իմ մի մի-
 այն փափաքս՝ ու աշխատու-
 թեանս վախճանը, որ աս գրը-
 քովս վայելչօրէն աղօթք ընես,
 ու քու հոգւոյդ փրկութեան
 հարկաւոր եղած բարիքները
 ստանաս: Ընդունէ ուրեմն
 նոյն սիրով, որով քեզի կ'ըն-
 ծայուի դարձեալ աս

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Ա Ղ Օ Թ Գ

Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Անկողինէն ելած ատեն :

Աստուած Աստուած իմ, ես առ
քեզ առաւօտ առնեմ, ծարաւե-
ցաւ առ քեզ հոգի իմ. քանի-
պատիկ եւս եւ մարմին իմ : Ահա
ով Աստուած իմ, ասանկ կը կանչէ
ծարուած հոգիս քեզի դէմ, աս
առտուան ծագած լուսին հետ
լուսաւորէ հոգւոյս խաւարն, ու
մտքիս լոյս տուր՝ որ իմ հոգւոյս
ալ առաւօտ ըլլայ, որ քու անհա-
մար բարիքներդ տեսնեմ : Ո՛ւր որ
աչքս վերցընեմ նայիմ, ամէն
արարածք ինծի յորդոր կ'ըլլան
զքեզ օրհնելու ու փառաբանելու :
Ահա կը տեսնեմ քու սքանչելի
ձեռացդ գործած արեւն, որ միշտ
իր ատենին իր պայծառ լոյսը կը
տարածէ. որպէս զի ես ալ տես-

նելով քու ինձի համար ստեղծած բաներդ՝ յիշեմ բարերարութիւնդ, զարմանամ քու մարդասիրութեանդ վրայ, ու բորբոքեալ սիրով բոլոր սրտանց քեզի շնորհակալութիւն մատուցանեմ: Նոյնպէս թռչուններն իրենց անուշերգովն իս կը հրաւիրեն, որ ես ալ իրենց հետ ամենաբարի արարիչդ փառաւորեմ: Ա՛յլ աստուած իմ, անանկ է նէ դուն շարժէ շրճունքս, ու բաց բերանս, որ իմ անարժան լեզուս ալ քեզի օրհնութիւն երգէ. ու այդչափ բարերարութիւններուդ շնորհակալ ըլլայ. Զողորմոս-Նի-նոս + ո րէք յա-ի-րեան օրհնեցից:

Այս ճշմարիտ Յիսուս Բրիստոս, որ աշխարհք գալովդ մեզ լուսաւորեցիր, ու աստուածգիտութեան լոյսն ամէն տեղ տարածեցիր. լուսաւորէ հիմա իմ կուրութիւնս, որ ճանչնամ քու բարիքներդ ու քեզի ապերախտ չըլլամ:

Գու՛ն աստուածային բերնովդ ըսիր՝
ո՛վ որ իմ ետեւէս կու գայ, խա-
ւարներու մէջ չի պտըտիր. ո՛վ
փրկիչ իմ, ահա սրտանց կը բաղ-
ձամ աս օրս քու ետեւէդ երթալ,
ու քեզի հնազանդիլ. որ իմ չար
ախտերուս խաւարներուն մէջը չի
մնամ: Ո՛վ գթած Յիսուս իմ, մէկ
բան մը միայն քէնէ կը խնդրեմ
այսօր, ու գիտեմ որ՝ պատրաստ
ես տալու. մասնաւոր շնորհք մը
տուրինձի, որ աս օրս քեզ չի վըշ-
տացրնեմ. քու ամենայաղթ զօրու-
թեամբդ ամէն մեղաց առիթներէն
իս պահէ, ու ամէն փորձանքներէն
իս խալըսէ. ինչու որ ես խիստ
տկար եմ, ու ողորմութեանդ կա-
րօտ: Ո՛վ Աստուած իմ, իմ տկա-
րութիւնս դուն զօրացուր, որ կա-
րող ըլլամ աս օրս ինչպէս որ քու
պատուիրաններդ կը հրամայեն
այնպէս անցրնել. ու քու շնորհօքդ
աս բարի առաջադրութեանս վրայ
հաստատ կենամ, ամէն:

Աղօթք շնորհակալութեան:

Մենասուրբ Երրորդութիւն հայր եւ որդի եւ սուրբ հոգի, խոնարհութեամբ քու աստուածութեանը առջեւը երկրպագութիւն կ'ընեմ, ու սրտանց կը խոստովանիմ, որ դուն մինակ ամէն պատուոյ ու ծառայութեան արժանի ես: Քեզի փառք կու տամ. քու կին անվախճան թագաւորութեան ու երանութեանդ համար, քու անթիւ բարիքներուդ համար՝ որն որի սկզբանէ աշխարհի հրեշտակներուն ու մարդիկներուն վրայ ցըցուցիր, ու մինչեւ հիմակ ալ միշտ կը ցուցնես, գոհութիւն ու փառաբանութիւն կը մատուցանեմ: Ար գոհանամ աս հաւատոյ լուսոյն համար, որն որ ինձի ալ՝ որ քու ստեղծուածներուդ մէջ ամենէն ետքինն եմ՝ ծագեցիր: Շնորհակալ կ'ըլլամ, ու կը յարգեմ բոլոր սրտանց քու գթութիւնդ, որ ինձի այնչափ

չնորհք տուիր, ու բարի ազգեցու-
թիւններովդ սիրտս քեզի քաշե-
ցիր. քեզ սիրելու, ու քեզ սիրե-
լով յաւիտենական երանութիւնն
ստանալու արժանի ըրիր:

Ընդհատուած Նստուած իմ յոյսս
ու իմ վերջին վախճանս. սրտանց
զքեզ կը սիրեմ քու անսահման
բարութեանդ ու երանութեանդ
համար: Երանի թէ՛ ինձի ալ ա-
նանկ բորբոքած սէր մը պարգեւե-
իր, որ ես ալ քեզ այնպէս սիրե-
լու կարող ըլլայի, ինչպէս որ
հրեշտակները երկինքը քեզ կը
սիրեն, ու անչափ սուրբեր ալ եր-
կրի վրայ սիրեցին, ու հիմակ ալ
արքայութեան մէջ կը սիրեն: Իմ
ունեցած սէրս անոնց ունեցածէն
չատ վար է. անոր համար իմ ան-
կատար ու տկար սիրոյս տեղը կը
նուիրեմ Յիսուսի սրտին ամենա-
կատար սէրը, ու իր սուրբ վա-
րուցը՝ չարչարանացն՝ ու մահուան
անսահման արդիւնքը. որպէս զի

այսօրուան նուէրս քեզի հաճոյ եւ
ընդունելի ըլլայ: Եւ որպէս զի քու
ամենասուրբ տէրութեանդ առ-
ջեւը բոլորովին պարապ չերեւամ,
ահա իմ կամքս ամէն իր ախոր-
ժակներովն ու բաղձանքներովը
քեզի կը նուիրեմ. ու հաստատ
կ'առաջագրեմ, որ ամէն իմ կարու-
ղութիւններս քու փառացոյ հա-
մար ծառայեցընեմ: Պատրաստ եմ
տէր իմ ամէն ձախորդութիւնները՝
նեղութիւնները՝ որ ինձի կը խըր-
կես ընդունելու, ու ամէն կերպ
խաչը սիրով քաշելու. ինչպէս որ
իմ փրկչիս օրինակն ինձի կը սոր-
վեցընէ:

ՎՍԹԱԾ աշուրներովդ նայէ տէր
իմ խեղճ սրտիս բաղձանաց, ու
օրհնէ իմ առաջագրութիւններս,
որ քու շնորհօքդ կարող ըլլամ
կատարել, ու քեզ սիրել յաւի-
տեանս յաւիտենից:

Սաղմոս :

Կանխեցին աչք իմ առաւօտուց ի
խօսել ինձ զբանս քո :

Օ, արթն զաչս իմ, եւ նայեցայց ի
սքանչելիս օրինաց քոց :

Պանդուխտ եմ ես յերկրի. մի
թագուցաներ յինէն զպա-
տուիրանս քո :

Օ, ճանապարհս մեղաց ի բնաց արա
յինէն. եւ յօրէնս քո ողոր-
մեան ինձ :

Ըռաջնորդեան ինձ ի շաւիղս պա-
տուիրանաց քոց, զի ընդ նո-
սա հաճեցայ :

Խոնարհեցն զսիրտ իմ ի վկայու-
թիւնս քո, եւ մի յագա-
հու թիւն :

Դարձն զաչս իմ, զի մի տեսից
զնանրու թիւն, ի ճանապար-
հս քո կեցն զես :

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ .
եւ իրաւունք քո օգնեսցեն
ինձ :

Հարսկան :

Եղո՞ս փառաց բանդ Աստուած, որ
ծագեցեր ի մեզ զԼոյս գիտու-
թեան կարգամքառ քեզ տէր, ա-
ռաւօտու աղօթք մեր հաճոյասցին
քեզ :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ մարիամ :

Աղօթք :

Ո՛վ հայր բարեգութ, հազար գո-
հութիւն կու տամ քեզի անթիւ
բարերարութեանդ համար, որ ան-
արժան ծառայիդ համարձակու-
թիւն տուիր, որ քեզ երկնի եւ
երկրի տէրդ ինձի հայր կանչեմ :
Ահա աչքս երկինք վերցրնելու ար-
ժանի չէի, հիմա հրեշտակներուն
կարգն անցուցիր : Մեղաւոր ան-
ձինս առաւօտեան աղաչանքը քու
ամենասուրբ ականջիդ անուշ կու
գայ . կ'ուզես որ ես ալ հրեշտակ-

ներուն հետ քեզ փառաբանեմ:

Արդ տէր իմ, եւ արարիչ իմ, ես որ հող ու մոխիր եմ, աստուանց արթըննալուս պէս քու աստուածութեանդ առջին կ'իյնամ. ու կը խնդրեմ, որ ինձի երկնային սիրով վառուած նոր սիրտ մը տաս, որ ինչպէս պէտք է նէ քեզ սիրեմ: Անանկ մը քու սուրբ կամացդ հետ սիրտս կապուի, որ մինակ քու կամքդ կատարելու բաղձայ, ու անկէ ամենեւին չբաժնուի: Աւելի կ'ուզեմ բիւր անգամ մեռնիլ, քան թէ տեսնել՝ որ սիրտըս մեղքով քէնէ հեռացեր, ու արարածներու հետ զբաղեր է:

Անոր համար հիմակ ամէն բանէն յառաջ խոնարհութեամբ կը խնդրեմ տէր իմ. տժւբ ինձի անաստուածային բորբոքեալ սէրը, որ կարող ըլլամ բոլոր օրս ի փառս քո անցընել: Ան ինձի կը սորվեցընէ, թէ ինչպէս իմ ընկերիս հետ պիտի վարուիմ. ինչ-

պէս իմ մարմինս պիտի կառավարեմ: Ան բերնիս պահապան կը դնէ, որ անկարդ խօսքեր չխօսիմ. հայհոյութիւն կամ սուտ երգում չընեմ: Ան կը սորվեցընէ պարկեշտ նայելուն կերպը, ու կը զգուշացընէ ականջս՝ որ բամբասանքի, զրպարտութեան, ու անմաքուր խօսքեր լսել չսիրէ: Անանկ է նէ շնորհէ ինձի տէր իմ աս մեծ պարգեւս, որով արժանի ըլլամ քեզի ճշմարիտ որդի ըլլալու, ու քեզ ալ ինձի հայր կոչելու, ինչպէս որ դուն սորվեցուցիր:

Աղօթք տու սուրբ Աստուածածինն:

Ո՛վ քաղցրագութ մայր ողորմութեան, ահա քու ամենասուրբ ռաքդ ինկած ողորմելի մեղաւոր մը, որ գիտնալով քու մայրական սէրդ՝ բոլորովին քեզի ապաստան եղեր է. ո՛վ գթած տիրամայր, նայէ հոգւոյս խեղճութեանը, ու գթու.

Թիւն ըրէ : Ամենուն բերնէն լսեցի,
որ մեղաւորներու ապաստան, յու-
սահատներու յոյս, ու անօգնա-
կաններու օգնական կը կոչուիս .
ուրեմն իմ ապաստանս՝ իմ յոյսս՝
ու իմ օգնականս գուն կս : Ա՛վ
սուրբ Աստուածածին, քու սիրելի
աստուածորդւոյդ հետ իս հաշտե-
ցո՛ւր, ու քու ջերմեռանդ ծառա-
ներուդ համբանքին մէջ իս ընդու-
նէ : Մասնաւոր շնորհք մը տո՛ւր
ինձի այսօր, ու վառէ իմ սիրտս
քու ճշմարիտ ջերմեռանդութեան
սիրովդ, որ բոլոր սրտանց քեզ
սիրեմ, ու պատուեմ, եւ քեզի ար-
ժանի որդի ըլլամ :

Ա՛վ մայր աստուծոյ, աս աղա-
չանքս՝ որ հիմա կ'ընեմ, չէ՛ թէ
մինակ աս օրուան համար է . հապա
բոլոր իմ կենացս համար է : Մայր
ողորմութեան, գթած աչուրնե-
րովդ ինձի նայէ . քու կին ողորմած
ձեռքդ վրայէս մի վերցրներ, ու
հզօր բարեխօսու թիւնովդ ամէն

չարփորձանքներէն իս պահէ պահ-
պանէ: Ա՛վ քաղցր Մարիամ, կ'ա-
ղաչեմ միշտ օգնական եղիր ինձի,
ու զիս թող մի տար, մանաւանդ
մեռնելու ատենս. ինչու որ իմ
պաշտպանս՝ իմ յոյսս՝ ու իմ օգ-
նականս դուն ես. ամէն:

Աղօթք առ պահապան հրեշտակն:

Ա՛վ փառաւորեալ պահապան
հրեշտակ իմ երկնային, որ իմ
ստեղծուած ատենէս Աստուծոյ
բարերարութիւնովը դուն իմ հոգ-
ւոյս ու մարմնոյս պահապան ու
պաշտպան դրուեցար. կ'աղաչեմ
քեզի, որ իմ աղօթքներս ու բարի
առաջագրութիւններս դուն քու
ձեռքովդ Աստուծոյ աթոռին առ-
ջելը տանիս, ու Աստուծմէ ինձի
համար մասնաւոր շնորհք ընդու-
նիս, որ միշտ իր հայրական սիրոյն
մէջը մնամ: Գուն իս միշտ սատա-
նային փորձութիւններէն խալըսէ.

ու ամէն բանիս գործքիս մէջ միշտ
ինձի օգնութիւն ըրէ, որ ամէն
գործքերս մինակ ի փառս աստու-
ծոյ ըլլայ: Երբոր միտքս խաւար
մտածմունքներ ունենալու ըլլայ,
դուն լուսաւորէ. երբոր տարա-
կուսանքի մէջ իյնամ, իմ հոգւոյս
փրկութեան օգտակար եղածն ին-
ձի սորվեցնուր. իմ խղճմտանքս
միշտ դրդէ, որ մեղքէն ու մեղքի
առիթներէն հեռու կենամ, ու
բարի գործքերու հետ ըլլամ: Ա՛յ
հրեշտակդ աստուծոյ, կ'աղաչեմ
քեզի մահուանս ատեն իս մի թո-
ղուր. չար սատանային ձեռքէն իս
ազատէ. որպէս զի արքայութեան
մէջ քեզի հետ արժանի ըլլամ իմ
ամենաբարի արարիչս օրհնելու
ու փառաբանելու, ամէն:

Ա Ղ Օ Թ Բ

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

Ամենախնամ տէր իմ եւ Աստու-
ած, ես քու ստեղծուածդ խոնար-
հութեամբ գետինն ինկած քեզի
անլուելի գոհութիւն կը մատուցա-
նեմ, որ զիս ողջ առողջ մինչեւ աս
իրիկունս հասուցիր: Աւելի իս
պարտական կը ճանչնամ քեզ օրհ-
նելու ինձի լոյս տալուդ համար, որ
իմ մտքիս անփարատելի խաւարը
փարատեց. ու իմացուց՝ թէ որ
բանը քեզի հաճելի է, ու իմ հոգ-
ւոյս փրկութեան օգտակար: Այսօր
քու շնորհօքդ ինչ բարի գործ որ
ըրի, ամէնն ալ քեզի կ'ընծայեմ,
ինչու որ ես իզմէ աղէկ բան մը
չունիմ. ու առանց քու օգնակա-
նութեանդ բան մ'ալ չեմ կրնար
գլուխ հանել. իսկ ինչ պակասու-
թիւն որ այսօր ըրի, ամենէն կը
գարշիմ. եւ կ'առաջադրեմ, որ

ամէն ձեռքէս եկածն ընեմ անոնց-
մէ զգուշանալու համար: Գու տէր
իմ սրտագէտ, գիտես իմ տկարու-
թիւնս, կը ճանչնաս զմեզ, որ
պղտիկութենէ ի վեր միշտ մեր
բաղձանքը դէպ ի չար կ'երթայ.
Գուն քու անհուն ողորմութեամբդ
իմ սիրտս փոխէ, որ ճշմարիտ
բարին սիրէ, ու միշտ ջանայ քու
սուրբ պատուիրաններդ պահել,
ամէն:

Այլ աղօթք:

Վի բարեգութ տէր իմ եւ արա-
րիչ, քանի որ քու անուշ յիշա-
տակդ ու բարերարութիւններդ
միտքս կ'իյնայ, սիրտս անանկ մը
քու սիրովդ կը լեցուի, մինչեւ կը
բաղձամ՝ որ քեզ երկնից սուրբե-
րուն հետ գիշեր ցորեկ փառաբա-
նեմ: Անոր ներհակ մարմինս տկար
է, ու չի կրնար արթուն կենալ.
անոր համար պէտք է որ չափաւոր
քնով հանգչի: Բայց կը խնդրեմ

քէնէ ո՞վ արարիչ տուրնջեան եւ
գիշերոյ, որ աս գիշերս սիրտս
միշտ քեզ սիրելու ու օրհնելու
արթուն մնայ: Արող չըլլայ տէր
իմ սատանան իս փորձել իր չար
հնարքներովը. կարող չըլլայ մար-
մինս, որ միշտ հոգւոյս դէմ գլուխ
վերցընել կ'ուզէ, բան մը մտածել՝
որ քուկին ամենաբարի կամացդ
դէմ ըլլայ: Երկինքին սուրբերը,
մանաւանդ պահապան ու պաշտ-
պան սուրբս իս ամէն փորձանքնե-
րէն պահեն, որպէս զի առտուանց
առողջ մարմնով ու արթուն հոգ-
ւով արթնցած ատենս, դարձեալ
կարող ըլլամ օրհնութեամբ բե-
րանսբանալ, ու քեզ հրեշտակնե-
րուն ու երկնից սուրբերուն հետ
փառաբանել, ամէն:

Սաղմոս:

Ընձն իմ ի ձեռս քո է յամենայն
ժամ. եւ զօրէնս քո ես ոչ
մոռացայ:

Ընկալ զծառայ քո ի բարի. զի մի
ամբարտաւանք զգուեսցեն
զիս:

Սպասեցին աչք իմ փրկութեան
քում տէր, եւ բանից ար-
դարութեան քո:

() Գնութիւն ինձ ի տեառնէ եկես-
ցէ. որ արար զերկինս եւ
զերկիր:

Որպէս ոչ ննջէ եւ ոչ ի քուն
երթայ պահապանն իսրայէլի:

Տէր պահեսցէ զքեզ, եւ տէր ըն-
կալցի աջով ձեռամբ իւրով:

Ըրեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ,
եւ մի լուսին ի գիշերի:

Տէր պահեսցէ զքեզ յամենայն
չարէ, պահեսցէ տէր զանձն
քո:

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն
ննջեսցուք եւ զարթիցուք,
զի դու տէր միայն առանձին
յուսով քո բնակեցուցեր
զմեզ:

33953

Հարական :

Օ կրեկոյի աղօթս մեր ընկալ տէր
բարեխօսութեամբ ծնողի քո, եւ
առաքեալ ի մեզ տէր զօգնութիւն
ի լեռնէ սրբոյ քումէ :

Աղօթք առ Յիսուս փրկիչ :

Տէր իմ Յիսուս Քրիստոս, երբոր
կը յիշեմ իմ անցած կեանքս կը
սարսիմ ու կը դողամ : Անչափ
տարիներ մէկ աչք բանալու գոցե-
լու մը պէս անցան գացին, իսկ թէ
որչափաւելի պիտի ապրիմ, ամենե-
ւին անստոյգ է : Աս միայն գիտեմ,
թէ երբ որ է մահը իր յաղթու-
թեան նշանը մեր վրայ օր մը պիտի
տընկէ : Թէ որ գործած բաներս
միտքս բերելու ըլլամ, բոլորովին
յուսահատութեան մէջ կ'իյնամ.
Իսկ չյիշելը՝ նոյն իսկ դատապար-
տութիւն է : Տես տէր իմ, ու ողոր-
մէ իմ խեղճութեանս, դուն ես

իմ արարիչս ու փրկիչս, ես քու կին
ստեղծուածդ եմ, ու քու պատ-
կերիդ նմանութիւնը, մանաւանդ
քու պատուական արեանդ գինը:
Իս այնչափ սիրեցիր որ, մինչեւ ին-
ծի համար երկինքէն ինջար, անա-
րատ սուրբ կուսէն մարմին առիր.
անանկ սոսկալի չարչարանքներ
քաշեցիր, ու խաչին վրայ բոլոր
արիւնդ թափելէն ետեւ՝ գլուխդ
խոնարհեցուցիր ու մեռար: Հիմա-
կուրնէ քանի որ շունչս վրաս է,
քանի որ լեզուս կապած, ու զգայու-
թիւններս կորսուած չեն, կ'աղա-
չեմ քեզի բարի Յիսուս, որ քու
արեանդ գինը չդատապարտես.
քու կին պատկերդ չանարգես. ու
քու ստեղծուածդ երեսէ չձգես:
Իրաւցրնէ մեղաւոր եմ, քեզ վշտա-
ցուցեր եմ, ու շատ հեղ ահեղ
դատաստանդ ու զարհուրելի
դժոխքին տանջանքները քանի տեղ
չեմ դրած. անոր համար արժանի
էի մեծամեծ պատիժներ ընունե-

լու : Բայց ես հիմա իբրև թէ կե-
 նացս վերջին րոպէն հասած ըլլալով
 ամէն մէկ մեղքերուս վրայ մեղայ
 գոչելով սրտանց կը զղջամ . դուն
 ալ տէր իմ , անոնք բոլորովին ջնջես ,
 ու թողութիւն շնորհես : Յօդե՛ս յիս
 ճշարհս , եւ սուրբ եղէց . լու՛ս եւ քան
 զքե՛ն սպիտակ եղէց : Գթե՛մ Յիսուս ,
 քեզի կը յանձնեմ իմ սիրտս՝ հո-
 գիս ու մարմինս , որ դուն ստեղ-
 ծեցիր , ու անգին արեամբդ գնե-
 ցիր . քու ամենայաղթ սուրբ խա-
 չիդ զօրութեամբն իս զօրացո՛ւր ,
 ու միշտ պահպանէ . հոգւոյս աչուր-
 ներուն լոյս տուր , որ մահացու
 մեղքերու մէջ չննջէ : Գո՛ւ եւ
 պաշարպան իմ որէ՛ր , եւ ի յետս քո յանձն
 առնեմ զհոգի իմ , ամէն :

Կ Ի Ի Ր Ա Կ Է

Վ Ա Ս Ն Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հայր՝ մեր, որ յերկինս ես:

Հայր բարեգուծ, երբոր մարդուս
համար ըրած քու բարերարու-
թիւններդ միտքս կը բերեմ, չեմ
գիտեր թէ՛ ինչպէս քեզի շնորհա-
կալ ըլլամ, ու քեզ օրհնեմ: Տէր՝
որ կողմ որ դառնամ. ինչ բանի
վրայ որ նայիմ, քու անսահման
բարութիւնդ կը տեսնեմ: Գուն
ստեղծեցիր ինձի համար աշխարհ-
քըս բոլոր իր զարդերովը: Գաշ-
տերը խոտերով ու ծաղիկներով
զարդարեցիր. լեռները ծառերով
ու կենդանիներով բազմացուցիր.
օգը զարդարելու համար գեղեցիկ
թռչուններ ստեղծեցիր. նոյնպէս
ծովն ալ զանազան ձուկերով լե-

ցուցիր. որպէս զի ասոնք վայելելով
քեզի անլուելի գոհութիւն մատուցանեմ,
ու քեզ աւելի սիրեմ: Ինչպէս մեծ են քու գործքերդ
տէր աստուած, որ մարդուս խելքը
չիհասնիր: Եւ երբոր իմ մեղքերովս
արքայութեան ճամբէն հեռացայ,
ողորմութեանդ դուռն ինծի դէմ
գոցեցի, ու վերջին երանութենէն
զրկուեցայ. դու ո՞վ հայր գթած,
դարձեալ վրաս ի գութ շարժելով
խրկեցիր քու միածին որդիդ.
որպէս զի իս անէծքէ ազատէ,
մտքիս մթութիւնը հաւատոյ լուսով
պայծառացրնէ, տկարութիւնս
զօրացրնէ, ու ինծի երկնից
ճամբան առաջնորդէ. Զինչ ասց
արիստոս — ք աբահան ընդ ասեմայնի,
չոր է — էր ինչ: Հայր երկնաւոր,
հայր բարեգութ, այդչափ ըրած
բարերարութեանցդ դէմ քեզի
ինչ փոխարէն հատուցանեմ: Աորսուած էի,
գտար. մեռած էի հոգևով,
ողջընցուցիր. դժոխքի ու անիծից

որդի էի, արքայու թեան ու օրհնու-
թեան ժառանգ ըրիր. ու ես քեզ
այսպէս շուտով կը մոռնամ: Ար-
չափ որ մեծ է քու երախտիքդ,
այնչափ ալ մեծ է իմ ապերախ-
տութիւնս. որ անբան անասնոյ մը
պէս մէյ մը միտքս չեմ բերեր իմ
Աստուածս, իմ արարիչս, ու իմ
փրկիչս: Թէ որ մէկ զգայարանք մը
միայն պակաս ըլլար, ու ան մէկը
ինծի պարգեւէր, մինչեւ որ մեռնէի
իս անոր պարտական կը ճանչնայի,
իսկ դուն ինծի ամբողջ կենդանու-
թիւն տուիր. ամէն զգայարանքներս
կատարեալ ստեղծեցիր. անանկ է
նէ որքան պարտականութիւն ու-
նիմ քեզ օրհնելու, ու քեզի ան-
դադար շնորհակալ ըլլալու այնչափ
երախտեաց համար, որ ինծի ամէն
օր կ'ընես:

Մ, հա քու ամենասուրբ ոտքդ
ինկած կը խնդրեմ քէնէ հայր եր-
կնաւոր, որ մինչեւ հիմա ըրած
յանցանքներուս թողութիւն տաս.

ու քեզի գէմ ըրած ապերախտու-
թիւններուս ներես: Մասնաւոր
շնորհք տուր ինձի տէր իմ, որ
զքեզ աստուածդ ու երկնի եւ
երկրի արարիչդ արժանապէս կա-
րող ըլլամ ինձի հայր անուանել.
ինչպէս որ ինձի սորվեցուցիր. ու
ես ալ արժանի ու հնազանդ որդի
ըլլամ քեզի գթած հօրդ, որ յեր-
կինս ես:

ԱՅԼ ԱՂՕԹՔ ՎԱՄՆ ԿԻԻՐԱԿԻ

Սուրբ եղիցի անուն քո:

Ո՛վ տէր իմ եւ արարիչ, դուն
հրամայեցիր ինձի, որ շաբթու մէջ
օր մը սուրբ պահեմ. դադրիմ
աշխարհական զբաղմունքներէս, ու
իմ պարտքս աղէկ մտածեմ: Սուրբ
եղէք ըսիր, ինչպէս որ ես ալ սուրբ
եմ: Այնպիսի վարք պէտք է ու-
նենալ, որ տեսնելով անհաւատնե-
րը զարմանան. ու քեզ փառաու-
րեն, որ մեզի այսպիսի շնորհքներ

կը պարգեւես: Գարձեալ չար
քրիստոնեաներն ալ ամչնալով
ղղջումի գան. ու իրենք զիրենք
առաքինութեան ճամբան գարձը-
նեն: Անանկ է նէ տուր ինծի, որ
այսպիսի սուրբ օր մ'իմ վերջին
վախճանս ճանչնամ, որուն համար
որ զիս ստեղծեր ես, ու բոլոր շա-
բաթն ան վախճանին համաձայն
վարք ունենամ: Իմ վերջին վախ-
ճանս տէր իմ արարիչ, դուն ես:
Իմ սիրտս պիտի աղատ պահեմ
ամէն ժամանակաւ որ բաներէն, ու
ամէն արարած՝ որ իմ ծառայու-
թեանս համար ստեղծեր ես, ինծի
պիտի յորդոր ըլլան քեզ սիրելու.
որ այնպիսի բաներ ինծի պարգեւե-
ցիր աս աշխարհքս վայելելու, ու
անդի աշխարհքը պատրաստած ես
բոլորովին քեզ ինծի տալու ար-
քայութեան մէջ: Գուն լուսաւորէ
իմ միտքս, ու շիտկէ, որ միայն
քեզի նայի. չըլլայ թէ արարածա-
կան գեղեցկութիւնը զիս խաբէ ու

քեզմէ իս հեռացրնէ: Երկրորդ
պարտքս է լուսաւոր վարք ունենալ
անհաւատներուն ու չար քրիստո-
նեաներուն առջին, նոյնը գործքով
ալ կատարելու համարինձի շնորհք
սուր. ինչու որ իմ խիղճս ներսէն
կը վկայէ, որ շատ անգամ բարի
օրինակ տալու տեղ, քու անունդ
սուրբ ընելու տեղ, քրիստոնէի
անունը նախատուեր է իմ չար
վարութիւնքս: Քրիստոնէին պարծանքն
է եղբայրսիրութիւնը, թշնամեաց
բարիք ընելը, ջնայհոյելը, երգում
չընելը, ու պարկեշտութիւնը: Տճուր
ինձի աս առաքինութեանց շնորհք-
ները, ու իս զօրացճուր. ես ալ կ'ա-
ռաջագործեմ քու ողորմութեանդ
գործակից ըլլալ. իմ եղբայրս ինձի
պէս սիրել. իս հալածողներուն
բարիք ընել. ամենեւին ջնայհոյել.
սուտ երգում չընել. վերջապէս
ինչ որ դուն սուրբ աւետարանին
մէջ հրամայեցիր. որպէս զի ինչպէս
որ յառաջ քու սուրբ անունդ իմ

վրաս ու իմ գէշ վարուցս համար
նախատուեցաւ ասկէց ետքը տես-
նելով իմ դարձս ու քրիստոնէի
վայել վարքս՝ փառաւորեն, ուսուրբ
ընեն քու փառաւորեալ անունդ:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ՎԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳԹՈՒԹԵԱՆ

Եկեսցէ արքայութիւն քո:

Աստուած իմ, արարիչ երկնի եւ
երկրի, թէ որ հազարաւոր տարի-
ներ ապրելու ըլլայի, եւ ամենեւին
ուրիշ բան չիմամտայի, բայց եթէ
քու ստեղծած բարիքներդ, իրաւ-
ցրնէ ամէն ըսպէ նոր նոր բաներ կը
գտնայի զարմանալու քու իմաստու-
թեանդ վրայ, ու գոհանալու քու
բարերարութեանդ համար: Գուն
ստեղծեցիր առաջին մարդը, ու
փոքր պատուիրան մը տուիր միայն
մէկ ծառէ մը չուտելու. բայց ան-

Հնազանդ գտնուելով պատուիրա-
նիդ, դրախտէն գուրս վանտուե-
ցաւ, ամէն ունեցած շնորհքները
կորսընցուց ու ողորմելու թեան մէջ
մնաց: Թէ որ գթալով չիխրկէիր
միածին որդիդ, ո՛վ կրնար արքայու-
թիւն մտնել. վասն զի ազամայ
մեղքը արքայութեան գուռն ամե-
նուն ալ գոցած էր: Ա՛վ հայ գթու-
թեան, այնչափ մեծ բան մտածե-
ցիր մեզ փրկելու համար, մեզ ար-
քայութիւն մտցընելու համար, որ
խելքէ մտքէ գուրս բան է: Եւ
ինչպէս կրնայի ես հաւտալ, թէ
քու մէկհատիկ որդիդ մարմին
առնու, այնպէս խոնարհ ձեւով
մարդոց հետ ելլէ նստի, մինչեւ
կարծես թէ մոռցած ըլլայ իր աս-
տուածութիւնը. ու ետքը չարա-
գործի մը պէս նախատանօք ու չար-
չարանօք խաչուի, թէ որ սուրբ
եկեղեցին ինծի սորվեցուցած չըլ-
լար: Այնք է զարմանալով գոչեմ.
Որպէս զի Բաղոմէ է ողորմութիւն

Կապույտ-խեան Կո որեր՝ շոր պահեցեր
երկի-ղածաց Կոց: Չէր կրնար քու
իմաստութիւնդ ուրիշ ճամբայ մը
գտնել՝ մեզ արքայութեան ժա-
ռանգ ընելու համար: Միայն Բրիս-
տոսի արեան մէկ կաթիլը, մէկ սրը-
տանց աղաչանքը, մէկ խոնարհու-
թեան ներգործութիւնը բաւական
չէր մեզ աստուծոյ հետ հաշտե-
ցրնելու: Բայց ներէ՛ համարձակու-
թեանս ո՞վ տէր, իմ. ինչու որ ես
հող ու մոխիր եմ. ինչպէս կրնամ
քու դատաստանիդ խելք հասցը-
նել: Աս միայն գիտեմ, որ մեր վրայ
ունեցած սէրդ ու գթութիւնդ
չափ չունի եղեր, որ այսպիսի կերպ
բանեցուցիր մեզ փրկելու համար:
Ուզեցիր, որ քու որդիդ երկայն
ատեն մեզի հետ ըլլայ, ու մեզի աս
աշխարհիս վրայ արքայութեան ճամ-
բուն առաջնորդ ըլլայ: Աս ամէն ե-
րախտեաց համար ինչ կրնամ ես
մեղաւորս հատուցանել. բայց եթէ
գեալին ինկած քեզի շնորհակալ

ըլլալ ու շնորհք խնդրել, որ աս
ամէն բարերարութիւններուդ յի-
շատակը պահեմ ու ջանամ քու
միածին որդւոյդ օրինակներուն
հետեւելով երկնից արքայութեան
արժանի ըլլալ, ու սուրբ երրորդու-
թիւնը միշտ փառաւորել:

Ե Ր Ե Բ Ե Ա Բ Թ Ի

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ Ի ՎԻՇՏՍՍ

Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ
յերկրի:

Տէր իմ ամենախնամ, մենք որչափ
կարճամիտ ենք ու անխելք, որ եր-
բոր բան մը ուզածներնուս պէս
չըլլայ, կամ ձախորդութիւն մը
գլուխնիս գալու ըլլայ, քէնէ կը
սկսինք տժգոհալ. իբրեւ թէ մեզ
երեսէ ձգերես, ու մեզի չես խրղ-
ճեր: Ա՛խ Աստուած իմ, որչափ
կուրութեան մէջ մնացեր ենք, որ

մեր փրկութեան օգուտը չենք
ճանչնար. բարիքը չարիք կը կար-
ծենք, ու ողորմութիւնն անգթու-
թիւն կը սեպենք: Մեզ սիրելուդ
համար նեղութիւն կը խրկես մեր
վրայ, որ աշխրբիս բաներուն հետ
սիրտերնիս չկապենք, քեզ չի-
մոռնանք ու առաքինի ըլլանք. բայց
մենք վարձք մը չստանելէն ետեւ՝
մեղաց տէր կ'ըլլանք: Ի՞նչ բանով
հաճոյ եղան քեզի ան բիւրաւոր
մարտիրոսները, խոստովանողներն
ու այնչափ արդար հոգիները. եւ
ինչպէս ան փառաւոր ու հրաշալի
պսակները կրցան առնուլ արքայու-
թեան մէջ, բայց եթէ նեղութիւ-
նով ու տառապանքներով: Թէ որ
աս աշխրբիս մէջ քու սիրոյդ հա-
մար չարչարանքներուն ու նեղու-
թիւններուն համբերած չըլլային,
ինչպէս կրնային արքայութեան
փառքին արժանի ըլլալ: Անանկ է
նէ կ'աղաչեմ ո՞վ Աստուած իմ,
փարատէ աս մթութիւնը վրայէս.

ու շնորհք տուր ինձի, որ ասկից
ետեւ իս բողոքովին քու սուրբ
կամացդ յանձնեմ, ու ամէն ատեն՝
մանաւանդ նեղութեան ու փոր-
ձանաց մէջ եղած ժամանակս աս
սուրբ աղօթքս բերնէս անպակաս
ընեմ, որն որ դու տէր իմ Յիսուս
սորվեցուցիր ինձի: Տէր՝ եթէ կ'ու-
զես, որ նեղութիւններու ու վշտե-
րու մէջ չարչարուիմ. եղիցին կամք
քո: Տէր՝ եթէ կ'ուզես, որ միշտ
աղքատութեան ու կարօտութեան
մէջ մնամ. եղիցին կամք քո: Տէր՝
եթէ կ'ուզես, որ բանս գործքս չի-
յաջողի, ու զանազան փորձանքնե-
րու մէջ իյնամ. եղիցին կամք քո:
Տէր՝ եթէ կ'ուզես, որ երկար ա-
տեն ցաւագարութիւն քաշեմ,
հիւանդ մնամ, եղիցին կամք քո:
Օրհնեալ ըլլայ քու սուրբ կամքդ,
ինչպէս երկինքն անանկ ալ երկրի
վրայ: Միայն նեղութեան հետ համ-
բերութիւն ալ տուր ինձի, որ կա-
լող ըլլամ քու սիրոյդ համար ան

նեղութիւնները քաշել ու քեզ
օրհնել՝ ըսելով: Եղիցին կամք քո
որպէս յերկինս եւ յերկրի:

ՉՈՐԵԲՇԱԲԹԻ

ՎԱՍՆ ԱՊԸԻԻՆԵԼՈՅ ԵՆՍՏՈՒԱԾ

Ջհաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր:

Ամենակարող բարեգոհութ աստու-
ած, որչափ պարտական եմ ես
քեզի շնորհակալ ըլլալու քու ան-
սահման բարութեանդ համար, որ
իս ալ մինչեւ աս օրս հայրաբար կը
կերակրես ու կը պահպանես, ու կը
յուսամ որ ծերութեանս ատենն
ալ թող չես իտար, որ իմ մար-
մնաւոր հացս պակսի, որուն աս աշ-
խրըքիս անապատին մէջ կարօտ եմ:
Ինչ փրկիչ իմ, անապատին մէջ
իգութ շարժելով ժողովրդոց վրայ,
միայն հինգ հացով հազարաւոր

մարդիկներ կերակրեցիր, սորվեցը-
նելով ինձի՝ որ մարմնոյս շատ հոգ
չտանիմ. ու հեթանոսներու պէս
գիշեր ցորեկ չիմտմրտամ՝ թէ ինչ
ուտեմ, կամ ինչ հագնիմ. ինչու
որ իմ երկնաւոր հայրս արդէն ինձ-
մէ աւելի աղէկ գիտէ՝ թէ բոլոր
ատ բաներն ինձի հարկաւոր են.
Այլ տե՛նեցո՛ւն ի թեղ յո՛ւսան ար, ե-
րո՛ւ րաս կերակո՛ւր նոցա ի ժամո՛ւ:
Ահա ամէն օր այնչափ բիւրաւոր
կենդանիներու կերակուր կուտաս,
ու կը պահպանես, որոնք որ ինձի
համար ստեղծեցիր. որչափ աւելի
իմ վրաս խնամ կը տանիս, որ մի-
այն քեզի համար ստեղծեցիր: Ու-
րեմն բոլոր իմ յոյսս ու ակնկալու-
թիւնս դուն ես, ինչ բարիք որ ին-
ձի կը խրկես մարմնոյս համար,
հազար փառք տալով քու ողորմած
ձեռքէդ կ'ընդունիմ ու քու բա-
րութեանդ շնորհակալ կըլլամ:

Իայց գիտես տէր իմ, ինչպէս
որ մարմինս հացի կարօտ է, ասանկ

ալ հոգիս հոգեւոր կերակուր կ'ու-
ղէ. ու հոգւոյս կերակուրը քու
սուրբ մարմինդ ու արիւնդ է, որ
բոլոր աշխրջքիս կեանք կը պար-
գեւէ: Գուն խոստացար անսուտ
բերնովդ, թէ ո՛վ որ քու ճշմա-
րիտ մարմինդ կը ճաշակէ, ու սուրբ
արիւնդ կը խրմէ, յաւիտեանս ա-
պրի: Ա՛վ գթած Յիսուս, տո՛ւր
ինձի աս երկնային հացը, որ անով
հոգիս կերակրեմ, ու զօրացընեմ,
որ միշտ քու շնորհացդ մէջ կեն-
դանի ըլլայ. տո՛ւր ինձի աս հրեշ-
տակային հացը, որ շատ անգամ
քեզի հետ միանամ, ու քու սէրդ
չմոռնամ: Ա՛ղաչեմ տէ՛ր իմ,
տո՛ւր ինձի ան մեծ շնորհքը. այս
ինքն՝ մեռնելու ատենս աս սուրբ
հաղորդութենէն զիս մի՛ զրկեր.
առանց սրբութիւն առնելու թող
մի՛ տար՝ որ անմխիթար մեռնիմ:
Անոր համար կենդանութեանս
ատենը խիստ ջերմեռանդ կ'ըլլամ
սրբութեան, ու շատ անգամ կ'ու-

զեմ՝ հաղորդուիլ, որպէս զի մահ-
ուանս ատենն արժանի համարիս
ինձի գալու, ու պատուական մար-
մնովդ ու արեամբդ իս զօրացընե-
լու սատանային փորձանքներուն
դէմ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՎԱՄՆ ԱՊԱՅԻՆԱՐՈՒԹԵԱՆ

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր:

Ո՛վ բազմագու՛թ արարիչ իմ,
այսօր յիշելով իմ՝ խեղճութիւնս
ու աղքատութիւնս, քու առջեւդ
կ'ելեմ՝ ողորմութիւնդ շարժելու
համար: Թէ որ դուն մեզ արդա-
րութեամբ, դատելու ըլլաս, ո՛վ
կրնայ ապրիլ: Ինչ է իմ բոլոր
կեանքս, բայց եթէ մեղք մեղքի
վրայ դիզել, ու սխալմունք սխալ-
մանց վրայ աւելցընել: Ինչպէս
որ ջուրն ամէն արգելքը կը վանէ,

ու անդադար դէպ ի վար կը վազէ,
ասանկ ալ իմ անկարգ բաղձանք-
ներս իս իբրեւ թէ գերի ըրած կը
քաշկրռտեն քու պատուիրաննե-
րուդ դէմ գործելու: Ար խոստո-
վանիմ քու առջեւդ, որ իմ ան-
կարգ բաղձանքներս իմ վրաս աւե-
լի կ'իշխեն, քան թէ քու սուրբ
շնորհքդ: Թէ որ երբեմն սիրտս
զղջում ունենալու ըլլայ, կամ բարի
առաջադրութիւն մը միտքս դնե-
լու ըլլամ, այնչափ տկար եմ իմ
անկարգ յօժարութիւններս զըս-
պելու, մինչեւ երբեմն յուսահա-
տութեան խորհուրդներ միտքս
կ'իյնայ՝ ամենեւին անհոգ ըլլալու
ինք զինքս շտկելէն: Մէկ կողմա-
նէ աշխարհք իր չար օրինակաւն
իս մեղքի կը յորդորէ, մէկալ կող-
մանէ մարմինս իմ ընտանի թշնա-
միս իս կը դրդէ: Եւ այնպէս կը
դրդէ, մինչեւ անկարելի է՝ որ
մարդ իր ուժով կարող ըլլայ յաղ-
թել: Ահա տէր իմ, աս կերպա-

րանքով կուգամ քու առջեւդ, իմ
պակսութիւններս գլխէս վեր են.
մի միայն յոյս ունիմ՝ որ դուն գիտ-
նալով մեր տկարութիւնը, ար-
դարութեամբ մեր պարտքը չես
պահանջեր. մանաւանդ թէ շատ
անգամ չտեսնելէն կուգաս, կը
ներես ու կը քաւես: Աս ասկէց
ետքը կը ջանամ, որ կամաւ չվըշ-
տացընեմ քեզ իմ արարիչս. բա-
ւական են անցած ատենուան ը-
րածներս: Գիտեմ՝ որ պատրաստ ես
ձեռք տալ ամենուն ալ, որոնք որ
այսպիսի մոլութիւններու գերի են
եղած, ու ազատիլ կ'ուզեն. կը
զղջան, ըրածներնուն վրայ կը ցա-
ւին, ու կ'առաջադրեն մէյ մ'ալ
չընելու: Անանկ է նէ խրկէ իմ
վրաս ալ ան սուրբ շնորհքը, որն
որ կրնայ իմ միտքս շտկել. որ
աշխարհային ունայնութեան չհե-
տեւիմ. ու սիրտս քու սիրովդ
բորբոքեմ, որ քու պատուիրան-
ներդ պահեմ. ու մարմինս հոգւոյս

իշխանութեան տակը ձգեմ: Տո՛ւր
ինձի ան շնորհքը, որն որ առա-
քեալներն ունեցան. տո՛ւր ինձի
ալ այնպիսի զղջում, որն որ Պե-
տրոս առաքեալն ունեցաւ, երբ
հաւուն խօսելը լսեց: Խոցէ՛ իմ
սիրտս ալ նոյն աստուածային սի-
րովդ, որ յիշելով իմ անթիւ մեղ-
քերս անմիտար լամ ողբամ, որ
քեզ արարչիդ այնչափ ապե-
րախտ դանուած եմ: Այնպէս մը
բորբոքէ քու սէրդ իմ սրտիս մէջ,
որ մէյ մ'ալ չմարի:

Ո Ւ Ր Բ Ա Թ

ՎԼՍՆ ՍԻՐԵԼՈՅ ԶԹԾՆԱՄԻՍ

Որպէս եւ մեք թողու՞ք մերոց պար-
տապանաց:

Տէր իմ Յիսուս Գրիստոս, որ
աշխարհք գալովդ ամէն առաքի-
նութեան ճամբաներն օրինակաւ ու

խօսքով ինձի սորվեցուցիր: Գուն
հրամայեցիր ինձի, որ թշնամիներս
սիրեմ, ու իս հալածողներուն
բարիք ընեմ, բայց կը խոստովա-
նիմ աէր իմ, որ ես շատ անգամ
ասպատուիրանդ չպահեցի. թշնա-
միներս չսիրելէն ետեւ՝ ինձի բա-
րիք ընողներուն ալ ապերախտու-
թիւն ըրի: Ես որ հող ու մոխիր
եմ, միշտ մեղանչելով քեզի թշնա-
մի եղած եմ, բայց դուն ինձի կը
ներես, ու կ'ապրսպրրես՝ որ ես ալ
իմ թշնամիներուս ներեմ: Ա՛վ
աստուած իմ, չի գտնուիր աշխրջքիս
մէջ իմ ըրած ապերախտութեանս
նմանը, որ այնպէս մեծ ու սաստիկ
ըլլայ, ինչպէս որ ես ըրած եմ քե-
զի դէմ՝ քու սուրբ պատուիրան-
ներդ չպահելով: Գուն տուիր ին-
ձի կենդանութիւն, խելք ու միտք,
ու ամէն զգայարանքներս. որպէս
զի անոնցմով միայն վքեղ օրհնեմ,
սիրեմ, քեզի ծառայեմ ու քեզի
մինակ հաճոյըլլամ: Ամէնմէկ սըր-

տիս շարժելն ու շունչ առնելս
դուն կը պահես. ի վերայ այսր
ամենայնի ես կը համարձակիմ քու
տուած ու ժողդ քեզի դէմ ելլել,
քու այսչափ բարիքներուդ ապե-
րախտ ըլլալ ու թշնամանալ:

Հիմա կը ճանչնամ իմ անօրէ-
նութիւններս, ու սրտանց կը զըզ-
շամ ըրած ապերախտութիւննե-
րուս վրայ: Ա՛խ սիրելի փրկիչ, աս
ուրբաթ օրս զիս փրկելու համար
խաչ ելար, ու արիւն թափեցիր
անտանելի ցաւերով. քեզ խաչ
հանողներուն համար ալ երկնա-
ւոր հօրէդ թողութիւն խնդրե-
ցիր՝ ըսելով. Հայր, Խոյ Դոցս, զե
ոչ գիտեն՝ զինչ գործեն: Ա՛վ գթած
Յիսուս, իմ մեղքերուս ալ թո-
ղութիւն խնդրէ, որ շատ անգամ
քեզ խաչ հանեցի. ու անոնցմէ
աւելի ապերախտ գտնուեցայ: Գի-
տեմ տէր իմ, որ ներողամիտ ես,
ու դիւրաւ կը թողուս իմ պարտ-
քերս. բայց կ'աղաչեմ, ինձի շը-

նորհք տուր, որ ես ալ ինծի պարտական եղողներուն սիրով ներեմ ու թշնամիներս սրտանց սիրեմ: Թէ որ դուն իմ մեծամեծ ապերախտութիւններուս թողութիւն տալու պատրաստ ես, որչափ աւելի ինծի ալ կը վայլէ, որ իմ թշնամիներուս սիրով թողութիւն տամ, ու ձեռքէս եկածին չափ բարիք ընեմ:

Անանկ է նէ կը խնդրեմ տէր իմ, իս մի թողուր. քու օգնութիւնդ վրայէս պակաս մի ըներ. որպէս զի նախատական խօսքերով ուրիշին սիրտը վերաւորելէն զգուշանամ. ու չըլլայ թէ՛ իմ անհոգութեամբս ուրիշին վնաս մը հասցընեմ: Տ՛ուր ինծի խոնարհ վարմունք մը, որ ամենեւին մէկը կոպտութեամբ մը ինծի թշնամի չընեմ: Զօրացո՛ւր իս քու շնորհօքդ. ու վառէ բորբոքէ սիրտս քու երկնային սիրովդ, որ սրտանց սիրեմ իմ թշնամիներս. ու կարող ըլլամ

քեզի հետ ըսել. Հայր, Լոյս Կոյս,
դէ ոչ գիտեն՝ դե՞ռ գործեն: Ար ջա-
նամ ասկէց ետքը քու սուրբ շը-
նորհօքդ, որ ամէն թշնամի եղող-
ները մէկզմէկու հետ հաշտեցընեմ:
Ար բազմամ տէր իմ, որ վերնար
ամենեւին աշխարհքէս թշնամու-
թիւնն, ու ամէն մարդ մէկզմէկ սի-
րէին եղբայրական սիրով. ինչպէս
որ դուն պատուիրեցիր մեզի:

Շ Ա Բ Ա Թ

ՎԱՄՆ ՅԱՂԹԵԼՈՅ ՓՈՐՉՈՒԹԵԱՆՑ

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն.
այլ փրկեա՛ ի շարէ:

Հայր բարեգուծ, որչափ անթիւ
եներախտիքդ որ անդադար քեզմէ
կ'ընդունիմ: Ա՛ր մայր անանկ
խստասիրտ կրնայ ըլլալ, որ իր
գրկի որդեակն երեսէ ձգէ. բայց
թէ որ մարդկան մէջ գտնուելու

ալ ըլլայ, դուն զիս չես մոռնար.
ու այնպէս իս կը խնամես, ինչպէս
թէ աս աշխրջքիս մէջ մինակ ես
ըլլայի: Ես որ այսչափ բարերարու-
թիւններ քէնէկ'ընդունիմ, որչափ
սաստիկ ապերախտ պէտք էի սե-
պուիլ, թէ որ միտքէս միայն ան-
ցընէի, որ դուն իս փորձութեան
մէջ կը ձգես, ու թող կու տաս՝
որ ես յաւիտենական կորստեան
վտանգի մէջ իյնամ: Չէ, տէր իմ
չէ, ասանկ չեմ հաւտար. հեռանան
միտքէս ասանկ սատանայական
մտածութիւններ: Գիտեմ որ դուն
իս այնպիսի փորձութեան մէջ չես
ձգեր, որն որ իմ կարողութենէս
վեր է: Ար հաւտամ առանց տա-
րակուսելու, որ փորձութեան հետ
չնորհք ալ կը խրկես, որ համբե-
րելու կարող ըլլամ: Ար խրկես իմ
վրաս փորձութիւն, որ համբերել
ս'ըլիմ, անցած մեղքերուս հա-
մար թողութիւն գտնամ, ու առա-
քինի ըլլալու առիթ ունենամ: Ի-

րաւցընէ պէտք եմ շնորհակալ
ըլլալ, որ իմ վրաս երբեմն փոր-
ձութիւն կը խաւրես. ինչու որ
առանց ձախորդութեան ինչպէս
կրնայի համբերութիւն սորվիլ.
Ինչպէս կրնայի ճանչնալ՝ որ իս կը
սիրես. ինչպէս կրնայի սրտանց իս
քեզի յանձնել ու քեզի ապաւի-
նիլ: Անանկ է նէ փորձութեան
հետ ինծի ուժ ալ պարզեւէ տէր
իմ, որ չըլլայ թէ տրտնջամ, ու
անհամբեր գտնուիմ. չըլլայ թէ
փոքր նեղութիւն մը մոռցընէ ինծի
քու անթիւ բարիքդ, որն որ ամէն
օր կը վայելեմ: Գուն տո՛ւր ինծի
օձին խորագիտութիւնը, որ յա-
ռաջագոյն իմանալով վտանգն, ան-
կէց փախչիմ. չըլլամ յանձնա-
պաստան, ինչու որ վտանգը սիրո-
ղը, վտանգի մէջ կը կորսուի: Իսկ
ան փորձութիւնն, որ դուն կը
խրրկես, ո՛վ արարիչ իմ բազմա-
գութ, ամենեւին չեմ տարակու-
սիր, որ պատրաստ ես օգնելու, որ

փորձութեան տակը չիմնամ, այլ
մանաւանդ շնորհք ալ կու տաս
յաղթելու: Արդ՝ խրկէ վրաս ինչ
որ կ'ուզես, յաջողութիւն կամ
ձախորդութիւն, առողջութիւն
կամ հիւանդութիւն, բարեկամ-
ներ կամ թշնամիներ. վերջապէս՝
ինչ որ կ'ուզես, ու իմ հոգւոյս
փրկութեան աղէկ կը սեպես. քու
շնորհքդ պատրաստ եմ ընդու-
նելու. թէ որ դուն իմ հետս ը-
լաս, ո՛վ կրնայ իմ սրտիս մսիթա-
րութիւնը կոտրել: Թո՛ղ դան ամէն
նեղութիւններ. Աստուծո՛վ ի՞նչ
անցից ընդ պարեսպս, ամէն:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ի ՊԱՏԻԻ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Կ Ի Ի Ր Ա Կ Է

Աղօթք սուրբ Աստուածածնայ բարեխօսութեամբք մեղաց թողութիւն ընդունելու համար:

Ո՛վ քաղցրագութ տիրուհի իմ, նայէ մէյ մը գթած աչուրներովդ մեղաւոր հոգւոյս խեղճութեանը, որն որ տարակուսեալ հոգւով քեզի կը դիմէ: Թէպէտ ես արժանի չեմ, որ դուն վրաս նայիս ու ողորմիս ինձի. բայց գիտեմ, որ քու սիրելի որդւոյդ մահը՝ որն որ մեղաւորներուն փրկութեան համար յանձն առաւ, քու կին գթած սիրտդ ալ մասնաւոր կերպով մը ի գութ շարժեց մեղաւորներուն օգնելու, ու անոնց պաշտպանութիւն ընելու: Ո՛վ մայր ողորմու-

Թեան անանկ է՛նէ նայէ խեղճ մե-
ղաւորիս ալ, ու ողորմէ՛ ինծի: Կրաւ
որ մեղքերս անթիւ են, ու գործած
անօրէնու թիւններս խիստ մեծ են.
բայց քու կարողութեանդ ու ողոր-
մութեանդ չափ չկայ. կ'աղաչեմ՝
մայր Աստուծոյ, քու կին մէկ հա-
տիկ որդւոյդ սիրոյն համար ինծի
օգնութիւն հասիր. երկընցուր քու
բարերար ձեռքդ ողորմելի մեղա-
ւորիս վրայ, որ ինք զինքը բոլոր
քեզի յանձներ է: Գիտեմ ո՛վ
մայր ողորմութեան, որ մեղաւորի
մը օգնելը քեզի մեծ ուրախութիւն
է. ուրեմն օգնէ՛ ինծի ալ. ինչու որ
մեղանչելովս Աստուծոյ շնորհքը
ու միանգամայն հոգիս կորսընցու-
ցի, սատանային ձեռքը գերի ըրի:
Հիմա ես բոլորովին քեզի ապաւի-
ներ եմ, միայն ըսէ՛ ինծի, թէ ինչ-
պէս դարձեալ Աստուծոյ հաճոյ
ըլլամ. ճամբայ մը ցըցուր ինծի,
թէ ինչ բանով իմ բարի Յիսու-
սիս հետ հաշտուիմ: Ո՛վ բարեխօս

ու պաշտպան մեղաւորաց սուրբ
Աստուածածին, մի միայն խօսք մը
ըսէ Յիսուսին, թէ ո՞վ որդի իմ,
գուն ողորմէ աս խեղճ մեղաւորին,
անտարակոյս շուտ մը մեղքերուս
թողութիւն կը գտնեմ: Յրցո՛ւր
ո՞վ մայր Աստուծոյ, թէ որչափ
պատրաստ ետքարիք ընելու անոնց,
որոնք իրենց ապաւինութիւնն ու
յոյսը քու վրայ գրած են, ամէն:

Ե Ր Վ Ո Ւ Շ Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածնայ ա-
ղաւինելու համար:

Ո՞վ թագուհի երկնի եւ երկրի,
եւ որ ատենօք խեղճ գերի մ' եղած
էի մեղաց, հիմա զիս քեզի մշտըն-
ջենաւոր ծառայ կը նուիրեմ. ու
կ'առաջադրեմ, որ իմ բոլոր կեան-
քրս քեզի պատիւ ըլլայ. կ'ազաչեմ
գուն իս ընդունէ, ու երեսէ մի
ձգեր, ինչպէս որ արժանի եմ:

Ո՛վ սիրելի մայր, Յիսուսէն ետքը
դուն ես իմ յոյսս ու ապաւինու-
թիւնս: Ա՛օրհնեմ ու կը գովեմ
իմ փրկիչս, որ իր ողորմութեամբն
ինձի շնորհք տուաւ իմ բոլոր ա-
պաւինութիւնս քու վրագ հաս-
տատելու համար, որն որ ես իմ
յաւիտենական փրկութեանս մեծ
նշան մը կը սեպեմ: Անտարակոյս
կը յուսամ, որ Աստուած քու կին
հղօր բարեխօսութեանդ համար
իմ մեղքերուս թողութիւն կը
շնորհէ, ու իր ամենասուրբ շնորհ-
քը ինձի կը բաշխէ: Բայց ո՛վ
գթած մայր իմ, ես կրնամ շուտ
մը դարձեալ իմ առջի գէշ ճամ-
բաս դառնալ. ինչու որ նոյն վտանգ-
ները կեցած են միշտ, ու թշնա-
մին երբէք չիքնանար. անոր համար
որչափ մեծ մեծ փորձութիւններ
առջեւս կան յաղթելու: Ո՛վ մայր
բարեգութ, դուն ինձի պաշտպան
կեցիր, ու թող մի տար, որ նորէն
մեղաց գերի ըլլամ: Գիտեմ որ

դուն ինձի պաշտպան ըլլալէն ետ
չես կենար. քեզի այսչափ աղաչե-
լէն ետքը՝ քու ողորմութիւնդ ու
քու մայրական գթած սիրտդ
չիկրնար իմ խեղճութեանս դիմա-
նալ. բայց կը վախնամ, որ չըլլայ
թէ մեղաց առթի ատեն քեզ մոռ-
նամ, ու այնպէս կորսուիմ: Անոր
համար կը խնդրեմ քէնէ սուրբ
Աստուածածին աս շնորհքը, որ
կարող ըլլամ դժոխային թշնամին
վրաս վազած ատեն շուտ մը քեզի
դիմել, ու զքեզ օգնութեան կան-
չել: Ո՛վ Մարիամ. ինձ խեղճ մե-
ղաւորիս օգնութիւն հասիր. ո՛վ
մայր սիրելի, թող մի տար, որ ես
Աստուծոյ անհաւատարիմ ըլլամ.
ամէն:

Ե Ր Ե Գ Ը Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածնէն բարի
մասն խնդրելու համար :

Ո՛վ մայր ողորմութեան կոյս Մա-
րիամ, արդեօք մահուանս ատենն
ինչ վիճակի (հալի) մէջ պիտի
գտնուիմ: Երբոր իմ գործած
մեղքերս կը մտմըտամ, ու ան սոս-
կալի ըսպէն, իմ յաւիտենական
փրկութիւնս՝ կամ դատապար-
տութիւնս պիտի որոշէ, վախէս
վրաս դող կու գայ: Իմ փրկու-
թեանս ուրիշ յոյս մը չունիմ, բայց
եթէ քու որդւոյդ անգին արիւնը,
ու քու հզօր բարեխօսութիւնդ:
Մխիթարիչ վշտացելոց սուրբ Աս-
տուածածին, ան ետքի զարհուրելի
ատենը քու օգնութիւնդ իզմէ մի
հեռացրներ. ու ան նեղութեան
ըսպէն իս քու կին մխիթարու-
թենէդ մի զրկեր: Թէ որ հիմա
խիղճս գործած մեղքերուս համար,

Աստուծոյ արդարութեան համար,
ու յաւիտենական փրկութեանս
անստուգութեան համար ասչափ
ինծի նեղութիւն կու տայ, ան ա-
տենն որչափ աւելի իս պիտի նեղէ:
Ով ապաստան մեղաւորաց, քանի
որ մահուանս ժամանակը չէ մօ-
տիկցեր, ինծի ճշմարիտ ապաշ-
խարութեան ու առանց մեղաց ա-
պրելու շնորհք տուր, որպէս զի
գործածներուս վրայ զղջամ, ու
մինչեւ որ մեռնիմ, այլ չմեղանչեմ:
Վաղաչեմ գթած կոյս, մեռնելու
ատենս ինծի օգնէ, որ երբ որ իմ
անթիւ ու մեծամեծ մեղքերս
միտքս գալու ըլլան, յուսահատու-
թեան մէջ չիյնամ. զօրութիւն
տուր ինծի, որ կարող ըլլամ ան
ատենը քու սուրբ անունդ, ու
քու բարերար որդւոյդ անունը
սրտանց կանչել: Գիտեմ որ չես
վշտանար, թէ որ համարձակելու
ըլլամ այնպէս բան մը քէնէ
խնդրելու, որուն ամենեւին ար-

Ժանի չեմ: Ո՛վ գորովագուծ մայր,
անչափ է քու գթութիւնդ ու
քաղցրութիւնդ, որ կը ներես իմ
համար ձակութեանս: Գիտես մայր,
թէ որչափ դառն է ետքի բուսն,
անոր համար կ'աղաչեմ, թէ որ
հնար է, անսոսկալի ատենը քու
կին քաղցր ներկայութեամբդ իս
մխիթարելու արժանի ընես: Ար
խոստովանիմ, որ ողորմելի մեղա-
ւոր մըն եմ, ու աս մեծ շնորհաց
արժանի չեմ. բայց մայր Աստուծոյ
դուն ալ մեղաւորներուն պաշտպան
ես. կը խոստանամ քեզի ձեռքէս
եկածին չափ բոլոր որտանց ջերմե-
ռանդ ըլլալ: Բայց թէ որ իմ ան-
արժանութիւնս ու անթիւ ապե-
րախտութիւններս աս մեծ շնորհ-
քիս արգելք ըլլան, ան ատեն կ'աղա-
չեմ, որ գոնէ քու կին մխիթարու-
թիւնդ վրայէս պակաս չընես. որ-
պէս զի Աստուծոյ սիրոյն մէջ աս
աշխարհ քէս ելլելով՝ անդիի աշ-

խարհքքեզ ու ամենասուրբ երրորդ ու թիւնը տեսնելու արժանի ըլլամ, ամէն:

Չ Ո Ր Ե Բ Շ Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածնայ բարեխօսութեամբը դժոխքէն ազատելու համար:

Բիւր անգամ գոհութիւն կը մատուցանեմ քեզի ո՛վ բարեգութ մայր, որ զիս քու միջնորդութեամբ բըղ դժոխքէն խալըսեցիր, որուն որ շատ անգամ արժանի էի: Իմ դատապարտութեանս վճիռը շատոնց վրաս կատարուած էր, թէ որ դուն ո՛վ սուրբ Աստուածածին, աղբիւր գթութեան ու ողորմութեան, Աստուծոյ արդարութենէն ինծի համար ապաշխարելու ատեն ընդունած չըլլայիր: Ասանկով իմ խստասրտութիւնս յաղթեցիր ու սիրաս ալ շարժեցիր, որ բոլորովին քեզի դիմեմ ու քեզի ապաւինիմ:

Ասչափ զանազան վտանգներու մէջ
ինկած ըլլալով՝ որչափ մեղաց տէր
պիտի ըլլայի, թէ որ դուն ո՛վ մայր
ողորմութեան, ինծի համար Աս-
տուծ մէ շնորհք խնդրած, ու ինծի
պաշտպան կեցած չըլլայիր: Ո՛վ
բարեգութ տիրամայր, ասկից ետքն
ալ մի դադրիր իս դժոխքէն խա-
լըսել, ու մեղքերէն ազատ պահել:
Ի՞նչ օգուտ կ'ըլլայ ինծի մինչուկ
հիմա ըրած ողորմութիւնդ, թէ
որես վերջամէս դատապարտուելու
ըլլամ: Թող մի տար, որ ես քէնէ
ու քու սիրելի որդիէդ բաժնուիմ,
որ քու բարեխօսութեանդ համար
մինչեւ ասչափ ողորմեցաւ ինծի:
Ո՛վ մայր գթութեան, չըլլայ թէ,
(որ բերանս յառաջ չ'երթար ըսե-
լու) քու սիրելի որդիդ, ու քեզ
ալ մէկ տեղ յաւիտեանս յաւի-
տենից դժոխքին մէջ ատեմ ու
հայհոյեմ: Արնամ մի դուն դիմա-
նալ, որ քու ծառաներէդ մէկը, որ
քեզ սրտանց սիրէ, յաւիտեանս

դատապարտուի. ինչ կ'ըսէր ան
ատեն քու գթած մայրենի սիրտդ :
Ով Մարիամ, յաւիտեանս պիտի
կորսուիմ մի. իրաւցընէ կը կոր-
սուիմ, թէ որ զքեզ թող տալու
ըլլամ. բայց ինչպէս կրնամ քեզ
թողուլ. ինչպէս կրնամ քու ցը-
ցուցած սէրդ մոռնալ : Ով գթած
մայր իմ, դուն որ ինձի ասչափ
բարիք ըրիր, աս շնորհքս ալ ինձի
ըրէ, ու օգնութիւնդ վրայէս ա-
մենեւին մի պակսեցընէր : Հիմա
ես զքեզ սրտանց կը սիրեմ, ու
իս բոլորովին քեզի կը յանձնեմ.
որովհետեւ ինձի այնչափ շնորհք-
ներ ըրիր, մանաւանդ ան ատենն
ալ, երբոր ես ամենեւին քեզ
մոռցեր էի : Քու օրհնեալ ձեռքդ
վրաս երկընցձր, ու ինձի պաշտ-
պան եղիր, ու բռնէ՛ որ դժօխք
չիյնամ : Իս պահէ, որ մահացու
մեղք չգործեմ, որ զիս դժօխք կը
տանի :

Հ Ի Ն Գ Ծ Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածնայ յաւիտեանական երանութեան համար:

Ո՛վ հզօր թագուհի երկնի եւ երկրի, դուն որ ամենասուրբ երրորդութեան մօտ սերովբէներէն ու քերովբէներէն վերաստուածային փառօք կը զմայլիս քու գթած աչուրներդ մէյմը խեղճ մեղաւորիս վրայ դարձուր, որ աս ողբալի երկրէս քեզի դէմ կը պաղատիմ, ու քուկին օգնութիւնդ կը խնդրեմ: Տես ո՛վ Մարիամ, ինչ վտանգներու մէջ կը պտըտիմ. յաւիտեանս կրնամ հոգիս կորսընցընել, քանի որ աս աշխրոքիս մէջն եմ: Գուն ես իմ ապաւինութիւնս, քեզի կ'աղաչեմ ո՛վ մայր շնորհաց, որ իս արքայութիւն ընդունիս, որ հոն զԱստուած ու քեզ յաւիտեան սիրեմ ու գովեմ: Ն՞րբ պիտի ծագի ան ցանկալի օրը, որ յաւիտեանական

կորստեան վտանգներէն ազատ
պիտի ըլլամ ու իմ սիրելի փրկչիս
մայրը՝ որ իմ հոգւոյս փրկութեանը
համար ասչափ աշխատեցաւ, պիտի
արժանի ըլլամ տեսնել: Ե՞րբ
պիտի գայ ան ատենը, որ կարող
ըլլամ ան սուրբ ու օրհնեալ ձեռքը
պագնել՝ որ իսշատանգամ դժոխ-
քէն խալըսեց, ու ինծի պէս ան-
արժանի մը այնչափ հարուստ
պարգեւներ տուաւ:

Մի մայր իմ, աս աշխարհքս
շատ հեղ քեզի ապերախտ
գտնուեցայ. բայց արքայութեան
մէջ ալ ապերախտ չեմ ըլլար.
հոն ամէն ուժովս յաւիտեան քեզ
կը սիրեմ, ու ըրած ապերախտու-
թեանս տեղ յաւիտենական գո-
հութիւն ու փառաբանութիւն
քեզի կը մատուցանեմ: Շնորհա-
կալ եմ Աստուծոյ գթութեանը,
որ Յիսուսին պատուական արեան,
ու քեզի յուսալու ու ապաւինելու
շնորհք տուաւ ինծի: Անտարակոյս

գիտեմ, որ դուն իմ մեղքերուս
համար թողութիւն կ'ընդունիս,
ու մտքիս լոյս ու զօրութիւն ալ
կու տաս Աստուծոյ կամօքը կատա-
րելու, ու ետքը արքայութիւն
հասնելու: Աս յոյսն ամէն քու
ծառաներդ ունեցան, ու անոնցմէ
մէկը չխաբուեցաւ. անոր համար
իմ յոյսս ալ իս չ'ամբշցրներ:
Շնորհք տուր ինձի, որ քու վրադ
ունեցած ապաւինութիւնս օրէ օր
աւելնայ. ու անդիի աշխարհքը
քու որդիդ՝ քու սուրբ որովայնիդ
օրհնեալ պտուղը ցրցո՛ւր ինձի
ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ
քաղցր կոյս Մարիամ. որպէս զի
կարող ըլլամ քու որդիդ, ու քեզ
միշտ եւ յաւիտեան գովել ու սի-
րել:

Ո՛վ մայր բարեգութ, խնդրէ
ինձի համար մեղքերուս թողու-
թիւն, ի բարին յարատեւութիւն,
բարի մահ, ու ետքը արքայութե-
ան փառքը. բայց մասնաւորապէս

աս շնորհքը, որ ես միշտ քու
գիրկդ վազեմ: Թէպէտ աս խըն-
դրած շնորհքներս շատ մեծ բաներ
են, որ ես ամենեւին արդիւնք մը
կամ արժանաւորութիւն չունիմ.
բայց ո՛վ թագուհի ամենազօր, ա-
սոնք ինձի պարգեւելը քեզի դիւ-
րին բան մըն է. ինչու որ Աստուած
զքեզ շատ կը սիրէ, ու քու խօսքդ
ու բարեխօսութիւնդ երբէք գե-
տինը չ'իյնար: Անանկ է նէ՛ գուն
ինձի համար աղաչէ Յիսուսին.
միայն ըսէ անոր, որ ես քու որ-
դեգիրդ եմ, ու զիս քու կին
պաշտպանութեանդ տակն առած
ես. աս բաւական է ինձի ամէն
շնորհք Աստուծմէ ընդունելու
համար: Ո՛վ Մարիամ մայր սիրելի,
իմ բոլոր ապաւինութիւնս դուն
ես. կ'ուզեմ զքեզ միշտ սիրել,
ու քեզի ապաւինած ուրախու-
թեամբ ալ կը մեռնիմ, ամէն:

ՈՒՐԲԱԹ

Աղօթք Յիսուսն ու սուրբ Աստուածածինը սիրելու համար :

Ո՛վ ամենասուրբ կոյս, աղէկ գիտեմ որ դուն աստուծոյ արարածներուն մէջ ամենէն աւելի ազնիւը, մաքուրը, գեղեցիկը, սուրբն ու սիրելին ես : Երանի թէ ամէն մարդ ալ քու արժանաւորութիւնդ ու բարերարութիւնդ աղէկ ճանչնար ու քեզ սիրէր : Հիմա ասով կը մխիթարուիմ, որ այնչափ բիւրաւոր արդար հոգիներ թէ՛ արքայութեան մէջ թէ՛ աս աշխրդբիս մէջ որ կը գտնուին, ամէնը քու սքանչելի գեղեցկութիւնդ, ու անպատմելի շնորհքներդ կը գովեն, ու քեզ կը սիրեն : Ամենէն աւելի անոր կ'ուրախանամ, որ Աստուած զքեզ աւելի կը սիրէ, քան թէ բոլոր հրեշտակներն ու մարդիկները միատեղ : Ո՛վ ամենազօր թա-

դու հի, ես ողորմելիս ալ՝ թէպէտ
չատ նուաստ, բայց մասնաւոր սէր
մ՝ ունիմ քեզի. ու կը բաղձամ
որ աւելի ու վառեալ սէր մ՝ ու-
նենամ, ու աս պարգեւը քէնէ
առնելու համար աղաչելէն երբէք
չեմ դադրիր: Ընդունէ Աստուծ-
մէ ինծի համար աս շնորհքը, որ
յաւիտենական իրկութեան ստոյգ
նշան է. ու անոնց մինակ կը տրուի,
որոնք որ Աստուծմէ արքայութեան
համար ընտրուած են:

Ար ճանչնամ նաեւ իմ մեծ պար-
տաւորութիւնս, որ ունիմ՝ Յիսու-
սը քու սիրելի որդիդ ամէն բանէն
աւելի սիրելու: Գիտեմ որ ուրիշ
բանի մ՝ աւելի չես բաղձար, բայց
եթէ քու սիրելի որդիդ ամենէն
ալ սիրուի. անոր համար կ'աղա-
չեմ քեզի մայր Աստուծոյ, որ ին-
ծի համար աս շնորհքն ընդունիս.
որպէս զի կարող ըլլամ ինչպէս
որ պէտք է՝ Յիսուսը սիրել: Քու
բարեխօսութիւնդ ամէն բանի

կարող է. ես երկրաւոր բարիք
քէնէ չեմ խնդրեր. հապա ան
բանը միայն կը խնդրեմ, որն որ
քու սիրտդ ալ կը բաղձայ, որ ես
խնդրեմ: Արնայ՝ մի ըլլալ, որ դուն
աս աղաչանքս, որ քեզի այնչափ
հաճելի է՝ չկատարես. գիտեմ որ,
իմ՝ աղաչանքս Աստուծոյ առջին
կը հանես, ու ինձի համար բարե-
խօս կ'ըլլաս: Քեզի աղաչելէն ու
պաղատելէն չեմ դազրիր, մինչեւ
որ ապահով չեմ ըլլար ամէն
վտանգներէն Աստուածս կորսըն-
ցընելու: Եւ երբոր արքայութիւ-
նը քեզ տեսնելու արժանի կ'ըլ-
լամ, ան ատեն առանց վախնալու,
որ պիտի քեզ կորսընցընեմ, կը
սիրեմ զԱստուածս ու զքեզ յա-
ւիտեանս յաւիտենից, ամէն:

Շ Ա Բ Ա Թ

Աղօթք սուրբ Աստուածածնայ բարեխօսութեանը համար:

Գորովագուծ ողորմած մայր իմ,
մէկ կողմանէ քու անհամար բարե-
րարութիւններդ միտքս կու գան.
միւս կողմանէ խելքէ մտքէ դուրս
ըրած ապերախտութիւններս աչ-
քիս առջին կ'ելլեն: Ես արժանի
չեմ քու շնորհքիդ, անանկ ալ
դարձեալ քու ողորմութենէդ եր-
բէք չեմ յուսահատիր. ինչու որ
քու ողորմութիւնդ շատ աւելի է,
քան թէ իմ ապերախտութիւնս:
Ո՛վ հզօր բարեխօս սուրբ Աստու-
ածածին, գթու թիւն ըրէ վրաս.
դուն ես շնորհաց գանձապետը,
քու ձեռօքդ կը բաժնուին ամէն
մեղաւորներուն տրուելու շնորհք-
ները. անոր համար Աստուած քե-
զի ասանկ մեծ կարողութիւն,
հաստնելու գանձ ու գթած սիրտ

տուաւ, որ դուն մեր նեղութեան
ատեն մեզի օգնութիւն հասնիս:
Ո՛վ մայրգթութեան, նեղութեա-
նքս ատեն իս երեսէ մի՛ ձգեր:
Մե՛ծ փառք է քեզի մայրենի սի-
րովդ գրկել այնպիսի ողորմելիները,
որոնք ամենուն երեսէն ձգուած
են. քու հզօր պաշտպանութիւնդ
բաւական է զանոնք ամէն յուսա-
հատութենէն խալըսելու: Իմ յա-
ւիտենական փրկութիւնս քու
ձեռքդ կը յանձնեմ. ու աս խեղճ
հոգիս՝ որ արդէն կորսուած է,
քու բարեխօսութեամբդ պիտի
փրկուի: Իս մի՛ վառնաւեր, որ կը
բաղձամ ամէն յօժարութիւնով
քու հաւատարիմ ծառաներուդ
կարգը մտնել: Ընդունէ իս քու
հզօր պաշտպանութեանդ տակը,
ան ատեն բանէ մըն ալ չեմ վախ-
նար, ո՛չ մեղքերէս, ինչու որ՝ աս
չարեացս դէմ զօրաւոր ճար մը
կը գտնես. ո՛չ դժոխային թշնամի-
ներէն, ինչու որ՝ քու կիին զօրու-

Թիւնդ աւելի մեծ է, քան թէ բոլոր դժոխքին ուժը. ոչ Յիսուսէն իմ արդար դատաւորէս, ինչու որ՝ մի միայն խօսքդ, որ ինձի համար իրեն կը խօսիս, անոր բարկութիւնը կ'անցընէ: Միայն մէկ բանէ կը վախնամ, այսինքն չըլլայ թէ իմ ծուլութեամբս քու ծառայութենէդ պաղիմ, ու ինձի կորստեան ճամբայ բանամ: Ո՛վ սուրբ Աստուածածին, քու հզօր բարեխօսութիւնդ վրայէս պակաս մի ըներ. ու միշտ օգնական եղի՛ր ինձի, ամէն:

Ա Ղ Օ Թ Գ

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Ն

Եկեղեցի մտած ատեն:

Տէր իմ եւ Աստուած իմ, ես անարժան մեղաւորս ահա քու շնորհաց տունդ եկամ եւմ. որպէս զի

իմ հոգեւոր աղքատութիւնս քու
 առջիդ բանամ, ու իմ խեղճու-
 թիւնս քեզ ողորմութիւն շարժէ:
 Գիտեմ որ, որչափ աւելի աղէկ կը
 մտածեմ քու չարչարանքներուդ
 յիշատակը, այնչափ աւելի կը վա-
 ուի ու կը բորբոքի սիրտս քու սուրբ
 սիրովդ. ու կը զօրանայ հոգիս ալ
 առաքինութեան գանձեր ժողվե-
 լու: Անանկ է նէ ո՛վ փրկիչ իմ,
 տո՛ւր ինձի ան սիրտը, ան զգա-
 ցումը, որն որ ունեցաւ քու ա-
 մենասիրելի մայրդ խաչին քովը
 կեցած ատեն: Ես ալ ստուգիւ կը
 հաւտամ, որ աս անարիւն պատա-
 րագը՝ գողգոթա լեռն եղած ա-
 րիւնոտ պատարագին հետ նոյն է.
 եւ նոյն շնորհքները հոս ալ կը
 բաշխի, ինչպէս որ հոն ալ բաշ-
 խեցաւ անոնց, զորոնք դուն ար-
 ժանի ըրիր այնպիսի աստուածային
 պարգեւներն ընդունելու:

Երբ որ քահանան պատարագի կ'ելլէ:

Մրչափ պէտք է որ գոհանամ
քէնէ ո՛վ Աստուած իմ, որ առա-
քեալներուն, ու անոնց յաջորդ-
ներուն ապսպրեցիր քու չարչա-
րանքներուդ յիշատակը աս սրբա-
զան պատարագը մատուցանելով
նորոգել, եւ դարձեալ մաւրնիս
բերել, ու լեզուով չպատմուելու
չնորհքներու արժանի ըլլալ: Ահա
աչքիս առջեւը կը տեսնեմ քու
փրկարար չարչարանքներուդ օրի-
նակը. կը տեսնեմ զքեզ, որ քա-
հանային կերպովը ձիթենեաց լե-
րան վրայ գացեր ցաւալի մամը-
տուքներու ու անմխիթար արտմու-
թեան մէջ մնացած կը հոգաս, ու
երկնաւոր հօրդ կ'աղաչես: Գուն
ո՛վ փրկիչ իմ զօրութիւն ու շնոր-
հըք տուր ինձի որ քու ամենա-
սուրբ՝ օրինակիդ միշտ հետեւ իմ,
ու միայն քեզի հաճոյ ըլլալու ջա-
նամ: Մխիթարէ իմ խեղճ հոգիս

ալ, որ աս ողորմելի աշխարքիս ար-
֊տորանքին մէջ միշտ տրտում ու
անհանգիստ է, ու միշտ քեզ կը
փնտռէ. տ՛ուր քեզ ինձի տէր իմ,
ու աս միայն հերիք է ինձի:

Եւ վասն սրբուհոյ Աստուածածնին
ըսած ատեն:

Ո՛վ թագուհի երկնաւոր, դուն որ
խաչին քովը կենալով քու սիրա-
կան որդւոյդ քաշած չարչարանք-
ներուն ցաւովը չարչարակից եղար,
միջնորդութիւն ըրէ ինձի համար
քու որդւոյդ, որ իմ քարացեալ
սիրտս կակղացընէ, որ կարող ըլ-
լամ մեղքերուս գէշութիւնը ճանչ-
նալ ու անկից գանիլ: Քարձեալ
չնորհէ ինձի սիրտ ցաւակցութեան,
զոր դուն խաչին քովը կեցած ա-
տենդ ունեցար, որ ես ալ կարող
ըլլամ մասնակից ըլլալ Քրիստոսի
չարչարանքներուն, որպէս զի ար-
քայութեան մէջ ալ անոր փառ-
քին արժանի ըլլամ:

խոստովանիմ առաջի Աստուծոյ :

Ահա տէր իմ ես ալ քահանային
հետ կը խոստովանիմ իմ մեղքերս
քու առջեւդ, ու սուրբ Աստուա-
ծածնայ եւ ամէն սուրբերուն, ին-
չու որ գիտեմ թէ՛ շատ անգամ
մեղանչելովս քեզ վշտացուցած
եմ: Արչափ մեծ է եղեր իմ ա-
նօրէնութիւնս, մինչեւ հարկ եղաւ
որ դուն մարմին առնուս, ու իմ
մեղքերս քաւելու համար խաչին
վրայ ետքի արեանդ կաթիլը թա-
փես: Թէ որ զիս սիրելուդ համար
ասչափ բաներ քաշեցիր նէ, կը
յուսամ քու ողորմութեանդ՝ որ
իմ խոստովանութիւնս ալ կ'ըն-
դունիս, ու կատարեալ զղջման
շնորհք ալ կը պարգեւեօ, որ աս-
կից ետեւ փախչիմ մեղաց առիթ-
ներէն, որ այնչափ չարչարանք
քաշելու պատճառ եղաւ քեզի.
աս աշխարհքիս մէջ ժամանակ ալ
կու տաս ինծի, որ մեղքերուս վրայ

ապաշխարեմ, ու քեզի հաճելի
բարեգործութիւն ընեմ: Աս ու-
նեցած առաջադրութեանս դուն
տէր իմ հաստատութիւն տուր, ու
սրտիս բաղձանքը բորբոքէ, որ
միշտ օրէ օր սիրտս աւելի վառուի
քու սուրբ սիրովդ:

Ի յարկի սրբութեան:

Մրպիսի յարգութեամբ ու խո-
նարհութեամբ պէտք է երկրպա-
գութիւն ընենք քեզի մենք հողե-
ղէն արարածքս ո՛վ Աստուած իմ,
որ նոյն ինքն սրբութիւն ես. մենք
ամէն կերպ պակասութիւնն ունինք:
Աս տունս որ հրեշտակներու բնա-
կարան է, ինչպէս կը համարձա-
կէինք մտնել, թէ որ դուն մեզ
հրաւիրած չըլլայիր՝ ըսելով. թէ
եկէք ինձի ամէն ծանր բեռերու
ու աշխատութեան տակ մնացողներ,
ես ձեզի հանգիստ կու տամ. եկէք
իմ տունս, որ ձեզի համար շինեցի,

որ մեղքերնիդ քաւելու, ու թողու թիւն ընդունելու տեղն է: Անանկ էնէ իմ մեծամեծ մեղքերուս թողու թեան ու քաւու թեան ուրիշ տեղ մը չկայ. անոր համար հոս քու ամենատես աչքիդ առջին եկած եմ, ու երեսի վրայ ինկած կ'երկրպագանեմ քեզի, ու քու անհուն ողորմութիւնդ, որուն չափ չկայ՝ յաւիտեանս յաւիտենից կ'օրհնեմ:

Օրհնեալ թագաւորութիւն:

Միշտ օրհնելու պարտական ենք քու թագաւորութիւնդ ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, որ այնչափ կը փառաւորես քու սիրելի ծառաներդ արքայութեան մէջ, մինչեւ քու անհասանելի փառքիդ արժանի կ'ընես, ու կ'ընդունիս անոնց բարեխօսութիւնը: Արդ՝ ես ալ սուրբ եկեղեցւոյ հետ աս օրուան սուրբս ինձի բարեխօս կը բռնեմ ու

կը խնդրեմ որ լսես անոր աղաչանաց :
Նախ առաջին սուրբ Աստուածա-
ծնայ բարեխօսութեամբը տուր ին-
ծի անանկ շնորհք մը, որ իմ
տկարութիւնս զօրացընէ . եւ ինչ-
պէս որ սուրբերը կրցան յաղթել
իրենց մարմնոյն, աշխրբին ու սա-
տանային, նոյնպէս ես ալ քու շը-
նորհքովդ կարող ըլլամ իմ մար-
մնոյս չար ցանկութիւնները զսպել .
աշխրբիս անցաւոր մեծութեանը
հետ սիրտս չկապել, ու սատանային
խաբէութիւններուն չհետեւիլ :
Զօրութիւն տուր ինծի տէր իմ, որ
ասբաներս գործքով ալ կատարեմ,
որպէս զի ես ալ քու սիրելի ծա-
ռաներուդ հետարքայութեան մէջ
օրհնեմ քու թագաւորութիւնդ :

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր :

Դու տէր իմ մարդասէր, այնչափ
մեր հողերէն բնութիւնը պատուե-
ցիր որ, մինչեւ աս հրեշտակային

երեքսրբեան փառաբանութիւնը
երգելու մեզի համարձակութիւն
տուիր: Ո՛վ Աստուած իմ, որ ա-
մենեւին սրբութիւնես, զօրութիւն
տուր ինձի, որ սրբութեամբ ա-
պրիմ. դուն՝ որ միանգամայն հզօր
ես, ու քու զօրութեանդ ոչ ոք
կրնայ դէմ դնել, զօրութիւն տուր
ինձի, որ իմ բարի առաջադրու-
թիւնս կատարելու կարող ըլլամ:
Գուն՝ որ աղբիւր ես անմահ կեն-
սականութեան, իմ մեռեալ հոգիս
ողջացո՛ւր: Գուտէր իմ տէր, աւելի
աղէկ գիտես ինչ որ ինձի պէտք է
քան թէ ես. դուն աւելի պատրաստ
ես տալու, քան թէ ես առնելու.
անանկ է նէ դուն ողորմէ՛ ինձի, ու
հոգւոյս փրկութեան օգտակարը
ցրցո՛ւր ինձի. ու շնորհք ալ աւել-
ցո՛ւր, որ կարող ըլլամ քու պա-
տուիրաններդ պահել:

Գիրն ու աստուծանը աղէի հարարութե-
անք լի, ինչպէս որ իւր լեւեր, թէ որ Աստու-
ծ էր Բերնուլդ Իօսէօս - ըլլար: Իսկ հասարակ-

խաղաղութիւն ձգողները որդիք
Աստուծոյ ըսուին: Իմ բոլոր փա-
փաքս ան է, որ ամէնքնիս ալ քու
սուրբ շնորհօքդ քեզ ամէն բանի
արարիչ ճանչնանք. ու մէկ ճշմա-
րիտ հաւատով ու միաբանութե-
ամբ քեզի երկրպագութիւն ընենք:
Հեռացո՛ մեզմէ ամէն չար ախտերը,
ինչպէս է կռիւը, թշնամութիւնը,
նախանձը, հերձուածը, որ ամէնն
ալ խաղաղութեան թշնամի են:
Ու այսպէս ծաղկելով մեր մէջը
սէրն ու խաղաղութիւնը՝ քու ա-
նուանդ փառք ու պատիւ ըլլայ ան-
հաւատներուն առջին:

Լուսցայց սրբութեամբ:

Լուս ու մաքրէ՛ հոգիս ամէն աղտո-
տութենէ քու սուրբ արեամբդ. ու
քաւէ՛ անթիւ մեղքերս ո՛վ գթած
փրկիչ իմ Յիսուս. քու բարերար
ողորմութեանդ ցօղը մեղուցեալ
հոգւոյս վրայ թափէ՛, որ գարշելի

կիրքերուս բոցը մարէ ու սիրտս
քու սիրովդ բորբոքէ: Ահա աս
սուրբ պատարագին հետ զիս բու-
լորովին քեզի կ'ընծայեմ տէր իմ,
քաղցրութեամբ մը նայէ, ու մի
անարժան համարիր: Գիտեմ՝ որ
իմ ըրած ընծաս չնչին բան մըն է,
ու ինքիրեն յարգ մը չունի. անոր
համար կ'աղաչեմ, որ իմ անարժան
ընծաս ընդունիս, ու աս սուրբ
պատարագին հետ քու երկնաւոր
հօրդ մատուցանես:

Աղջոյն տուք միմեանց:

Տէր իմ, երբոր կը յիշեմ քու
պատուիրաններդ ու սուրբ օրինակ-
ներդ, որ մեզի յիշելիք թողուցիր,
չատ կ'ամչնամ: Գուն քու աշկերտ-
ներուդ ու անոնց հետեւողներուն
մէկզմէկ սիրելին՝ քրիստոնեայ
ըլլալուն նշան տուիր: Առաջին ա-
տենուան քրիստոնեաները աս
նշանով կ'իմացընէին իրենց քրիս-

տոնէութիւնը անհաւատներուն
առջին. անոր համար աս սուրբ
խորհուրդը կատարուելու ատեն՝
եկեղեցւոյ մէջ մէկդմէկ կը բարե-
ւենք, ու մէկդմէկ կը համբուրենք:
Քայց ես ողորմելիս որչափ հեռու
եմ քու տուած պատուիրաններէդ.
ինչպէս ինծի քրիստոնէի անունը
կրնայ վայլել, երբոր քրիստոնէի
նշան այսինքն՝ եղբայրսիրութիւն
չունիմ: Այն ինծի, արեւն իմ բար-
կութեանս վրայ պիտի չմտնէր, իսկ
ես ամիսներով իմ եղբօրս դէմ
ոխ պահեցի: Գուն յառաջագոյն
զգուշացուցիր, որ պէտք է պատա-
րագը թողուլ, ու նախ երթալ
եղբօրը հետ հաշտուիլ: Իսկ ես
ոխակալութեան աստով կուրա-
ցեալ, ամենեւին հոգ չեմ ըներ
քու պատուիրանդ բռնելու, ու
եղբօրս հետ հաշտուելու: Իրաւ
քու ամենապատուելի անունդ՝ որ
կանչուած է իմ վրաս, փառա-
ւորուելու տեղ, աւելի նախատու-

ած է անհաւատներու առջեւ: Բայց
հիմա ի փառս անուան քո կ'առա-
ջադրեմ, որ ամէն թշնամիներուն,
ու ինծի չարիք հասցընողներուն
սրտանց ներեմ, ու իրենցմէ ես ա-
ռաջ թողու թիւն խնդրեմ: Թէ որ
տեսնեմ անոնք, որ անօթի են,
կամ ծարաւ, կամ նեղեալ, ամե-
նէն առաջ ես անոնց օգնութեան
հասնիմ: Գուն ո՞վ փրկիչ իմ,
զքեզ խաչ հանողներուն համար
ազօթք ըրիր. ահա ես ալ իմ
թշնամիներուս համար կ'աղաչեմ.
որ անոնց ներես, շնորհք տաս, հո-
գեւոր ու մարմնաւոր բարիքներով
լեցընես. ու միատեղ մեզ երկնից
արքայութեան արժանի ընես քու
ողորմութեամբդ:

Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրու-
թեանց:

Ո՞վ տէր իմ, ահա կը տեսնեմ
հոգւոյս աչքովը, որ բոլոր հրեշ-

տակներուն բազմութիւնը, հրեշ-
տակապետները, սերովբէներն, ու
քերովբէները երկինքէն վար կ'ինջ-
նան, որ ներկայ գտնուին աս փրո-
կագործ պատարագին նուիրման
ատենը: Ար տեսնեմ քեզ ալ իմ
Աստուածս ու փրկիչս, որ նոյն ինքն
կը մատուցուիս ու կ'ընծայուիս
Աստուծոյ հօր պատարագ, նորոգե-
լով մեր մտքին մէջ ան չարչա-
րանքները, արեանդ հեղումը, ու
դառն մահը, որն որ մեզի համար
քաշեցիր, որ մեզ սատանային
գերութենէ փրկես: Հրեշտակնե-
րը իսկ երբոր կը մտածեն աս մեր
վրայ ունեցած սէրդ, կը զմայլին,
ու կը հիանան, ու երեքսրբեան
օրհնութեամբ քեզ անդադար կը
փառաբանեն: Մենք ալ անոնցմէ
սորվելով աս փառաբանութիւնը,
կ'երգենք ու կը փառաբանենք, թէ
դուն՝ որ ամենեւին սրբութիւն ես,
քու փառքդ ամէն տեղ բրոնած
է: Մեր հողեղէն սիրտը, թէ չի

կրնար ինչպէս որ պէտք է քեզ սիրել, եւ ոչ խօսք ունինք բաւական, որ քեզ փառաւորենք: Անոր համար կը խնդրեմ, որ աս հրեշտակային փառաբանութեան պակասութիւնը դուն լեցունես. ու պատարագ տեսնելու ատենս իմ սիրտս այնպէս վառես, ինչպէս որ հրեշտակներուն սիրտը կը բորբոքի արքայութեան մէջ, ու հոս տեղս քեզ փառաբանելու ատեննին:

Առէք կերէք, ու արբէք ի սմանէ:

Արտանց կը հաւատամ, ու կը խոստովանիմ, որ դուն հիմա իմ առջեւ ներկայ ես. հացը ու գինին քու ամենազօր խօսքովդ փոխեցիր, ու ըրիր ճշմարտապէս պատուական մարմինդ եւ արիւնդ, որ ամէն հաւատացեալք յիշեն քու սէրդ, ճաշակեն քու մարմինդ ու արիւնդ, ու քու սիրովդ բորբոքեալ ուժ առնուն. իրենց տկարութիւնը զօ-

րանայ քեզի հաճոյ կեանք վարե-
լու, ու իրենց աղքատութիւնը
հարստացրնելու: Տո՛ւր ինձի ալ
շնորհք, որ աս ամէն բարեաց ար-
ժանի ըլլամ: չըլլայ թէ այսպիսի
շնորհաց գանձը ձեռքս ունենալով,
աղքատ ու ողորմելի մնամ: Գո՛ւն
ծագէ սրտիս մէջ անաստուածային
լոյսը, որ աղէկ ճանչնամ աս սուրբ
խորհուրդին յարգը, ու այնպիսի
ջերմեռանդութեամբ լսեմ, ինչպէս
որ լսեցինք ու սիրելի ծառաներդ,
որ հիմա քեզի հետ կը թագաւորեն
արքայութեան մէջ:

Եւ գրոյս ի քոյոցս:

Ի՛նչ ընծայ կրնայ տանիլ իր թա-
գաւորին աղքատ մը, որն որ եւ ոչ
ուտելիք ունենայ իր կեանքը պա-
հելու համար: Իսկ ես քու աստուա-
ծութեանդ առջեւ եւ ոչ աղքատ
ըսուելու արժանի եմ, „ուրիշ էն
ե- յուրիշ համարեցան նմա: Ի վերայ

այսրամենայնի դուն ո՞վ թագաւորդ
թագաւորաց այնպէս պատուեցիր
մեր բնութիւնը, որ մեզի մարմնա-
կից եղար. մեզ արքայութեան որ-
դեգիր ըրիր, որուն հրեշտակներն
ալ երկինքը կը նախանձին: Հիմա
մեր ոչնչութիւնը այնպէս փառա-
ւորեցիր, որ ունինք մեր ձեռքը
Աստուծոյ արժանի ընծայ մը.
այսինքն նոյն իսկ որդւոյն Աստու-
ծոյ մարմինն ու արիւնը: Ո՛րչափ
պարտական ենք քեզ օրհնելու,
գովելու, գոհանալու, երբոր միտ-
քերնիս կը բերենք, թէ մեր միջ-
նորդը, բարեխօսը քուամենասուրբ
մարմինդ, ու արիւնդ է. ու աս
պատուական ընծաները դուն մեր
ձեռքէն կ'ընդունիս, ու Աստուծոյ
հօր կը նուիրես: Արնայ մի ըլլալ,
որ այսպիսի պատարագ ու ընծայ
ընդունելի չըլլայ, երբոր որդւոյն
Աստուծոյ մարմինն ու արիւնը կը
նուիրուի, ու նոյն որդին Աստուած
կը նուիրէ: Այսպիսի պարգեւի

հրեշտակներն ալ արժանի չեղան,
եւ ոչ իսկ հրեշտակային միտք
կրնայ բաւական օրհնութիւն ու
փառաբանութիւն մատուցանել
Աստուծոյ այսչափ մարդասիրու-
թեան: Աս միայն կ'աղաչեմ, որ
իմ վրայէս քու շնորհքդ չպակ-
սեցրնես. որպէս զի այսպիսի սրբ-
բազան խորհրդոյ ատեն ձեռքէս
եկածին չափ աղէկ մտադրութիւն
ընեմ, ու այսպիսի գերազանց
պարգեւէ մասն ընդունիմ:

Որպէս զի եղիցի սա:

Իրաւցընէ տէր իմ մեծ պարգեւ
ու շնորհք կրնամ ընդունիլ աս
սուրբ խորհուրդներուն միջնոր-
դութեամբը, թէ որ ինչպէս պէտք
է այնպիսի ջերմեռանդութեամբ
մատչելու ըլլամ: Սակայն մեծ դա-
տապարտութիւն է, թէ անպատ-
րաստ գտնուիմ, ու միտքս ասդին
անդին ցրուեմ: Աս սեղանիս վրայ

ան սիրոյ հուրը կը բորբոքի, զոր
գուն վառելու համար աշխարհք
եկար, եւ ուզեցիր որ ամենուն
սիրտը վառի: Եւ այսչափ սաստիկ
հրոյ առջեւը կենալով, թէ որ փոյթ
ու արթնութիւն չունենամ, ամե-
նեւին մասն չեմ ընդունիր: Հոս կը
տեսնուին ան ամէն չարչարանացդ
յիշատակը, որոնց պատճառ եղաւ
իմ մեղքերս. սակայն թէ որ ա-
ղօթքս անմտադրութեամբ ու ծու-
լութեամբ ընելու ըլլամ այսպիսի
ահաւոր խորհրդեան ատենը, ամե-
նեւին չեմ իմանար, թէ որչափ
գարշելի են եղեր իմ մեղքերս:
Հոս կը գտնուի աղբիւր ամէն շնոր-
հաց, որնոր սովոր ես գուն բաշխել
քու ծառաներուդ: Բայց ես, թէ
որ հոգ չունենամ ճանչնալու իմ
աղքատութիւնս, ու իմ կարօտու-
թիւնս, որ ունիմ քու սուրբ շնոր-
հաց օգնականութեանը, աս պա-
տարագս տեսնելով ամենեւին
օգուտ մը չեմ տեսներ, շնորհք

մը չեմ ընդունիր, պակասութիւն-
ներս չեմ կրնար ճանչնալ, բարի
քան մը միտքս չիգար, որ առաջա-
դրեմ. կամ թէ որ գալու ալ ըլ-
լայ ուժ չեմ ունենարկատարելու:
Թէ որ իմ ծուլութեանս նայիմ,
արժանի եմ, որ աս խորհուրդը
ինձի դատապարտութիւն ըլլայ,
քան թէ քաւութիւն ու թողու-
թիւն գործած մեղքերուս: Բայց
երբոր քու սէրդ կը մտածեմ,
յոյս ու վստահութիւն մը կ'ունե-
նամ, որ զիս ամենեւին երեսէ չես
ձգեր:

Յիշեալ տէր եւ ողորմեալ:

Խոնարհութեամբ գետինն ինկած
կ'աղաչեմ քեզի հայր երկնաւոր,
աս սուրբ պատարագիս զօրութե-
ամբը ողորմէ բոլոր աշխարհիս: Տէր
իմ, նայէ միանգամ խաչին վրայ,
ու տես թէ քու միածին որդիդ
ինչեր քաշեր է մեր փրկութեա

նր համար: Յիշէ անոր սոսկալի
չարչարանքները, յիշէ անոր թա-
փած անգին արիւնը, յիշէ անոր
պատուական մահը, ու գթութիւն
ըրէ մեր վրայ, օգնութիւն հասիր
ամենուն ալ: Ար խնդրեմ նախ՝ որ
քոյր աշխրաքիս խաղաղութիւն,
ու սուրբ եկեղեցւոյ հաստատու-
թիւն պարգեւես: Գաղթեց՞ուր
հալածանքը եկեղեցւոյ մէջէն. մե-
ղաւորներուն գարձ տուր. բանտի
մէջ եղողներուն ազատութիւն
չնորհէ. հիւանդներուն առողջու-
թիւն պարգեւէ. ու ամէն տեսակ
չար փորձանքներէն մեզ ազատէ:

Յիշես ու ողորմիս աս սուրբ
պատարագովս ննջեցեալ հոգիներ-
ուն, որոնք որ ուղիւ հաւատով
ու զղջումով մեռած են. աս ահեղ
պատարագին արգեամբը ան տրտը-
մած հոգիները մխիթարէ, ու քու
տեսութեանդ արժանի ըրէ:

Յիշէ մեզ ալ, որ աս սուրբ
պատարագիս ներկայ ենք. ու ինչ

որ մեզի օգտակար է, ան շնորհէ:
Յիշէ նաեւ իմ ծնողքս, ազգա-
կաններս, ու բարեկամներս, ու ա-
նոնց սրտին բարի բաղձանքը կա-
տարէ. ու մասնաւորապէս ինձի
բարիք ընողներուն հազարապատիկ
վարձք տուր, ինձի թշնամութիւն
ընողներուն ներէ, ու շնորհք տուր:
Գուն շիտկէ մեր ամենուս սրտին
բաղձանքը, ան բանի բաղձանք,
որնոր մեր յաւիտենական փրկու-
թեանը արգելք մը չ'ըլլար: Գուն
մաքրէ մեր միտքը ու խորհուրդ-
ները, որ արժանի ըլլանք սրբու-
թեամբ ընդունիլ քու սրբազան
մարմինդ ու պատուական արիւնդ:

Եւ եղիցի ողորմութիւն:

Միջառասիկ կը լսեմ, որ դուն քա-
հանային բերնով ինձի կը խոստա-
նաս քու ողորմութիւնդ: Իրաւցը-
նէ քու ողորմութիւնդ չափ չունի,
ինչու որ ամենեւին անարժան էինք

ապրելու, թէ որ դուն քու գթու-
թեամբդ մեզի ողորմելու չըլլայիր:
Ի՛նչ մեծ ողորմութիւն է, որ դուն
քու մարմինդ ու արիւնդ աս սուրբ
խորհրդեամբ մեզի պարգեւեցիր.
ու խոստացար մեզի ամէն հոգեւոր
խնդիրքնիս կատարել. յաւիտե-
նական կեանք պարգեւել. ու քե-
զի հետ մէկ տեղ թագաւորել:
Մէկ կողմանէ որչափ որ մեծ է
քու ողորմութիւնդ, մէկալ կող-
մանէ ալ այնչափ խելքէ մտքէ
դուրս է մեր տղայամտութիւնը:
Այսպէս մեծամեծ պարգեւներդ
ու խոստմունքներդ ամենեւին բա-
նի տեղ չենք սեպեր: Շատ ան-
գամ ինծի քիչ մը երկրաւոր բա-
րիք մը պարգեւողի աւելի երախ-
տագէտ կ'ըլլամ, քան թէ քեզի.
որ զիս ալ եւ ունեցածս ալ դուն
ստեղծեր ես: Անոր համար կ'աղա-
չեմ ո՛վ ողորմած տէր, որ իմ
վրաս քու ողորմութիւնդ շատցը-
նես. բանաս աչքս որ ճանչնամ"

Թէ ինչ է տարբերութիւնը հոգե-
ւորին ու մարմնաւորին, ժամանա-
կաւորին ու յաւիտենականին մէջ .
ճանչնամ մեղքին գարշութիւնը՝
ու առաքինութեան սիրելի ըլլալը :
Հիմա կը մատչիմ քեզի, երբոր
չնորհաց ու ողորմութեան ակտիւ
նստեր ես, ու պատրաստ ես ամէն
քեզի եկողներուն վրայ քու սուրբ
վերքերէն բղխած արիւնը թափել,
ու սիրտերնին վառել : Առաջ իմ
սառած սիրտս ալ, որ քու սիրովդ
բորբոքի, ու քու ողորմութիւնդ
յաւիտեանս չմոռնայ :

Հայր մեր, որ յերկինս ես :

Ո՛վ հայր յաւիտենական, որ
գթալով մեր վրայ քու միածին
որդիդ մեզի խրոկեցիր, մեզի հա-
ւատոյ խորհուրդները սորվեցընե-
լու, ու մեզի իր վարքովը օրինակ
տալու համար : Ես ալ կը ջանամ
անոր օրինակներուն հետեւելով

քու անունդ սուրբ ընել աս աշխարհքիս մէջ . ու անդիի աշխարհքը արքայութեան մէջ փառաբանել քու ամենաբարի կամքդ, որ պատրաստ ես մեզի միշտ բարիք ընելու: Աս աշխարհքիս մէջ իս ծնած օրէս ի վեր ողջ պահեցիր, ու կենաց հարկաւոր եղածն առատապէս պարգեւեցիր. թէպէտ ես ապերախտ գտնուեցայ, չճանչցայ իմ բարերարս. սակայն դուն այնպիսի զարմանալի կերակուր մը պարգեւեցիր, որ հրեշտակներն իսկ զարմացան, այսինքն քու միածնիդ պատուական մարմինն ու արիւնը: Գարձեալ ապերախտ գտնուեցայ, չյարգեցի ինչպէս որ պէտք էր աս սուրբ խորհուրդը. ու իմ ապերախտութեանս համար չունեցայ ան շնորհքը, որով ամենեւին ազատ ըլլամ մեղքերէ: Շատ անգամ մեղանչեցի խորհրդով, բանիւ եւ գործով. թող ինձի իմ յանցանքներս: Ահաւասիկ, թէ որ իմ ձայ-

նիս չես լսեր, բարեխօս ունիմ ին-
ծի քու որդիդ, որ իր արեան ան-
սահման գինը կը մատուցանէ քե-
զի իմ մեղքերուս համար: Աս թէ-
պէտ մեղօք թշնամի եղած եմ
քեզի, սակայն դուն պատրաստ ես
ինծի ներելու, որով օրինակ կու
տաս ինծի ալ, որ ես ալ իմ թշնա-
միներուս դիւրաւ թողու թիւն
տամ: Մանաւանդ թէ ես քեզմէ
թողու թիւն առնելէն յառաջ,
սրտանց կը ներեմ ամենուն. որոնք
որ ինծի վնաս մը տուեր են, որպէս
զի համար ձակու թիւն ունենամ
լսելու, ինչպէս որ ես իմ թշնա-
միներուս ներեցի, դուն ալ ինծի
այնպէս ներէ, բարեխօսութեամբ
քու միածնիդ, ու սուրբ Աստուա-
ծածնայ, եւ ամէն սուրբերուն:

Ի սրբութիւն սրբոց:

Ով սրբութիւն սրբոց, ով կեն-
դանի մարմին եւ արիւն Յիսուսի,

սրտանց կը հաւտամ, ու բերնովս
կը խոստովանիմ, որ ահա իմ առ-
ջեւ կը կատարուի ան մեծ խոր-
հուրդը, որ գողգոթա լերան վրայ
կատարեցաւ: Ար տեսնեմ քեզ
հաւատոյ աչքովս խաչին վրայ, որ
մեզի համար միջնորդ կ'ըլլաս Աս-
տուծոյ արդարութեանը: Արչափ
պարտական ենք քեզ օրհնելու
ով գթած փրկիչ, որ մեզ այսչափ
սիրեցիր: Օրհնութիւն՝ ու փա-
ռաբանութիւն երգեն ամէն արա-
րածք Աստուծոյ անսահման մեծու-
թեանը: Օրհնեալ ըլլայ հայր եր-
կնաւոր Աստուած, որ իր մէկ հա-
տիկ սիրելի որդին աշխարհք խըր-
կեց մեր փրկութեանը համար: Օր-
հնեալ ըլլայ ճշմարիտ որդին Աս-
տուած. որ մեզի համար մարմին ա-
ռաւ. ու իր սուրբ արիւնովը զմեզ
փրկեց: Օրհնեալ ըլլայ ճշմարիտ
հոգին սուրբ Աստուած. որ անբաւ-
շնորհքներով մեզ լեցուց, ու լու-
սաւորեց: Ընդունէ իմ աս անար-

Ժան օրհնու թիւնս ո՛վ ամենասուրբ
Երրորդու թիւն. ու արժանի ըրէ
իս երկնից արքայութեան մէջ
հրեշտակներուն հետ անդադար
քեզ օրհնելու :

Ի սուրբ ի սուրբ :

Ո՛վ տէր իմ Յիսուս Քրիստոս,
ահա խաչին վրայ բազկատարած
գամուած, ձեռուրներդ բացած
պատրաստ ես իս ու ամէն քեզի
եկողներն ընդունելու : Ես մագ-
դաղենացւոյն հետ քու խաչելու-
թեանդ ոտքը կ'իյնամ, ու կը
խնդրեմ աչքիս արցունքով, որ
մեղքերով մեռած հոգիս ողջըննայ
Վասն զի դուն ես իմ կեանքս : Գի-
տեմ որ իս ալ չես մերժեր, թէ-
պէտ շատ անգամ ապերախտ
գտնուած ըլլամ քեզի. ինչու որ
դուն ես մեղաւորներուն յոյսը :
Ո՛վ գառն Աստուծոյ, որ բոլոր
աշխարհիս մեղաց բեռը կռնակդ

վերցուցիր, ու անոնք ազատելու
համար քու պատուական արիւնդ
թափեցիր. հիմա կ'աղաչեմ քեզի,
որ իմ մեղքերուս ալ քաւութիւն
եւ թողութիւն տաս: Երկնաւոր
օրհնութեամբդ օրհնէ իմ հոգիս
ու մարմինս. որպէս զի միշտ քեզ
սիրէ, ու սուրբ պատուիրաններէդ
մէյ մ'ալ չխոտորի:

Ճաշակելէն առաջ:

Ո՛վ բարի Յիսուս, դուն մեզ հրա-
ւիրեցիր, թէ ո՛վ որ ծարուած է
քեզի գայ: Ահա իմ հոգիս քանի
որ ստեղծուած է, արարածական
բաներու հետ ըլլալով միշտ ծա-
րաւի ու անհանգիստ է: Թողեր է
քու սրբազան կողդ, որ ինձի հա-
մար յաւիտենական կենաց աղբիւր
վաղցուցիր, գացեր աշխրբիս ան-
ցաւոր բաներով ծարաւը անցընել
կ'ուղէ: Գու փրկիչ իմ, ողորմէ
հոգւոյս խեղճութեանը, ու գո՛ւթ

չարժէ. լուսաւ որէ միտքս, ու սիրտս
փոխէ, որ ասկից ետեւ քեզ գտնե-
լու ետեւէ ըլլայ. շնորհք տուր,
որ սիրտս քու անուշ անուշ հրա-
ւէրդ ընդունի, ու աս ողորմու-
թեան աղբիւրը վազէ եղջերուի մը
պէս, որ լեռներու վրայ ջուր կը
փնտռէ: Արչափ անսահմանելի է
քու սէրդ, որ ինձի այսպիսի սե-
ղան պատրաստելու համար մեռ-
նիլն յանձն առիր: Աւրիշ բան չեմ
տեսներ աս սեղանիս վրայ, բայց
եթէ քու ճշմարիտ մտքիդ, ու
սուրբ արիւնդ, որ մեզի համար
զոհ եղեր է: Ա՛վ տէր իմ Յիսուս,
աս ինչ մեծ շնորհք, աս ինչ մեծ
սէր է ցըցուցածդ վրաս. քեզ իմ
հոգւոյս կերակուր պատրաստես:
Ես արժանի էի գործած մեղքերուս
համար բիւր անգամ մեռնելու.
բայց իմ անօրէնութիւններս դուն
վրագ առիր, ու ինձի համար չար-
չարուեցար: Ա՛վ ողորմած փրկիչ
իմ, վառէ բոլորքէ սիրտս քու

աստուածային սիրովդ, ու քու ամենասուրբ սրտիդ հետ միացուր: Մաքրէ հոգիս ամէն երկրաւոր բաներէն, որ շատ անգամ սրբութեամբ աս պատուական խորհրդոյն հաղորդուելու արժանի ըլլամ: Անանկ է նէ կը խնդրեմ հիմա, որ ինձի շնորհք տաս. որպէս զի չըլլամ ես ալ անոնցմէ, որոնք այսպիսի բարերարութեան դէմ ապերախտութիւն ըրած են: Գասիմ սիրտս հոգեւորապէս, պատրաստես հոն քեզի արժանի բնակարան մը, որ երբոր քու սուրբ մարմինդ ճաշակեմ, աս խորհուրդը քեզի փառք ըլլայ, ու ինձի առողջութիւն ու կեանք:

Ճաշակելէն ետքը:

Կը գոհանամ քեզմէ հայր ամենակալ, որ խրկեցիր քու միածինդ, որ աս սուրբ խորհուրդը հաստատեց սուրբ եկեղեցւոյս մէջ, ուր

սուրբ Երրորդութիւնը կը փառաբանենք:

Ար գոհանամ քեզմէ որդիդ միածին, որ քու կենարար մարմնովդ ու արեամբդ մեզի կենդանութիւն տուիր:

Ար գոհանամ քեզմէ ո՛վ սուրբ հոգի, որ միշտ մեզի հետ ես, ու եկեղեցին անշարժ կը պահես, որ հաւատացեալները միշտ սուրբ Երրորդութիւնը փառաւորեն:

Մեզունէ իմ անարժան գոհութիւնս հրեշտակներուն ու սուրբերուն հետ. ու արժանի ըրէ, որ ես ալ օր մը քեզ տեսնեմ, ու սուրբերուն հետ փառաբանեմ յաւիտեանս յաւիտենից:

Ար օրհնես զայնոսիկ:

Վառ տէր իմ խոստացար, որ ամէն ազաչանքնիս կը կատարես, ինչ որ քու սուրբ անուամբդ կը խնդրենք: Չեմ խնդրեր մարմնաւոր բարիք,

ինչու որ դուն մինչեւ հիմա ինչ
որ պէտք էր մեզի հոգացիր ու
ապսպրեցիր որ՝ վաղուան համար
չհոգանք: Ար խնդրեմ միայն, որ
աս սուրբ պատարագիս ու քու
սրբազան ջարջարանքներուդ ար-
դիւնքը ամենուս վրայ գայ. մեզ
օրհնէ, սրբէ ու պահէ: Մեր բա-
նին գործքին յաջողութիւն տայ.
մեզ հոգւոյ ու մարմնոյ փորձանք-
ներէն ազատէ: Անհաւատներուն
լոյս տայ, որ ճշմարիտ կրօնը ճան-
չնան. մեղաւորներուն դարձ ու
բարի վարք շնորհէ: Ննջեցելոց
հոգւոց հանգիստ պարգեւէ, ու
անդիի աշխարհքը ամենուս ալ
յաւիտենական կեանք, ամէն:

Պատարագէն ետքը:

Շնորհակալ եմ փրկիչ իմ Յի-
սուս, ու կ'օրհնեմ քու անբաւ
ողորմութիւնդ ու սէրդ, որ մեր
վրայ ցըցուցիր: Ահա աս սուրբ

պատարագը տեսնելովս՝ քու չար-
չարանքներուդ յիշատակը նորէն
միտքս եկաւ. իբրեւ թէ աչքիս
առջին զինուորները քեզ բռնեցին
կապեցին, դատաւորին առջին տա-
րին. կարմիր քղամիդ հագցրնե-
լէն ետքը գլուխդ փշով պսակե-
ցին, ու անխնայ ծեծեցին. անկից
ալ խաչը կոնակդ առած գողգո-
թա լեռը առին տարին, ու քեզ
հոն խաչեցին. ու անանկ սաստիկ
ցաւերու մէջ սուրբ հոգիդ Աս-
տուծոյ ձեռքը աւանդեցիր մեր
մեղքերուն քաւութեան ու թո-
ղութեանը համար: Այլ մարդասէր
փրկիչ իմ, քու սուրբ չարչարա-
նաց ու մահուանդ արդեամբը
չնորհք ու զօրութիւն տուր ինձի,
որ քեզ միշտ սիրեմ, ու մեղան-
չելով նորէն քու չարչարանքներդ
չաւելցրնեմ: Գուն խոստացար
տէր իմ անսուտ բերնովդ, որ մին-
չեւ աշխրդքիս կատարածը մեզի հետ


պիտի ըլլաս. ուրեմն թող մի տար
իս, որ քեզմէ երբեք բաժնուիմ:

Աղօթք ամէն հաւատացելոց համար:

Ո՛վ ամենակարող Աստուած յա-
ւիտենական, հայր երկնաւոր,
գթած աչուրներովդ նայէ մեր
խեղճութեանն ու կարօտութեանը:
Ողորմէ ամէն քրիստոնեաներուն,
որոնց համար քու միածին որդիդ
Յիսուս Քրիստոս, մեր տէրն ու
փրկիչը մեղաւորաց ձեռքը մատ-
նուեցաւ, ու իր պատուական արիւ-
նը խաչին վրայ վազցուց: Անանկ է
նէ ո՛վ հայր բարեգութ, քու միա-
ծին որդւոյդ անհուն արդեամբը
վերցնուր մեր վրայէն ան պատիժ-
ները, որոնց իրաւցրնէ արժանի
ենք. ազատէ մեզ ամէն փորձանք-
ներէն ու վտանգներէն. խափանէ
վնասակար ապստամբութիւնները,
պատերազմները, սղութիւնը, սովը,
հիւանդութիւնները, ժանտախտը,

ու դառն ժամանակները: Լուսա-
ւորէ, ու զօրացնու ճողերու ու
մարմնաւոր իշխանները ու առաջ-
նորդները բարի գործքերու մէջ.
որպէս զի օրէ օր ծաղկի ու յա-
ռաջ երթայ ան բաները, որնոր
քու անուանդ պատիւ է, ու մեր
փրկութեան ու հասարակաց իա-
ղաղութեան օգտակար: Ո՛վ Աս-
տուած խաղաղութեան, պարգեւէ
մեզի այնպիսի միաբանութիւն հա-
ւատոյ, որ մէջերնիս հերձուած մը
կամ տարածայնութիւն մը չի գրտ-
նուի: Սրտերնուս զղջում շնորհէ,
ու մեր վարուց ուղղութիւն պար-
գեւէ: Առէ մեր սրտին մէջ քու
սիրոյ հուրդ: Մեզի փափագ ու
եռանդ մը տնուր ամէն տեսակ ա-
ռաքինութիւնները կատարելու.
որպէս զի հնազանդ ծառաներու
պէս թէ ողջութեան, ու թէ մե-
ռած ատեննիս քեզի հաճոյ ու սի-
րելի ըլլանք: Ո՛վ հայր բարեգութ,
կ'ուզես որ մենք մէկզմէկու համար

ալ աղօթք ընենք. անանկ է նե
կ'աղաչենք քեզի, որ ողորմիս մեր
բարեկամներուն ու թշնամիներուն,
առողջներուն ու հիւանդներուն,
տրտմութեան ու նեղութեան մէջ
եղող քրիստոնէաներուն, ողջերուն
ու մեռածներուն: Քեզի կը յանձ-
նենք բոլոր մենք զմեզ, ու մեր ա-
մէն ընելիքը, մեր կեանքն ու մեր
մահը: Գուն քու շնորհքդ աս
աշխրհքիս մէջ վրաներնէս մի պակ-
սեցրներ. ու անդիի աշխարհքը
արժանի ըրէ, որ ընտրելոց հետ
յաւիտենական ուրախութեան ու
երջանկութեան մէջ քեզ սիրենք
ու անդադար փառաբանենք: Աս
շնորհքս մեզի պարգեւէ տէր հայր
երկնաւոր, քու սիրելի որդւոյդ
Յիսուսի քրիստոսի ու մեր փրկչին
բարեխօսութեամբը՝ որ քեզի ու
հոգւոյն սրբոյ հետ կեայ եւ թա-
գաւորէ յաւիտեանս յաւիտենից,
ամէն:



J. Kreuzener Stahlst.

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Յորդոր ի դիմաց Քրիստոսի ի սիրտ
մեղուցելոյն:

Այս որդեակ, անգամ մը ինձի
նայէ, որ աս դառն խաչափայտին
վրայ բազկատարած գամուած եմ:
Տես աս ցաւագին վէրքերս, որ
քեզ սիրելու համար յանձն առի:
Տես արիւնալից գլուխս փշով պսա-
կուած, որպէս զի քու մեղացդ
փուշերը մաքրեմ: Տես սրտիս վրայ
բացուած վէրքը, որ քու քարա-
ցեալ սիրտդ կը փնտռէ: Տես ի
վախճանի գլուխս խոնարհած ու
մեռած քու փրկութեանդ համար:
Ահա քու հոգւոյդ օգտին համար
այսչափ չարչարանքներ քաշելէս
ետեւ ինչպէս դուն ինձի դէմ
թշնամի եղար ու ցաւերս նորոգե-
ցիր: Ինչո՞ւ ատ հոգիդ՝ որ ես ին-

ծի համար ստեղծեր էի, ու իմ
մահուամբս փրկեցի, առ խեղճու-
թեան մէջ ձգեցիր, ու դարձեալ
սատանային գերի ըրիր, քու բարի
փրկիչդ թող տալով՝ անոր հե-
տեւեցար: Քանի քանի անգամ
իմ ազդեցութիւններովս քեզ
կանչեցի, ու դուն ականջդ գոցե-
ցիր, ձայնս չիլսեցիր. որչափ եր-
կար քեզ փնտռեցի, ու դուն ինձ-
մէ հեռացար: **Չէ՞նչ գործ գործեցեր
որդեակ:**

Եւ այց մի վախնար որդեակ, մի
վախնար. թէպէտ դուն իս մոռ-
ցար, բայց ես քեզ չմոռցայ. դար-
ձեալ առջի ունեցած սիրովս քեզ
կ'ընդունիմ: Եթէ յանցաւոր
գտնուեցար, ես թողութիւն տա-
լու պատրաստ եմ. միայն մեղքե-
րուդ վրայ զղջա՛, ու սրտանց մեղայ
գոչէ: Թէ որ հիւանդ ես հոգւով,
ես եմ ան երկնային վարպետ
բժիշկը, որ մէկ խօսքով մըն ալ
կրնամ հոգիդ ողջացրնել: Թէ որ

մեղաւոր ես, ես ողորմած եմ. արդարներուն համար աշխարհք չեկայ, հապա մեղաւորներն ապաշխարութիւն կանչելու համար: Ես մեղաւորներէն չեմ քաշուիր, միշտ անոնց հետ ըլլալը կը սիրեմ. մինչեւ հրեաները իս բամբասեցին, թէ ինչու շարունակ մեղաւորներուն ու մաքսաւորներուն հետ կը նստիմ կ'ելլեմ, ու մէկ տեղ կ'ուտեմ կը խմեմ:

Արդէն գիտես որդեակ կորսուած ոչխարին պատմութիւնն աւետարանիս մէջ: Ահա ես եմ ան բարի հովիւը, իսկ դուն կորսուած ոչխար ես. բոլոր ոչխարները թողուցած՝ քեզ գտնելու ետեւէն ինկած եմ. լերանց գլուխը, վրտանգաւոր ու գազանակեր ճամբաներու մէջ կորսուած ոչխարդ կը փնտռեմ, ու անոր գիւտին կը փափագիմ: Ե՛կ կորսուած ոչխար, ահա քու բարի հովիւդ. եկ մեղաւոր հոգի, ահա քու փրկիչդ:

Գիտեմ որ խիստ յոգնած ես այն.
պիսի գարշելի մեղաց ճամբաներու
մէջ պտըտելէն, ու վրագ ալ ուժ
չէ մնացեր. հոգ չէ. ես քեզ իմ
ուսիս վրայ կ'առնում, քեզ դանե-
լուս ուրախութիւնը բաւական է
ինծի: Գարձիր, որդեակ, դարձիր
ալ անառակ որդւոյն հետ գթած
հօրդ տունը. հերիք այսչափ ատեն
իզմէ հեռացար, ու օտարութեան
մէջ կը չարչարուիս, ու անօթի կը
տանջուիս: Ես եմ անգթած հայրը,
եկ ինծի դիմէ մեղայ գոչելով, քեզ
չեմ վաւրնտեր, սիրով քեզ կը
գրկեմ, ու հաշտութեան համբոյր
ալ կու տամ քեզի. ատ աղտեղած
հագուստիդ տեղը՝ պատուական
լաթեր կը հագցընեմ: Ո՛րդեակ,
դի՛նչ կ'օրհնեմ, դի՛ արարից +եղ. ինչ որ
կ'ուզես, սիրով կը կատարեմ, մի-
այն աչքիդ արցունքը տուր ինծի.
Թէպէտ քիչ ալ ըլլայ, ան բաւա-
կան է քու հոգւոյդ աղտեղութիւնը
լուանալու: Պոռնիկ կնիկն իր ար-

ցունքովը արդարացուցի. Պետրոս
առաքելոյն լացքին նայելով՝ ըրած
ուրացութեանը ներեցի. ու ան
խեղձ մօր արցունքին սիրտս չդիմա-
նալով, իր մեռած աղջկանը կեն-
դանութիւն տուի: Ես գթած եմ,
աղաչանքդ շուտով կը լսեմ. իմ
խաչիս ոտքն ինկիր, ու սրտանց
հառաչանք մ' ըրէ: Ի՞նչպէս կրնամ
աս վիրաւորուած ձեռուրներովս
քեզ պատժել, ու քեզի դէմ
վրէժխնդրութիւն ընել, որ քեզ
պատժէն աղատելու համար ձե-
ռուրներէս այնչափ արիւն թափե-
ցի. ի՞նչպէս քեզ շսիրեմ, ու սրտիս
մէջէն դուրս հանեմ վռնտեմ,
որ քեզ սրտիս մէջ ընդունելու
համար աս վէրքս բացի: Ե՛կ որ-
դեակ, քու ապաշխարութեան
դարձովդ ցաւերս թեթեւցուր. ու
երկնաւոր հայրս, հրեշտակներն
ու բոլոր արքայութեան մէջ եղած
սուրբերն ուրախացուր. որ իմ
հայրս ալ իր երկնաւոր օրհնու-

Թիւններով քեզ օրհնէ, ու զանազան շնորհքներով քեզ լեցունէ, եւ ի վախճանի իր արքայութիւնն ընդունի:

Հառաչանք սրտի մեղուցելոյ առ
Յիսուս փրկիչ:

Մ՛ի ողորմած փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, ահա մեղաւոր հոգիս քու խաչիդ ոտքն ինկեր է, ու փղձկած սրտով արցունք կը թափէ եւ անմխիթար կու լայ կ'ողբայ: Այն ինձ տէր իմ, վայ ինձ, աս ինչ խեղճութեան մէջ մտեր է իմ հոգիս. աս ինչ սոսկալի յաւիտենական կորրստեան վտանգներու մէջ իս ձգեր են իմ մեղքերս. ու ես բոլորովին կուրացեալ ասանկ անհոգ կ'ապրիմ: Ա՛խ տէր իմ, կ'ամչնամ աչուրներս վեր վերցընելու ու քեզի նայելու. ինչու որ ես պատճառ եղայ մեղանչելովս ատղառն չարչարանքները նորէն քե-

զի քաշել տալու: Իմ մեծամեծ
մեղքերս էին տէր իմ, որ սուրբ
մարմնոյդ վրայ ատշափ ցաւագին
վէրքեր բացին. իմ ազտեղի ու չար
խորհուրդներս էին տէր իմ, որ
ատ անգուժ լիշեղէն պսակը քու-
կին աստուածային գլուխդ դրին.
Իմ գարշելի կիրքերս էին տէր իմ,
որ քու գլծած սիրտդ վիրաւո-
րեցին: Քայց դու ո՛վ բարեգուժ
Յիսուս, իմին ասչափ անօրէնու-
թիւններս չյիշելէն ետքն՝ իմ
ետեւէս ինկեր ես, կորսուած ոչ-
խարս կը փնտռես. քու անուշ
հրաւերովդ իմ քարացեալ սիրտս
չարժել կ'ուզես, որ աս կորստեան
ճամբաներէն ետ կենամ. ու ա-
պաշխարութեամբ քեզի դառնամ,
ու քու հետդ հաշտուիմ: Ահա
տէր, հիմա սրտանց քեզի դարձեր
եմ. ոտքդ ինկած մեղայ կը գոչեմ:
Քեզ յիշան մեղայ որէր. ե- ղչար ու-
նակի + ու արարի: Աս է սրտիս մեծ
ցաւը, որ իմ արարիչս ու փրկիչս

անչափ վշտացուցի եւ երկար ա-
տեն իրմէ հեռացայ. եւ ան ծայրա-
գոյն բարութիւնը չճանչցայ: Առ-
լամ կ'ողբամ տէր իմ, ու չեմ գի-
տեր թէ՛ ուսկի՞ց աս ցաւագին
սրտիս մտիթարութիւն մը պիտի
գտնեմ: Ա՛վ ողորմած Աստուած,
մեղաւորիս ձայնը լսէ, ու գթու-
թիւն ըրէ իմ վրաս. աչքիս ար-
ցունքները թող վկայեն. աչքիս
արցունքներն աղաղակեն, թէ հի-
մակ որչափ քեզ կը սիրէ հոգիս,
ու ինչպէս քեզ գտնելու ետեւէն
է: Աւրեմն տէր իմ, դուն քու աս-
տուածային սիրովդ բորբոքէ սիրաս.
մտքիս լոյս տուր, ու կամքս զօրա-
ցոր, որ մէյ մ'ալ մեղք չգործեմ,
ու քեզ չվշտացրնեմ:

Եւ այց կը խնդրեմ հիմա փրկիչ
իմ, որ հոգւոյս բժշկութիւն տաս,
ու ողորմիս ինձի. ինչու որ հոգիս
հիւանդ է, ու բարեգործութիւն
ընելու ուժ չէ մնացեր վրան: Ար
պաղատիմ քեզի դէմ, ու կ'աղա-

չեմ սրտանց: Տէր ահա-ասիկ շոբ
դուն սիրէիր՝ հի-անդացեալ է: Տէր
իմ, ահա ան հոգին՝ որ դուն կը
սիրէիր, հիւանդացեր է. ան հո-
գին՝ որ դուն քու անգին արեամբդ
գնեցիր, ցաւագար մնացեր է. ո՛վ
երկնային բժիշկ հոգւոց, դուն
ինամ տար վրաս, բժշկէ հոգւոյս
ցաւերը, որ աս խեղճութենէս
խալըսիմ, քու շնորհացդ մէջ կեն-
դանանամ: Լսէ սրտիս աս հառա-
չանքն ո՛վ Աստուած իմ, ու եր-
կնային օգնութիւնդ խրկէ ինձի,
որ կարող ըլլամ մեղքերուս վրայ
զղջալ. ու դարձեալ սուրբ աւա-
զանին շնորհքն ընդունիլ, ամէն:

Աղօթք մեղքերը յիշելու համար:

Մերգական արդարութեան Յիսուս
Քրիստոս, որ աշխարհք գալովդ
իբրեւ առաւօտ լուսաւորեցիր ա-
մէն մարդը, որոնք որ քեզի հաւա-
տացին: Ծագէ իմ սիրտս ալ քու

Ճառագայթդ որ լուսաւորիմ, ու
տեսնեմ ամէն ծածուկ մեղքերս:
Թէ դուն չես լուսաւորեր, կարծեմ
թէ ամենեւին մեղք չունիմ. բայց
թէ որ դուն լուսաւորելու ըլլաս,
չամանդաղներու պէս, (որոնք կը
տեսնուին արեւին պատուհանէն
ներս զարկած ատենը) իմ անթիւ
մեղքերս երեւան կ'ելլեն: Գիտեմ
որ մարմնաւոր աչքով կուրերուն
դուն ողորմեցար ու լոյս աուիր,
երբոր աղաղակեցին, Յիսուս որդի
Գաւթի ողորմեաց մեզ: Հիմա ես
ալ իմ հոգւոյս աչուրներուն լոյս
կը խնդրեմ, կ'աղաչեմ որ աչուր-
ներս բանաս: Շատ մոլութիւններ
ունիմ, որ շատ արգելք կ'ըլլան
ինչպէս որ պէտք է, տեսնելու իմ
մեղքերս, որոնց գլխաւորն է
անձնասիրութիւնս: Մեծ մեղքերս
ինծի պղտիկ կը ցուցնէ, ու պղտիկն
ամենեւին կը ծածկէ: Առուտու-
րի մէջ խաբէութիւնը վարպետու-
թիւն կը ցուցնէ. բամբասանքն

եւ ուրիշին անունն աւրելը՝ ճշմարտութիւն ու անտարբեր պատմութիւն մը կ'երեւցընէ, հայհոյել ու անառակ խօսքեր խօսիլը զուարճախօսութիւն կարծել կու տայ. որս պահել ու թշնամի ըլլալն՝ ոչինչ բան մը սեպել կու տայ: Բայց դու տէր իմ՝ բազմագութ, թող միտար որ ես նոյն խաւարին մէջ մնամ, հապա շնորհք տուր, որ խոստովանութիւնս ինչպէս որ պէտք է, այնպէս ամբողջ ըլլայ:

Աս կը ջանամ ձեռքէս եկածին չափ քու սուրբ շնորհօքդ ամէն բան միտքս բերել ու խոստովանիլ. բայց թէ որ բան մը ակամայ մոռնալու ըլլամ, դուն մնացած պակսութիւնը լեցնուր ու ան շնորհքը տուր, ինչպէս որ կատարեալ խոստովանած ըլլայի: Թէ որ ետքէն միտքս գալու ըլլայ, պատրաստ եմ միշտ ամէն մեղքս, ինչ տեսակ որ ըլլայ, խոստովանելու: Փարատէ վրայէս ամօթն ալ, որ համարձակ

խոստովանիմ: Գարձեալ շնորհէ,
որ խիղճս իս չիչարչարէ, ինչպէս
որ խղճահարները կը չարչարուին,
երկբայելով թէ արդեօք մեղք մը
մոռցեր եմ՝ թէ չէ. թէ արդեօք
խոստովանութիւնս ամբողջ եղաւ՝
թէ չէ. արդեօք աստուծմէ շնորհք
աւի՛ թէ չէ: Աս ամէն խորհուրդ-
ներս դուն տէր իմ փարատէ իմ
մտքէս ու զօրութիւն տուր, որ
իմ ձեռքէս եկածն ընեմ. ու խոս-
տովանանք ըլլալով, սրտիս հան-
գըստութիւն գտնեմ:

Աղօթք առ Յիսուս փրկիչ խղճի
մտայ քննութենէն ետքը:

Խաչելեալ տէր իմ Յիսուս Քրիս-
տոս, ահա աս խղճմտանքի քննու-
թեան մէջը քու տրտմագին պատ-
կերդ աչքիս առջին եկաւ. ու
տեսայ, որ չարչարանքներուդ
սկսած ատենը՝ երբոր գէթ սեմանի
պարտեզին մէջ երեսի վրայ գե-

տինն ինկած քու երկնաւոր հօրդ
կ'աղօթ էիր, բոլոր աս իմ մեղքերս
ու անօրէնութիւններս մէկիկ մէ-
կիկ միտքդ բերելով, ան սոսկալի
տագնապը քաշեցիր, մինչեւ արիւն
քրտինք քրտընեցար. ետքը իմ
սիրոյս համար ամէնը մէկէն վրադ
առիր. ու անանկով քու երկնաւոր
հօրդ առջեւը դուն քեզ ինծի
համար ու իմ անօրէն մեղքերուս
տեղը՝ քաւութեան զոհ ընծայեցիր.
ու յօժար սրտով վազեցիր խա-
չին վրայ գամուեցար, սուրբ ա-
րիւնդ լծափեցիր, ու երկնաւոր
հայրդ ինծի հետ հաշտեցուցիր:
Սիրելի Յիսուս իմ, կը տեսնեմ որ,
խաչուած ատենդ իմ ամէն մէկ
մեղքերս ու անօրէնութիւնս քեզի
ինչ ցաւ ու կսկիծ տուեր է:
Բայց վայ ինծի, որ ասասանկ գիտ-
նալէս ետքը, ես այսչափ անթիւ
անհամար անգամ դարձեալ մեղք
գործելու համարձակեր եմ. ու
քու սաստիկ ցաւերդ ու կսկիծ-

ներդ նորոգեր եմ: Ա՛հ Յիսուս,
աս ինչ կուրութիւն, ինչ ապե-
րախտութիւն, ինչ քարասրտու-
թիւն է, որ ես ըրեր եմ: Ա՛վ սի-
րելի Յիսուս իմ, իմ միջնորդս ու
փրկիչս դուն ես. քու պատուա-
կան մահդ, սուրբ արեանդ հե-
ղումը՝ իմ մեղքերուս թողութեան
համար է: Ահա ասոնց վրայ իմ
յոյսս դնելով՝ քու կենարար խա-
չիդ ոտքը կ'իյնամ, ու սրտանց
զղջում կ'ընեմ. ու մէյ մ'ալ մեղք
չգործելու սրտանց աղէկ առաջա-
դրութիւն կը դնեմ: Դուն լուսա-
ւորէ՛ միտքս, ու սրտիս զեղջ տուր,
որ գործած մեղքերուս վրայ կա-
տարեալ ապաշխարութիւն ընեմ:

Աղօթք զղջման:

Արչա:ի մեծ անխելքութիւն ըրեր
եմ տէր իմ մեղանչելով. քանի
թշուառութեան մէջ ինք զինքս
ձգեր եմ պատուիրաններուդ դէմ

գործելով : Հպարտանալովս ու իմ
վրաս մեծ խօսելովս՝ քու կին աչ-
քէդ ելած եմ, ու ամէն իս տես-
նողները խենթի տեղ գրած ու
ծաղր բրած են : Քարկանալովս՝
անբան գազաններու նմանած եմ :
Որկրամոլութեամբս՝ իմ առողջու-
թեանս փնաս տուած եմ : Նախան-
ձելովս՝ ես ինծի անգութ գահիճ
եղած եմ : Աերջապէս ամէն մէկ
մեղքով քեզ վշտացուցած ու ին-
ծի մեծամեծ փնասներ տուած եմ :
Գուն ինծի զօրութիւն տուիր ա-
մէն մոլութիւններու յաղթելու .
իսկ ես անոնց դերի եղայ : Իմ
մեղքերս են, որ իմ խղճիս հան-
գիսան ու խաղաղութիւնը կ'աւ-
րեն, ու իս կը չարչարեն : Իմ մեղ-
քերս են, որ մկրտութեան շնորհ-
քը իզմէ կը կողոպտեն, ու բոլո-
բովին հոգիս խեղճութեան մէջ կը
թողուն : Աերջապէս իմ մեղքերս
են, որ զիս արքայութենէ ու քու
երանելի տեսութենէդ կը զրկեն :

Ինչ մեծ անխելքութիւն է իմ
ըրածս, որ փոքր մարմնաւոր վնաս
մը չքաշելու համար գիշեր ցորեկ
հոգ կ'ընեմ, գլուխ կը յոգնեցը-
նեմ. իսկ այսպիսի վնաս մը չքա-
շելու, որուն նմանը չիկրնարըլլալ՝
ամենեւին հոգ չունիմ :

Վիսո՞ս ինձի, ինչու ձեռքէս
եկածին չափ մեղք չգործելու
չաշխատեցայ. ինչպէս եղաւ, որ ես
սուրբ մկրտութեան շնորհքը կոր-
սընցուցի : Ա՛րչափ անսահման ար-
դիւնք ու առաքինութիւններ կրը-
նայի մինչեւ աս օրս վաստրկիլ, որ
ամենեւին փոյթ չունեցայ. մանա-
ւանդ թէ բարեգործութեամբ
արդիւնք ու երկնից արքայութիւ-
նը վաստրկելու տեղ, մեղք գոր-
ծելովս յաւիտենական պատժոյ
արժանի եղայ : Տ՛ուր, ինձի տէր
իմ քու անզեղջ շնորհքդ, ու իս-
լուսաւորէ, որ աղէկ մը ճանչնամ
մեղքերուս գարշութիւնը, ու այն-
պէս մը գանիմ, որ մէյմ'ալ չգոր-

ծեմ: Սրտանց կը բաղձամ տէր
իմ, որ աս խոստովանութենէս
ետքը ամէն մեղքերէս ազատ ըլ-
լամ. ու առաքինութեան գանձեր
վաստրկելով, թէ աս աշխարհքս
մաքուր խղճմտանքով բարի ա-
պրիմ, եւ թէ անդիի աշխարհք
քեզ տեսնելու արժանի ըլլամ.
ամէն:

Այլ սողթք:

Վ՛վ հովիւ բարի Յիսուս Քրիստոս,
մոլորեցայ կորսուած ոչխարի մը
պէս, դուն երկինքէն ինձար իս
փնտռելու համար: Գիտեմ որ՝ եր-
կինքն աւելի ուրախութիւն կ'ըլլայ
իմ վրաս, երբոր դարձի գալու ըլ-
լամ, քան թէ արդարներուն վրայ,
որոնց ապաշխարութիւն պէտք չէ:
Ես մեղաւորս կորսնցուցի իմ
խղճմտանացս հանգիստը, մանա-
ւանդ թէ կորսնցուցի իմ ամե-
նաբարի Աստուածս, ու իմ սրտիս

մտիթարութիւնը: Քու իմ վրաս ունեցած սէրդ բանի տեղ չսեպեցի, որ իս շահելու համար մինչեւ ետքի արեան կաթիլը թափեցիր. ու աշխարհային ունայնութեան ետեւէ եղայ: Շատ անգամ ետեւէս ինկար քու բարի ազգեցութիւններովդ, որ զիս դարձի բերես. իսկ ես քեզի խուլ եղայ. իմ մուլութիւններս աւելի սիրեցի, քան թէ քեզ իմ Աստուածս, արարիչս ու փրկիչս: Իրաւցրնէ արժանի էի, որ իս բոլորովին երեսէ ձգէիր, ամենեւին միտքս չբերելով ո՛չ դարձ, կամ ապաշխարութիւն. ո՛չ դժոխքի վախ, եւ ո՛չ արքայութեան սէրը: Արժանի էի, որ երբեք քեզի հետ կարող չըլլայի հաշտուիլ. բայց քու մարդասիրութիւնդ այնչափ է, որ իմ սաստիկ ապերախտութեանս կը յաղթէ: Այնչափ մեծ է իմ անխելքութիւնս, որ մեղանչելով՝ ամէն օր ինձի կորստեան հոր կը փորեմ.

Թէ որ դուն իս պահելու չըլլայիր,
շատոնց կորսուած էի յաւիտենա-
կան կորուստը: Այսօր քու շնոր-
հօքդ կ'առաջագրեմ դառնալ իմ
կորստեան ճամբաներէս. կ'իյնամ
քու գթութեանդ առջեւը, ու ա-
նառակ որդւոյն հետ կ'աղաղակեմ.
հայր մեղայ յերկինս. արժանի չեմ
ասկէց ետքը արքայութեան որդի
ըսուելու: Ընդունէ իմ սրտիս
զղջումը. ու առաջագրութեանս
դուն օգնէ որ կարող ըլլամ կա-
տարել: Չես ուզեր որ ես մեղաւորս
կորսուիմ, հապա կը բաղձաս որ
դարձի գամ ու փրկուիմ: Անանկ
է նէ ես ալ քու սուրբ շնորհացդ
հետ մէկտեղ գործելով կը ջանամ
ասկէց ետքը հաստատուն առա-
ջագրութեամբ առջի բրածներս
շիտկել, միայն քեզ սիրել, քեզի
ծառայել, քեզի հաճոյ ըլլալ: Որ-
պէս զի արժանապէս քեզ սիրտս
ընդունելով, աս աշխրբքիս վրայ
դուն ինձի հետ ըլլաս. ու արժանի

ընես, որ ես ալ քեզի հետ ըլլամ
անդիի աշխարհք քու արքայու-
թեանդ մէջ, ամէն:

Աղօթք զղջման եւ առաջադրութեան:

Տէր իմ եւ Աստուած իմ, դուն
ծայրագոյն ու անսահման բարու-
թիւն ըլլալովդ՝ ամէն բանէն վեր
սիրելի ես. ու բոլոր ստեղծած
բաներուդ անսահման տէրն ըլլա-
լով, իրաւունք ալ ունիս, որ բոլոր
ստեղծած բաներդ քեզ սիրեն,
ու քեզ ամենեւին չիվշտացրնեն
ինչ կերպով որ ըլլայ: Իսկ ես
թշուառական ու ապերախտ մե-
ղաւորս՝ մանկութենէս մինչուկ
հիմա բիւրակերպ անօրէն մեղ-
քերովս քու աստուածային սէրդ
ոտքի տակ առի. քէնէ երես դար-
ձուցի, ու շատ անգամ քեզ ան-
սահման բարիդ ինծի դէմ բար-
կութիւն շարժեցի: Սակայն ողոր-
մած ու գթած տէր իմ եւ Աս-

տուած իմ, մեղք գործելու սկսած
ատենէս մինչեւ հիմա որչափ որ
մեղանչեր եմ նէ, բոլոր մեղքերուս
վրայ կատարեալ սրտանց կը ցաւ իմ
ու կը զղջամ: Իրաւ է տէր իմ, որ
իմ մեղքերովս արքայութենէն
զրկուեցայ ու դժոխոց արժանի
եղայ: Քայց ես ասոր համար չեմ
զղջար տէր իմ եւ Աստուած, այլ
պարզապէս քու սիրոյդ համար կը
զղջամ ու կը ցաւ իմ. որ դուն ա-
մէն բանէն վեր սիրելի ես: Կ'առա-
ջագրեմ ո՛վ ողորմած Աստուած
իմ, որ ասկից ետքը մէյ մ'ալ մեղք
չգործեմ, ու քեզ ալ չիվշտա-
ցընեմ: Ասկից ետքը հազար ան-
գամ կ'ուզեմ մեռնիլ, քան թէ
մէկ անգամ մը միայն մեղք գոր-
ծել, ու քեզ բարկացընել: Աս ալ
կ'առաջագրեմ տէր իմ, որ ասկից
ետքը մեղքէն ալ մեղքի առիթ-
ներէն ալ փախչիմ: Քայց գիտեմ,
որ առանց քու շնորհացդ բան
մը չեմ կրնար ընել. անոր համար

խոնարհութեամբ կը խնդրեմ տէր,
քու սուրբ շնորհքդ ու օգնու-
թիւնդ տուր ինձի, որ անով ա-
ռաջադրութեանս վրայ հաստատ
կենալու կարող ըլլամ: Ա՛ղաչեմ
տէր իմ, որ աս աշխրջքիս մէջ ին-
ձի ամենեւին չխնայես, իմ գլուխս
զարնես, իմ կամքս ճզմես, ու դուն
քու զօրաւոր ձեռքովդ իմ սիրաս
ի բարին դարձրնես, որ ասկից
ետքը մեղքէն հեռու կենալով՝
միշտ քեզ սիրեմ, քեզի ծառայեմ,
պատուիրաններդ պահեմ ու սուրբ
կամքդ կատարեմ, ամէն:

Այլ աղօթք:

Հայր ողորմութեան, ահա քու
աստուածային աստուծային աստուծային
իշնալով ներումն կը խնդրեմ
մեղքերուս: Ար ճանչնամ իմ
սխալմունքս, ու կը խոստովանիմ,
որ անառակ որդւոյն պէս քեզ իմ
երկնաւոր հայրս թողուցի, ու զա-

նազան մեղքերով հոգիս աս խեղ-
ճութեան մէջ ձգեցի: Սակայն ո՞վ
բարեգութ հայր՝ ահա ամէն մեղ-
քերուս վրայ ղղջալով ու խիստ
ցաւելով կը գոչեմ կ'աղաղակեմ
Հայր Բողոք յերկինս է- ուրախ է + :
Հայր, քու միածին որդւոյդ չար-
չարանքները՝ սուրբ արիւնն ու մա-
հը յիշէ, որ իմ հոգւոյս գինն է.
Եւ անոր արդիւքներովն իմ մե-
ղաւոր հոգւոյս ողորմէ, զոր դուն
քու անարատ ձեռօքդ ստեղծեցիր:
Ահա հայր իմ ողորմած, անառակ
որդւոյն պէս նորէն քեզի կը դառ-
նամ, խոնարհութեամբ քեզի
երկրպագութիւն կ'ընեմ. քեզ կը
պատուեմ կը յարգեմ ու բոլոր
սրտովս, մտքովս ու զօրութեամբս
քեզ կը սիրեմ ու սիրելու կը
բաղձամ: Ահա հայր բարեգութ,
ինչ մեղք որ գործեր եմ մտքով,
խօսքով, գործքով ու զանցառու-
թեամբ, կամաւ եւ ակամայ, ամե-
նուն վրայ քու սիրոյդ համար սրբ-

տանց կը ցաւիմ, ու ձեռքէս եկածին չափ անոնցմէ կը զգուշանամ. ու քու ամենատես աչքիդ առջեւ իմ սրտիս ամէն ծածուկ վէրքերն ու չարութիւնները կը բանամ: Քէնէ գաղտուկ բան մը չիկրնար ըլլալ. դուն ինծի օգնութիւն ըրէ, որ խոստովանած ատենս չըլլայ թէ սատանային որոգայթին մէջ իյնալով՝ պակսութիւն մ'ընեմ, ու խոստովանանքին սուրբ խորհուրդն աւրեմ: Քթած հայր իմ, քու սուրբ շնորհքդ տո՛ւր ինծի, որ աղէկ պատրաստութեամբ ու աղէկ առաջագրութեամբ մ'սկսիմ ու կատարեմ: Ահա Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ արդիւնքները, փառաւորեալ միշտ կոյս Աստուածածինը, իմ պաշտպան սուրբերս, բոլոր հրեշտակներն ու մասնաւորապէս պահապան հրեշտակս ինծի բարեխօս կը բռնեմ: Ահա զչեմ տէր իմ, որ անոնց բարեխօսութեամբը քու ամենակարող

ձեռքդ վրաս դնես, որ աս սուրբ
 խոստովանանքս արժանապէս կա-
 տարելով՝ քու սուրբ շնորհացդ մէջ
 նորէն հաստատուիմ: Աստուած
 +աւետի շնորհաւոր: Յետոս որդի
 դաւիթ ողորձեաց ինչ, ամէն:

Ե Օ Թ Ն Ս Ա Ղ Մ Ո Ս Ք

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Թիպեալ Բաւար սաղմունն աստուածային հոգ-
 ւով գրուած է, ու մէկ զարմանալի ազդեցու-
 թիւն մ' աւնի, Բայց աս Եօթն սաղմունն ապազ-
 խարս-թիւն անանկ սիրտ շարժող զզլակուն ա-
 ջօթ մըն է, որ նման ըլլայ: Որովհետեւ խարսունկ
 գրուած ըլլալով ամեն հարգոս հասկընալու-
 քան չէ. անոր համար հոս տեղը գրաբարին դի-
 մացն աշխարհաբար զանազան խորհրդածու-
 թիւններով Բացարարուած ին գրնաս, որ թի
 մէկը հրադրութեամբ նախա ուրիշ աստիճան
 զրուցելու ըլլայ, անարարայն մէջ շահ ի'ա-
 նինայ:

Սաղմոս 9.

- Տէր մի սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս. եւ մի բար-
կութեամբ քով խրատեր զիս:
Աղորմեա՛ ինձ տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեա՛ զանձն իմ, զի
խռովեցան ոսկերք իմ:
Ընձն իմ յոյժ խռովեցաւ, եւ
դու տէր մինչեւ յերբ:
Դարձ տէր եւ փրկեա՛ զանձն իմ.
Կեցո՛ զիս տէր ըստ ողորմու-
թեան քում:
Օ՛ ի ոչ ոք է որ ի մահու յիշէ
զքեզ, կամ ի դժոխս խոստո-
ւան առնիցի առ քեզ:
Վաստակեցայ ես ի հեծութեան
իմում. լուացի զամենայն գիշեր
զմահիճս իմ, եւ արտասուօք
իմովք զանկողինս իմ թացի:
Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն
իմ. եւ մաշեցայ ես ի վերայ ա-
մենայն թշնամեաց իմոց:
Ի բաց կացէք յինէն ամենեքեան,

Մատնոս Զ.

Տէր, մեղքերուս համար սրդողե-
լով իս մի պատժեր. ու քու ար-
դար բարկութեամբդ իս մի խրա-
տեր: Աղորմէ ինձի տէր իմ, ինչու
որ հոգիս հիւանդ է. իս ողջնցճւր,
ինչու որ հոգւոյս կարողութիւն-
ներն իմ մեղքերուս համար իրար
անցեր են: Ես ալ մեծ խղճմտանքի
անհանգստութեան մէջ եմ. երբ
պիտի տէր իմ, դուն ինձի ողորմիս:
Գարձիր մէյ մ' ինձի նայէ. ազատէ
իս աս խեղճութենէ, ինչու որ քու
ողորմութիւնդ շատ մեծ է, քան
թէ իմ մեղքերուս բազմութիւնը:
Թէ որ աս խեղճութեան մէջ մեռ-
նելու ըլլամ, ինչպէս բերանս պի-
տի բացուի քեզ օրհնելու. գե-
րեզմանի մէջ ո՛վ կրնայ զքեզ գո-
վել: Գիշեր ու ցորեկ ողբալէն
ուժս կտրեցաւ. արցունքներս աղ-
բիւրի պէս կը վաղէին, ու բոլոր
գետինը կը թրջէին: Բարկութե-

ոյք գործէք զանօրէնութիւն:

Եւ աւ տէր ձայնի լալոյ իմոյ,
լուաւ տէր աղօթից իմոց. եւ
տէր զխնդրուածս իմ ընկալաւ:

Եւ մաշեցեն, եւ խռովեցին յոյժ
ամենայն թշնամիք իմ. դարձցին
յետս, եւ մաշեցեն յոյժ
վաղվաղակի եւ խռովեցին:

Սաղմոս ԼԱ.

Երանի, որում թողութիւն եղեւ
մեղաց, եւ ծածկեցան ամենայն
յանցանք նորա:

Երանի առն, որում ոչ համարի
տէր զմեղս նորա. եւ ոչ գոյ
նենգութիւն ի բերան նորա:

Եւ եցի ես, եւ մաշեցան ամենայն
ոսկերք իմ, առ աղաղակել ինձ
առ տէր զօրհանապաղ ի տուէ
եւ ի գիշերի:

նէս աչուրներս դարձան. ու սիրտս
թշնամեացս վրայ մաշեցաւ: Հե-
ռացէք դացէք իզմէ չար խորհուրդ-
ներ, որ իս մեղք խոթելու համար
վրաս եկած էք: Աստուած լալու
ձայնիս լսեց, ու ինձի ողորմեցաւ,
եւ իմ սրտիս բաղձանքը կատարեց:
Թող իմ հոգւոյս ամէն թշնամի-
ներն ամչնան, շուտ մը ետ դառնան,
որպէս զի իմ հոգիս իր արարչին
հետ միանայ:

Սաղմոս ԼԱ.

Երանի ան մարդուն, որուն մեղաց
թողութիւն եղաւ. եւ բոլոր մեղ-
քերն Աստուած բանի տեղ չիդներ
սրտանց խոստովանելուն համար:
Երկան ատեն մեղքի մէջ լուռ կե-
ցայ, բայց ետքը Աստուծոյ հետ
հաշտուիլ ուզեցի. գիշեր ու ցորեկ
Աստուծոյ դէմ աղաղակելէն չէի
դադրեր, մինչեւ ոսկրներս մաշե-
ցան: Ասան զի մեծամեծ հոգեւոր

Օ՛ւանրացաւ ձեռն քոյ ի վերայ
իմ, դարձայ ի թշուառութիւն
իմ, զի հարան յիս փուշք:

Օ՛մեղս իմ ցուցի քեզ, եւ զա-
նօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի
ի քէն:

Մտացի՛ թէ պատմեցից ինձէն զմեղս
իմ. եւ դու թողցես զամենայն
ամբարշտութիւնս մեղաց իմոց:

Սասն այսորիկ յաղօթս կացցեն
առ քեզ ամենայն սուրբքի ժամ
ընդունելի:

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց
բազմաց. որք առ նոսա ինչ ոչ
մերձենան:

Գու ես ապաւէն իմ ի նեղութենէ
յայսմանէ, որ շուրջ եղեւ զի-
նեւ:

Յնծութիւն իմ փրկեալ զիս յայն-
ցանէ, ոչք պաշարեցին զիս:

Իմաստուն արարից զքեզ, եւ խե-
լամոլտ ի ճանապարհի յոր գնաս-
ցես, եւ հաստատեցից ի վերայ
քոյ զաչս իմ:

ու մարմնաւոր պատուհասներ վրաս
խրկեցիր, ու սրտիս հանգստու-
թիւնը բոլորովին կորսնցուցի. ու
խղճմտանքս ալ փուշի մը պէս իս-
կը խայթէր: Մինչեւ որ սիրտս
զղջում ունեցաւ. ու առաջագրու-
թիւն դրի մեղքերս քու առջիդ
խոստովանելու, ու անօրէնութիւն-
ներս քեզմէ չծածկելու: Գիտեմ
որ իմ ամէն մեղքերս կը ներես,
երբոր ես իզմէ ցաւով ու զղճամբ
պատմելու ըլլամ: Անոր համար ա-
մէն բարեպաշտներն այսպիսի ըն-
դունելի ատեն քեզի աղաչելէն
չեն դադրիր. որ ասանկ սաստիկ
փորձանքներու հեղեղը (սէլէրը)
իրենց վնաս մը կարող չըլլան հաս-
ցնել: Գուն ես տէր իմ օգնա-
կանս, դուն իս աս նեղութենէ
խալըսէ, որ իմ չորս դիս առեր է:
Գուն ես իմ սրտիս մխիթարու-
թիւնը, իս չար կիրքերուս ձեռքէն
փրկէ: Ես քու միտքդ կը լուսա-
ւորեմ (կ'ըսէ Աստուած), ու թէ

Մի լինիք որպէս զձիս եւ զջորիս,
զի ոչ գոյ ինոսա իմաստութիւն,
ի սանձս եւ ի դանդանաւանդս
ճմլեսցես զկզակս նոցա, որք առ
քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բազում տանջանք են մեղաւորաց.
բայց ոյք յուսան ի տէր՝ ողոր-
մութիւն տեսուն շուրջ եղիցի
զնորօք:

Աւրախ լերուք՝ եւ ցնծացէք ար-
դարք. ի տէր պարծեցարո՛ւք
ամենեքեան, ոյք ուղիղ էք
սրտիւք:

Սաղմոս ԼԷ.

Տէր մի սրամտութեամբ քով
յանդիմաներ զիս, եւ մի բար-

ինչ ճամբայ պիտի բռնես, ես քեզի
կը սորվեցընեմ. իմ աչքս ու
խնամքս քու վրայէդ չիպակսիր:
Չիերու կամ ջորիներու պէս ան-
բան մի ըլլաք, ինչպէս հեթանոս-
ներն են, որ առաքինութեան
ճամբան քաշելու համար սանձ
(կէմ) պէտք է. անանկով ալ ի-
րենց արարչին չեն մերձենար, ու
իրենց բարերարը մէյմը մտուընին
չեն բերեր: Մեղաւորներուն հա-
մար շատ պատրաստած տանջանք-
ներ կան. բայց որոնք որ Աստուծոյ
կ'ապաւինին, անոր ողորմութիւնը
ամէն բանէն կը խալըսէ: Ուրա-
խացէք ու խնդացէք ո՛վ արդար-
ներ, որ ձեր սիրտը Աստուծոյ հետ
շիտակ է, ու Աստուծոյ անունը
ձեզի պարծանք եղած է:

Սաղմոս ԼԷ.

Տէր, թէպէտ ես պատժուելու
արժանի եմ, բայց սրդողած ա-

կութեամբ քով խրատեր զիս :
Օ ի նետք քո հարան յիս . եւ յիս
հաստատեցաւ ձեռն քո :

Աչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ
յերեսաց բարկութեան քո :

Աչ է խաղաղութիւն ոսկերաց
իմոց՝ յերեսաց մեղաց իմոց :

Մեօրէնութիւնք իմ բարձրացան
քան զգլուխ իմ , որպէս զբեռն
ծանր ծանրացան ի վերայ իմ :

Սեխեցան եւ փտեցան վէրք իմ
յերեսաց անզգամութեան իմոյ :

Տառապեցայ եւ խոնարհ եղէ մին-
չեւ յոյժ . զօրհանապազ տրը-
տում գնայի . զի անձն իմ լի
եղեւ շարշարանօք , եւ ոչ գոյ
բժշկութիւն մարմնոյ իմոյ :

Չարչարեցայ , եւ խոնարհ եղէ
մինչեւ յոյժ . մննչէի առ հե-
ծութեան սրտի իմոյ :

Տէր առաջի քոյ է ամենայն ցան-
կութիւն իմ , եւ հեծութիւն իմ
ի քէն ոչ ծածկեցաւ :

Սիրտ իմ խռովեցաւ յիս . եւ ե-

տենդ իս մի պատժեր. ու քու արդար բարկութեամբդ մի խրատեր: Ինչու որ նեղութեան նետերն իս խորունկ խոցեցին. ու քու արդար բարկութիւնդ վրաս տիրեր է: Քու արդար բարկութիւնդ տեսնելով՝ մարմինս ահու դողու մէջ ինկաւ. ու մեղքերուս համար խղճմտանքս ամենեւին հանգստութիւն չունի: Անօրէնութիւններս գլխէս վեր դիզուեցան, ու ծանր բեռան պէս իս կը ճզմեն: Այնչափ է իմ անզգամութիւնս, որ մեղացս վերքերը փտտիլ ու շարաւով լեցուիլ սկսան: Այնպիսի ողորմելութեան մէջ ինկայ, որ աչքս գետնէն չէի կրնար վերցընել. այնպիսի ցաւերու մէջ մնացի, որ երբէք ողջ ըննալու ճար չիկայ: Անանկ խեղճութեան մէջ ինկայ, մինչեւ սրտիս հեւալէն չէի կրնար բան մը զուրցել: Տէր իմ, դուն որ ամէն բանս կը տեսնես ու կը լսես, իմ քաշածս քենէ գաղտուկ չէ. իմ փափաքս ու սրտիս

Թող զիս զօրութիւն իմ. լոյս
աչաց իմոց, եւ այս ոչ եղեւ ընդ
իս:

Բարեկամք իմ, եւ մերձաւորք իմ
առաջի իմ մերձեցան, եւ կացին,
եւ մերձաւորք իմ հեռի եղեն
յինէն:

Բռնադատէին զիս, եւ խնդրէին
զանձն իմ, ոյք խորհէին չար ի
վերայ իմ. խորհեցան զանօրէ-
նութիւն եւ զնենգութիւն զօր-
հանապազ խորհեցան:

Այլ ես որպէս խուլ՝ որ ոչ լսէ.
եւ որպէս համր՝ որ ոչ բանայ
զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ,
եւ ոչ գոն խօսք ի բերան նորա:

Ես ի քեզ տէր յուսացայ, եւ
դու լուիցես ինձ տէր Աստուած
իմ:

Ասացի, թէ մի ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. ի սասանել ոտից
իմոց, ի վերայ իմ մեծամեծս
խօսեցան:

ախը դուն գիտես: Սիրտս անանկ
խռովութեան ու յուսահատու-
թեան մէջ է, որ վրաս ուժ չմնաց
իմ մտքիս լոյսն ալ մթընցաւ: Իմ
բարեկամներս ու դրացիներս, ո-
րոնք որ նեղութեան ատենն ինձի
կ'օգնէին, մէյ մը երեւցան, ու իս
աս վիճակը տեսնելով՝ թող տու-
ին գացին: Իմ թշնամիներս ինձի
դէմ ելան, ու բոլոր օրն ուրիշ
բան չէին ըներ, եթէ ոչ անօրէ-
նութիւն ու չարութիւն կը մտա-
ծէին, ու միտքս կը ձգէին. ու կու-
զէին՝ որ գործքով ալ կատարեմ:
Բայց ես խուլ մը դարձայ, անոնց
ամենեւին ականջ չհղրի. կամ համր
մարդ մը եղայ, որ բերանը չի բա-
նար. արձանի մը պէս, որ չիլսեր,
ու բերանը խօսք չկայ: Թէպէտ
չատ յուսահատելու բաներ կան,
բայց ես քեզմէ տէր իմ յոյսս չեմ
կտրեր. ո՛վ տէր Աստուած իմ,
դուն լսէ աղանչանացս ձայնը:
Միտքս դրի որ, ձեռքէս եկածին

Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ
ցաւք իմ առաջի իմ են յամե-
նայն ժամ:

Օ, անօրէնու թիւնս իմ պատմեցից,
եւ հոգացայց վասն մեղաց իմոց:

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի
են, եւ զօրացեալք են քան զիս,
եւ բազումք են, ոյք ատեն զիս
ի տարապարտուց:

Այք հատուցին ինձ չար փոխանակ
բարւոյ, չարախօսէին զինէն, զի
ես երթայի զհետ արդարու-
թեան:

Մի թողուր զիս տէր Աստուած
իմ, եւ մի ի բացեայ առնիր յի-
նէն. հայեաց յօգնել ինձ տէր
փրկու թեան իմոյ:

չափ ջանամ, որպէս զի թշնամի-
ներս վրաս չուրախանան. որոնք իս
մեղքի վտանգներու մէջ տեսնե-
լով՝ սկսան մեծ խնաուամ ընել:
Պատրաստ եմ իմ մեղքերուս հա-
մար ամէն կերպ տանջանք ու նե-
ղութիւն քաշելու, երբոր դուն կը
խրկես: Իմ անօրէնութիւններս
սրտանց կը խոստովանիմ, ու ձեռ-
քէս եկածին շափ կը ջանամ ա-
պաշխարել: Բայց ինչ ընեմ տէր
իմ, որ թշնամիներս դեռ կենդանի
են, ու ինձմէ աւելի զօրացած են.
ու շատեր ալ կան, որ իս անիրաւ
տեղ կ'ատեն: Ես իրենց բարիք
ըրի, ու անոնք ինձի չարիք հասու-
ցին. իմ վրաս գէշ խօսեցան, ին-
չու որ ես ուղեցի արդար ճամբայ
բոնել: Տէր Աստուած իմ, իս թող
մի տար, ու իզմէ մի հեռանար,
քու օգնութիւնդ մի ուշացըներ,
ինչու որ դուն ես իմ փրկիչս:

Սաղմոս Ծ.

Աղորմեաց ինձ Աստուած ըստ մեծի
ողորմութեան քում, եւ ըստ
բազում գթութեան քում քա-
ւեան զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուսն զիս յանօրէնու-
թենէ իմմէ, եւ ի մեղաց իմոց
սուրբ արն զիս:

Օ, անօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ
են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ տէր, եւ զչաօ
առաջի քո արարի:

Արպէս արգար եղիցես իբանս քո,
եւ յաղթեսցես ի դատիլն քո:

Անօրէնութեամբ յղացայ, եւ ի
մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու տէր զճշմարտութիւն սիրե-
ցեր, զանյայտս, եւ զճածկեալս
իմաստութեամբ քով յայտնե-
ցեր ինձ:

Յօղեան յիս մշտկաւ, եւ սուրբ

Մարմնու Ծ.

Ողորմէ ինծի Աստուած իմ, ինչու
որ քու ողորմութիւնդ մեծ է.
քաւէ իմ անօրէնութիւնս, ինչու
որ քու գթութիւնդ շատ է: Մե-
ղաց աղտերու մէջ թաթխուեցայ,
լուա զիս ու իմ մեղքերս ու անօ-
րէնութիւններս մաքրէ: Ես ալ
գիտեմ իմ ըրած անօրէնութիւն-
ներս, ու մեղքերս մտքէս ամենե-
ւին չեն ելլեր: Քու աչացդ առջին՝
ու քեզի դէմ, որ իս ստեղծեցիր
ու կը պահպանես, յանդգնեցայ
մեղք գործել: Բայց դուն ինչպէս
որ խոստացար մեղաւորներուն
թողութիւն տալ, քու խօսքիդ
իրաւ ըլլալն իմ վրաս ալ ցրցճւր.
ու իս դատելու ատենդ ողորմու-
թիւնդ յաղթէ քու արդարու-
թեանդ: Ասան զի մեղքի մէջ
ծնած ըլլալով՝ միշտ դիւրաւ մե-
ղաց մէջ կ'իյնանք: Թէպէտ ասով
չենք կրնար բոլորովին արդարա-

եղէց. լուս, եւ քան զձիւն
սպիտակ եղէց:

Եւսելի արա ինձ տէր զցնծութիւն
եւ զուրախութիւն, եւ ցնծաս-
ցեն ոսկերք իմ տառապեալք:

Ղարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց,
եւ զամենայն անօրէնութիւնս
իմ քաւեա յինէն:

Օսիրտ սուրբ հաստատեա՛ յիս
Աստուած, եւ զհոգի ուղիղ
նորոգեա՛ ի փորի իմում:

Մի ընկենուր զիս տէր յերեսաց
քոց. եւ զհոգի քո սուրբ մի
հաներ յինէն:

Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկու-
թեան, եւ հոգւով պետութեան
քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս
քո, եւ ամպարիշտք առ քեզ
դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած
Աստուած փրկութեան իմոյ, եւ
ցնծասցէ լեզու իմ յարդարու-
թեան քում:

նալ, ինչու որ դուն ճշմարտու-
 թիւնը կը սիրես, ու ինչ որ գաղ-
 տուկ է, ու մեր սրտին ծածուկներն
 ալ քու իմաստութեամբդ մեզի կը
 յայտնես: Յօղէ իմ վրաս բարե-
 րար ողորմութիւնդ, որպէս զի
 մաքրուիմ. լուս իմ հոգիս քու
 շնորհաց անձրեւովը, որ ձիւնէն
 ձերմակ ըլլայ: Քու անուշ մխի-
 թարութեան ձայնդ լսեցուր իմ
 սրտիս, որ հոգւոյս զօրութիւնը
 ուրախութեամբ լեցուի: Իմ մեղ-
 քերուս տէր իմ բարկացած աչօք
 մի նայիր, ու իմ ամէն անօրէնու-
 թիւնս քաւէ: Փոխէ իմ սիրտս,
 ու այնպէս սիրտ մը տուր, որ ա-
 ռաքինութեան ու սրբութեան ե-
 տեւէն ըլլայ: Չըլլայ թէ իմ դար-
 ձեալ մեղանչելուս համար իս ե-
 րեսէ ձգես, ու սուրբ հոգւոյն
 շնորհքը վրայէս հանելով՝ առա-
 ջուանպէս խեղճ մնամ: Հապա նո-
 րէն շնորհքներ խրկելով պահէ
 իմ խղճմտանացս փրկաւէտ ուրա-

Տէր եթէ զչրթունս իմ բանաս,
բերան իմ երգեսցէ զօրհնու-
թիւնս քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս
մատուցանէաք. բայց դու ընդ
ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խո-
նարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի
խոնարհ՝ Աստուած ոչ արհա-
մարհէ:

Բարի արատէր կամօք քովք սիով-
նի. եւ շինեսցին պարիսպքն
երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պա-
տարագս արդարութեան, յոր-
ժամ ուխտից պատարագս հան-
ցեն ի սեղան քո զուարակս:

խուժիւնը. ու հոգւոյս ո՛ւժ տուր,
որ մարմնոյն վրայ իշխան ըլլայ: Ես
ալ կը ջանամ քու սուրբ պատուի-
րաններդ անօրէններուն սորվե-
ցնել. որպէս զի անոնք ալ քեզի
դառնան ապաշխարեն: Իմ չար
վարքս շատերուն գայթակղու-
թեան պատճառ եղաւ, ու շատե-
րուն արիւնը մտայ, բայց դու տէր
Աստուած իմ, իս պահէ, որ ու-
րիշը չի գայթակղեցնեմ. ու իմ
լեզուս քու արդարութեանդ քա-
րոզ ըլլայ: Գուն տէր իմ բաց բե-
րանս որ քեզ օրհնէ ու իրաւաբա-
նէ: Գիտեմ որ խոնարհ սիրտը
աւելի հաճոյ է քեզի քան զո՛հ
մատուցանելը: Տէր, քու բարերար
կամօքդ բարիք ըրէ իմ հոգւոյս,
ու քու ողորմութիւնդ պարսպի
պէս մարմնոյս պաշտպան ըլլայ:
Երբոր քու ողորմութիւնդ վրայէս
անպակաս կ'ըլլայ, ան ատեն կրնամ
զանազան բարի գործքեր քեզի մա-
տուցանել, ու իս բոլորովին քեզի
սիրոյ սեղանի վրայ զո՛հ ընել:

Սաղմոս ՃԱ .

Տէր լուր աղօթից իմոց, եւ աղա-
ղակ իմ առ քեզ եկեսցէ. մի
դարձուցաներ զերեսս քո յի-
նէն :

Յաւուր նեղութեան իմոյ խոնար-
հեցո՛ առ իս զունկն քո, յորում
աւուր կարգամ առ քեզ, վաղ-
վաղակի լուր ինձ :

Սպառեցան որպէս ծուխ աւուրք
իմ, եւ ոսկերք իմ որպէս խոիւ
չորացան :

Հարայ ես որպէս խոտ, եւ ցամա-
քեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել
զհաց իմ ի ձայնէ հեծութեան
իմոյ :

Ացեցաւ ոսկր իմ ի մարմին իմ,
նմանեցայ ես հաւալասան անա-
պատի :

Եղէ ես որպէս բու աւերակի,
տքնեցայ եւ եղէ ես որպէս
ճնճղուկ միայն ի տանիս :

Վախատեցին զիս թշնամիք իմ

Սաղմոս ՃԱ.

Տէր լսէ իմ աղօթքս, ձայնս
քեզի հասնի. երեսդ իզմէ մի դար-
ձրներ: Նեղութեանս ատեն ա-
կանջդ ինձի խոնարհեցո՛ւր. ու քեզ
կանչած ատենս շուտ մը ինձի օգ-
նութեան հասիր: Այնչափ նեղու-
թիւն քաշեցի, որ կեանքս ծուխի
մը պէս անցաւ ու ես խոտի մը
պէս չորցայ. սրտիս ցաւէն հաց
ուտելն ալ մոռցայ. սրտիս նեղու-
թենէն կաշի ու ոսկր դարձայ.
անապատի մէջ եղած թռչուններու
պէս խեղճ մնացի. կամ աւերակ-
ներու մէջ բուերու դարձայ.
Ճնճողուկներու պէս միս մինակ
մնացի: Բոլոր օրը թշնամիներս իս
նախատեցին. երեսպաշտները ծա-
ծուկ մէջերնին երգում կ'ընէին իս
կորսնցընելու: Մոխիրը հացի տեղ
կերայ. ու ջրոյ մէջ արցունքս խառ-
նեցի: Ինչու որ տեսայ՝ թէ դուն ալ
արարիչս ինձի բարկացեր ես. դուն

զօրհանապազ, եւ գովիչք իմ
ինեւ երգնուին:

Օմոխիր որպէս զհաց կերի, եւ
զըմպելին իմ արտասուօք խառ-
նեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտու-
թեան քո. զի դու բարձրացու-
ցեր եւ խոնարհեցուցեր զիս:

Եւուրք իմ որպէս հովանի անցին,
եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

Կու տէր յաւիտեան կաս, եւ յի-
շատակ քոյ յազգէ մինչեւ յազգ:

Կու յարուցեալ գթասցիս ի վե-
րայ սիովնի. ժամանակ գթալոյ
նորա հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայք քո ընդ քա-
րինս նորա, եւ ի հողս նորա
գթասցին:

Երկիցեն հեթանոսք յանուանէ
քումէ. եւ ամենայն թագաւորք
երկրի ի փառաց քոց:

Եինէ տէր զսիովն, եւ երեւեսցի
փառօք իւրովք ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց,

որչափ որ իս բարձրացուցիր զա-
նազան շնորհքով, ու այնչափ ցա-
ծութեան մէջ ինկայ մեղանչելովս:
Իմ օրերս շուքի պէս անցան գա-
ցին. ես ալ խոտի մը պէս չորցայ:
Գուն յաւիտեանս նոյն կը մնաս ու
ամենուն կ'ողորմիս. ու քու բարե-
բարութեանդ յիշատակը ամէն
ազգաց մէջ կը պատմուի: Անանկ է
նէ իմ հոգւոյս ալ ողորմիս, որ իր
մեղաց համար ետքի խեղճութեան
մէջ ինկեր է. հիմա է անոր ողորմե-
լու ատենը: Սուրբերն ալ տեսնե-
լով իմ ողորմելի վիճակս, բարե-
խօս կ'ըլլան. որ ինձի ողորմիս:
Թող տեսնեն հեթանոսները քու
ըրած բարիքներդ, ու անհաւատ
թագաւորները վախնան քու անու-
նէդ: Երբոր հոգւոյս կորսնցուցած
շնորհքները ետ դարձրնելու զար-
գարելու ըլլաս, ան ատեն քու
փառքդ ամենուն յայտնի կ'երևենայ,
որ ինձի պէս մեղաւորի ալ կ'ողոր-
միս: Գու տէր իմ միշտ խոնարհնե-

Եւ ոչ արհամարհեաց զխնդրու-
ածս նոցա:

Վրեացի այս յազգ յայլ, ժողո-
վուրդ որ ստացեալ է, օրհնեցէ
զտէր:

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբու-
թենէ իւրմէ. տէր յերկնից յեր-
կիր հայեցաւ:

Եւսել զհեծութիւն կապելոց. եւ
արձակել զորդիս մահապարտաց:

Պատմել ի սիրովն զանուն տեառն,
եւ զօրհնութիւնս նորա յերու-
սաղէմ:

Ժողովել ժողովրդոց ի միասին, եւ
թագաւորաց ծառայել տեառն:

Պատասխանի ետ նմա ի ճանապար-
հի զօրութեան իւրոյ, զնուազու-
թիւն աւուրց իմոց ասա՛ ինձ, եւ
մի հաներ զիս ի կէս աւուրց
իմոց. զի յազգէ յազգ են ամք
քո:

Իսկզբանէ տէր զհիմունս երկրի
հաստատեցեր, եւ գործք ձեռաց
քոց երկինք են:

րուն աղօթքը կը լսես, ու անոնց
աղաչանքը չես արհամարհեր: Աս-
տուծոյ բարերարութեան ու ողոր-
մութեան յիշատակը թող գրուի,
որ ուրիշ ազգերն ալ կարգան, ու
ճանչնան իրենց բարերարը. ու հա-
ւատացեալ ժողովուրդը զԱստուած
օրհնէ: Միշտ Աստուած երկինքէն
երկիր կը նայի, որ մեղքերով կա-
պուածներուն հառաչանաց լսէ, ու
գժոխոց արժանի եղող մեղաւոր-
ներն ազատէ. որ պատմուի մեր
Աստուծոյ անունը հաւատացելոց
մէջ. լսեն ուրիշ հեթանոսներն ալ,
ու թագաւորները դառնան, ու
Աստուծոյ ծառայեն: Թէպէտ մեր
կեանքը կարճ է, անոր համար Աս-
տուծոյ ընելու բարիքներուն շատը
չեն կրնար տեսնել. բայց կ'աղաչեմ,
առանց ապաշխարութեան աս աշ-
խրըքէս իս մի հաներ, որ աս ճամ-
բուս վրայ տեսնեմ քու բարերա-
րութիւններդ, ու պատմեմ իզմէ
ետեւէն եկողներուն: Շատ առա-

Վորքա անցանեն, եւ դու կաս եւ մնաս յաւիտեան:

Լմենեքեան որպէս զձորձս մաշեսցին. եւ որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա, եւ փոխեսցին:

Բայց դու նոյն ես, եւ ամբ քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցին ի նմա, եւ զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի:

Սաղմոս ՃԻԹ.

Ի խորոց կարգացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո, ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս քննես տէր, տէր ո՛ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի տէր

Ջուց երկրիս Տիմեւր դուն գրիր. ու
երկինքը քու ձեռացդ գործածն
է: Ամէն բան կ'անցնի կ'երթայ,
բայց դուն մինակ նոյն կը մնաս:
Ամէն բան լաթի մը պէս կը մաշի.
ու ինչպէս որ կ'ուզես կը փոխուի:
Բայց դուն ամենեւին չես փոխուիր.
քու տարիներդ մերինին պէս
չեն անցնիր: Արոնք որ աշխրաբիս
մէջ քեզի հաճելի ծառայ են, ա-
նոնք երկինքը բնակելու արժանի
կ'ըլլան. ու անոնց զաւակներուն
միշտ ամէն բան կը յաջողի:

Սաղմոս ԶԻԹ.

Խեղճութեան փոսին մէջէն, ուր
մեղօքս ինկայ, քեզի կ'աղաղակեմ
տէր իմ. լսէ՛ ձայնս: Քու ահանջդ
պատրաստ ըլլայ իմ աղօթքիս
ձայնը լսելու: Թէ՛ որ դուն իմ ան-
օրէնութիւններս քննել ուզելու
ըլլաս, ով կրնայ արդար երեւնալ.
Ինչու որ դուն միայն կրնաս մեր

Համբեր անձն իմ բանի քում .
յուսացաւ անձն իմ ի տէր :

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ ,
ի պահէ առաւօտու յուսացաւ իսրայէլ ի տէր :

Ի տեառնէ է ողորմութիւն բազում .
եւ ի նմանէ է փրկութիւն , եւ
նա փրկեաց զիսրայէլ յամենայն
նեղութեանց նորա :

Ոսողմոս ՃԽԲ .

Տէր լուր աղօթից իմոց , ունկն դիր
խնդրուածաց իմոց ճշմարտու-
թեամբ քով :

Ի ուր ինձ արդարութեամբ քով ,
եւ մի մտաներ ի դատաստան
ընդ ծառայի քում , զի ոչ ար-
դարանայ առաջի քո ամենայն
կենդանի :

մեղքերուն թողութիւն տալ: Քանի որ համբերեցի յոյսս դուն էիր. քու անուշ խօսքդ էր՝ որ խոստացար զղջում ունեցողներուն ներել: Առտու ընէ մինչեւ իրիկուն հաւատացելոց աչքը քու ողորմութեանրդ վրան է, յոյս ունին որ դուն պիտի ողորմիս, ու արդարութեամբդ պիտի չդատես: Ողորմութիւնը քէնէ է. մեր փրկութիւնը քեզմէ կը յուսանք. ու դուն խոստացար մեզ ամէն նեղութենէ ազատելու:

Սաղմիս ՃԽԲ.

Տէր իմ լսէ աղօթքիս ձայնը, ու քու ճշմարտութեամբդ աղաչանացս ականջ դիր: Քանի որ աս մարմինը վրանիս է, ո՛վ կրնայ քու առջեւդ արդար երեւնալ երբոր արդարութեամբ դատես: Թշնամիս ետեւէս ինկաւ, կ'ուզէր իս մեղք խոթել. միտք գէշ խորհուրդներ ձգեց,

Հալածեաց թշնամին զանձն իմ,
խոնարհ արար յերկիր զկեանս
իմ, եւ նստոյց զիս ի խաւարի
որպէս մեռեալ յաւիտենից:

Չանձրացաւ յիս հոգի իմ, եւ
սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խոր-
հեցայ յամենայն գործս քո,
յարարածս ձեռաց քոց խորհե-
ցայ, եւ համբարձի առ քեզ
զձեռս իմ:

Ընձն հմ որպէս երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լճւր ինձ
տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի
իմ:

Մի գարձուցաներ զերեսս քո յի-
նէն, նմանիցիմ այնոցիկ, յՔ
իջանեն ի գուբ:

Լսելի արա ինձ յառաւօտու զո-
ղորմութիւնս քո, զի ես ի քեզ
տէր յուսացայ:

Յոյց ինձ ճանապարհ, յոր գնա-
ցից, զի առ քեզ տէր համբար-
ձի զանձն իմ:

որպէս զի իս յաւիտեանս կորսըն-
ցընէ: Միտքս բոլորովին շփոթե-
ցաւ, ու հոգւոյս ճարն հատաւ: Քու
ըրած բարիքներդ միտքս ինկան,
յիշեցի որ շատ անգամ իս մեծա-
մեծ վտանգներէ խալըսեցիր, ձե-
ռուրներս վերցուցած քեզի աղա-
չեցի, ինչու որ դուն ես մինակ իմ
յոյսս: Հոգիս ցամքած երկրի մը
պէս քու օգնութեանդ ծարուած է.
ու վրաս ուժ չէ մնացեր: Երեսդ
իզմէ մի դարձըներ, չըլլայ որ անոնց
նման իմ, որոնք յուսահատութեան
մէջ ինկած են: Գուն ես իմ ամէն
յոյսս, փարատէ յուսահատու-
թեան մութը, ու շնորհացդ լոյսն
իմ սիրտս ծագէ: Գուն ես իմ հոգ-
ւոյս առաջնորդը, ցըցո՛ւր ինձի, թէ
քեզի հաճոյ ըլլալու համար ինչ
ճամբայ պիտի բռնեմ, ինչու որ իս
բոլորովին քեզի յանձնեցի: Գուն
ես իմ օգնութիւնս, իմ թշնամիներ-
ուս ձեռքէն իս խալըսէ. ինչու որ
բոլորովին քեզի ապաւինեցայ: Գուն

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի:
Աւսո՛ ինձ առնել զկամս քո. զի
դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ ի յերկիր ուղիղ:

Սասն անուան քո տէր կեցուսցես
զիս. արդարութեամբ քով հան-
ցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես
զթշնամիս իմ. եւ կորուսցես զա-
մենայն նեղիչս անձին իմոյ, զի
ես ծառայ քո եմ:

ես իմ Աստուածս, քու կամքդ
ինձի սորվեցուր, որ առանց մեղք
գործելու ապրիմ : Քու սուրբ Հո-
գիդ արքայութեան ճամբուն մէջ
ինձի առաջնորդ ըլլայ : Քու անու-
անդ փառացը համար իս արքայու-
թիւնը հասցընես, ու աս նեղու-
թենէն խալըսցընելով՝ յաւիտե-
նական կեանքը պարգեւես : Քու
ողորմութիւնդ իմ ամէն թշնամի-
ներուս յաղթէ, ու ամէն ինձի
նեղութիւն տուողները հալածէ
վերցընէ. ինչու որ ես քու ծառայ
եմ, ու պատրաստ եմ քու սուրբ
կամքդ կատարելու :

Հարական:

Օղջման իմոյ զարտասուև արկա-
նեմ առաջի քո Քրիստոս, [Թող
ինձ զմեղս իմ որպէս երբեմն
զպոռնկին. որ միայնդ ես բազմա-
գուլթ: Անկանիմ առաջի քո Քրիս-
տոս որ հովիւդ ես բանաւոր հօտի.
խնդրեա՛ եւ զիս զմոլորեալս որ
միայնդ ես բազմագուլթ: Զմեղս
իմ ցուցից քեզ Քրիստոս, որ
բժիշկդ ես հոգւոց եւ տէր կենաց.
բժշկեա՛ եւ զիմ զհիւանդուլթիւնս
որ միայնդ ես բազմագուլթ:

Աղօթք խոստովանութենէ ետքը:

Ահաւասիկ տէր իմ կը լսէ հոգիս
ան միսիթարական խօսքը, հիմա
ողջնցար, զգո՛յշ կեցիր որ ալ չմե-
ղանչես: Անբաւ շնորհակալութիւն
պիտի մատուցանեմ քեզի, ու քու
ողորմութիւնդ յաւիտեան պիտի
յիշեմ, որ այսչափ իմ գարձիս

սպասեցիր. ինձի բարի ազդեցու-
թիւններ միտքս ձգեցիր, մինչեւ
որ իս դարձի բերիր, ու դարձեալ
ընդունեցար իբրեւ անառակ որդին:
Հիմակ այնչափ գարշելի է ինձի
մեղքը, մինչեւ աւելի կը բաղձամ
մեռնիլ, քան թէ առաջագրու-
թեանս դէմ ընել. եւ դարձեալ
քեզի հետ թշնամի ըլլալ: Իրաւ-
ցրնէ ամօթէս գետինը կ'անցնիմ,
որ այնչափ քեզի խօսք տուած եմ,
ու քիչ մ'ատենէն ետքը այնպէս
գործեր եմ, իբր թէ ամենեւին
խօսք տուած չըլլայի: Բայց ասկէց
ետքը կը ջանամ ամէն մեղաց ա-
ռիթներէն զգուշանալ. մանաւանդ
ան մեղքէն, որնոր հասարակօրէն
չատ կը գործեմ: Գուն որ իմ
վրաս ասչափ ողորմութիւն ցըցու-
ցիր, կը յուսամ որ ինձի յարա-
տեւութեան շնորհք ալ կու տաս,
որ մէյ մ'ալ քեզ չվշտացրնեմ:
Լուսաւորէ իմ միտքս, որ ճանչ-
նամ թէ որչափ գարշելի բան է

մեղանչելը: Գուն իմացուր ինձի,
թէ ինչպէս կամաց կամաց կը սկսիմ
նորէն սէր ձգել իմ անցած մեղ-
քերուս, ինչպէս անզգալաբար նո-
րէն ճիւղեր կու տան, ու կը մեծ-
նան, մինչեւ որ իս նորէն մեղաց
մէջ ձգեն: Գուն ինձի զգաստու-
թիւն ու արթնութիւն տուր, որ
ախտերս բուսածին պէս իմանամ,
չթողում որ մեծնան, հապա ան-
միջապէս արմատէն փրոցընեմ: Ան
պզտի ու ներելի մեղքերն են, ո-
րոնք մեծամեծ մեղքերու ճամբայ
կը բանան, անոր համար կը ջանամ
ասկէց ետքը, որ ան պզտիկներէն
աւելի զգուշանամ, որ մեծերուն
մէջ չիյնամ: Գուն ինչպէս որ ին-
ձի մեղքէ հեռանալու ճամբաներն
իմացուցիր, նոյնպէս ալ կատարու-
մը դուն յաջողէ. ինչու որ քեզի
կը վայլէ փառք ու իշխանութիւն
հիմա ու յաւիտեանս, ամէն:

Սաղմոս :

Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար զիս, եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս :

Տէր Աստուած իմ կարգացի առ քեզ եւ բժշկեցեր զիս. տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որ իջանեն ի գուբ :

Լուաւ ինձ տէր եւ ողորմեցաւ. եւ տէր եղև ինձ օգնական :

Բարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրձ. եւ ինձ զգեցոյց զուրախութիւն :

Արպէս սաղմոս ասացեն քեզ փառք իմ. եւ այլ մի եւս զղջացայց. տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ :

Հարական :

Ար զպատմութեանն առաջին զոր զգեցուցեր օժմամբ հոգւոյն, մեր-

կացաք մեղօք ըստ նախահօրն պատ-
րանաց. զգեցո՛ղնոյն վերստին ողոր-
մութեամբդ քո Քրիստոս:

Այլ աղօթք:

Մարդասէր տէրիմ Յիսուս Քրիս-
տոս, դուն չէ թէ մեղաւորին դա-
տապարտուիլը, հապա անոր դարձն
ու փրկուիլը կ'ուզես. անոր համար
կ'աղաչեմ, որ գթած աչքովդ ե-
ղած խոստովանանքիս նայիս, ու
իմ ճշմարիտ զղջումս ընդունիս:
Բայց տէր իմ ողորմած, թէ որ
մարդկային տկարութեամբ կամացս
դէմ աս սուրբ խորհրդոյս մէջ
պակսութիւն մ'ըրած եմ, դուն
ինձի համար թափած արիւնէդ
կաթիլ մ'ան, ու անով իմ ա-
կամայ պակսութիւններս լեցո՛ւր:
Գուն տէր, որ քեզ խաչ հանող-
ներուն համար քու երկնաւոր հօ-
րէդ ներում խնդրեցիր, ահա ես
ալ անոնցմէ մէկն եմ. որ անթիւ

անհամար անդամ քեզ խաչ հա-
նեցի ու սուրբ արիւնդ ոտքի տակ
առի կոխեցի. կ'աղաչեմ՝ որ նոյն
գթած աչքովդ ինձի ալ նայիս, ու
ողորմիս ներես: Ահա տէր, թէ որ
ուրիշը ինձի դէմ բան մ'ըրած
կամ ըսած է, սրտանց թողու թիւն
կ'ընեմ. ու թէ որ ես ալ ուրիշին
բան մը ըրած կամ ըսած, կամ
թէ որ գայթակղութիւն տալով
ուրիշին մեղաց պատճառ եղած եմ
սրտանց թողութիւն կը խնդրեմ:
Ահա տէր, ասկից ետքը ես քու կդ
եմ. ասոր համար կ'աղաչեմ դուն
միշտ հետս եղիր, որ ես ալ հետդ
ըլլամ: Տէր, ասկէց ետքն իմ յոյսս
քու սուրբ խաչիդ ու մահուանդ
վրայ կը դնեմ. ես զիս ու ինչ որ
ունիմ բոլորովին քեզի կը նուի-
րեմ. դունիս հոգւն մինչեւ որ մեռ-
նիմ, ու հոգիս քու ձեռքդ աւան-
դեմ: Գուն մարդասէր բժիշկ ըլ-
լալովդ՝ հիւանդները կանչելու ե-
կար. ես ալ շատ կերպ սովորու-

Թիւններով հիւանդ եմ. դուն
իմ հոգիս բժշկէ, ու ամէն չար
սովորութիւնները վրայէս վեր-
ցուր: Քու աստուածային երկիւղդ
իմ սրտիս մէջ հաստատէ, որ
ճշմարիտ քեզի հետ միշտ հաշտ
ըլլամ: Ա՛վ բարի Յիսուս, ըսէ իմ
հոգւոյս ալ ան ուրախական խօս-
քը: Այսօր եղէ- իրի-նի-ն որանս
այսօրի, ամէն:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՌ ՍՈՒՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ներգործութիւն հաւատոյ:

Ո՛վ բարեգութ փրկիչ իմ, որ-
չափ քեզի ծանր նստաւ աս սրբա-
զան խորհուրդը սահմանելը. դուն
երկինքէն իջար, ու ծառայի մը
կերպարանք մտար. թողուցիր հայ-
րենի գիրկը, ու եկար մսուրի մէջ
տղու պէս խանձարուրը պատեցար:
Դուն որ սերովբէից ու քերովբէից
ահաւոր էիր, ինձի համար խաչին
վրայ մեռնիլ ուզեցիր: Հիմա այսօր
ալ պատրաստ ես քեզ ինձի տա-
լու, ու իմ սրտիս մէջ բնակելու:
Խաչին վրայ ծածկեցիր միայն քու
աստուածութիւնդ. իսկ հոս ոչ
աստուածութիւնդ՝ եւ ոչ մարդ-

կութիւնդ կ'երեւնայ մեր աչքին:
Սակայն ես հաստատուն կը հաւ-
տամ. ինչու որ դուն քու անսխալ
բերնովդ ըսիր. Ես եմ երկինքէն
ինչած կենդանի հացը, ով որ աս
հացէն կ'ուտէ, յաւիտեան չիմեռ-
նիր. իմ մարմինս ճշմարիտ կերա-
կուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ
ըմպելի է: Այնպէս ճշմարիտ կու-
գան ինձի աս քու խօսքերդ, որ կը
բաղձամ արիւնս ալ աս հաւատքիս
վրայ թափել: Բայց կը խնդրեմ որ
ինձի հաւատքիս համաձայն գործք
ալ յաջողես: Ինչու որ գործքիս
նայելու ըլլամ՝ անհաւատներէն
քիչ վար կը մնամ: Ամենեւին ա-
ռանց երկբայելու կը հաւատամ,
որ զքեզ իմ սրտիս մէջ պիտի ըն-
դունիմ իմ Աստուածս արարիչս ու
փրկիչս, ու սիրտս զղջում չունի, ան
վառեալ բաղձանքը չունի, որն որ
պէտք էր ունենալ. միտքս ամենե-
ւին անհոգ է, ինք զինքը չիժողվեր
չիպատրաստուիր այսպիսի հիւր

մ'արժանապէս ընդունելու: Իմ
բարեկամս տունս հրաւիրելու ըւ-
լամ, կը ջանամ ամէն իր չսիրած
բաներն աչքէն հեռացընել. իսկ
քեզ պիտի ընդունիմ, ու չեմ ջա-
նար ինչպէս որ պէտք է մեղքէ
սոսկում մ'ունենալ, ուսկից որ
դուն մեծապէս կը գանիս: Անոր
համար հիմա յառաջ քան զքեզ
ընդունելս եկած ինկած եմ քու
առջեւդ, դուն ինծի շնորհք տուր,
զօրացուր իմ հաւատքս. ինչու որ
իմ անպատրաստութիւնս այսպիսի
սրբազան խորհուրդ ընդունելու,
հաւատոյ պակասութենէ յառաջ
կու գայ: Լոյս տուր մտքիս, որ
ճանչնայ թէ ո՞վ պիտի ընդունի,
ինչպէս պիտ' որ ընդունի ու ինչո՞ւ
համար պիտի ընդունի: Սիրտս
մաքրէ ամէն մեղաց աղտեղութե-
նէն, որ քեզի արժանի բնա-
կարան ըլլայ: Ա'աղաչեմ տէր, որ
լեզուս արձակես քու հրաշալի
մարդասիրութիւնդ պատմելու. ու

բարի վարքով օրինակ տալու նախ՝
անգեղջ մեղաւորներուն, երկրորդ՝
անհաւատներուն, որ անոնք ալ
սուրբ հաւատքն, ու աս հրաշալի
խորհուրդը ինչպէս որ պէտք է
յարգեն. որպէս զի ամէն աշխարհք
քեզ փառաւորէ, ու քու սրբա-
ղան արեանդ գինը քաւութիւն
ըլլայ թէ ինձի ու թէ ամէն մեղա-
ւորներուն:

Ներգործութիւն յուսոյ:

Թագաւոր թագաւորաց տէր իմ
Յիսուս, ես ո՛վ եմ, որ դուն աս-
չափ վրաս սէր կը ցուցընես, կը
հոգաս, կը խնամես, ու բոլոր աս-
տուածութիւնդ ու մարդկութիւնդ
ինձի կը պարգեւես, որ քեզ ըն-
դունիմ աս աղքատիկ սրտիս բնա-
կարանն ու քեզի հետ միանամ:
Գուն ամէն բանի տէր ես, իսկ ես
հող ու մոխիր ու ոչինչ եմ: Գուն
տէր ես, եւ ես քու ծառայ ալ
ըսուելու արժանի չեմ: Գուն ա-

րարիչս ես, եւ ես ապերախտ ա-
րարած: Գուն սրբութիւն ես ու
ամենեւին մաքրութիւն, եւ ես զա-
նազան մեղօք վիրաւոր, ու գար-
շութեամբ լցուած: Երկինք ու
հրեշտակները, սերովբէք ու քե-
րովբէք քու առջիդ չեն դիմանար,
ու ես մեղաւորս քեզ ինչպէս պի-
տի ընդունիմ: Պետրոս առաքեալը
կ'աղաղակէր քեզի, հեռու գնա
ինձմէտէր, ինչու որ մեղաւոր մարդ
մըն եմ ես. ու ես ինչպէս թող
տամ, որ իմ մեղուցեալ հոգիս
գաս, ու հոն բնակիս: Յովհաննէս
մկրտիչը սոսկացաւ՝ երբոր մկրտե-
լու եկար յորդանան գետին մէջ.
ու ես մեղաւորս ինչպէս կրնամ
ինքիրմէս համարձակիլ քեզի մօ-
տենալու՝ ու չսոսկամ իմ անար-
ժանութեանս համար: Իրաւցընէ
պէտք է որ ես ալ հարիւրապետին
հետ ըսեմ սրտանց. Տէր չէ՛ բա-
կան՝ ելի՛ բնդ յարկա՝ ի՞նչ մարցես:
Քանի անգամ որ քեզի մերձեցայ,

ու զքեզ իմ քաղցր փրկիչս ընդ
դունեցայ, կը համարձակէի քու
հրաւերդ լսելով, որ սիրտ կու
տաս մեղաւորներուն քեզի մօտե-
նալու, ու քեզ ընդունելով մե-
ղաց թողութիւն գտնելու: Բայց
հիմակ ի՞նչ երեսով քու առջեւդ
երեւնամ. ինչու որ շատ անգամ
հաղիւ թէ քեզ ընդունած էի,
դարձեալ նորէն մեղանչելով՝ քեզ
սրտիս մէջէն վանտեցի. աւելի սի-
րեցի իմ մոլութիւններս քան թէ
զքեզ իմ Աստուածս ու իմ բարե-
րարս: Թէ որ իմ ապերախտութիւն-
ներս մտածելու ըլլամ, ամենեւին
յուսահատութիւն կու գայ միտքս,
ու կը կարծեմ որ, այլ ճար չկայ
քեզի հետ հաշտուելու: Բայց գի-
տեմ որ քու ողորմութիւնդ չափ
չունի, թէ որ ճանչնալու ըլլամ իմ
սխալանքս, դիւրաւ կը ներես իմ
մեղքերուս: Ասկէց ետքը հաստա-
տուն յոյս ունիմ, որ քու օգնու-
թեամբդ այլ քեզ չեմ վշտացրներ:

Գուն պատրաստ ես ինձի օգնելու
երբոր իմ զօրութիւնս, ուժս ու
ապաւինութիւնս դուն ես նէ՝ ո՛վ
կրնայ ինձի դէմ դնել: Թէ եւ եր-
կան ատեն սովորած ըլլամ մեղան-
չելու, ամենեւին չեմ յուսահա-
տիր: Աստուծով կրնամ չար սո-
վորութեանս ալ յաղթել: Երբոր
քեզ բոլորովին ինձի տուիր նէ,
ինչ բան կրնայ գտնուիլ, որ ինձի
չպարգեւես: Անանկ է նէ առանց
երկբայելու հաստատապէս կ'առա-
ջադրեմ ամէն չար սովորութենէս
դադրիլ. եւ այնպէս աղէկ ապրիլ,
որ միշտ դուն ինձի հետ ըլլաս, եւ
եւ քեզի հետ, ամէն:

Ներգործութիւն սիրոյ:

Տէր իմ, ներէ համարձակու-
թեանս, որ կը յանդգնիմ քու
առջիդ երեւնալ, ու ամենասուրբ
հաղորդութեան առջին քեզի հետ
խօսիլ: Յանկարծ մէկէն ի մէկ կը

զգամ՝ սրտիս մէջ նոր ազգեցու-
թիւն մը, սիրտս կը լեցուի ան-
պատմելի ուրախութեամբ, մինչև
ուրախութենէս չեմ կրնար ար-
ցունքս բռնել: Հիմակ առաջուրնէ
աւելի կը վերաւորեն իմ սիրտս
քու սիրոյ յիշատակներդ. քանի
անգամ որ աչքս կը դարձնեմ ու
կը տեսնեմ զքեզ խաչին վրայ
կախուած, բոլոր մարմինդ վերա-
ւորած, ու արիւնով լեցուած,
կարծեմ որ՝ ամէն մէկ վերքերէդ
սուր սլաքներու պէս կը թռչին կու
դան, ու սիրտս քու անչափ սիրովդ
կը վերաւորեն: Գունն ո՞վ տէր իմ,
իս փրկելու համար՝ մանաւանդ
թէ քեզ ինձի պարգեւելու հա-
մար ինչ չես քաշեր. որ բարեկամ
աւելի սէր կրնար ցուցընել իր բա-
րեկամին վրայ, ինչպէս որ դուն
ցրցուցիր իմ վրաս, որ ես քեզի
թշնամի ալ էի: Աս ամէն բանն ին-
չո՞ւ համար քաշեցիր տէր իմ.
բայց եթէ անոր համար, որ ես ալ

քեզ սիրեմ: Բայց տէր իմ աչքս,
որ իս ճանչնամ, թէ ես ինչ բան
եմ, կամ ո՞վ եմ եւ ճանչնամ,
թէ դուն ո՞վ ես, որ այնպէս կը
փափագիս իզմէ սիրուելու: Ահա
պատրաստ եմ, ահասիրտս յօժար
է քու սուրբ ազգեցութիւններդ
ընդունելու. քու սիրովդ խորունկ
մը խոցէ սիրտս, որ մինակ քեզ
սիրէ: Դուն ինչպէս որ իս սիրե-
լուդ համար բոլորովին քեզ ինձի
պարգեւելու պատրաստ ես, նոյն-
պէս ես ալ քեզ սիրելուս՝ զիս
բոլոր քեզի կը նուիրեմ: Չեմ
կրնար լալէն դագրիլ, երբ կը յի-
շեմ որ քեզ իմ Աստուածս ու
փրկիչս վշտացուցի. դուն ինչ կը
մտածէիր իմ վրաս, եւ ես քեզմէ
որչափ հեռու կը պտըտէի: Դուն
գիշեր ու ցորեկ կը սպասէիր ինձի
խորանին վրայ ամենասուրբ հաղոր-
դութեան մէջ. յուսալով՝ որ գո՛ւցէ
ատենօք զղջացեալ սրտիւ քեզի կը
դառնամ կը նայիմ, որպէս զի սիրտս

սիրովդ վառէիր: Ահաւասիկ քու
սէրդ այնպէս մը իս վերաւորեց, որ
կը հրաժարիմ ամէն աշխարհային
ունայնութենէն, ու կը ջանամ որ
ուրիշներուն սիրան ալ աս հրաշալի
հաղորդութեան սիրովը բորբոքեմ:
Երանի թէ կարող ըլլայի արժանի
ըլլալ ան շնորհքին, որ գործքով
ցուցընէի իմ սէրս, աս խորհուրդին
ճշմարտութեան վրայ արիւնս թա-
փելով: Դու տէր իմ աւելցուր իմ
հաւատքս, յոյսս, ու սէրս, ու ա-
նանկ մը վառէ սիրտս քու սիրովդ,
որ քեզ միայն սիրէ, ամէն:

Սաղմոս:

Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ
ոչ պակասեսցի:

Ի վայրի դաւարուոջ՝ անդ բնակե-
ցոյց զիս. եւ առ ջուրս հանգըս-
տեան սնոյց զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ՝
զսեղան՝ ակն յանդիման նեղւաց
իմոց:

() ծեր իւղով զգլու իս իմ. բաժակ
քո որպէս անապակ արբեցոյց
զիս :

Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողոր-
մութիւն քո. մինչեւ յամպս
ճշմարտութիւն քո :

Բարձրեալ ես դու յերկինս Աս-
տուած. եւ յամենայն երկրի են
փառք քո :

Շարական :

Յաստուածային կայծակունսն ի
սրովբէիցն անհպելին անմաքրա-
պէս մերձեցաք գոլ պարտական
քում խորհրդոյ. շնորհեա՛ զնոյն
մաքրութեամբ ի թողութիւն մե-
ղաց մերոց :

Այլ աղօթք :

Մի քաղցր փրկիչ իմ Յիսուս,
կ'աղաչեմ քեզի, քու վիրաւորած
սրտիդ սիրոյն համար իմ սիրտս

Վ՛կ կենդանի աղբիւր աստուածային սիրոյ, իմ սիրտս քեզի կու տամ. դուն ստացիր անիկակ, ու ուզածիդ պէս կառավարէ. որպէս զի կարող չըլլան արարածք իս քեզմէ հեռացընել, ու քու աստուածային մխիթարութենէդ ու հոգեւոր տեսութենէդ զըկել:

Վ՛կ երկնաւոր սիրելի փեսայ հոգւոյս, դուն իս քու ետեւէդ քաջէ ու առաջնորդէ. քուկին սքանչելի դինետունդ տա՛ր, ու խմցո՛ւր ինծի քու աստուածային բաժակէդ, զոր խաչին վրայ պատրաստեցիր, որ ամէն հաւատացեալն երուն սիրտը կ'ուրախացընէ:

Եկո՛ւր փրկիչ իմ, եկո՛ւր, իմ մինակ սէրս ու բովանդակ յոյսս. եկո՛ւր իմ մէկիկ մխիթարութիւնս, ու խօսէ սրտիս մէջ: Փրկո՛ւն + " ես եմ: Աս խօսքով իմ ամէն զգայութիւններս ուժ ու նորէն հոգի կ'առնեն, ու աս աշխարհքիս մէջ քու սիրոյդ ճաշակը կը վայելեն,

որնոր դուն արքայութեան մէջ
քու սիրելի ծառաներուդ համար
պահեր ես:

Սիրելի Յիսուսիմ, եկ՛ուր, եկուր
ես իմ սիրտս քեզի պատրաստելու
ջանացի. կը յուսամ, որ սքօիս
մէջ օտար բան մը չկայ: Բայց թէ
որ սրտիս վերնատունն ուզածիդ
պէս զարդարուած բնակարան չէ
նէ, դուն յառաջ քու շնորհօքդ
զարդարէ, ու անկէց ետքը եկ՛ուր
սիրելի Յիսուս իմ, եկ՛ուր սիրտս
մտիր. սիրտս քու սուրբ սրտիդ
հետ միաց՛ուր. ասկից ետքը մինչեւ
յաւիտեանս յաւիտենից ես քեզի
հետ ըլլամ, դուն ալ իմ հետս
ըլլաս, ամէն:

Աղօթք շնորհակալութեան հաղոր-
դութենէն ետքը:

Տէր, աս ի՛նչ մեծ շնորհք է ինձի,
որ դուն երկնի եւ երկրի արարիչ
ըլլալով՝ մեզաւոր հոգւոյս անվայե-

լուչ ու աղքատ բնակարանը գա-
լու խոնարհեցար: Ի՛նչպէս կ'ըլլայ
գորովագուծ փրկիչ իմ, որ անմեղ
սերովբէներուն ու քերովբէնե-
րուն չըրած բարերարուծիւնդ՝
ինձի պէս ողորմելի մարդու մ'ըրիր,
որ քու ճշմարիտ ու կենդանի
սուրբ մարմինդ ճաշակեմ: Ես հողէ
ստեղծած ու ոչնչէ գոյացած մահ-
կանացու մարդ մի եմ՝ անթիւ
անհամար խեղճուծեամբ լի. իսկ
դուն ամենակարող անսահման
մեծուծիւն ես:

Ա՛րդ՝ իմ վրաս ինչ արժանաւոր
բան գտար, որ քու անձառելի սի-
րովդ խոնարհեցար ու ինձի եկար:
Ահա տէր իմ, ո՛չ նահապետներուն
պէս կատարեալ հաւատք ունիմ.
ո՛չ Յովհաննէս մկրտչին պէս մաք-
րուծիւն ունիմ. ո՛չ առաքեալնե-
րուն պէս սէր ունիմ. ո՛չ ալ ուրիշ
սրբոց պէս մեծ ջերմեռանդու-
ծիւն ունիմ: Աւրիշ բան չէ տէր
իմ, մինակ քու անսահման գթու-

Թիւնդ ու ողորմած ըլլալդ է. որ
իմ անօրէն մեղքերուս յաւիտեան
չբարկանալովդ՝ քու անպատմելի
ներողութեանդ շնորհքը ցըցուցիր,
ու մարդասիրութեամբդ մեղքերս
ջնջեցիր, ու իս յաւիտենական դա-
տապարտութենէ ազատելով՝ եր-
կնից արքայութեան ճամբան գրիր:
Ասանկ խելքէ մտքէ վեր ու մեծ
շնորհացդ համար՝ ես զքեզ ինչ
կերպով օրհնեմ ու փառաբանեմ:
Օրհնեալ ըլլաս տէր յաւիտեանս
յաւիտենից: Բոլոր հրեշտակներն
ու ամէն ստեղծած բաներդ ինծի
հետ միանան ու քեզ յաւիտեանս
օրհնեն, գովեն ու փառաւորեն:
Տէր իմ, ուրիշ բան մը չունիմ, որ
քու ըրած բարերարութիւններուդ
տեղ քեզի փոխարէն հատուցա-
նեմ. անոր համար սիրելի փրկիչ
իմ, ես իս բոլորովին քեզի կու-
տամ կ'ընծայեմ. ասկից ետքը յա-
ւիտեան քու կդ եմ. ինչ որ կ'ու-
ղես՝ ինծի անանկ ըրէ. ես ալ քեզ

յաւիտեանս յաւիտենից կ'օր-
հնեմ, ամէն:

Այլ աղօթք

Ահաւասիկ տէր իմ, չգանեցար
իմ անարժան սիրտս մտնելու ու
հոն բնակելու: Ի՛նչ մեծ ու չյու-
սալու շնորհքի արժանի եղայ.
սիրտս քերովբէից աթոռ եղաւ,
հոն բազմեր է իմ արարիչս ու
փրկիչս, որ երկինքն հրեշտակները
երկրպագութիւն կ'ընեն: Ար լսեմ
որ կը զուրցես իմ հոգւոյս, հոս
քեզի եկած եմ քու ամէն խըն-
դիրքդ կատարելու. խնդրէ ինձմէ
ինչ որ կ'ուզես նէ:

Տէր իմ, ինչ բան կրնամ խըն-
դրել քեզմէ, բայց եթէ այնպէս
իս քու շնորհացդ մէջ պահես, որ
քեզ մէյ մ'ալ չկորսնցընեմ: Ար
խնդրեմ քեզմէ ինչպէս որ կուրերը
խնդրեցին, որ իմ հոգւոյս աչուը-
ները բանաս, ու լոյս տաս ինձի,

որ աղէկ ճանչնամ, թէ որչափ չար է քեզ վշտացընելը: Թէ որ քեզի հետ աւրուելու ըլլամ, սիրտս ինչ հանգիստ կրնայ ունենալ. ո՞վ կրնայ իմ խիղճս հանդարտեցընել: Ա՛րչափ անմտութիւն գործեր եմ քեզմէ հառանալովս, քեզ թող տալովս, ու սիրտս արարածական բաներու հետ չափէ դուրս զբաղեցընելովս: Ահա խոնարհութեամբ քու շնորհաց աթոռիդ առջեւն ինկած կը խնդրեմ քեզմէ, որ ինձի աս շնորհքն ընես: Գուն որ այնչափ իմ ետեւէս պտրտեցար, իմ խղճմտանքս այնչափ բարի ազդեցութիւններով դրդեցիր, ուրախացար որ ես ալ զղջումի ելայ, ճանչցայ իմ սխալանքս ու իմ վրաս քու կին ունեցած անհուն գթութիւնդ. հիմակ ալ արժանի սեպեցիր ինձի հետ միանալը, եւ ուզեցիր, որ քեզմէ մասնաւոր շնորհք ալ խնդրեմ:

Ա՛խ տէր, քեզմէ ի զատ ինչ

խնդրեմ. քեզմէ աւելի սիրելի ո՛ւր
գտնեմ. երբոր դուն քեզ բողո-
րովին ինձի տուիր, ալ ինչ բանի
կարօտութիւն կրնամ ունենալ:
Այնչափ հիւանդներ, ցաւագարներ
քու հանդերձիդ միայն դպչելով
կը բժշկուէին. հիմակ ես նոյն իսկ
բժշկութեան աղբիւրը սրտիս մէջն
ունիմ. ամէն շնորհաց տէրն ինձի
եկեր է, ու երկնից արքայութիւնը
իմ ներսս փոխադրուեր է: Ա՛վ
անհասանելի աստուածային բա-
րութիւն, ո՛վ անճառելի ողորմու-
թիւն: Ա՛ղաչեմ տէր իմ, կ՛աղա-
չեմ, աս անպատմելի սէրս վրայէս
մի պակսեցրներ, ու յաւիտեան
իզմէ մի զատուիր, ու քեզ տես-
նելու ալ իս արժանի ըրէ, ամէն:

Այլ աղօթք:

Ա՛վ մարդասէր Յիսուս փրկիչ
իմ, թող երկինք եւ երկիր քու
անսահման գթութիւնդ ու ողոր-

մութիւնդ գովեն. ամէն մէկ սրտիս
շարժումը քեզ անդադարօրհնեն.
ամէն հոգւոյս կարողութիւնները
քէնէ գոհանան: Ա՛վ եմ ես, որ
դունիմ աղքատ սրտիս բնակարանն
այցելութեան եկար:

Քեզի հետ տէր իմ, չքակուե-
լու սիրոյ կապով իս կապէ. դուն
ո՛վ բարեգութ փրկիչ իմ, քու
սուրբ շնորհացդ օծութիւնը հեղ
իմ սրտիս վրայ, որ քու սուրբ
սէրդ վառէ բորբոքէ իմ բոլոր
հոգւոյս կարողութիւնները:

Ա՛վ անմեղ գառն Աստուծոյ, որ
ինձի համար մեռար. քու արդիւնքդ
իմ հոգւոյս աղտերը լուայ, հին
մարդը մեռցրնէ, սիրտս նորոգէ,
որ դուն մինակ յաւիտեան բնակիս:

Ա՛վ ուրախութիւն սրտիս, այս-
օր քու անարժան ծառայիդ հո-
գին ուրախացո՛ւր երկնային մխի-
թարութիւնովդ: Սիրտս քու սուրբ
շնորհացդ ցօղովը ցօղէ, ու պաղըշ-
տրկէ. պարգեւէ ինձի ան շնորհ-

քը, որ սուրբ ուրախութեամբ ու
ներքին սիրով բորբոքած՝ արցունք
թափելով մխիթարուիմ:

Մի սէր իմ յաւիտենական,
որ իս երբեք չես մոռնար. դուն
իմ ետեւէս ինկար, իս փնտուցիր
որպէս զի յաւիտեան չկորսուիմ.
տուր ինձի սերովբէներուն ու
քերովբէներուն վառած սէրը, որ
քու ողորմութեանդ մարդասի-
րութեանդ համար կարող ըլլամ
արժանապէս գոհանալ:

Մի գթած Յիսուս, իմ կու-
րութիւնս լուսաւորէ, որ քեզ ու
քու սքանչելի սէրդ ճանչնամ. ու
ամէն աշխարհային բաները քու
սիրոյդ համար արհամարհեմ: Իս
քու սուրբ վերօքդ զօրացուր, որ
ոչ ոք իս քեզմէ բաժնելու կարող
ըլլայ:

Միրելի փրկիչ իմ, տես հոգ-
ւոյս աղքատութիւնը, ու քու
պարգեւներովդ հարստացուր:
Տուր ինձի քուկին խոնարհու-

Թիւնդ, համբերութիւնդ, հնա-
զանդութիւնդ, հեղութիւնդ, ու
սէրդ: Աս ամէն առաքինութիւն-
ները սրտիս մէջ տպաւորէ տէր
իմ, ու քու երկնային օրհնութե-
ամբդ իս լեցնուր, որ բոլորովին
քեզի արժանի ըլլամ:

Այլ աղօթք:

Ո՛վ բարեգութ տէր իմ Յիսուս
Քրիստոս, իրաւցընէ մեր մարդ-
կային բնութենէն վեր է մեզի
ըրած բարերարութիւնդ. ո՛վ կրնայ
համարձակիլ՝ որ աս ահեղ սուրբ
խորհրդոցս մտնայ. որովհետեւ
աս խորհուրդն ընդունելու հա-
մար մեծ արժանաւորութիւն պէտք
է. իսկ ես ամէն կերպ արժանաւո-
րութենէ զրկուած եմ: Սակայն
գիտեմ տէր ու կը խոստովանիմ,
որ մինակ քու ողորմութեանդ
չնորհքն է: Բայց գիտես ողորմած
տէր իմ, որ ամէն կողմանէ տկար

ըլլալով՝ ես ինքիրմէս կարող չեմ
քեզի արժանաւոր պատիւ ու մե-
ծարանք ընելու, անոր համար կը
խնդրեմ տէր իմ Յիսուս, իմ
սրտիս քու աստուածային սուրբ
սիրոյդ շնորհքը տ՛ուր, որ անով
վառուիմ, բորբոքիմ, հոգւովս ու
մարմնովս իս քեզի հաճոյական
պատարագ մատուցանեմ:

Մ. հա տէր քու ամենատես աչ-
քիդ առջեւը կեցեր եմ, սրտիս
ամէն մէկ կողմը կը տեսնես. ու
ինչ բանի կարօտ ըլլալս ինէ աղէկ
գիտես, որ աս աշխարհքիս ճամբոր-
դութեանը մէջ անոնցմով արքայ-
ութիւն հասնելու կարող ըլլամ:
Տէր, ոտուրներուս ուժ տուր որ մեղ-
քի ու դժոխքին ճամբէն փախչիմ,
ու արդարութեան ճամբէն երթամ:
Չեռուրներուս զէնք տուր, որ չար
սատանային փորձանքներուն յաղ-
թեմ. ու բարի գործքերու ետեւէ
ըլլալով հաճոյական արդիւնքներ
ժողովեմ: Սիրտս ալ սատանային

ցանաժ որոմներէն մաքրէ ու սուրբ
պատուիրաններդ տնկէ սրտիս մէջ,
որ միշտ քու կամքդ կատարելով՝
քեզի հաճոյ ըլլամ: Ականճներս ալ
գոցէ որ աս աշխրբքիս խաբեբայ
ձայները չլսեն ու սիրտս անոր
խրատներուն ու սիրոյն չդարձնեն:
Ո՛վ տէր իմ Յիսուս, աչուրներուս
քու սուրբ երկիւղդ պահապան
դիր, որ ասկից ետքը չըլլայ թէ ան-
վայել նայուածներու հետ ըլլան.
ու անանկով չըլլայ թէ իմ սիրտս
կամ ուրիշին սիրտը չարութեամբ
մը վերաւորեմ: Ա երջապէս տէր իմ,
ինձի պէտք եղած բաները դուն ա-
ւելի աղէկ գիտես. ահա ես քու կդ
եմ. դուն յաւիտենական փրկու-
թիւնս կ'ուզես, ուստի դուն քու
ուղածիդ պէս իս ճամբայ դիր իս
առաքինութեամբդ զարդարէ, որ
քեզի հաճելի ու սիրելի ըլլամ,
ամէն:

Այլ աղօթք:

Ընբաւ գոհութիւն կը մատուցանեմ ո՛վ տէր իմ ողորմած, որ քու անսահման բարութիւնդ ու ողորմութիւնդ իս շարժեցին, որ համարձակեցայ քեզի այցելութիւն ընելու, քեզ իմ սրտիս բնական րանն ընդունելու: Ա՛յլ մարդասէր փրկիչ իմ, իմ սրտիս մխիթարութիւնը դուն ես, ու հոգւոյս կատարեալ խաղաղութիւնը: Իրաւցընէ թէ որ իմ անարժանութեանս նայելու ըլլամ, պէտք է որ Պետրոս առաքելոյն պէս ես ալ կանչեմ. Հեռու գնա իզմէ տէր իմ, ինչու որ ես մեղաւոր մարդ մըն եմ: Բայց ո՛վ փրկիչ իմ, թէ որ դուն իզմէ հեռանալու ըլլաս, ինչ կ'ըլլայ իմ վիճակս (հալս). ես որո՞ւն դիմեմ, ուսկի՞ց շնորհք խնդրեմ, ո՛վ կրնայ իմ սիրտս կատարեալ մխիթարել, ո՛վ իմ աղքատութեանս օգնել: Քեզմէ հրաժարիլը դժոխ-

քէն ծանր է. իսկ քեզի հետ ըլլալը՝ արքայութիւն է. անոր համար ահիւ եւ դողութեամբ քեզի մերձեցայ, ու խոնարհութեամբ սուրբ սեղանդ դիմեցի: Գիտեմ որ շատ սիրելի է քեզի սրտի մաքրութիւնը. դուն որ հաճեցար այսօր իմ սիրտս բնակիլ, ու սուրբ մարմինդ եւ արիւնդ հիմա ինձի պարգեւեցիր. դուն մաքրէ իմ սիրտս, ու քեզի արժանի բնակարան պատրաստէ: Թող մի տար՝ որ սիրտս անմաքուր ու երկրաւոր սիրով վառուի. միայն քու սէրդ բորբոքի իմ սրտիս մէջ: Բաւական ըլլայ անցած ատենուան գործածներս, ինչ որ քեզի դէմ ըրի դուն ներէ, քաւէ, ու այլ մի յիշեր. եւ ինձի ալ ուժ տուր, որ ես ալ գանիմ: Հիմա կ'իմանամ, որ որչափ քաղցր է քեզ սիրելը, ու որչափ դառն է քեզմէ բաժնուիլը: Թէ որ իմ աչացս կաթիլ մ'արցունք պարգեւելու ըլլայիր, որ սրտանց լայի քեզ վշտացընելուս

համար, ինծի մեծ մխիթարութիւն
կը սեպէի. թէ որ լալը մինակ աս-
չափ մխիթարական է, հապա ինչ
անպատմելի ուրախութիւն կ'ըլլայ
ինծի, երբոր կարող ըլլայ սիրտս
ուրախանալ քեզի հաճոյ ըլլալուս
համար: Գուն արժանի ըրիր իս աս
երջանիկ բոպէին. մեծապէս շնոր-
հակալ եմ տէր, որ ինծի լոյս
տուիր ճանչնալու իմ անցեալ
թշուառութիւնս, ու քեզ կոր-
սընցընելուս համար զղջալու: Նաեւ
դուն իսկ եկար իմ սիրտս բնակե-
ցար, որպէս զի դուն իս սիրես, ու
ես ալ զքեզ: Ահաւասիկ իմ բոլոր
ուրախութիւնս ի յիս է. արքայու-
թիւնն ու յաւիտենական կեանքը
իմ սրտիս մէջ կը կրեմ, Աստուածս
ու իմ ամէն բանս: Գուն շնորհէ,
որ զքեզ սրտիս մխիթարութիւնը
միշտ ինծի հետ ունենամ. արթըն-
ցուր իմ թմրած սիրտս, ու քու
երկնային սիրովդ բորբոքէ, աչքս
ալ լուսաւորէ, որ աս ահաւոր խոր-

Տըրդոյս կարող ըլլամ նայիլ. ու
ինձի զօրութիւն տուր, որ աներկ-
բայ հաւատով հաւատամ, որ աս
հրաշալի հաղորդութեան խորհր-
դոյն մէջ՝ դու նոյն ինքն Յիսուս
Քրիստոս որդի Աստուծոյ բոլոր
աստուածութեամբդ ու մարդկու-
թեամբդ ճշմարտապէս ու կատարե-
լապէս կը գտնուիս: Տ՛ուր ինձի
փրկիչ իմ ան եռանդը, զոր քու
սիրելի ծառաներդ ունեցան, մա-
նաւանդ քու ամենասուրբ մայրդ,
ու մեր ամենեցուն միջնորդն ու
բարեխօսը, երբոր իրեն հրեշտակն
աւետեց, թէ դուն պիտի մարմին
առնէիր: Ար բաղձամ ես ալ այն-
պիսի եռագեամբ քեզ ընդունիլ,
ու աս աշխարհքիս մէջ միշտ քեզի
հաճոյ ըլլալով՝ անդիի աշխարհքս
դէմ առ դէմ տեսնուիլ, ու յա-
ւիտեանս յաւիտենից զմայլելով
քեզ փառաբանել, ամէն:

Այլ աղօթք:

Թէ որ թագաւոր մ'ուզելու ըլլայ
աղքատի մը տուն այցելութիւն
ընել, ան աղքատն ո՛ւր կրնար
նստեցընել թագաւորը, ինչ կրնար
առջեւն հանել, կամ ինչպէս
կրնար թագաւորի մ'արժանի պա-
տիւ ընել: Հիմա իմ աղքատ հոգիս
այ ընդունեցաւ՝ չէ թէ երկրաւոր
թագաւոր մը, հապա թագաւորաց
թագաւորը, ամէն բանի տէրն ու
արարիչը. ու չեմ գիտեր՝ թէ քու
առջիդ ինչ պիտի հանեմ. կամ
ինչպէս պիտի կարող ըլլամ ար-
ժանապէս քեզ պատուել: Գու
տէր իմ գիտես իմ աղքատութիւնս
քեզի ընծայ տալու ուրիշ բան
չունիմ, բայց եթէ իմ ազատու-
թիւնս, իմ կամքս: Գուն քեզ
բոլորովին ինձի տուիր, ու կ'ուզես
որ ես այ իս բոլորովին քեզի տամ:
Անոր համար իմ զգայութիւններս
քեզի կը նուիրեմ, եւ ուրիշ բանի

Համար չեմ բանեցընէր, բայց եթէ քու հաճոյքդ աս աշխրբիս մէջ կատարելու: Ո՛ր աշխրբիս ուրախութիւնը կամ զբօսանքն աւանկ կրնայ մարդուն սիրտը բանալ, ինչպէս ան հոգեւոր զուարճութիւնը, զոր դուն կը պարգեւես սիրելի ծառաներուդ քու ամենասուրբ հաճոյքդ կատարելուն համար:

Ար մատուցանեմ քեզի նաեւ բոլոր հոգւոյս ու մարմնոյս կարողութիւնները, ու գլխաւորաբար կամքս, որ ամենեւին քեզի հպատակ ըլլայ. իմ յիշողութիւնս ուրիշ բանի ինծի չծառայէ, բայց եթէ քու կին ինծի ըրած երախտիքդ՝ ու ցըցուցած սէրդ յիշեցընելու: Միտքս ուրիշ բան չմտածէ, բայց եթէ քու անսահման կատարելութիւնդ, որ անգաղար ինծի բարիքներ կը շնորհես: Կամքս ուրիշ բանի համար ինծի չծառայէ, բայց եթէ քեզ մինակ Աստուածս

ու փրկիչս ամէն բանէն աւելի սիրէ, ու քու աստուածային արգար կամացդ միշտ համաձայնի: Այսպիսի հաստատուն առաջադրութեամբ իս ու բոլոր ունեցածս քեզի կը մատուցանեմ ո՛վ փրկիչ իմ, ընդունէ իմ դրսի ու ներսի զգայարանքներս. իմ խորհուրդս, բաղձանքս, յօժարութիւնս, ազատութիւնս ու ամէն մարմնոյս անդամները, ու հոգւոյս կարողութիւնները, իբրեւ մէկ ընծայ մը, որնոր ինքիրեն բան մը չէ, բայց զօրութեամբ քու արդեանցդ քեզի հաճոյ եւ ընդունելի է:

Ընդունէ տէր իմ աս մեղաւորին ողջակէզը. խրկէ երկինքէն իմ վրաս սուրբ հոգւոյն անշիջանելէ սիրոյ կրակը, որ վառէ, սրբէ ու քաւէ աս ընծայովս ինչ որ անհաճոյ է քու ամենասուրբ աչուրներուդ. որպէս զի աս օրուրնէ ետքը ես բոլորովին քուկդ ըլլամ, ու միշտ քու կամքդ կատարեմ:

Ո՛վ ամէնօրհնեալ սրբուհի կոյս Մարիամ, կ'աղաչեմ, որ աս իմ անարժան ընծաս քու արժանաւոր ձեռքովդ ամենասուրբ Երրորդութեան առջեւ հանես: Գուն բարեխօս եղիր, որ աս ընծաս ընդունելի ըլլայ. ու ինձի համար շնորհք ալ խնդրէ, որպէս զի տկարութիւնս զօրանայ, որ կարող ըլլամ մինչեւ ետքի շունչս Աստուծոյ հաւատարիմ գտնուիլ. ամէն:

Սաղմոս:

Գոհացայց զքէն տէր՝ բոլորով սրտիւ իմով պատմեցից զամենայն սքանչելիս քո:

Ուրախ եղէց եւ ցնծացայցի քեզ. սաղմոս ասացից անուան տեառն բարձրելոյ:

Խոստովան եղէց քեզ տէր, զի լուար ինձ. եւ եղեր ինձ ի փրկութիւն:

Եւ յսօր է զոր արար տէր, եկայք

ցնծասցուք եւ ուրախ եղիցուք
ի սմա:

Մատուած իմ ես դու, եւ խոստովան
եղէց քեզ. Մատուած իմ
ես դու՝ եւ բարձր արարից
զքեզ:

Յաւիտեան ոչ մոռացայց զարդա-
րութիւնս քո զի նոքօք կեցու-
ցեր զիս:

Երդ:

Թագաւորն արարածոց՝ զհացն կե-
նաց ետ քաղցելոց. եւ զբաժակն
ուրախարար՝ որք յԱդամայ տրամե-
ցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան՝
փոխան հնոյ ուխտին արեանց. զոր
յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից
ես միւսանգամ: Ժողովեալքս ի քէն
հայցեմք՝ ընդ ժողովեալ մետասա-
նին. յոր զկենարարըդ քո մարմին՝
բաշխեալ ետուր ընդ բաժակին.
Հնորհեա՛ եւ մեզ տէր ընդ նոսին՝
հաղորդ լինել քում սեղանին. կե-

նաց հացիդ՝ յոր փափագիմք՝ եւ
ընպելուոյդ ում՝ ծարաւիմք :

Այլ աղօթք :

Մհեր. ինչպէս կ'ըլլար, որ քեզ
մինակուկ գտնայի, բոլոր սիրտս
քեզի բանայի, ու քեզմով զմայ-
լէի, ինչպէս որ սիրտս կը փափա-
գի. անանկ որ անկէց ետքը մարդ
մը իս չանարգէր, ու ամենեւին
ստեղծուած մ'ալ իս չչարժէր
կամ բնաւին ինծի չնայէր.
այլ մինակ գուն հետս խօսէիր,
ես ալ քեզի հետ խօսէի. ինչպէս
որ սիրելին սիրելուոյն հետ կը խօսի
ու բարեկամը բարեկամին հետ
կ'ապրի : Աս կ'աղաչեմ, ու ասոր կը
բաղձամ, որ բոլորովին քեզի հետ
միաւորուիմ, սիրտս ամէն արարա-
ծական բաներէն ետ դարձրնեմ,
ու սուրբ հաղորդութիւնն առնե-
լով՝ քանի կ'երթամ երկնաւոր
մտածութիւններուն անուշ համը
սրտիս մէջ զգամ :

Տէր, երբ պիտի ըլլայ, որ բո-
լորովին քեզի հետ մէկ ըլլամ, ու
ես իս բոլորովին մոռնամ: Տէր
չնորհար ըրէ, որ դուն քովս ըլլաս,
ես ալ քովդ ըլլամ. ու անանկով
միատեղ մնանք:

Տէր, բիւր հազար սիրելիներուն
մէջէն ընտրուած սիրելի դուն ես.
կ'ուզեմ որ՝ բոլոր կենացս մէջ
քու քովդ բնակիմ: Իմ խաղաղա-
բարս դուն ես. ամենակատար խա-
ղաղութիւնն ու ճշմարիտ հանգիս-
տը քու քովդ է. քէնէ դուրս աշ-
խատանք՝ ու խիստ մեծ ողորմելու
թիւն է: Գուն ծածկուած Աստուած
ես. ու ամբարիշտներուն հետ բան
գործ չունիս, խոնարհներուն ու
պարզամիտներուն հետ կը խօսա-
կցիս: Ա՛հ տէր, քու հոգիդ ինչ ա-
նուշ հոգի է, որ քու անուշութիւնդ
զաւկրներուդ ցըցունելու համար՝
երկինքէն ինջած հրեշտակային հա-
ցով զիրենք կը կերակրես: Աս ինչ
անպատմելի շնորհք է, աս ինչ զար-

մանալի խոնարհութիւն է, աս ինչ
անհուն սէր է որ մարդոց եղաւ:
Բայց աս մեծ շնորհաց ու սիրոյն
համարիմ տիրոջս ինչ հատուցում
ընեմ: Ուրիշ հաճոյական բան մը
չունիմ տիրոջս ընծայելու, մինակ
բոլոր իմ սիրտս կատարեալ իրեն
հետ կը միաւորեմ: Ահա միայն
բաղձանքս աս է, որ սիրտս քեզի
հետ միաւորի, ամէն:

Աղօթք առ Յիսուս վասն բարի մա-
հուան հաղորդութենէ ետքը:

Աղորմած փրկիչ իմ Յիսուս, աս
աշխարհքիս վրայ մեր կեանքն ինչ
է. բայց եթէ խոտ մը կամ ծաղիկ
մը, որ այսօր կը բուսնի կը բացուի
մէյ մ'ալ վաղը կը թոռմի ու կը
չորնայ: Արդ ասանկ կեանք մ'ու-
նենալէս ետքը, ես իմ յոյսս իմ
կենացս վրայ ինչպէս դնեմ. ահա
մարդ մը չկայ, որ մինակ օր մ ա-
պրելուս համար ինձի խօսք տայ:

Ո՛վ կրնայ տէր իմ քու յաւիտե-
նական վճռոյդ խելք հասցընել ու
գիտնալ՝ թէ որ մարդուն վախճա-
նը երբ պիտի ըլլայ: Ասոր համար
տէր իմ, կարելի է որ աս ետքի
անգամն ըլլայ, որ իմ արժանաւո-
րութենէս դուրս քեզ իմ աղքատ
սրտիս բնակարանը հրամցուցի, ու
քու սուրբ անմահ մարմինդ ճա-
շակեցի: Ար պաղատիմ քեզի, ու
կ'աղաչեմ բարի Յիսուս, որ աս
սուրբ հաղորդութիւնը որ առի,
վերջին թոշակի տեղ առած ըլ-
լամ: Գուն ո՛վ ողորմած տէր, քու
անչափ ողորմութեամբդ ինձի
ճամբու պաշար (նավալէ) եղիր,
մինչեւ կեանքիս ետքի շունչը իս
պահէ, ինէ մի զատուիր, ու ձեռքդ
վրայէս մի վերցըներ: Յիշէ տէր
իմ, որ դուն ըսիր, թէ ո՛վ որ իմ
մարմինս կը ճաշակէ՝ յաւիտեան
կեանք կ'ունենայ: Սատանային ալ
սաստէ, որ ասկից ետքը մինչեւ որ
մեռնիմ իմ քովս չմտենայ. ինչու որ

ես իս քեզի տուի. ու յոյսս բոլորովին քու վրադ դրի, ու դուն ալ քու ձեռքովդ իմ վրաս խաչակնքէ, թէ որ նենգութիւնովը վրաս վաղելու համարձակի, քու ողորմած ձեռքիդ գաղտնի աստուածային զօրութեամբը ամբշնայով՝ քովէս հալածուի: Ասկից ետքը՝ քիչ ապրիմ, շատ ապրիմ, դուն փրկիչ իմ Յիսուս միշտ իմ հետս եղիր, որ մեռնելու ատենս ալ՝ հոգիս քու ձեռքդ աւանդելու կարող ըլլամ. ու դուն ալ տէր իմ, քու գթած ու անուշ նայուածքովդ իս մխիթարես. ու երկնային արքայութեան մէջ արդարներուն հետ իս դասես, որ անոնց հետ միատեղ քեզ յաւիտեանս յաւիտենից օրհնեմ՝ ու փառաւորեմ, ամէն:

Աղօթք յիշատակաւ չարչարանոց
Քրիստոսի:

Մ՛վ պատուական արիւն Քրիստոսի,
որ սաստիկ նեղութենէն ու տրտա-
մութենէ հոգւոյն քրտինքով թա-
փուեցար բովանդակ մարմնոյն.
ուրախ եմ որ աս անմահարար բա-
ժակին մէջ կատարելապէս ամփո-
փուած ես, ու ամէն հաւատացե-
լոց երկրպագութիւն կ'ընդունիս:
Ահա երեսի վրայ գետինն ինկած
խոնարհութեամբ քեզի կ'երկր-
պագանեմ ու կ'օրհնեմ. կ'աղաչեմ
քեզի ո՛վ արիւն Յիսուսի, որ իս-
յաւիտենական նեղութենէն ու
տրտմութենէն ազատես, որ մեղ-
քերուս համար բիւր անգամ ար-
ժանի եղայ:

Մ՛վ հրաշալի մարմին Յիսուսի,
որ անգութ զինուորներուն ձեռքն
անչափ նախատինք ու չարչարանք
քաշեցիր. գլխէն մինչեւ ոտքդ
ողջ տեղ մը չէր մնացեր բոլոր

ցաւերու մէջ ինկած էիր. հիմա
աս տուրք սեղանիս վրայ քեզ կը
պաշտենք, ու կը յարգենք, որ
աշխարհքիս մեղաց քաւութեանրու
թողութեան համար կը բաշխուիս:

Մ'վ ազնիւ բաժակ տեառն իմոյ
Յիսուսի ան պատուական արեամբ
լցուած, զոր իմ փրկիչս խիստ
ծեծին տակ վիրաւորեալ մարմնէն
թափեց. նաեւ ան անգին արեամբն՝
որ աստուածային գլուխը փուշե-
րով խոցուած ատեն թափուեցաւ.
կ'աղաչեմ տէր իմ. լուա ու սրբէ
իս աս աստուածային արեան հե-
ղովը, որ բոլորովին քու սիրովդ
բորբոքիմ, որ իմ սիրոյս համար
այնչափ սաստիկ ցաւերով թա-
փուեցար:


Մ'վ երկնային հաց հրեշտակաց,
որ դուն խաչիւ հնձեցար, ու քու
մահուամբդ բոլոր աշխարհք լիա-
ցուցիր շնորհօք, արժանի ըրէ իս
այսօր քու չարչարանացդ արդիւն-

քը վայելելու ի կեցութիւն հոգւոյ իմոյ:

Վ՛վ ամենասիրելի Յիսուս, որ աս սրբազան բաժակին մէջ քու սուրբ արիւնդ գրիր, զոր խաչին վրայ դամուածատենդ աստուածային ձեռուրներէդ ու ոտուրներէդ աղբիւրի պէս վազցուցիր: Աս պատուական արիւնովդ կը խնդրեմ տէր իմ հոգւոյս աղտոտութիւնք մաքրես, որ հինգ զգայարանօքս քու սուրբ պատուիրաններուդ դէմ գործեր եմ, ու շնորհք ալ տաս ինձի, որ աս փրկաւէտ բաժակը սրբութեամբ ու արժանապէս ընդունիմ, ու որք չարչարանքներուդ յիշատակը յաւիտեան չմոռնամ:

Վ՛վ անմեղ խոցուած կողին Յիսուսի, ո՛վ խորք աստուածային ողորմութեան, իս մէջդ պահէ, ու վերաւորեալ սրտիդ մէջ տեղի տուր ինձի՝ որ յաւիտեանս քեզմէ չբաժնուիմ:

Այն Յիսուս, ընդունէ ասեալի
աղաչանքս ալ, որ սուրբ գերեզ-
մանիդ վրայ ինկած լալով կը պա-
ղատիմ: Ո՛վ խաչեցեալ տէր իմ
եւ Աստուած իմ, սրբէ աս իմ
հոգւոյս գերեզմանը. ուր որ քու
անձառելի խոնարհութեամբդ մը-
տար. որպէս զի որչափ որ հոն կը
կենաս քեզի արժանաւոր բնակա-
րան ըլլայ: Եւ ինչպէս որ արիմա-
թեան վիմափոր գերեզմանին մէջ
մէկը չմտաւ՝ ո՛չ յառաջ եւ ո՛չ
ետքը, ասանկ ալ կ'աղաչեմ ո՛վ
ողորմած Յիսուս, որ իմ սրտիս
գերեզմանն ասկից ետքը մէկը
չմտնայ, ու չապականէ այլ սուրբ
ու նոր պահէ տէր իմ միայն քեզի
համար ի փառս անուան քո ի յա-
ւիտեան, ամէն:



Ա Ղ Օ Թ Բ

Տ Է Ր Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Տ Օ Ն Ի Ց

Ե Ի

Ա Ռ Ս Ո Ւ Ր Ր Ս

Ի տօնի ծննդեան Քրիստոսի:

Ո՛վ Աստուածային սիրուն մա-
նուկ, ահա հաւատոյ աչքովս կը
տեսնեմ զքեզ այսօր անշուք այ-
րի մէջ ծնած, խանձարրով ան-
բաններուն մսուրը դրուած: Ար
մերձենամ ես ալ անմեղ հովիւ-
ներու հետ քեզի երկրպագութիւն
ընելու: Ո՛վ անհասանելի բանդ
Աստուած, աս ինչ խեղճ կերպա-
րանք մտեր ես. երկինքը սերովբէ-
ներն ու քերովբէները դողալով
համարձակ երեսդ նայելու չէին
իշխեր, մարդիկ քեզ թողուցեր
են, մէկը զքեզ չէ ընդունած.
անոր համար դացեր անբան կեն-
դանիներու ախոռի մը մէջ անանկ

աղքատօրէն ծներ ես. ու մտուրը
պառկեր անցուրտ ատենը՝ մարդոց
կուրուժեան ու ապերախտուժեան
վրայ կու լաս: Յի-րան էկն, է- է-րան
ղնա ո՛չ ընկալան:

Ո՛վ ցանկալի մանուկ Յիսուս,
ահա ամէն բանէն աւելի սիրտս
քեզի կը բաղձայ, ու քեզ կ'ուզէ:
Եկուր տէր իմ Յիսուս, քու շնոր-
հօքդ իմ սրտիս մէջը ծնիր: Թէ-
պէտ խիստ անզարգ ու անվայե-
լուչ է սրտիս բնակարանը, ու
քեզ ընդունելու արժանաւոր
տեղ մը չունիմ. բայց տէր իմ,
աշխարհային բաներէն բոլորովին
պարապ է, մէջը ուրիշ բան չես
գտնար, միայն քեզի համար պատ-
րաստած այր (մաղարա) մը: Դուն
քու երկնային շնորհքներովդ մէջը
զարգարէ, ու սուրբ սիրովդ վառէ
բորբոքէ սիրտս, որ ամէն սիրոյ
պաղուծիւնները վերնան, որ չըլ-
լայ թէ քու գալստեանդ արգելք
մը դնեն: Ընդարձակէ լեզուս, որ

այսօր հրեշտակներուն հետ քեզ
փառաբանեմ. քեզի փառք տամ.
փառք ի բարձունս Աստուծոյ:
Հաղար փառք ու գոհութիւն քեզի
փրկիչ իմ Յիսուս որ իմ փրկու-
թեանս համար երկինքէն ինչար,
մարմին առիր, ու աղքատ ախոռի
մը մէջ ծնար:

Ահա երջանիկ այրին մէջ սուրբ
մսուրի գառջին գետինն ինկած՝ կ'ա-
ղաչեմ քեզի ամենասիրելի մանուկ
Յիսուս, անուշ աչուրներովդ մէյ
մ'ինծի նայէ, ու մխիթարէ սիրտս:
Տուր ինծի ան եռանդը, որն որ ու-
նէր ամենասուրբ մայրդ ու սուրբ
Յովսէփը՝ երբոր քեզ կրտսնէին
մսուրի մէջ իրենց գառջին: Տուր
ինծի ան սուրբ միամտութիւնը
երջանիկ հովիւներուն, որ ես ալ
քեզ գտնելու, քեզ տեսնելու
արքայութեան մէջ արժանի ըլլամ,
ամէն:

Հարական :

Ի հօրէ ծագեցար լուսաւորել
զարարածս. արդարութեան արե-
գակն տէր փառք քեզ : Ծնար ի
յայրին ընծայեցար բեթղէհէմ.
արդարութեան արեգակն տէր
փառք քեզ :

Նոր տարի :

Եհա գետինն ինկած խոնարհու-
թեամբ կ'երկրպագանեմ քեզի ո՛վ
ամենակարող Աստուած իմ, ու
անբաւ գոհութիւն ու օրհնութիւն
կը մատուցանեմ քու անթիւ ան-
համար ըրած բարերարութիւն-
ներուդ համար, որ իս իմ արժա-
նաւորութենէս դուրս ամէն կերպ
հոգւոյ ու մարմնոյ փորձանքներէն
անվնաս պահելով՝ ողջ առողջ հա-
սուցիր աս նոր տարեգլխուս : Հա-
զարփառք քեզի ողորմած Աստուած
իմ, որ գթած հօր պէս քու ողոր-

մութիւնդ վրայէս պակաս չըրիր.
Թէպէտ ես շատ անգամ ապե-
րախտ գտնուեցայ քեզի, բայց դուն
իմ անղգամութեանս ներեցիր:
Օր մը չտեսայ՝ որ քեզմէ մասնա-
ւոր զանազան բարիքներ չընդու-
նիմ, բայց ես օր մը գոնէ քեզի
արժանապէս չծառայեցի: Գուն իս
տնկեցիր սուրբ եկեղեցւոյ մէջ, ու
ամէն հարկաւոր հոգը տարիր:
Քուկին սուրբ ազդեցութիւններդ
անպակաս դրդեցին իմ խղճմտան-
քըս. հոգւոյն սրբոյ շնորհքներու
վը մտքիս խաւարը լուսաւորեցիր,
ու իմ հոգեւոր հօրերուս խրատնե-
րովը շատ անգամ իս քեզի կան-
չեցիր, որ չըլլայ թէ յաւիտեանս
կորսուիմ:

Ար խոստովանիմ տէր իմ, որ
բաւական պտուղ չունիմ քու
աստուածութեանդ առջին հա-
նելու, ու քեզի ընծայ մատուցա-
նելու: Թէ որ իզմէ խիստ համար
պահանջելու ըլլաս, ինչ կ'ըլլայ

իմ բանս: Իրաւցընէ արժանի եմ,
որ ան սոսկալի վճիռն ինձի համար
ալ զրուցես, թէ կտրեցէք ատժա-
ռը, ինչո՞ւ համար պարապ տեղ
երկիրը կը խափանէ իմ հոգեւոր
պարտեզին մէջ:

Ի այց գիտեմ տէր, որ գուն
երկայնամիտ ես ու բազում ողորմ,
ըրածներուս կը համբերես ու թո-
ղութիւն ալ կու տաս. ինչու որ
աւելի կ'ուզես որ ես դառնամ,
քան թէ կորսուիմ: Ահա սուրբ
կոյս Աստուածածնայ բարեխօսու-
թեամբը հաստատ կ'առաջագրեմ
ու կը խոստանամ, որ բոլոր աս
նոր տարին ջանամ մեղքէ զգու-
շանալ ու բարի ապրիլ: Գուն
ողորմած տէր, թափէ երկինքէն
իմ վրաս ամէն երկնային օրհնու-
թիւնները. հոգւոյն սրբոյ շնորհ-
քովը իս լեցնուր, ու օրհնաբանեալ
սուրբ կոյս տիրամօր պաշտպա-
նութիւնը շնորհէ ինձի, որ բոլոր
տարին ի փառս քո անցընեմ:

Հարական :

Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ : Որ քան զարեգակն պայծառագոյն Մարիամ, մի դադարիր բարեխօսել վասն մեր, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ :

Ի տօնի անուանադրութեան Յիսուսի :

Ո՛վ երկրպագելի քաղցր անուն Յիսուսի, ո՛վ ամենասիրելի Յիսուս, ահա խոնարհութեամբ սրտի երեսի վրայ ինկած երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ու սրտանց կը խոստովանիմ, թէ դուն ես տէր իմ Յիսուս՝ մեր ճշմարիտ փրկիչը : Ո՛վ ահաւոր անուն, ո՛վ բաղձալի Յիսուս, աս սուրբ փրկիչ անունովդ մեզ ամէն փորձանքներէն խալըսէ . դուն յուսահատած հոգիներու քաջալերութիւն, դուն ցաւագին սրտերու մխիթարութիւն, դուն

մեղաւորներու փրկութիւն: Ար
պաղատիմ՝ քեզի դէմ ո՛վ բարի
Յիսուս, որ այսօրուան թափած
պատուական արիւնովդ մեղքերուս
ազտեղութիւնը մաքրես, ու քու
սուրբ անուանդ զօրութիւնը վրայ-
էս անպակաս ընես:

Ղուկն խոստացար տէր իմ Յի-
սուս, թէ ինչ որ քու սուրբ անու-
նովդ խնդրելու ըլլանք անտարա-
կոյս ընդունինք: Ա՛պաղաչեմ քեզի
միջնորդութեամբ ամենասուրբ
մօրդ, ամէն մեղքի առիթներէն
իս պահէ, ու ամէն փորձանքներէն
իս ազատէ. ու մասնաւոր շնորհք
ալ տուր, որ չար կիրքերս մէկդի
ձգելով՝ առաքինութիւններու ե-
տեւէ ըլլամ, բարի ապրիմ: Բայց
ամէն բանէն աւելի աս շնորհքը
կը խնդրեմ քեզմէ ո՛վ փրկիչ իմ
Յիսուս, որ մեռնելու ատենս աս
սուրբ անունդ միսիթարութիւն
ըլլայ ինծի, ու ան ետքի նեղու-
թեանս ատենը իս դժոխային

Թշնամիներուս ձեռքէն փրկէ. ու
օգնու թիւն հասիր ինծի, որ չըլլայ
թէ գերի ըլլամ անոնց: Ա՛վ քաղ-
ցր Յիսուս, աս սուրբ անունդ
միշտ բերնէս անպակաս ըլլայ. ու
մեռած ատենս ալ աս ըլլայ ետքի
խօսքս. Յիսուս, Յիսուս, Յիսուս,
իմ հոգիս քեզի կր յանձնեմ, ամէն:

Երգ:

Այր անուն Յիսուս. սիրով քով
ճմլեա՛. սիրտ իմ քարեղէն: Ասան
գթութեան. վասն ողորմութեան.
վերստին կեցո՛:

Ի տօնի յայտնութեան:

Մարգասէր փրկիչ իմ Յիսուս
Քրիստոս, թէպէտ աղքատու-
թեամբ ծնանելով՝ շատ խոնարհ
կերպարանք մտար. բայց քու աս-
տուածութեանդ լոյսը մինչեւ հե-
թանոսները լուսաւորեց: Ա. յօր

յայտնեցիր զքեզ Աստուած ամենակալ ան երեք թագաւորներուն, որ քու ծննդեանդ լուսաւոր աստղը տեսնելով հեռու տեղերէ եկան քեզի երկրպագութիւն ըրին: Ո՛վ տէր, ես որ քրիստոնեայ ծնած եմ, ու սուրբ եկեղեցւոյ մէջ մեծցած, աս թագաւորներէն շատ վարմնացի: Անոնք իրենց կեանքերնին վտանգի մէջ դրին, իրենց աշխարհքը թողուցին, ու ան հեռու ճամբորդութեամբ քեզ ճշմարիտ թագաւորդ կը փնտռէին, ու քու տեսոյդ կարօտ էին. իսկ ես այսչափ տարի զանազան երեւելի տօներու օրեր, որ միշտ ամէն տեղ քու փրկագործ խորհուրդներդ կը քարոզուին՝ ամենեւին քեզ միտքս չբերի, քեզի չդիմեցի, ու քեզմէ լոյս չխնդրեցի: Հիմա ինչ երեսով քու առջիդ ելլեմ ո՛վ սիրուն մանուկ Յիսուս, ու քեզի ինչ արժանաւորընծայ մատուցանեմ: Չունիմ տէր, ան երեք թագաւորներուն

պէս ոսկի. այսինքն՝ առաքինական
գործքեր քեզի ընծայելու. չունիմ
կնդրուկ. այսինքն՝ անուշահոտ
աղօթքներ քու առջիւղ հանելու.
չունիմ զմուռս. այսինքն՝ զանազան
մահացուցմունքներ քեզի պար-
գեւելու. անոր համար մինչեւ հի-
մակ ինծի չյայտնուեցար. իզմէ
պատկառելի երեսդ ծածկեցիր, որ
ես ալ աս խեղճութեան մէջ մնացի:
Բայց հիմա կը ճանչնամ իմ ողոր-
մելութիւնս, քեզի կը դիմեմ, քու
փափաքելի տեսոյդ կը կարօտիմ:

Տէր իմ Յիսուս, չեմ խնդրեր
լուսաւոր աստղին առաջնորդու-
թիւնը քեզ գտնելու համար.
հապա կը խնդրեմ քու գթած
մօրդ բարեխօսութիւնը: Ա՛յ
քաղցրագութ սուրբ Աստուածա-
ծին, քեզի կ'աղաչեմ, դուն ինծի
միջնորդ եղիր քու սիրելի որդւոյդ
առջին, ու դուն մայրենի գթովդ
առաջնորդէ ինծի, որ ես ալ ար-

քայութեան մէջ Յիսուսը տեսնելու արժանի ըլլամ, ամէն:

Շարական:

Ի բեթղեհէմ հրէաստանի երեւի արդարութեան արեգակն. այսօր երկրպագի անեղն յարեւելից եկեալ մոգուցն, եւ փառաբանի յերջանիկ ի բացօթեայ հովուացն:

Ի տօնի մկրտութեան:

Բաւական չեղաւ տէր իմ, որ ինձի համար մարմին առիր, ողորմելի այրի մը մէջ ծնար. ահա այսօր անճառելի խոնարհութեամբ մեղաւորի մը պէս գացիր յորդանան գետը, ու քու ծառայէդ մկրտուիլ ուզեցիր, որպէս զի բոլոր արդարութեան պարտքը լեցունես: Մըկրրտեցար ո՛վ փրկիչ իմ Յիսուս, չէ՛ թէ մաքրութեան կարօս էիր, հապա իմ մեղքերուս աղտոտու-

Թիւնը մաքրես, ու դարձեալ շնորհ
Տօբդ իս սրբես: •

Մեր առջի հօր Ադամայ մեղօքը՝
սկզբնական արդարութիւնը կոր-
սնցուցինք, ու քու երկնաւոր հօրդ
Թշնամի եղած էինք. իսկ դու տէր
իմ աս մկրտութեան սուրբ խոր-
հրդովը մեզ նորէն երկնաւոր հօրդ
հետ հաշտեցուցիր, ու որդիք Աս-
տուծոյ կոչուելու զմեզ արժանի
լրիր: Ո՛վ տէր, այսչափ ըրած
բարերարութիւններուդ համար ես
միշտ պարտական եմ քեզ օրհնե-
լու ու փառաւորելու: Հաւատով
կ'երկրպագանեմ քեզի ո՛վ Աս-
տուած իմ Յիսուս, ու կը խոստո-
վանիմ քեզ միածին որդի Աստու-
ծոյ. ինչպէս որ այսօր մկրտուելու
ատենդ հոգին սուրբ ազաւնակերպ
տեսլեամք երկինքէն վկայեց:

Մաղաչեմ քեզի ո՛վ ողորմած
փրկիչ իմ, աս հրաշափառ օրս
դուն խրկէ իմ վրաս հոգւոյն սրբոյ
շնորհքը, ու լուս, մաքրէ հոգւոյս

աղտոտութիւնները, որ սուրբ
մկրտութենէ ետեւ մեղանչելով
բիւր անգամ աղտեղեցի: Քիտեմ
տէր, որ իս մաքրելու համար ջուր
չես փնտռեր, աչքիս արցունքը
կ'ուզես. բայց տէր իմ, ատ շնորհ-
քը տալն ալ քու ձեռքդ է. տուր
աչուրներուս աղբիւրի պէս ար-
ցունք, որ անով հոգիս լուամ ու
սրբեմ: Թէ որ շնորհօք արդարա-
նալու արժանի չեմ, արցունքովս
կը բաղձամ մաքրուիլ. թէ ոչ
շնորհօք, այլ արտասուօք: Լսէ տէր
իմ աղաչանքիս ձայնը, ու տուր
ինձի այսօր սուրբ մկրտութեան
շնորհքը:

Շարական:

Մկրտի Քրիստոս եւ սրբին ամե-
նայն արարածք, եւ տայ մեզ թո-
ղութիւն մեղաց ջրով եւ հոգւով
վերասրբելով զմեզ:

Ի տօնի տեսան ընդառաջի :

Մի մարդացեալ Աստուած իմ
Յիսուս, քու կին մեր վրայունեցած
սէրդ այնչափ մեծ է, որ մարդկային
լեզու չիկրնար պատմել : Գուն ա-
մենեւին եւ ոչ մեղացարատ մ'ու-
նէիր, մեղաւորի մը պէս տաճարը
եկար. դուն բոլորովին սրբութիւն
ըլլալով՝ անմաքրութենէ մաքրու-
իլ կ'ուզէիր : Չարմացան երկինք.
սքանչացան հրեշտակք. գերագոյն
մաքրութեամբ ծնար ո՞վ սուրբդ
սրբոց. ու այսօր ընծայելով զքեզ
երկնաւոր հօրդ, Աստուծոյ հետ
իս հաշտեցուցիր, ու Աստուծոյ
որդի ըրիր : Իսկ ես տէր իմ, քու
չնորհացդ ապերախտ դանուելուս
համար ամէն տեսակ ազտոտու-
թիւնն ունիմ, ու մաքրուիլ չեմ
ուզեր. դուն բոլորովին արդար
էիր. ու մեղաւորի ձեւ մտար. իսկ
ես մեղաւոր եմ, ու իս արդար կը
կարծեմ : Գուն ողորմած տէր, լոյս

տուր ինձի, ու օգնէ իմ տկարութեանս:

Միմէոն ծերունիին հետ քեզի կ'աղաչեմ սուրբ կոյս Աստուածածին, ու կը խնդրեմ արտասուօք. երբ պիտի ինձի ալ ցըցունես քու սիրելի աստուածորդիդ. երբ անպատմելի սիրովդ պիտի զմայլիմ. երբ հոգիս պիտի մխիթարես: Թէ որ աս մեծ շնորհքիս արժանի չեմ, գոնէ աս շնորհքն ըրէ ինձի մայր ողորմութեան, որ հաղորդութիւն առած ատենս արժանապէս իմ փրկիչս սրտիս մէջն ընդունիմ. ու Միմէոն ծերունիին պէս սրտանց ես ալ աղաղակեմ:

Արդ՝ արշակես զՅարապա + ո ի իսաղաղութիւն: Ահա հաւատով աս խորհրդեան մէջը տեսայ իմ փրկիչս, իմ ճշմարիտ Աստուածս. փափաքս լեցուեցաւ, հերիք այսչափ ատեն աշխրոքիս մէջ կը տառապիմ: Այսօր իմ խնդրուածքս ալ կատարէ սուրբ կոյս Աստուածածին, քու

Տղօր միջնորդութեամբդ մեղքերուս թողութիւն շնորհէ, չար կիրքերէս ու փորձանքներէն իսաղատէ. որ մահուանս ատեն խաղաղութեամբ հանգչիմ, ու երթամ իմ սիրելի փրկչիս հետ միանամ:

Ասէ այսօր աղաչանքիս ձայնը տիրամայր, ու ինձի խոնարհութեան ու մաքրութեան շնորհք տուր, որ ես ալ կարող ըլլամ իսբողորովին Յիսուսին ու քեզի ընծայ ընել: Նայէ գթած աչքովդ սրտիս բաղձանքին, եւ ընդունէ ասանարժան ընծաս:

Շարական:

Արարձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ եւ զիս զբաղմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

Ա Ղ Օ Թ Բ

Ի Մ Ե Ժ Պ Ա Հ Ս

Ա Թ Ա Ջ Ի Ն Կ Ի Ի Բ Ա Կ Է

Ստեղծումն ազամայ :

Գուն տէր իմ, առաջին մարդն
ստեղծած ատենդ անանկ անպատ-
մելի երջանկու թիւնով զինքը զար-
դարեցիր, որ դրախտին մէջ ամէն
կերպ ուրախութիւնն ունէր: Բայց
անհնազանդ գտնուելով քու հրա-
մանիդ, զրկուեցաւ ան ցանկալի
վիճակէն: Ար խոստովանիմ, թէ
որ դուն անոր ողորմելու չըլլայիր,
ամենեւին արժանի էինք կորստեան:
Ողորմեցար մեզի տէր իմ, եւ դար-
ձեալ նորոգեցիր մեր կործանեալ
բնութիւնը. այնչափ սրբազան խոր-
հուրդներ դրիր, որ մեզի շնորհք
կու տան, մեզ կը զօրացրնեն, որ
մարմինը հոգւոյն հնազանդեցը-
նենք: Գուն ինձի համար քառսուն

օր պահեցիր, բան մը չկերար, որ
ես ալ քու սուրբ օրինակիդ հե-
տեւելով՝ իմ մարմինս մահացը-
նեմ ու հոգիս զօրացընեմ, որ
չըլլայ թէ սատանային փորձու-
թիւններէն յաղթուի Ադամայ պէս
ու անոնց դէմ դնելու կարող
չըլլայ:

Մի Աստուած իմ, դուն լոյս
տուր մտքիս ու արթնցո՛ւր հոգիս
աս մահաբեր թմրութենէ, որ գոնէ
աս մեծ պահքի սուրբ օրերն աղէկ
անցընեմ. քու չարչարանքներդ
միշտ յիշեմ, ու ամէն մէկ մեղքիս
վրայ զղջամ ու ցաւիմ, մանաւանդ
իմ որկրամոլութեանս վրայ, որ
թէ հոգւոյս եւ թէ մարմնոյս վնա-
սակար է: Մարմինս ամէհի գազան
մը դարձեր է, ամենեւին հոգւոյս
չի՛հնազանդիր. եւ ո՛չ քու ահա-
ւոր հրամանդ, որ լեռները կը դո-
ղացընէ, ու աշխարհքս հաստա-
տուն կը պահէ, իմ մարմինս կրցաւ
զսպել ու քու սուրբ պատուի-

րաններուդ խոնարհեցրնել: Տես
 ողորմած տէր ան հոգին, որ դուն
 քու ամենակատար պատկերիդ
 նման ստեղծեցիր, ինչ ողորմելի
 խեղճութեան մէջ է ինկեր. առջի
 անմեղութիւնները կորսնցուցեր է,
 ու մարմինը հոգւոյն դէմ ապրս-
 տամբեր է, հոգիս կը բաղձայ, որ
 քու սուրբ պատուիրաններուդ
 հետեւի, ու մարմինս անոր դէմը
 կ'ուզէ: Ահա գետինն ինկած կ'ա-
 ղաչեմ կը պաղատիմ քեզի գորո-
 վագութ արարիչ իմ, լսէ հառա-
 ջանքիս ձայնը, դուն ողորմէ յու-
 սահատելոյս, ու նորոգէ հոգիս
 սուրբ հոգւոյն շնորհքովը: Տ՛ուր
 ինձի անմեղութեան շնորհք, ինչ-
 պէս որ Ադամայ տուիր. բայց ինձի
 ալ երկնային դրախտին դուռը,
 ինչպէս որ քեզի հետ խաչուած
 աւազակին բացիր. իմ հոգւոյս ալ
 ըսէ ան մխիթարական խօսքը. Այսօր
 ընդ էս էջէս է դրախտին, ամէն:

Հարական:

Ս ասն որոյ աղաչեա՛մ մայր Աստու-
ծոյ Մարիամ զմիածին քո զորդին
զի շնորհեսցէ ըստ աւագակին ժա-
ռանգել վերստին մեզ զգրախտին
վայելչութիւն:

Հարթու մէջ ընելու աղօթք:

Հայր գթութեանց եւ ողորմու-
թեանց մարդասէր աչքովդ նայէ
քու ստեղծուածիդ վրայ, որ խո-
նարհութեամբ առջիդ ինկած աս
սուրբ օրերս ապաշխարութեամբ
անցընել կ'ուզէ: Բացտէր իմ հոգ-
ւոյս աչուրները, որ աշխարհային
ունայնութիւնները ճանչնամ, ու
սիրտս անանկ բաներու հետ չկա-
պեմ, որոնք երբոր էնէ օր մը պի-
տի թող տամ, ինչու որ ես աշխար-
քիս վրայ օտարական եմ ճամբոր-
դի մը պէս. ու օր մը պիտի գայ, որ
ամէն մէկ անցուցած օրերուս՝ հա-

մար պիտի տամ: Ի՛նչ օգուտ եղաւ
ինձի աշխրոքիս մեղանչական ու-
րախուժենէն, շուքի մը պէս ան-
ցան գացին, ու ձեռքս ուրիշ բան
չիմնաց, բայց եթէ խղճմտանքի
անհանգստութիւն, ու քու առջեւ դ-
յանցաւոր երեւնալ: Այն իմ կու-
րութեանս, ուրախութիւնը որ մե-
ղանչելու ատենս ունէի՝ շատ քիչ
է եղեր. իսկ տրտմութիւնը ու
պատիժը, թէ որ քեզի հետ հաշ-
տուելու չաշխատիմ, յաւիտեանս
պիտի ըլլայ:

Իրաւցրնէ տէր իմ, արժանի
չէի, որ ես այսպիսի սրբազան օրեր
տեսնէի, ու ապաշխարութեան մի-
ջոց ունենայի. բայց դուն ողորմած
տէր, որ իս աս օրերուս հասցու-
ցիր, մագդաղենացւոյն ապաշխա-
րութեան հոգին ալ պարգեւէ, որ
քու ոտքդ ինկած գիշեր ցորեկ
լալէն չիգադրիմ: Աղսրմէ ինձի
տէր իմ, որ հոգիս պէսպէս մեղ-
քերով հիւանդ մնացեր է ան-

գամալուծին պէս, բարեգործու-
թիւն ընելու ուժ չունի. քեզի կ'ա-
զազակէ ո՞վ բժիշկ հոգևոց բարի
Յիսուս, գթութիւն ըրէ իմ հո-
գևոյս ալ: Ե՛րբ տէր իմ ինծի ալ
պիտի ըսես ան մխիթարական խօս-
քը. Թողէ՛ալ լիցին Ռդէ +. Երբ
զքեզ մէյ մ'ալ պիտի չիվշտացը-
նեմ, քեզ միայն պիտի սիրեմ, ու
սուրբ պատուիրաններդ չիմոռնամ:
Ողորմած Յիսուս Քրիստոս փրկիչ
իմ, կ'ազաչեմ քեզի, շնորհք տուր
ինծի, որ ես ալ քու օրինակիդ
հետեւելով՝ աղօթքով ու պահք
պահելով չար սատանային փորձու-
թիւններուն յաղթեմ, ու իմ գէշ
կիրքերս մահացընեմ: Սուրբ եւ
պատուական խաչիդ զօրութեամբ
պահէ՛ ու զօրացո՛ւր իս տէր իմ. թող
մի տար որ թշնամին վրաս պարծի:
Ի +եզ րէր յոսացայ, թէ մահլէցից
յա-ի րէան:

Ե Ր Կ Ր Ո Ր Պ Կ Ի Ի Ր Ա Կ Է

Անկումն աղամայ :

Այս գեղացի Բաբելայոց անդ Զարեհ
 էլ Լայա, յորժամ յիշէս զգեղ սիոն :
 Այս տէր երբոր միտքս կու գան
 ան անպատմելի դրախտին զուար-
 ճութիւնները, ամենակատար եր-
 ջանկութիւնը, ան սուրբ անմեղու-
 թեան վիճակը, ու քու անհամար
 ստեղծած բարիքներդ մարդուս
 համար, չեմ կրնար կերպով մը իս
 մսիթարել : Աս ողորմելի աշխար-
 քիս արսորանքին մէջ մնացեր եմ .
 բոլոր կեանքիս մէջ ցաւագին ա-
 նէճքներու տակ ինկեր եմ
 ցաւերէն եւ թշուառութենէն ի
 զատ բան մը չեմ ունեցեր :
 Թշնամիք չորս դիս առեր են, ու
 յաղթելու ուժ չկայ վրաս : Ապրս-
 տամբ մարմինս գլուխ վերցուցեր
 է, ու հակառակ հողւոյս կը բաղ-
 ձայ . կամքս զօրութիւն չունի .
 մտքիս լոյսը խաւարած իր վնասը

չիտեսներ, ու խիղճմտանքս ալ
բոլորովին թմրեր մնացեր է: Ո՛վ
ողորմած Աստուած, ասինչ թշուա-
ռութեան մէջ իս թողուցեր ես,
ատ ինչ խեղճ վիճակի մէջ իս
ձգեր ես. դուն ամենակարող ա-
բարիչ ըլլալով ասանկ ողորմելի
արարած ստեղծեր ես:

Ո՛հ տէր, ներէ անդգամնու-
թեանս. ինչ հայհոյութիւն է աս
բերնէս ելածը: Չէ ամենաբարի
արարիչ իմ, չէ, դուն իս ասանկ
թշուառ չստեղծեցիր, դուն աս
վերքերը վրաս չիդրիր. բոլոր ես
եղայ պատճառ այսչափ չարեաց.
Ես քու պատուիրաններուդ ան-
հնազանդ գտնուելով, Ադամայ
պէս իմ առջի երջանկութիւնս
կորսնցուցի: Երկնից արքայութիւ-
նը ինձի բնակարան պատրաստեցիր,
եւ անկից հեռացայ. անմահարար
կերակուր տուիր ինձի, ու ես
յարդր չիճանչցայ. իս անձնիշխան
ողլաս ըրիր, ու ես ախտերուս դե-

րի եղայ: Անոր համար պէտք եղաւ,
որ դու տէր իմ Յիսուս Քրիստոս
աշխարհք դաս, ու իմ հոգւոյս
ցաւերն ու հիւանդութիւնները
բժշկես, ու իս նորէն կենդանա-
ցընես քու մահուամբդ: Արչափ
ցաւեր ու չարչարանքներ քաշեցիր
փրկիչ իմ մեղացս համար. դիտէդ
մինչեւ ոտքդ առողջ տեղ մը չի-
մնաց վրագ, ու ան ետքի նեղու-
թեան ծարւած ատենդ՝ լեղով
խառնած քացախ խմեցիր, որ որ-
կրամոլութեանս յանցանքը քաւես,
ու ինձի ժուժկալութիւն սորվե-
ցընես: Միշտ պարտական եմ
փրկիչ իմ քեզի շնորհակալ ըլլա-
լու, ու անդադար քեզ օրհնելու:
Գուն քեզ բոլորովին ինձի ու իմ
մեղացս համար տուիր, ես ալ իս
բոլորովին քեզի կ'ընծայեմ. ու
մասնաւորապէս աս սուրբ պահքիս
մէջ կը ջանամ իս մահացուցանել,
որ քեզի հետ մեղքերէս յարու-
թիւն առնեմ: Աղորմած Յիսուս,

որ ոչ կամիս զմահ մեղաւորին,
քուկին անգին արդեանցդ համար
ընդունէ իս երկնային գրախտը,
ամէն :

Շարական :

Ընդ նախահօրն տրտմութեան որ
վասն ելիցն ի գրախտէն կենաց,
ընկալցուք զտրտմութիւն ապաշ-
խարութեան. զի յարութեամբն
Քրիստոսի արժանասցուք մտից
գրախտին եկեղեցւոյ :

Շարթ ու մէջ ընելու աղօթք :

Յիսուս Քրիստոս մարդասէր փրկ-
կիչ իմ, դուն իս փնտռելու հա-
մար աշխարհք եկար, մարմին ա-
ռիր. ու իս գանելու համար որ
կորսուած էի՝ ամէն աշխատանքը
յանձն առիր. ու պատուիրեցիր
ինձի որ քու սուրբ օրինակներուդ
հետեւիմ ու քեզի նմանող ըլլամ :

Գու՛ն ինձի սորվեցուցիր, որ ինչպէս
 իմ թշնամիներուս մարմնոյ ու աշ-
 խարհի յաղթեմ. իսկ ես իմ զգայ-
 արանքներս չիզսպելուս համար
 անոնց գերի եղած եմ: Մեր նա-
 խահայրն Ադամ կերակրոյ ցան-
 կութեամբ խաբուեցաւ. նախ ա-
 ուաջին Եւա դարձաւ նայեցաւ աշ-
 քին գեղեցիկ երեւնալով. ետքը
 սկսաւ Ադամայ հրամցընել. ան ալ
 զգուշութիւն չընելով ընկերոջը
 հաճոյքն (խաթրը) ընելու համար
 քու հրամանդ դժբախտութեամբ
 ոտքի տակ առաւ: Անանկ ալ ես
 տէր իմ խիստ անզգոյշ եմ աչքս
 զսպելու. շատ անգամ համարձակ
 կը նայիմ ան բաներուն, որ դուն
 քու սուրբ հրամանաւդ արգելած
 ես, ու նայելով անանկ ախորժակ
 եկած է որ՝ թշուառաբար մեղքի
 մէջ ինկած եմ: Շատ անգամ ալ
 հերիք չէ՛ որ մինակ ես իյնամ,
 հապա Եւային պէս ուրիշին ալ
 արգելած պտուղը կը հրամցընեմ.

բերնովս չար խօսքերովս ընկերիս
պատճառ ըլլալով որ ան ալ ինծի
հետ իյնայ : Այն ինձ, բերանս աւել-
ի մարդասպան է, քան թէ Աայե-
նին ձեռքը. ան՝ մարմինը միայն սպա-
նեց, հոգին պսակեցաւ. իսկ ես եղ-
բօրս մարմինը ողջ՝ հոգին սպաննե-
ցի : Թէ որ Աայենէն անանկ խիստ վը-
րէժ պահանջեցիր. հապա ես ասանկ
մնալու ըլլամ, քանի դժոխքի ար-
ժանի չեմ :

Ահ տէր, գիտեմ որ բռնած
ճամբաս չար է, ալ չեմ ուզեր աս
ճամբուս մէջ մնալ. կ'առաջադրեմ
քու օրինակներուդ հետեւիլ, որ
մարմնոյ ու աշխարհի կարող ըլ-
լամ յաղթել : Գուն ինծի շնորհք
տուր, որ աչքովս համարձակ չնայ-
իմ ան բաներուն, զոր գուն
արգելած ես, մանաւանդ աչքէս
առաջ միտքս դարձրնեմ : Գալ-
ձեալ կարողութիւն տուր, որ բեր-
նիս աղէկ պահպանեմ մը դնեմ, որ
չիբացուի ուրիշները բամբասելու,

ՏայՏոյելու, սուտ զուրցելու, ու
չար խրատ տալու, Տապա միտքս ու
բաղձանքս ըլլայ քու օրէնքդ, ու
խօսքս ալ օգտակար, որ լսողնե-
րուն շինու թիւն ըլլայ:

Ե Ր Ր Ո Ր Գ Կ Ի Ի Ր Ա Կ Է

Անտուակին:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որչափ
անթիւ են քու կին ինձի ըրած բա-
րերարու թիւններդ: Գուն իս շնոր-
հաց մկրտութեան արժանի ըրիր,
ու երկնից արքայութեան ալ որ-
դեգիր գրեցիր. եւ ուղեցիր՝ որ
մեզի մարմնակից ըլլաս, որ մենք ալ
քեզի հետ արքայութեան մէջ ժա-
ռանգակից ըլլանք: Ինչ աւելի մեծ
բան մը կրնար մեր միտքը մտածել.
մանաւանդ թէ ինչպէս կրնայիր
քեզմէ աւելի վեր բան մը մեզի
համար սահմանել, բայց եթէ զքեզ
ու քու արքայութիւնդ: Ար խոս-

տովանիմ տէր, որ շատ մեծ բարիք է՝ որ ինձի ըրած ես. սուրբ մկրտաութեան աւազանին զաւակ ընելով՝ արքայութեան ալ ժառանգ ըրեր ես: Բայց ո՛վ փրկիչ իմ, ես աս ամէն ըրած բարերարութիւններդ ամենեւին չյիշեցի. անառակ որդւոյն պէս հեռացայ իմ գթած հօրէս, բաժնուեցայ քեզմէ, ու բոլոր հոգեւոր ժառանգութիւնս, որ իրաւունք ունէի արքայութեան որդի ըլլալու՝ մեղանչելով կորսրնցուցի: Իմ բոլոր կեանքս բերկրութիւն մ'եղաւ իմ գարշելի կիրքերուս. ու քանի որ դնաց նէ սովորութիւնն իմ վրաս զօրանալով՝ ետքի թշուառութեան մէջ ինկայ: Զայր գթութեան, նայէ մէյ մը իմ խեղճութեանս. լոյս մը ծագէ մտքիս մէջը, որ ճանչնամ, թէ ինչ վեճակէ ինկայ, ու ինչ ողորմելութեան հասայ: Շնորհք ու զօրութիւն տուր, որ կատարեալ ապաշխարութեամբ, ու սրտանց խոստո-

վանու թեամբ քեզի դառնամ, ու
անառակ որդւոյն հետ գժած հօրդ
գոչեմ. Հայր մեզայ յերկինս ե-
ստեմք +ոյ. ալ արժանի չեմ արքայ-
ու թեան ժառանգ ու որդի ըսուե-
լու, ես իմ ըրած անօրէնու-
թիւններս գիտեմ, ու կը խոստո-
վանիմ որ թողու թեան արժանա-
ւոր չեմ. բայց միայն աս շնորհքը
կը խնդրեմ, որ իս բոլորովին ե-
րեսէ չիձգես, որ չըլլայ թէ անտէ-
րունչ յաւիտեանս կորսուիմ: Հայր
ողորմու թեան լսէ անառակ որդ-
ւոյդ ողորմուկ ձայնը. Հայր մեզայ
բաւական է աս միայն քու գժած
սիրտդ վրաս ի գուժ շարժելու, ու
ինձի դարձեալ ողորմելու: Տուր
ինձի ան հաշտու թեան համբոյրը.
Իմ առջի անմեղու թեանս հոգեւոր
հագուստներն ինձի նորէն հագ-
ցուր, որնոր սուրբ մկրտու թեան
ատենը շնորհեցիր, ու արժանի ըրէ
իս, որ աս ուրախու թեան մէջ քու
սուրբ միածնիդ մարմինն ու արիւ-

նր արժանապէս ու ջերմեռանդու-
թեամբ ընդունիմ:

Մի հայր երկնաւոր, երեսի
վրայ ինկած կ'աղաչեմ քեզի, թող
մի տար իս որ մէյ մ'ալ մեղօք
քեզմէ բաժնուիմ ու հեռանամ.
տուր այսօր երկնաւորաց ան մեծ
ուրախութիւնը՝ ապաշխարութեան
հոգի ու կատարեալ դարձի շնորհք
տալով ինձի, որ ես ալ արժանի
ըլլամ ի հանդերձեալն երկնից
սուրբ արքայութեան մէջը կրկին
ուրախանալ հրեշտակներուն հետ,
ու միշտ քեզ օրհնել ի յաւիտեան,
ամէն:

Հարական:

Ընդ անառակին որդւոյ գոչեմք
առ հայրդ գթած, մեղաք յերկինս
եւ առաջի քո քաւիչ յանցանաց,
ել ընդ առաջ սիրով գրկեա համ-
բուրիւ, մաքրեա զմեզ ի մեղաց
մերոց:

Շարժում մէջ բնելու աղօթք:

Ո՛վ ողորմած տէր իմ եւ Աստուած իմ, ցաւագնեալ սրտիւ ես ինքիրմէս կը խոստովանիմ իմ անհամար մեղքերս, ու բոլոր սրտանց կը ցաւիմ քեզ վշտացընելու:

Ո՛վ հայր ողորմութեան, դուն սրտիս զեղջ տուր, ու աչուըներուս աղբիւրի պէս արցունք շնորհէ, որ դոնէ աս սուրբ ապաշխարութեան օրերս մեղաց թմրութենէն արթննամ, աչքս բանամ տեսնեմ իմ խեղճութիւնս, ու քեզի գթած հօրդ դառնամ, ոտքդ իյնամ, լամ ողբամ, ու մինչեւ հիմա ըրած ապերախտութիւններուս թողութիւն խնդրեմ. Յարս-ցեալ գնացից աս հայր իմ, եւ ասացից ցնա, հայր մեղաց: Աս է մի միայն սրտիս մտխտարութիւնն, ու բովանդակ յոյս:

Հայր երկնաւոր, անառակ որդւոյդ խեղճութեանը նայէ մէյ մը, որ մերկ խայտառակ ետքի ողորմե-

լուծեան մէջ ինկեր է, ու ոտքդ
փաթթուած լալով մեղայ կը կանչէ :
Հայր՝ «Եղայ յերկինս՝ Ե-ս-ս-Ս-Ս Է + ո .
«Է Ե-ս Ե՛ մարտանի կոչել որդի + ո .
«Ես շէս Ե՛բրե- շէ Ե Վարձկանաց + ոց :
Հայր սուրբ, գիտեմ որ քու հայ-
րական սիրտդ կոտորեցի, ու որդիա-
կան ժառանգութեանս շնորհք-
ները՝ որնոր սուրբ մկրտութեամբ
ինձի պարգեւեցիր՝ արդէն կորսն-
ցուցի . անոր համար ասկից ետքը
արժանի չեմ քեզի որդի ըսուե-
լու . բայց աս շնորհքը միայն կը
խնդրեմ, որ ըրածներուս ներես, ալ
չյիշես, ու զիս քու ապաշխարող
ծառաներուդ կարգն անցընես :
Քանի որ կենդանի մնամ, միշտ
արցունք թափելէն չդադրիմ,
քու կին հայրական սէրդ ոտքի տակ
առնելուս՝ ու քեզմէ բաժնուելուս
համար . որպէս զի ի հանդերձեալն
քու կին մսիթարութեանդ ար-
ժանի ըլլամ, ամէն :

Չ Ո Ր Ր Ո Ր Պ Կ Ի Ի Ի Ր Ա Կ Է

Տնտեսին:

Ըմենախնամ տէր եւ Աստուած
իմ, ես ողորմելի ստեղծուածս քու
Աստուածութեանդ առջին յանդը-
գնեցայ խորհրդով, բանիւ եւ
գործքով մեղանչել: Գուն ապրս-
պրեցիր ինձի, որ դռնապանի մը
պէս արդուն կենամ, ու սուրբ սրբ-
տիւ գալստեանդ օպասեմ, որ եր-
բոր դու տէր իմ դուռը զարնես,
այսինքն՝ երբոր հոգիս մարմինէս
բաժնուելու ըլլայ՝ պատրաստ
գտնուիմ: Տնտեսին առակը ինձի
պատմելով ցըցուցիր, թէ մեր
խիղճը միշտ մեղքէ մաքուր պիտի
պահենք, որ քուկին դատաստանիդ
առջին քննութիւն ըրած ասունդ
պարտական չի գտնուինք: Բայց իմ
մեղացս պարտքերը անթիւ են տէր
իմ, ինչ պիտի ընեմ, թէ որ դա-
տաստանի օրը ինձի ալ ըսելու ըլ-
լաս. Տո՛ւր զհամար արեւմտա-լեւան + »:

Իրաւցրնէ թէ որ աս ժամուս՝ ար-
դարու թեամբդ իս դատելու ըլլաս,
արժանի եմ որ դատապարտու-
թեան վճիռը լսեմ. արժանի եմ,
որ քու քաղցր տեսութենէդ զըր-
կուիմ:

Այն տէր իմ, երբ որ աս միտքս
կու գայ, կը դողամ ու կը սոսկամ,
թէ այնչափ կորսնցուցած շնորհք-
ներուս համար ինչ պատասխան
պիտի տամ քեզի: Հիմա տէր իմ
ոտքդ ինկած տնտեսին պէս կ'աղա-
չեմ կը պաղատիմ. Երկայնամիտ լեր-
ու իս, ե- զամենայն հոգոս-ցից +եղ:
Ո՛վ ողորմած Աստուած իմ, դուն
սրտիս զեղջ տուր, մտքիս մէջը
լոյս ծագէ, որ քու օգնականու-
թեամբդ քանի որ հիմա ինձի
կեանք տուեր ես, իմ մեղքերուս
պարտքերը ապաշխարութեամբ
վճարեմ: Գիտեմ փրկիչ իմ Յի-
սուս, թէ որ ես մեղքերուս վրայ
զղջամ, ու քու առջեւդ խոստո-
վանելու ըլլամ, պատրաստ ես

դուն իմ պարտքերս ջնջելու, անոր համար բոլոր սրտանց մեղայ կը գոչեմ քեզի անիրաւ գտնուելուս համար, ու ասկէց ետքը աւելի կ'ուզեմ մեռնիլ, քան թէ քեզ նորէն վշտացընել:

Ահա բարեխօս ունիմ ինձի քու ամենասիրելի մայրդ սուրբ Աստուածածինը. լսէ անոր աղաչանքին Յիսուս իմ, ու ինձի շնորհք ու կարողութիւն տուր, որ ճշմարիտ ապաշխարութեամբ աս աշխարհքս պարտքերս վճարելով մեռնելէս ետքը քու ցանկալի տեսոյդ արժանի ըլլամ. ու ան ուրախալի լուրը լսեմ քու աստուածային բերնէդ. Ազնի-Յարապ Բարի-Է-Կա-սորաբի՛մ, Տո-սո յա-բախտ-ի-ն-սի-սան քո, ամէն:

Հարական:

Ար զտիրականս առ ի քէն կարգեալ անտեսս բնութեան մերոյ

իմաստութեամբ զպարտիս եթող
քոյոց պարտապանաց, թող եւ
զմեր զյանցանս ողորմութեամբդ
քո քրիստոս:

Հարթու մէջ ընելու աղօթք:

Երբոր տէր ըրածներս կը յիշեմ,
ու քու արդար դատաստանդ կը
մտմբտամ, քեզի դէմ ըրած ապե-
րախտութիւններս միտքս գալով՝
բոլոր մարմինս դող կ'ելայ, ու կը
յուսահատիմ: Թէ որ գործած
մեղքերուս համար հարցուփորձ ը-
նելու ըլլաս, ինչ պատասխան պի-
տոր տամ քեզի, ու քու արդար
դատաստանիդ ձեռքէն ինչպէս
պիտի խալըսիմ: Ա՛յ տէր իմ, իմ
մեղքերս ծովու աւազէն ալ շատ
են, որ մէկը պատմեմ. որ մէկուն
վրայ լամ: Ահա հպարտութեամբս
քուկին աչքէդ ելեր եմ, ու իս
արդար սեպելով՝ շատ անգամ
չարաչար մեղաց մէջ ինկեր եմ.

ուրիշները քամահեր եմ, միշտ
 ամէնէն վեր ըլլալու բաղձացեր
 եմ. ու մէյմը չեմ յիշած, թէ
 դուն խոնարհներուն միայն կ'ողոր-
 միս: Նախանձով ընկերոջս բարեա-
 ցը վրայ տրտմեր եմ, իրեն մեծու-
 թեան աչք եմ տնկեր, անոր յա-
 ջողութեանը չիկրնալով տանիլ
 անունը աւրեր եմ, ու զինքը վար
 ձգելու ջանացեր եմ: Բարկու-
 թեամբ ինքիրմէս ելած՝ ըրածս չեմ
 գիտցեր. բերնէս շատ հայհոյու-
 թիւններ հաներ եմ. խոռովութեան
 պատճառ եղեր եմ, ու քրիստոնէի
 անուան անվայել խօսքերով գործ-
 քերով ուրիշները նախատեր եմ:
 Ագահութեամբ բոլոր սիրտս ու
 յոյսս ստրկի վրայ անանկ դրեր
 եմ որ, Յուդային պէս քեզ բո-
 լորովին մոռցեր՝ քէնէ աւելի ստա-
 կը սիրեր եմ. աղքատներուն չեմ
 ողորմած, ու հոգւոյս համար ստակ
 մը չեմ ծախած: Ծուլութեամբ
 հոգիս ամէն հոգեւորէն, աղօթքէն

ու ջերմեռանդու թիւններէն պա-
ղեր է, խոստովանանքս այսօրւան
վաղուան ձգելով՝ երկար ատեն
չեմ խոստովանած, ու կարօտնե-
րուն ձեռքէս եկած բարիքը չեմ
ըրած: Արկրամոյութեամբ չափէն
աւելի ինք զինքս ուտելու խմելու
տուեր եմ, որ անկէց մեղք եմ
մտեր, ու ողջութեանս վնաս հաս-
ցուցեր եմ: Իսկ անպարկեշտ խօս-
քերովս ու գործքերովս՝ կը խոս-
տովանիմ որ շատ հեղ քու սուրբ
պատուիրանիդ դէմ գործեր եմ:
Գուն իմ սիրտս Աստուծոյ տա-
ճար, ու հոգւոյն սրբոյ բնակարան
շինեցիր. ու ես իմ գարշելի կիր-
քերովս պղծեցի, ու սատանային
գերի ըրի:

Այն գթած փրկիչ իմ, այսչափ
հիւանդութիւններով պաշա-
րուած անդամալոյծ հոգիս քու
առջիդ ինկեր բժշկութիւն կը
խնդրէ: Ա՛վ բժիշկ հոգւոց, քու
ամենակարող զօրութեամբդ ին-

ճիալ Տրամայէ որ հոգւոյս հիւան-
դութիւններէն ողջ ըննամ, ու վեր
ելլեմ. ու փառք տալով զքեզ
յաւիտեանս յաւիտենից օրհնեմ:

Հ Ի Ն Ք Ե Ր Ո Ր Ք Կ Ի Ի Ր Ա Կ Է

Գատաւորին:

Տէր իմ եւ Աստուած իմ, դուն
ստեղծեցիր իմ հոգիս ու մարմինս,
որոնց վրայ դատաւոր դրիր միտքս,
որ արդար դատաստան ընէ հոգիս
ու մարմինիս մէջը: Բայց իմ ան-
հոգութեամբս մարմինս այնչափ
գլուխ վերցուց որ, միտքս ալ իրեն
հետ մոլորեցաւ, ու ամենեւին ար-
դար դատաստան չ'ըներ, նման ան
դատաւորին, որ Աստուծմէ չէր
վախոնար, ու մարդոցմէ չէր ամր-
չնար: Իսկ խեղճ հոգիս ամէն
չնորհքէն զրկուած՝ ողորմելի կեր-
պարանքով այրի կնկան պէս քեզ
երկնաւոր դատաւորիդ Յիսուսի

կ'աղաչէ կը պաղատի, ու քեզմէ
օգնութիւն կը խնդրէ. Գաւառ արտ
[նշ] Կէր յոսոյիէ իմէ: Թէ որ անար-
ժան աղօթքիս ձայնը քեզի լսելի
չըլլար նէ, գոնէ աչքէս թափած
արցունքներս քեզ ի գութ շար-
ժեն, որ հոգիիս ու մարմինիս մէջ
խաղաղութիւն ընես. ինչու որ հո-
գիս ամէն կողմանէ մարմնոյս գերի
եղած է, ու ձեռքէն խալըսելու ա-
մենեւին ճար մը չիկայ:

Միտքս թէպէտ կ'իմանայ, թէ
իր հրամանը անիրաւ է, քեզի իր
արարչին հաճոյ չէ. բայց զօրու-
թիւն չունի, որ մարմնոյն կամացը
յաղթէ: Միտքս կ'իմանայ, որ աս
սրբազան օրերը պէտք է մարմինը
աւելի մահացուցանել, զգայա-
րանքները զսպել, ապաշխա-
րութեան ետեւէ ըլլալ, երբեմն
նաեւ անմեղ զբօսանքներէն ետ
կենալ. բայց չէ թէ միայն կը խո-
նարհի մարմնոյն անմեղ ուզածնե-
րը կատարելու, հապա թէ որ մե-

դանչական բան մ'ալ ուղէ, ուժ չու-
նի հրաման չտալու, դէմ կենալու:

Այս տէր, ոտքդ ինկած կու-
լամ կ'ողբամ. Գաւթ արա ինչ արէր
յոստիւն իմէ. որ է իմ մարմինս:
Ձիյտեմ տէր ինչ ընելիքս աս ըն-
տանի թշնամւոյս հետ. միշտ հետս
մէկտեղ ունիմ. չեմ կրնար իբրմէ
բաժնուիլ, հետը գլուխ ելլելու
զօրութիւն չունիմ. բայց տէր իմ
Յիսուս, դուն այսօրուան աւետա-
քանին մէջ ինձի սորվեցուցիր, որ
խոնարհութեամբ անդագար ա-
զօթք ընեմ, քեզի ազաչելէն չի-
ձանձրանամ, որ հեծութիւնս տես-
նելով՝ ողորմիս ինձի: Անանկ է նէ
տէր իմ ողորմած, օգնէ ինձի քո-
սուրբ շնորհքովդ, լուսաւորէ ու
ուժովցո՛ւր միտքս, որ նախ ուղիղ
դատաստան ընէ, եւ ըրածը գոր-
ծով կատարել տայ. որպէս զի
մարմինս բարեկիրթ՝ ու հոգիս ա-
ռաքինասէր, ու երկուքին վրայ ալ
միտքս ուղիղ դատաւոր ըլլայ:

Հարական :

Դատաւոր արդար որ հաստատեցեր ի մեզ դատող բնութեան զմիտս մեր. շնորհեա՛ սմա դատել զանձինս իրաւամբք եւ արդարութեամբ. խնայեա՛ ի մեզ տէր ողորմութեամբ :

Հարթու մէջ բնելու աղօթք :

Տէր իմ Յիսուս քրիստոս, դուն ինձ ի պատու իրեցիր, որ աղօթք բնելէն չի դադրիմ. որպէս զի փորձութեան մէջ չիյնամ : Բայց ես շատ անգամ սատանային փորձանքներէն յաղթուեր եմ, ինչու որ արժանաւոր աղօթքով քեզի դիմելու, ու քու օգնութիւնդ խրնդրելու անսխալ եմ եղեր : Աղօթք բրած ատենս բերնէս ելածը ես իսկ չեմ հասկըցեր. խելքս միտքս ուրիշ տեղ, սիրտս ուրիշ բաներու ետեւէ եղեր է. անոր համար քեզ-

մէ շնորհք ընդունելու տեղ՝ քու
աչքէդ ելեր եմ. ու աւելի դատա-
պարտութեան արժանի եղեր եմ:

Այլ մարդասէր փրկիչ իմ, քու
սուրբ աղօթիցդ ու հառաչանացդ
արդիւնքովը, որնոր գէթսեմանի
պարտեզին մէջ արիւն քրտինք
թափելով իմ փրկութեանս հա-
մար Հօր Աստուծոյ ընծայեցիր,
ինձի ալ աղօթքի ու ջերմեռան-
դութեան հոգի տնօր, որ աղօթքիս
ատենը ամէն բան մտքիս մէջէն
մէկդի ձգեմ, ու բոլորմիտքս քե-
զի վերցրնելով մտադրու թեամբ ու
սիրով աղօթք ընեմ:

Դուն սրտագէտ Աստուած, գի-
տես իմ սիրտս, ու ըրած աղաչանք-
ներս կը լսես, քու բարերար ողոր-
մութեամբդ վրաս գթն. սուրբ
հոգւոյն շնորհքովը փարատէ մտքիս
մէջը եղած խաւարային խորհուրդ-
ները: Սաստէ տէր չար սատանային
ալ, որ աղօթքիս ատենը քովս
չմտենայ, քու ամենաղօր խաչիդ

ղորութեամբը հալածուի երթայ:
Երկինքէն սուրբ հրեշտակները
խրկէ ինձի, որ քեզ անոնց հետ
միատեղ անլուելի ձայնիւ փառա-
բանեմ յաւիտեանս, ամէն:

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Պ Կ Ի Ի Ր Ը Կ Է

Գ.ալստեան:

Խոնարհեալ անձամբ ահիւ եւ
դողութեամբ քու առջիդ կ'իյնամ
ո՛վ Աստուած իմ, որ մը պիտի դայ
որ, քուկին արդար դատաստանիդ
առջին բովանդակ կենացս մէջ
բրածներուս համար՝ մէկիկ մէկիկ
քեզի համար պիտի տամ: Մահը
դուռս հասեր մօտեցեր է. երբոր
դուն արդարութեամբդ իս դատե-
լու ըլլաս, պղտիկութենէս ի վեր
բրած չար գործքերս առջիս դնես,
ինչ կ'ըլլայ իմ բանս տէր իմ: Թէ
որ արդար հոգիները քուկին դա-
տաստանէդ կը դողան կը սարսին,

ես մեղաւոր անձամբ ինչպէս պիտի
աչքիդ երեւամ:

Վուկին ահաւոր գալստեանդ
ատենը երկինք եւ երկիր բոլոր
իրար պիտի անցնին. իսկ դու տէր
իմ գաս դատաւորական աթոռ պի-
տի նստիս ամէն մարդիկը դատելու
համար: Տէրունական սուրբ խաչդ
կանգնես պիտոր մէջ տեղս, որոնք
որ քեզի հաւտացին, ու քեզի հետ
խաչակից եղան աս աշխարհքս,
քեզի հետ ալ յաւիտեանս թա-
ղաւորեն, ես ան ատենը արդեօք
ինչպէս ահու գողու մէջ պիտի
գանուիմ: Ա՛հ տէր, քանի որ նե-
րողութեան ու շնորհաց աթոռը
նստեր ես, քեզի կը դիմեմ. դուն
ես իմ արարիչս ու փրկիչս, թող
մի տար իս ան ետքի նեղութեանս
ատենը: Յիշէ տէր իմ ան քաշած
դառն չարչարանքներդ, սուրբ
մարմնոյդ ցաւագին վէրքերը, փու-
շէ պսակը, լեղի քացախը, ու փրկ-
կագործ խաչդ, որուն վրայ մեռար:

Գին եմ քու արեանդ, գին են ա-
սոնք իմ փրկութեանս, ասոնցան-
հուն արդեամբը կը խնդրեմ, որ
հոգիս յաւիտենական պատժէն
փրկես, ու սիրելեացդ կարգը դա-
սես՝ օրհնեալ զաւակներուդ հետ
քեզի կանչելով. Եկոյ՝ օրհնեալ հօր
իմոյ:

Մի սուրբ Աստուածածին, մայր
փրկութեան եւ ողորմութեան,
կ'աղաչեմ քեզի, որ դատաստանին
օրը ինձի համար դատաւոր չինըս-
տիս. հապա քու Աստուածորդւոյդ
բարեխօս ու միջնորդ ըլլաս, ու իս
Աստուծոյ արդարութեան ձեռքը
չիմատնես: Գթած տիրամայր,
քուկին քաջած անտանելի ցաւերդ
միտքդ բեր, Յիսուսին հինգ վեր-
քերուն նայելով վրաս մասնաւոր
գութ մը ունեցիր, որ քուկին
մայրական մեծ իշխանութեամբդ
պաշտպան կենաս ինձի ու փրկես,
ամէն:

Հարական :

Օ կենդանագիր անարատ ծնողի
քո արկանեմք առաջի անոխակալ
տէրութեանդ քո, յորժամ գաս
փառօք հօր դատել զթշնամին
խաչի քո, ներեա՛ յանցանացմերոց
բարեխօսութեամբ մօր քո եւ կու-
սի, աղաչեմք զքեզ տէր պահ-
պանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի
քո սուրբ :

Հարթութու մէջ ընելու աղօթք :

Մ՛վ փրկիչ աշխարհի, ճանապարհ,
ճշմարտութիւն եւ կեանք յաւի-
տենական տէր իմ Յիսուս, աս ու-
ղորմելի կենացս ետքի ըոպէն որ
հասնիմ, թող մի տար իս անօգ-
նական, ու քու ողորմութիւնդ իզ-
մէ մի հեռացրներ : Գուն ես իմ
ապաւէնս ու փրկիչս ան սարսա-
փելի օրը, քեզի կ'աղաղակեմ ու-
ղորմութեան Աստուած, ու քու

առջիդ կը դնեմ իմ աղաչանքս :
Կենացս իրիկունը մօտեցեր է, ու
աչուրներուս լոյսը շատ չ'երթար կը
մթըննայ կ'անցնի. դուն ո՞վ լոյս
ճշմարիտ քրիստոս, ծագէ ինձի
ան ատենը քու երեսաց լոյսդ, ու
իմ մեղացս խաւարը փարատէ :

Չանձրացած եմ տէր իմ աս
տաղտկալի կեանքէս, ինչու որ քեզ
վշտացրնելէն ու յանցանքներս
աւելցրնելէն ի զատ ուրիշ բան մը
չունիմ : Այսօր կ'առաջագրեմ,
վաղը դարձեալ կ'իյնամ, մարմինս
հոգւոյս դէմ կը բաղձայ, աշխարհ
հըք ու սատանան անդադար իս կը
նեղեն. ո՞հ տէր, կը կանչեմ կը
պաղատիմ սրտանց. Աստուծոյ ճե-
ռանել, քան զայս կեանս իմ : Միայն
քու արգար դատաստանդ իս կը
դողացուցանէ տէր, ու չիյտեմ
ինչպէս քեզի հետ հաշտուիմ : Ահա
բոլոր երկնից սուրբերը, մանաւ-
ւանդ քու գթած մայրդ ինձի բա-
րեխօս կը բռնեմ, որ իրենց ար-

Ժանաւոր խնդրուածքովը քու ար-
դար դատաստանիդ ձեռքէն աղա-
տելով՝ իս երկնից արքայութիւնն
ընդունին, ուր քեզ յաւիտեանս
օրհնեմ, ամէն:

Ժ Ա Ղ Կ Ա Զ Ա Ր Գ

Կիրակէ:

Այսօր տէր իմ՝ մեծ հանդէսով
երուսաղէմ մտած ատենդ՝ տես-
նելով երուսաղէմացւոց կուրու-
թիւնը, որ այնչափ հրաշքներ տե-
սան, ու բարի խրատներ լսեցին
քու աստուածային բերնէդ, ու
չհիշաւտացին. սիրտդ շարժեցաւ,
լացիր անոր վրայ ըսելով. ե՞նէ քե-
տէի դու գոնէ յառաջս յայսօրի
դիտողութիւնն +". այսինքն՝ անկից
կտքը երեսդ իրենցմէ պիտի ծած-
կէիր, ինչու որ չիճանչցան իրենց
եղած այցելութեան օրերը:

Ա՛վ տէր իմ, որչափ ալ իմ
հոգւոյս վրայ լացած ես, որչափ

բարի ազդեցութիւններով իմ
սրտիս այցելութիւն ըրած ես. ու
քանի անգամ սուրբ Հաղորդու-
թիւնով սիրտս եկեր մտեր ես.
բայց ես ապերախտ գտնուելովս՝
ու քեզի արժանաւորական յար-
գութիւն չտալովս՝ քեզ վարնտած
եմ, չեմ ընդունած. անոր համար
հրեաներէն ալ աւելի յանցաւոր
գտնուած եմ:

Բայց փրկիչ իմ գորովագութ,
եւ հաստատուն կ'առաջագրեմ, որ
ասկից ետքը ասանկ անշնորհակալ
ու ապերախտ չըլլամ քեզի. ամէն
կերպ սիրով կ'ընդունիմ քու
այցելութիւններդ. իմ չար սովո-
րութիւններս կը մերկանամ վրայէս,
ու քու ոտքիդ տակը կը բռեմ, որ
գունտէր իմ յաղթանակաւ վրայէն
անցնիս: Ա՛նունում ձեռքս ձիթ ենիի
ճիւղեր, ու այսպիսի փառաւոր
հանդիսի օրս տղայոց հետ քեզ
կ'օրհնեմ՝ ու կը փառաւորեմ քու
այնչափ մարդասիրութեանդ հա-

մար: Ովսաննա Բարձրելոյն, օրհնեալ
 որ Գասգոյ յանուն տեաան, Խաղաղու-
 թիւն յերկինս, եւ Գաստ Ի Բարձրանս:
 Վաղաչեմ տէր, տո՛ւր ինձի յարա-
 տեւութեան շնորհք ալ, որ կարող
 ըլլամ մոլութիւններու կատա-
 րեալ յաղթել, որ չըլլայ թէ քեզ
 օրհնելու տեղ՝ քիչ մը ետքը
 Տրէից պէս կանչեմ. Ի Խաղ հան-
 զրա: Անոր համար կը խնդրեմ, որ
 միշտ քեզի հաւատարիմ մնամ:

Շարական ,

Ուստի եւ մէք զյաղթական օրհ-
 նութեանցն զձայն. մատուցանեմք
 քեզ թագաւոր փառաց ընդ
 տղայսն օրհնաբանելով. բարե-
 բանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ա Ի Ա Ք Ե Ր Կ Ո Ւ Թ Ա Բ Թ Ի

Աղօթք առ Յիսուս, որ ի մէջ պար-
 տիզին:

Յիսուս Քրիստոս բաղձալի փրկիչ
 հոգւոյս, ան ինչ ցաւագին գիշեր

եղաւ քեզի համար, երբոր յառաջ
քան անգուժ թշնամեացդ ձեռքը
մատնուիլդ, գէթսեմանի պարտե-
զին մէջ մտար աղօթելու. ու հոն
բոլոր քաշելու չարչարանքներդ
մէկիկ մէկիկ աչքիդ առջին բերիբ,
ու դառն մահը խաչին յիշելով
անանկ սոսկալի մահաբեր տրտմու-
թեան մէջ ընկըղմած մնացիր, որ
երեսի վրայ գետինն ինկած՝ մինչեւ
արիւն քրտինք քրտնեցար. ու
մահուան դուռն հասածի պէս մեծ
տագնապ քաշեցիր:

Այս անմսիթար փրկիչ իմ, հի-
մա կ'իմանամ որ իմ մեղքե-
րուս ծանրութիւնը քեզ վար ձգեր
են. իմ ապերախտութիւններս
պատճառ եղեր են ան մեծ տրտ-
մութիւնը քեզի քաշել տալու:
Ա՛վ ցաւագին տէր իմ, քեզ ան-
օգնական երկրի վրայ ինկած տես-
նելուս սիրտս շատ կը ցաւի. առա-
քեալները քեզ մսիթարելու տեղ՝
մինակ թողուցեր մէկդի քաշուած

քնացեր են, թէպէտ եկար զիրենք
արթնցուցիր, որ քեզի հետ աղօթք
ընեն, բայց միշտ քունի մէջ գտար:

Ահա առաքեալներուն պէս ես
ալ խիստ անհոգ եմ աղօթքիս, ա-
մենեւին աղօթքէն համ մը չեմ
առնուր. անոր համար աղօթից
չնորհք տուր ինձի, որ միշտ քու
սուրբ օրինակիդ հետեւիմ:

Ինչպէս դու տէր իմ Յիսուս,
ատ մեծ տրամուծեանդ ատենը
ուրիշ բան չըրիր, բայց եթէ աւելի
մտադրութեամբ աղօթքի կեցար,
ու վշտագին սրտով քու երկնա-
ւոր հօրդ դիմեցիր. Հայր անց՝ յե-
նէն զայս բաժակ. Բայց ոչ որպէս ես
հա՛օ՛հ, այլ որպէս դու:

Ահազեմ տէր իմ, տուր ինձի
աս շնորհքը, որ մանաւանդ նե-
ղութեանս ատեն աղօթքով քեզի
դիմեմ, ու ամէն բան քու սուրբ
կամացդ յանձնեմ, ըսելով. Ա՛յ
որպէս ես հա՛օ՛հ, այլ որպէս դու: Թէ
հոգեւոր փորձանք ըլլայ, ու թէ

մարմնաւոր վիշտ ու ձախորդու-
թիւն ըլլայ, երբոր դուն անանկ
կամեցեր ես նէ, կ'ուզեմ ամէնն
ալ սիրով տանիլ: Բայց դիտես
սիրելի փրկիչ իմ, որ քու նեղու-
թեանդ ատենը հրեշտակ քեզ
զօրացուց ու մխիթարեց. ասանկ
ալ դուն զօրացուցիչդ հրեշտակաց,
նեղութեանս ատենը իս թող մի
տար, ու մխիթարիչ սուրբ հոգին
խրկէ ինձի, ամէն:

Երդ տեսան ներսեսի:

Եւ յօր անճառ լուսոյն ծագումն՝
ի փրկութեան մեր կատարումն.
Խոնարհի ի վերնատունն՝ ի ստուե-
րական տօնից լըրումն. նախ քան
զընթրիսըն խորհրդոյ՝ սիածաւ
զէնջակ արկօղն լուսոյ. եւ ջուր
առեալ ծառայարար՝ զոտըս լուա-
նայր զաշակերտացն:

Բանին հօր փառաց լուսոյ՝ պե-
տրոս մերձիլ յոտս ոչ ներէր.

այնրմ ձեռաց որոյ են գործք՝ երկնից երկինք եւ երկրաւորք . որով կուրաց աչքք բացան՝ խուլք եւ համերք արձակեցան, որ վերածեաց զինքն ի ծովէն՝ սաստեաց ալեացն եւ լռեցին:

Վըլխոյն ընտրեալ հօտին փոքու՝ սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ . որով դառնայր եւ հնազանդէր՝ զոտսն եւ զգլուխս մաքրել մաղթէր . գլխոյս ասէ շէինչ պիտոյ՝ լուացումըն ջրոյ զլուացեալ է . ոտիցըդ պէտք են մաքրութեան՝ յօդիլ ի գլուխըս սրբութեամբ:

Վասուցիւրոց աշակերտաց՝ զոր նախ բանիւ վարդապետեաց . այսօր գործով զծայրագոյն՝ եցոյց յինքեան զխոնարհութիւն . սպասաւորեալ հողեղինաց՝ այն որ անհասն է հրեղինաց . տարեալ պաշտօն իւր ծառայիցն՝ այն որ պաշտին ի սրովբէից:

Եթէ տէրս ասէ էից՝ եւ վար-

դապետըս բոլորից, զաշակերտացդ
եւ զճառայից՝ զոտըս լուացի ի
հնոյ աղտից, միմեանց եւ դուք
համաբնութեամբ՝ ցուցէք զնոյն
խոնարհութիւն, բարձրացելոյն ի
կործանումն՝ եւ անկելոյ բնու-
թեանդ կանգնումն:

Օր մաքրեցեր յաւազանին՝
մաքուր ձեռօք զոտըս նոցին, եւ
ուսուցեր խոնարհութեամբ՝ յաղ-
թող լինել չար հրպարտին, եւ
զիմ լուս զտիղմըն մեղաց՝ աղա-
չանօք սրբոյ գնդին, եւ ըզգնացս
ուղղեալ զոտին՝ խոնարհութեամբ
ելիւք յերկինս:

Ա Ի Ա Ք Ե Ր Ե Ք Յ Ա Ր Թ Ի

Աղօթք առ չարչարանս Քրիստոսի:

Ար տեսնեմ զքեզ ո՛վ տէր Յի-
սուս, իբրեւ չարագործ մը անօ-
րէններուն ձեռքը մատնուած, ա-
ւաղակի մը պէս քեզ բռններ են,

սուրերով ու թուրերով չորս դիզ
առեր են, որոնց գլուխն ու առաջ-
նորդը եղեր է Յուդա քուկին ա-
ռաքեալներուդ մէկը, որ քիչ մը
յառաջ պատուական մարմինէդ
իրեն հաղորդած էիր: Մեծ ցաւ
եղաւ սրտիդ Յուդային ապերախ-
տութիւնը. անոր համար վշտա-
գին սրտով իրեն ըսիր. Յո-
հաննէս զորդի մարդոց:
Ախ տէր, շատ անգամ աս խօսքը
իմ հոգւոյս ալ կ'ըսես, որ քու
սեղանէդ հաղորդուելէս ետքը,
կ'ելլեմ Յուդայի պէս մեղքերովս
քեզի մատնիչ կ'ըլլամ:

Ետքը կապեցին քու բարերար
ձեռուրներդ, իբրեւ թէ իրենց բա-
րիք չընես. ու անխնայ քաշկռտե-
լով տարին քեզ դատաւորին առ-
ջին հանեցին, ու առանց յանցանքի
մը քեզ ճշմարիտ դատաւորդ
անմեղաբար դատապարտեցին, ու
սկսան սիրտ չդիմանալու չարչա-
րանքներ տալ քեզի: Ես եմ տէր

ան մահապարտը, ինծի կը վայլէին
ան քաշած չաչարանքներդ. ու
դուն ինծի գթալով՝ բոլորն ալ
վրագ առիր, ու իմ մեղացս համար
զոհ եղար:

Արդէն սաստիկ ծեծէն կուսա-
ծին մարմնոյդ վրայ ողջ տեղ չէր
մնացեր, արիւնալից վէրքերդ նաեւ,
քարերն ալ ի գուժ կը շարժէին.
բայց վայ ինչ տէր իմ, բաւական
չեղաւ քարասիրտ դահիճներուն
սիրտը ի ցաւակցութիւն շարժելու:
Քեզ ճշմարիտ թագաւորդ թագա-
ւորաց սուտ թագաւորի պէս քարի
մը նստեցուցին. ծիրանիի տեղ մերկ
ու վէրքերով լցուած մարմնոյդ
վրայ կարմիր քղամիդ նախատանաց
ձգեցին. թագի տեղ՝ փշերով շի-
նած պսակ մը անգթաբար սուրբ
գլուխդ դրին. արքունական գաւա-
լանի տեղ՝ անարդ եղեգ մը ձեռքդ
տուին. ու ամէն զինուորները քեզ
ծաղը ընելով կու գային առջիդ
կ'իյնային, եղեգով գլուխդ կը ծե-

ծէին, ապտակ կը զարնէին, երեսոյ
կը թքնէին, ու անանկ բաներ կ'ը-
նէին, որ խեղճութեանը՝ մարդուն
սիրտը չէր դիմանար:

Ո՛վ համբերող Յիսուս, ո՛վ
երկայնամիտ տէր, սիրտս կտոր
կտոր կ'ըլլայ քեզ ասանկ տեսնե-
լուս: Իմ հոգւոյս վէրքերը բժշկե-
լու համար բոլոր մարմնովդ վի-
րաւորեցար. իմ մեղացս փուշերը
սրբելու համար փշով պսակուե-
ցար. ու այնչափ նախատանաց ու
նեղութիւններուն համբերեցիր,
որպէս զի իմ անձնասիրութիւնս
ու հպարտութիւնս կոխես:

Երկրպագանեմ քեզի ո՛վ փշով
պսակուած գլուխ տեառն իմոյ
Յիսուսի, որ երկնից աստղները
չէին արժանի քեզ պսակելու:
Երկրպագանեմ քեզի ո՛վ լուսա-
պայծառ աչք Յիսուսի, որ բոլորո-
վին խաւարեր է ու արիւններ
վրայէն կը վազեն: Երկրպագանեմ
քեզի ո՛վ հրաշալի դէմք Յիսուսի,

որ հրեշտակները տեսնելով չէին
յագենար, իմ սիրոյս համար ապ-
տակուեցար: Թքով լցուած ան-
չքացար: Ա՛յ գեղեցիկդ յորդիս
մարդկան, ինչպէս ողորմելի կեր-
պարանք մտեր ես:

Ա՛ղաչեմ ո՛վ ցաւագին փրո-
կիչ իմ, քու սուրբ շարձարանացդ
արդեամբը շնորհք տուր ինձի.
Փշով պսակուելուդ համար՝ մաքէս
ամէն չար խորհուրդները մաքրես.
ու զօրութիւն տաս ինձի, որ աս
աշխարհիս դառն ձախորդութիւն-
ներուն համբերեմ: Թքով ու գէշ
խօսքերով նախատուելուդ համար՝
իս պահէ, որ ուրիշներուն վրայ
գէշ չխօսիմ, չբամբասեմ, ու
նախատական խօսքերուն սիրով
տանիմ: Սաստիկ ձաղանացդ ու
կարմիր ծիրանւոյդ համար աս-
տուածային շնորհքովդ հողւոյս
մերկութիւնը ծածկէ. որով քե-
զի հաճոյ ըլլամ, ամէն:

Երգ տեսան Ներսեսի :

Եկից զօրէնսրն Մովսեսի՝ զոր խօսեցաւն ի սինայի. եկեր ըզգառն օրինակի՝ եւ զբաղարջն ընդ եղեգին. զՏինն ի նորըս փոխելով՝ զըստուերն ի լոյս ճըշմարտելով. փոխան գառին ինքրն գոյով՝ գառն Աստուծոյ նըւիրելով :

Ընդ բաղարջին հաց անխրմոր՝ ետ ըզմարմինն իւր զերկնաւոր. ըզկուսածին անսերմնաւոր՝ զանապական եւ զհոգեւոր. ընդ ոչխարին արեան ուխտին՝ ետ մեզ զարիւն իւր ուխտ կրկին. եւ եղեգան դառնագունին՝ փոխան ըզվարս աստուածային :

Թագաւորն արարածոց՝ զհացըն կենաց ետ քաղցելոց. եւ ըզբաժակն ուրախարար՝ որք յԱդամայ տրտմեցելոց, այս նոր ուխտ է իմոյ արեան՝ փոխան հընոյ ուխտին արեան. զոր յիշատակ իմ՝ առնիցէք՝ մինչեւ եկից ես միւսանգամ :

Ժողովեալքս ի քէն հայցեմք՝
ընդ ժողովեալ մետասանին. որ
զկենարարդ քո մարմին՝ բաշխեալ
ետուր ընդ բաժակին, շնորհեա՛ եւ
մեզ տէր ընդ նոսին՝ հաղորդ լինել
քում՝ սեղանին. կենաց հացիդ յոր
փափագիմք՝ եւ ըմպելոյդ ում
ծարաւիմք:

Ի յընտրելոց աշակերտաց՝ Յու-
դաս մեկնեալ ի սուրբ գառանցն.
զբարձող մեղաց զգառն Աստուծոյ՝
մատնէր ի մահ ընդ արժաթոյ. ի
յընթրիսըն հոգեւոր՝ մերձի ժը-
պիրհն եւ նենգաւոր. ուտելով
ընդ վարդապետըն յաճախէ զխա-
բէութիւն:

Եղսըն խօսէր աղերսալի՝ խա-
ւարելոյն վասըն դարձի. մի ոմն ի
ձէնջ ասէ եղբարք՝ զիս մատնելոց
է առ ի մահ. Պետրոս լուեալ զայն
զարհուրէր՝ եւ ակնարկէր առ
Յովհաննէս. հարցանել թէ ո՞վ
իցէ՝ դաւաճանող վարդապետին:

Ա Ի Ա Ք Չ Ո Ր Ե Ք Յ Ա Ր Թ Ի

Աղօթք առ Յիսուս, որ բարձեալ
տանի զխաչն:

Արչափ մեծ եղաւ տէր իմ Յիսուս Տրէից ըրած անգթութիւնը, որ քեզ անանկ խեղճ կերպարանքը խոթելէն ետքը, ամէնը միատեղ սկսան աղաղակել. Խաչեցի՛. Խաչեցի՛: Ա՛յ աստուածային արդարութիւն, մէկն ալ չի գտնուեցաւ փրկիչ իմ, որ վրադ ի գութ շարժէր: Ա՛յ ամեղ գառն Աստուծոյ, ձեռուրներդ կապած, գլուխդ փշով պսակուած, բովանդակ մարմինդ վերքերով լեցուած, վրադ ուժ չէր մնացեր, ահա ծանր խաչ մըն ալ բերին ուսիդ վրայ դրին: Գրկեցիր աս ալ սիրով տէր իմ ողորմած, ու մեր մեղաց ծանրութիւնը անով վերցուցիր. ու ինչպէս որ կենաց փայտովն ամէնքս ալ մեռանք մեղօք. անանկ ալ խա-

չին փայտովը մեզ մահուանէ
փրկես : Բայց ամէն բանէն աւելի
խաչ եղան քեզի իմ մեղքերս, որ
քրիստոնեայ ըլլալովս՝ շատ անգամ
չարաչար կիրքերս կատարելու հա-
մար՝ հրեաներէն ալ ապերախտ
գտնուեցայ, [Ժող տուի որ դուն
չարչարուիս, անոնց պէս պողացի,
երթայ խաչուի Յիսուսը, ես իմ
կամքս կ'ուզեմ բնել : Այս ցաւա-
գին տէր, ան ծանր խաչիդ տակէն
մէյ մը ինծի նայէ, ու քարացեալ
սիրտս քու բորբոքեալ սիրովդ
չարժէ, ու սոսկիւն քաշած ցաւե-
րուդ իս ալ մասնակից ըրէ :

Խաչով գետինն ինկեր մնացեր
ես, ու քեզ վեր վերցընող մը
չկայ. անգուժ զինուորները չըւ-
աններով ասդին անդին կը քաշ-
կըռտեն, օգնելու տեղ կը զարնեն,
ու չըսած խօսքերնին չիմնար : Բայց
դու ո՞վ համբերող Յիսուս, յիշե-
լով իմ փրկութիւնս, մեծ սէրդ
քեզ գետնէն վերցուց. բայց ինչ

օգուտ որ՝ նորէն մեծագոյն ցաւ
մը առջիդ ելաւ : Տեսար ան բազմ-
ուսթեան մէջը քու ամենասիրելի
մայրդ . անոր արտասուալից աչուր-
ներուն նայելով՝ լսեցիր սրտիդ
մէջը անոր ցաւագին ձայնը : Ա՛նխ
սիրելի որդեակ իմ Յիսուս կ'ըսէր
սուրբ Աստուածածինը . ո՞վ քաղ-
ցրիկդ որդեակ, ատինչ խեղճ կեր-
պարանք մտեր ես, ինչ գէշութիւն
ըսիր դու որդեակ, որ քեզի մէկ
խղճացող մը չէ գտնուեր, քեզ
բռներ մեռցրնելու կը տանին .
ողորմէ՛ որդեակ խեղճ մօրդ ողոր-
մէ՛, խառնէ՛ իմ կեանքս ալ քու
կենացդ հետ : Աս ցաւդ տէր իմ՝
ամէն քաշածներէ՞ մեծ եղաւ .
բայց աս ալ ինծի համար յանձն
առիր, որպէս զի իմ յաւիտենա-
կան դատապարտութեան վճիռը
ջնջես, վերցրնես ու երկնաւոր
հայրդ ինծի հետ հաշտեցրնես :

Ո՞վ մայր ցաւագին սուրբ Աս-
տուածածին, կ'աղաչեմ քեզի, այս-

որ դուն սրտիս զեղջ ու ճշմարիտ ցաւ մը տո՛ւր, որ մեղքերուս վրայ լամ, ողբամ, որոնցմով պատճառ եղայ ան դառն խաչը քու անմեղ որդւոյդ Յիսուսի վրայ դնելու. շնորհք ու համբերութիւն պարգեւէ ինձի, որ իմ թեթեւ խաչերս անտրտունջ ու սիրով տանիմ:

Երդ տեսան Ներսեսի:

Խնամող սիրոյն յիւր սիրելեաց՝
ըզտրամութիւնն փարատեաց,
թացեալ պատառ տայ Յուդայի՝
նըշանակեալ զգողըն մատնիչ.
Վոր առեալ եւ մերկացաւ՝ յաստուածային զոգւոյն շնորհաց. մատնեցաւ նախաչարին՝ ընդ մատնութեան վարդապետին:

Օայրագոյն լուսոյն զըրկեալ՝
խաւարասէրն արտաքս ելեալ. տէրրն յայտնէր լոյս եղելոցն՝ ըզգայթակղելն ի գիշերի. Պետրոս խօսէր

խրախուսելի՛ եւ կշտամբէր հաւախօսի. զիւրն յաշխարհէ զփոխիլն ասէր՝ եւ ըզգալուստ հոգւոյն պատմէր :

Աեդրոնեան յայնկոյս ձորոյն՝ ի վերնատունն ել խորհրդոյն. եմուտ պարտէզ ընդ պարտիզի՛ եմոյժ զԱդամ յադին դրախտին. մուծցես եւ զմեզ տէր ընդ նրմին՝ ուստի հաներնախ զառաջինն. զի ժառանգել ըզհայրենին՝ անժանասցուք մեք վերըստին :

Հոգայր ըզկրիցըն տրտմաբար՝ երիւքն եղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս հոգիս յօժարբայց է բնութիւն մարմնոյս տրկար. ոչ ոմն ուժեղ եւ զօրաւոր՝ եւ ոմն անզօր վըտանգաւոր. այլ մի եւ նոյն գոլ միաւոր՝ կրրէր ըզկիրսըն կամաւոր :

Չայնիւ մաղթէր աղօթական՝ վասն իմ առ հայր իւր էական. ծունրը դրնէր խոնարհական որում կրրկնի ծունր ամենայն :

եթէ փրկիլ մարդկան հնար է
առանց մահու իմ որ գրեալ է՝
բաժակ մահուս յինէն անցցէ՝
ոչ իմ կամաւ այլ քոյդ եսցէ :

Ղօղեալ յերկիւղ քրրտանցն
հոսման՝ ոլոռնաձեւ կայլակ վիժ-
ման, ի զօրանալ հրեշտակ մեր-
ձեալ՝ զօրինական գիրըն լըցեալ .
զի կատարեալ էառ զբնութիւն՝
Աստուածըն բան զմարդկութեան .
պարտ էր զերկիւղ եւ զտրտմու-
թիւն՝ յիւրումըն կրել տնօրէ-
նութեան :

Ա Ի Ա Ք Հ Ի Ն Ք Թ Ա Բ Թ Ի

Ի յիշատակ ոտնլուայի, եւ սրբոյ
հաղորդութեան :

Մենչափ մեծ եղաւ քու սէրդ
տէր իմ եւ փրկիչ իմ Յիսուս, որ
եպքի իրիկունը առաքեալներէն
բաժնուելու ատենը՝ սիրտդ լե-
ցուած սկսար զիրենք մխիթարել .
ու անճառելի խոնարհութեամբդ

ուղեցիր անոնց ոտուրնին լուանալ,
որ դրսի մաքրութեամբը հոգւոյն
աղտոտութիւնը մաքրես, ու իրենց
խոնարհութեան օրինակ տաս: Ա՛վ
անհասանելի խոնարհութիւն Յի-
սուսիդ. երկինքը սերովբէներն ու
քերովբէները քեզի կը սպասաւո-
րէին. այսօր վերնատունը խոնար-
հեալ առաքելոց ոտքը լուացիր:
Ա՛խ, կ'աղաչեմ քեզի գթած տէր,
որ առաքելոց բարեսօսութիւնովը
այսօր իմ մեղքերուս աղտոտու-
թիւնը լուաս, ու խոնարհութեան
շնորհք ալ տաս, որ հպարտու-
թեանս յաղթեմ, ու քեզի նմա-
նիմ:

Իայց ամենէն մեծ ու անհուն
սէրդ ան եղաւ տէր իմ եւ Աս-
տուած Յիսուս, ու անպատմելի
շնորհք ու սքանչելիք, որ բոլոր
երկնայինք զարմացան մնացին: Ա՛վ
մարդասէր Յիսուս, չիմոռցուելու
յիշատակ մը թողուցիր մեզի, որ-
պէս զի միշտ մեզի հետ ըլլաս ու

յաւիտեան մեզմէ չբաժնուիս . քու
անմահարար մարմինդ մեր հոգւոյն
կերակուրըրիր . ու աս ամենասուրբ
հաղորդութեան խորհուրդը հաս-
տատեցիր . ու այսօր քու աստուա-
ծային ձեռքովդ առաքեալներուն
բաշխեցիր : Ասկից մեծ ինչ բան
կրնայիր ընել մեզի ով քաղցր
Յիսուս . քեզմէ աւելի ինչ կրնա-
յիր մեզի պարգեւել :

Վիտեմ փրկիչ իմ որ շատ ան-
գամ իմ սիրտս եկած ես , բայց
արժանաւորապէս քեզ չեմ ըն-
դունած . հիմա կը պաղատիմ քե-
զի տէր իմ որ այսօր իմ սրտիս
վերնատունը քու շնորհքներովդ
մաքրես ու զարդարես , ու իս ան-
արժանս ալ սուրբ առաքելոց
հետ քու սեղանիդ հաղորդ ընես :
Տուր ինձի ան հրեշտակային կենաց
հացը , որուն սրտանց կը փափա-
գիմ . խմցուր ծարուած հոգւոյս
անմահարար փրկու թեան բաժակը ,
որ քու սիրովդ զմայլիմ : Տպաւորէ

սրտիս մէջը քու վշտագին չար-
չարանացդ յիշատակը, որ աս
սուրբ խորհրդեան մէջ մեզի յի-
շելիք թողուցիր: Թող մի տարտէր,
որ քեզ սրտիս մէջ ընդունելէն
ետքը՝ սատանան իր չար հնարք-
ներովը իս մեղք խոթէ, ու Յու-
դային պէս քեզ իմ փրկիչս մե-
ղօք վաճառել տայ. Ո՛վ սրբութիւն
սրբոց, քեզ բոլոր երկինք շնկրնար
տանիլ, հրեշտակները կը սարսա-
փին, արժանի ըրիր իս ասանկ մե-
ծագոյն պարգեւի. խոնարհու-
թեամբ եկուր տէր իմ, իմ սրբ-
տիս վերնատունը բազմէ, ու երկ-
նաւոր հայրդ ալ հետդ բեր. որ
միշտ սրտիս մէջը բնակիք, ու ես
ալ ի ձեզ բնակելով շնորհօք՝
յաւիտեանս յաւիտենից ձեզի հետ
միանամ, ամէն:

Երգ տեսան Ներսեսի:

Ճառագայթ փառաց էին՝ որ ըստ
բնութեանքս մարդկային, տագ-
նապեցար ի գիշերին՝ աղօթելով
առ հայր յերկինս, ծագեա՛ ի մեզ
զլոյսդ երկնային՝ եւ փարատեա՛
զերկիւղ չարին, մասունք հոգւոց
մեր եւ մարմին՝ յերկիւղ քո
սուրբ բեւեռեսցին:

Սերձեալ Յուդաս որ մատնե-
լոց՝ հանդերձ դասուն փարիսեց-
ւոց, անկան նըման ստորանկելոցն՝
որք յաւիտեան չեն կանգնելոց,
Յուդաս նենգաւ համբուրելով՝
առիթ մահու նշան տալով, փո-
խան սիրոյ զնա մատնելով՝ չար
ընդ բարւոյ վըճարելով:

Հայնժամ առ գութ սիրոյն Պե-
տրոս՝ զծառային անուն Մաղքոս-
եհատ սուսերբ զականջն աջոյ՝ որ
ոչ լըւաւ տեսառն իւրոյ, իսկ տէ-
րն մեր արագապէս՝ յունկըն մեր-
ձեալ բըժըշկապէս, առողջացոյց

աստուածապէս՝ զոր ոչ տեսին
կուրացն հանդէս :

Նոր հօտին փոքու ցրուեալ՝ քան-
զի զհովիւքն քաջ հարեալ. Պետ-
րոս միայն ըզհետ երթեալ՝ ի յաղ-
ջկանէ վիմին շարժեալ. նըշանա-
կեալ հաւըն խօսէր՝ առ ի Պետրոս
տէրն ակնարկէր. զբանըն յիշէր
դառն արտասուէր՝ ի գլորմանէն
դարձեալ կանգնէր :

Ե նորհեալ վիմին եկեղեցւոյ՝
զոր պահեցեր ի հօսելոյ, եւ կանգ-
նեցեր ի գլորելոյ՝ վասըն սրտին
արտասուելոյ. կանգնեալ եւ զիս տէր
ընդ նրմին՝ ի գլորմանէ սայլժաքո-
ղին. տալով աչացս յորդ արտա-
սուս՝ եւ ջուր նրման ծովու. գլխոյս :

Վ կամաւ զանկապելին՝ կապեալ
ըզձեռսն արձակողին. ի յապարան-
սըն տանէին՝ Վայիափայ եւ Աննա-
յին. ծառայն զերեսն այն ապտա-
կէր՝ յորմէ սրովբէն թեւասքօղէր.
Թուք արձակեալ պիղծ բերանով՝
յայն որ կուրին լոյս ծագեաց թքովն :

Ա Ի Ա Ք Ո Ի Ր Բ Ա Թ

Աղօթք առ խաչելեալն Քրիստոս:

Հայր երկնաւոր, նայէ երկինքէն
հաշտ ահամբ աս սուրբ պատարա-
գիս վրայ, որ քու միածին որդիդ
դառն խաչին վրայ կը մատուցանէ
քեզի իմ մեղացս համար: Անցն
վրայէս արդար բարկութիւնդ ա-
նոր խեղճութեանը վրայ գծալով:
Տես գորովագութ հայր, սիրելի
որդւոյդ պատմութեանը արիւննե-
րու մէջ թաթխուած. անս քու
մէկհատիկ որդիդ խաչին վրայ
բարձրացեր, ձեռուրներէն ու
ոտուրներէն գամուեր է. ու անոր
սուրբ արեան ձայնը քեզի դէմ
կ'աղաղակէ, ու մեղքերուս թողու-
թիւն կը խնդրէ. Հայր, Բնիկ Կոյս:
Ո՛վ հայր իմ թող աս մեղաւոր
հոգւոյս յանցանքները. ես անոր
տեղը այնչափ չարչարանք քաշեցի,
խաչին վրայ գամուեցայ, ու բոլոր

արիւնս թափեցի անոր փրկու-
թեանը համար. Հայր Բողոքոցա:

Աս ինչ գթած սիրտ է խաչե-
լեալ տէր իմ Յիսուս, որ ան սաս-
տիկ ցաւերուդ մէջ իս կը հոգաս:
Ո՛վ քաղցր փրկիչ իմ, խաչին
վրայ մերկ ողորմելի կախուեր ես,
թշնամիներդ չորս գիդ առեր են,
ու սիրելի մօրմէդ ուրիշ մսիթա-
րանք մը չունիս. բայց ինչ օգուտ
որ, ան ալ խաչիդ տակը կեցեր
կու լայ. Ծարաւի եմ կը կանչես
խաչէն. լեղևով խառնած քացախ
կու տան բերանդ: Երկնաւոր
հօրդ կ'աղաղակես. Աստուած ի՛մ,
Աստուած ի՛մ, ընդէ՛ր Բողոքը զիս. ան
ալ ձայնդ չիլսեր: Ասխ ցաւագին
փրկիչ իմ Յիսուս, երկնի եւ
երկրի մէջ չորս գամէն կախուեր
կեցեր ես. ու մէկ գթացող սիրտ
մը չիգտնուիր: Քարերը կը պատ-
որտին, արեգակը իր լոյսը կը գոցէ,
լուսինը կը խաւարի, ու երկիրը ի
հիմանց կը շարժի. միայն իմ քա-

րացեալ սիրտս ասանկ անզեղջ
մնացեր է. ես եմ ան ապառաժ
սիրտը, որ կը տեսնեմ քեզ իմ
մեղացս համար արեան մէջ [Թաթ-
խուած, ու գոնէ քեզի ցաւակից
չեմ ըլլար:

Ահա հիմա խաչիդ պլլուած կու
լամ կը կանչեմ. ո՛վ վասն իմ խա-
չելեալ փրկիչ, առ աս [Թափած
արցունքը աչուրներուս, որուն քու
սիրտդ ծարաւի է, ու այսօր սրտիս
ճշմարիտ զեղջը տեսնելովդ՝ ան-
տանելի ցաւերուդ մխիթարանք
ըլլայ: Ո՛վ ցաւագին տէր, տո՛ւր
ինձի ետքի օրհնութիւնդ. հինգ
սուրբ վէրքերէդ վաղցո՛ւր վրաս
երկնային շնորհքներ ու ողորմու-
թիւն. բայց վայ ինձ Յիսուս իմ,
դուն գլուխդ վար ծռեր մեռեր ես:

Ո՛վ մեռեալ Աստուած իմ Յի-
սուս, ահա օր [Թողութեան, ահա
ողորմութեան աթոռ. քու բազ-
կատարած բազուկդ կը դիմեմ, ու
վերաւորեալ սրտիդ մէջը կ'ապա-

ւինիմ: Մի բաժներ իս սրտիդ մէջէն տէր, որ քու անգին արիւնովդ փրկեցիր, ու խաչին վրայ մեռար:

Վ՛վ խաչափայտ փրկութեան, ինչպէս սիրտս կը ճմլէս. քու անբարբառ ձայնդ սրտիս ներսիդին կը թափանցէ: Քեզմէ կը բաշխի ու կը տարածուի ամէն քրիստոնէից շնորհք, համբերութիւն, քաջալերութիւն, մխիթարութիւն, սէր ու սրբութիւն. անոր համար սրտանց քեզի կը փաթթուիմ, քու վրադ Յիսուսին քաջած չարչարանքները թող սիրտս տպաւորեն որ Յիսուսիս հետ խաչին վրայ ապրիմ ու մեռնիմ, ամէն:

Երգ տեսան Ներսեսի:

Չար կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն. զիս արձակեա յինքնակապէս՝ մեզաց կապից դըժոխայնոյն. որ ընդ մեջօք պարտաւորին՝ կացեր անմեղդ

ի յատենին. յորժամ փառօք գաս
հայրենին՝ մի դատեսցես զիս ընդ
նրմին:

Պատկառանօք հինն Ադամայ՝ որ
ձաղեցար վասրն նորա. ջնջեա՛ զա-
մօթ մեղաց լրբին՝ որով զերեսս
իմ ծածկեցին. որ ներեցեր չար
ծառային՝ ածեալ ձեռօք քեզ ապ-
տակին. հար ուժգնակի զգէմքս
չարին՝ որպէս եւ զիս եհար ուժ-
գին:

Չ, չհրն լուսոյ յառաւօտին՝ ի
յուրբաթու հրնոյ զատկին. կայր
առաջի դատաւորին՝ ծառայն նստէր
ի յատենին. ի հարցանել Պիղա-
տոսի՝ տէրն ոչ առնէր պատասխանի.
զի կանխասաց գիրըն լցցի եղէ ես
մարդ որ ոչ խօսի:

Սամկական դասք զինուորաց
արկին հանդերձ նախատանաց,
այնմ որոյ զգեստն է լոյսն փառաց՝
իբրեւ զօթոց զինքեամբ արկած.
ի ծունր իջեալ կատակէին՝ զգլու-
խըն եղեգամբ հարկանէին, պրսակ

ի փշոց բոլորէին՝ ըզփուշ մե-
ղացրն բարձողին:

Սոսկալին սերովբէից՝ բառնայր
ինքեամբ ըզփայտ խաչին. մինչ ի
տեղի Գողգոթային՝ յորում ե-
ղեալ մարդն առաջին. ետուն ըմ-
պել գինի զճրոսեալ՝ եւ կերակուր
լեղեաւ խառնեալ. որով զպտղոյն
դառըն ճաշակ՝ փոխեաց մեղ քաղ-
ցրը եւ ախորժակ:

Ա երնականքն զարհուրեալ՝ տե-
սին ըզտէրըն մերկացեալ. եւ ըզ
հանդերձսրն բաժանեալ՝ պատ-
մուճանին վիճակ արկեալ. ըզձեռ-
սըն եւ զոտսըն ծակեցին՝ ըստ
յայտնապէս դաւթեան ձայնին.
ընդ փայտ խաչին բեւեռեցին՝ զմա-
տունսն որ գրեաց ի տախտակին:

Ա Ի Ա Ք Թ Ա Ր Ա Թ

Ի պատիւ թաղման տեսուն:

Սուրբ Աստուածածին, ինչ տրտա-
մագին օր եղաւ այսօր քեզի հա-

մար որ քուկին մէկհատիկ սիրելի
որդիդ աչքիդ առջին խիստ տան-
ջանքներով մեռած տեսնելէդ ետ-
քը՝ խաչէն ինջեցուցին, գիրկդ
տուին: Ա՛վ մայր ցաւագին, ինչ
սոսկալի ցաւ զգաց քու գլծած
սիրտդ, երբոր տեսար միակ որդ-
ւոյդ գլուխը փուշերով ծած-
կուած, աչուրները մթնցած,
բերանը գոց, ձեռուրները ոտուր-
ները պատրուած, ու բովանդակ
մարմնոյն վրայ ողջ տեղ մը չէ
մնացեր: Ողբալով ասանկ կը կան-
չէիր. վայինձ խեղճ՝ մօրս քաղցրիկ
որդեակ իմ, վայինձ. ո՛վ անմեղ
որդեակ, քու մարդասիրութիւնդ
քեզ ինչ սահման հասցուց, մար-
դոց այնչափ բարիք ընելուդ հա-
մար՝ քեզ անողորմաբար խաչին
վրայ մեռցուցին: Ա՛վ որդեակ,
նուկից գտնեմ մէյ մ'ալ քեզի
նման. առանց քեզի ինչպէս ապ-
րիմ, ու ինչով սիրտս մխիթարեմ:
Ի՛նչպէս ես ո՛վ մայր վշտագին,

քու ոտքդ ինկած կ'աղաչեմ. թող
տուր տիրամայր, թող տուր որ
ես լամ ողբամ իմ մեռեալ փրկիչ
չիս վրայ. ես պատճառ եղայ անոր
մահուանը, իմ մեղքերս զինքը աս
խեղճութիւնը խոթեցին: Քուկին
այսօրւան ցաւերուդ, ու սիրելի
որդւոյդ քաշած չարչարանցը հա-
մար ողորմէ՛ ինձի. գին եմ Յիսու-
սին պատուական արեանը, անոր
համար իբրեւ քու որդւոյդ գթած
իմ վրաս. ու մասնակից ըրէ՛ իս
ցաւերուդ: Մանաւանդ ան ետքի
քաշած ցաւիդ. երբոր մեռեալ
սիրելի որդիդ գրկէ՛դ առին, ու
գերեզմանը դրին:

Այն մեռեալ փրկիչ իմ, սուրբ
գերեզմանիդ վրայ ինկած քու
ցաւագին մօրդ հետ կ'ուզեմ ող-
բալ: Ո՛վ անմահութեան պար-
գեւատու տէր, ո՛վ արեգակդ ար-
դարութեան, այսօր մեռեալ գե-
րեզմանի մէջ թաղուեր ես. ու
ճառագայթդ փառաց հօր՝ երկրի

մէջ ծածկուեր ես. ո՞վ ճշմարիտ
ցնծութիւնդ երկնից, այսօր արա-
րածք տրտմութեամբ վրագ ար-
ցունք կը թափեն:

Վ՛վ մեռեալ Աստուած իմ Յի-
սուս քրիստոս, աս օրս է օր թո-
ղութեան եւ գթութեան, մի
զրկեր իս քու շնորհքէդ: Ա՛խ
Յիսուս իմ, բոլոր մարմնոյդ վէրքե-
րէն ողորմութեան աղբիւրներ կը
վազեն. մանաւանդ վիրաւորուած
սիրտդ գթութիւն գթութիւն կ'ա-
ղաղակէ. դուն քու փրկագոր-
ծութեան անհուն արդիւնքներդ
հոգւոյս պարգեւէ, որոնցմով քե-
զի յաւիտեան հաճոյ ըլլամ:

Երգ տեսան Ներսեսի:

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց՝
ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ
ընդ փայտի դառն պտղոյ՝ կեանք
ընդ մահու փոխարկելոյ. ի մէջ
երկուց անօրինաց՝ կայր մերկա-

ցեալ տուողն օրինաց. զոր ոչ տեսին ազքըն կուրաց՝ բաց ի միոյն աւազակաց :

Բոպէից արեգականն՝ ըզտիւն արար գիշերանման. զըստուերըն քօղ արկ մերկութեանն՝ զի մի տեսցէ ակն անարժան. ի միջօրեայն նըսեմացաւ՝ յորժամ Ադամ մեղօք մեռաւ. ի յիններորդն ի լոյս դարձաւ՝ յորժամ մահուամբ մահըն լուծաւ :

Յօղէր արտօսըր ցաւագին՝ մայր տեառըն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լըսէր ըզծարաւին՝ բարբառելոյ իւր միածնին. ետուն քացախ խառնեալ լեղի՝ այնմ որ բղխեաց գետ յադենի. եւ ի վիմէն վըտակ բարի՝ արբոյց տոհմին դառնացողի :

Եւ ի ծեալ յերրորդ ժամու օձին՝ զմիտըսնախնուոյ մօրն եւսայի. ի վեցն անկեալ մարդն առաջին՝ հաւանական բանիւ նորին. ի սոյն ժամու տէրն ի խաչին՝ զի քաւեսցէ զմե-

ղըս նոցին. եւ յորժամ ել Ադա-
մըն հին՝ եղ զաւազակն ի մէջ
գրաստին :

Փարեղի բարբառ ընդ իմ՝ էլի
էլի առ հայր գոչէր. զհոգին կա-
մաւ հօր աւանդէր՝ զհոգիս մարդ-
կան նոյն ընծայէր. երկիր հիմամբք
սասանեցաւ՝ եւ վարագոյրն ընդ
մէջ հերձաւ. վէմք ի յինքեանց
պատառեցան՝ եւ գերեզմանք մա-
հու բացան :

Քարոզի ի սքանչելեաց՝ Աս-
տուած մարմնով վասն իմ խաչեալ.
մերով բնութեամբըս մեռանի՝ Աս-
տուած անմահ խոստովանի. կրկնա-
վրտակ կողին աղբերբք՝ եկեղեցի
իւր հաստատի. ջրովըն մաքրի զա-
րիւնն ըմպէ՝ զորդի ընդ հօր փա-
ռաւորէ :

Ի Տ Օ Ն Ի Զ Ա Տ Կ Ի Ն

Առաջին օր:

Փառք հրաշալի յարութեան քո
 աէր իմ Յիսուս քրիստոս, որ քու
 ամենակարող զօրութեամբդ գե-
 րեզմանին արգելքը մէկդի ընելով՝
 աստուածային ձրիք զարդարուած
 ու փառաւորեալ մարմնով յարու-
 թիւն առիր. ու քու յաղթական
 մահուամբդ մեզ յաւիտենական
 մահուընէ ազատեցիր: Ա՛յ մար-
 դասէր փրկիչ իմ, ծագէ մտքիս
 մէջը սուրբ յարութեանդ լոյսը,
 ու իմ մեղօք մեռած հոգւոյս՝ որ
 իր չար սովորութիւններուն տակը
 թաղուած է, դուն այսօր յարու-
 թիւն պարգեւէ, ու գիշերուան
 մեղաց մթութիւնը՝ որ չորս դիս
 պաշարեր է, դուն փարատէ ու
 լուսաւորէ:

Իւզաբեր սուրբ կանանց հետ
 քու կենսատու գերեզմանդ կը
 դիմեմ, ու անուշահոտ խունկի

տեղ՝ իմ անարժան աղօթքս քեզի կը մատուցանեմ: Մագդաղենացւոյն պէս քեզ բաղձալի փրկիչդ իմ լալով կը փնտռեմ: Բարձին զարե՞ն ի՞նչ է գերեզմանէ աստի՛ եւ ո՞չ գիտե՞մ ո՞ր եղին զնա: Ա՛խ տէր, քանի որ չէի մեղանչեր, քեզ սրբոտիս գերեզմանին մէջն ունէի. երբոր ապերախտութեամբ քեզի դէմ մեղանչեցի, դուն ալ իս սրբաբար շնորհքներէդ զրկելով՝ իմ սրտիս մէջէն հեռացար գացիր:

Ա՛ս սուրբ զատկին օրը կը բաղձամ սրբազան հաղորդութեամբ քեզ նորէն իմ սիրտս բերել, ու սուրբ յարութեանդ պտուղը վայելել. բայց կ'աղաչեմ տէր, իմ անարժանութեանս համար իս չեղորկես ըսելով. Մէ՛ Ռեյնեմար յես: Նայէ գթութեամբդ սրտիս փափաքին, եռանդ ու շնորհք տո՛ւր ինձի. հալածէ՛ հոգւոյս թշնամիները: Թէ որ սրտիս դռները գոց ալ ըլլայ, դուն քու աստուածային

զօրութեամբդ վանէ ամէն ար-
գելքը. ինչպէս որ դուռերը գոց
վերնատունը մտար, ուր որ առա-
քեալները ժողված էին, ու ըսէ
Տոգւոյս. Խաչաղո-Նի-ն ընդ Յեղ:

Հարական:

Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն
անմահ եւ երկնաւոր. քեզ աւե-
տիք խնդութեան հարսն ի յերկրէ
եկեղեցի. օրհնեալ ի ձայն ցնծու-
թեան զԱստուած քո սիովն: Այսօր
զատիկ մեր զենմամբ Քրիստոսի.
արասցուք տօն ցնծութեամբ, նորո-
գեալք ի հնութենէ մեղաց ասե-
լով. Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Երկրորդ օր:

Նարեգնութ փրկիչ իմ, երբօր
թաղուեցար նոր գերեզմանին մէջ,
Տոգիդ ինչաւ լիմպոսը՝ արդար Տո-
գիները ան մութ բանտէն ազա-
տելու համար: Աւ ետքը այնչափ

անթիւ սուրբնաՏապետները քեզի
հետ մէկտեղ բերելով՝ եկար
դարձեալ գերեզմանը, ու անոր
կնիքը ու քարերը խորտակելով
աստուածուայէս յարութիւն առիւր:
Ա՛ռախանամ ես ալ քանի որ աս
փառաւոր յարութեան յիշատակը
միտքս կը բերեմ. ինչպէս որ կը
սորվեցընէ ինծի սուրբ կաթուղիկէ
եկեղեցին: Ա՛րչափ մեծ հանդէս
էր տեսնալը այնչափ երանելի նա-
հապետներուն ու մարգարէներուն
հոգիները, որոնց մէջ դուն ալ քու
փառաւորեալ մարմնովդ արեգակի
պէս կը փայլէիր, որուն մարմնաւոր
աչուրներ չեն դիմանար:

Ե՛րբ պիտի ըլլայ տէր, որ քեզ
փառաւորեալ տեսնեմ, ու քեզ
հրեշտակներուն հետ փառաբա-
նեմ: Ա՛րբ պիտի կարող ըլլամ ես
ալ ան երջանիկ դասին մէջ գտնու-
իլ, ուր որ են նահապետները ու
մարգարէները՝ ու ամէն երկնից
սուրբերը՝ ու բոլոր հրեշտակաց

ու հրեշտակապետաց գունդերը,
ու անոնց ձայնակից ըլլալ: Երբ
պիտի գայ ան ատենը, որ քեզ մեր
մարմնովը փառաւորեալ պայծա-
ռացեալ տեսնելու պիտի արժանի
ըլլամ: Բայց քանի որ զըկուած
եմ տէր երջանիկ քու արքայ-
ութենէդ, գոնէ ինծի շնորհք
տուր, որ քաղցրանայ հոգւոյս քեզ
փառաբանելը, յիշելով քու փա-
ռաւոր տնօրէնութիւններդ, մա-
նաւանդ սուրբ յարութեանդ յի-
շատակը: Երանի թէ ամէն աշ-
խարհք, ու ամէն ազգեր անդա-
դար քեզ փառաբանէին. ինչու որ
քեզի կը վայլէ փառք եւ պատիւ
յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Այլ աղօթք վասն մեռելոց:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ
անսահման է քուկին արեանդ գի-
նը, որ չէ թէ միայն կենդանի
եղողներուն մեղքերը կը ջնջէ, հա-

պա նաեւ մեռնողներուն մեղաց
պատիժներն ալ կը քաւէ: Գուն
մեղի խրատ տուիր, որ մեր ոսոխին
հետ հաշտուելու նայինք, ու մեր
պարտքը վճարենք, քանի որ ճամ-
բան ենք. չըլլայ թէ դատաւորին
ձեռքը մատնուինք, ու բանտ դը-
րուինք, ուսկից դժուար է խա-
լըսիլը: Բայց շատերը աստուածային
արդարութեան ունեցած պարտքը
չիվճարելով մեռած են. հիմա մենք
կենդանիքս կ'աղաչենք, որ ան հո-
գիներուն պատիժը թեթեւցընես:
Աստուծոյ անոնց վրայ քու պատուա-
կան արեանդ մէկ կաթիլը՝ որ
բաւական է իրենց մեղքերը ու
պատիժը քաւելու:

Մանաւանդ սուրբ պատարագիս
նուէրը, որնոր քահանան կը մա-
տուցանէ անոնց հոգւոյն համար՝
մասնաւորապէս յիշեցընէ ան հո-
գիները, որոնք երկայն ատեն մեծ
տանջանաց մէջ էին. իրենց մեղացը
թողութիւն ու աղատութիւն շնոր-

Տէ: Տէր իմ բազմագուծ, քու
արեանդ գինն է մեր ննջեցելոց
հոգիները, քու արեանդ գինը մի
դատապարտեր, քու ձեռաց ստեղ-
ծուածներն են, քու ստեղծուածդ
երեսէ մի ձգեր: Աղորմէ ինծի ալ,
ու թողութիւն տո՛ւր իմ մեղացս.
որպէս զի դատաստանին օրը ազա-
տիմ ան սոսկալի տանջանքներէն:

Հարական

Բանդ Աստուած երեւեալ մար-
մնով յերկրի քահանայապետ
ճշմարիտ. որ ի վերայ խաչին պա-
տարագեալ բարձօղ մեղաց գառն
անարատ. աղաչեմք ըզքեզ յիշեա՛
ղ հոգիս ննջեցելոց մերոց. եւ հան-
գո՛ ի քում արքայութեան:

Երրորդ օր:

Ա՛վ բարեգուծ տէր եւ փրկիչ,
հազար շնորհակալութիւն կը մա-

տուցանեմ քու անսահման գթութեանդ, որ իս դառն չարչարանքներովդ ու մահուամբդ փրկեցիր չար թշնամւոյն ձեռքէն: Երբ որ տէր իմ խաչին վրայ մեռար, ամէն արարածք տրտմութեամբ քեզ կ'ողբային. իսկ սուրբ յարութեանդ աւետիսը լսելով՝ նոր ուրախութեամբ մխիթարուեցան:

Նուսապայծառ հրեշտակները սուրբ գերեզմանին չորս դին բուրած ցնծութեամբ կը կանչեն. Չէ՛ սադ, այլ յարեա՛ւ: Երջանիկ կոյս Աստուածամայրը անպատմելի խնդութեամբ սիրտը լցուած՝ քեզ յարուցեալ միածին որդիդ կը բարեւէ գոչելով. Չարե՛ն՝ + փա՛ւ + ի՛մ. Չարե՛ն՝ + սաղմոսե՛ւ + եւ՝ օրհնո՛ւթեամբ: Սուրբ առաքեալներն ու իւղաբեր կանայք բոլոր աշխրրբիս աւետիս կու տան. Թէ՛ արդարեւ՝ յարեա՛ւ դէր: Ա՛խ տէր, իմ հոգիս ալ սուրբ յարութեանդ կը փափաքի, ու ցանկալի տեսոյդ մեծ կարօտ ունի.

ասանկ շնորհաց օր մը, իմ աղա-
չանքս ալ լսէ :

Լոյս ճշմարիտ քրիստոս, ծագէ
այսօր սրտիս մէջը հրաշափառ
յարու թեանդ լոյսը. ու մի զրկեր
սիրող հոգիս քու մեծամեծ պար-
գեւներէդ, որ շատերուն յարու-
թենէդ ետքը բաշխեցիր: Աւել-
ցո՛ւր իմ հաւատքս, հաստատէ իմ
յոյսս ու բորբոքէ սրտիս մէջը
ճշմարիտ սէրդ, որ քու կին տուած
երանութեանդ արժանի ըլլամ:
Ցըցո՛ւր հոգւոյս ան սուրբ վէր-
քերդ, որ ամէն մէկը արքայու-
թեան մէջ արեգակի պէս կը
փայլին՝ որ մեծ փափագով առանց
կըշտանալու պագնեմ, ու անոնց-
մով զմայլիմ: Բաց տէր հոգւոյս
աչուրները որ քեզ բարերար
փրկիչս ճանչնամ, ու արժանապէս
օրհնեմ ու գովեմ, ամէն:

Հարական:

Այսօր հրեշտակք ի բարձունս
ուրախանան ընդ մարդկան. որք
իջեալ ի յերկնից տան զաւետիս
աշխարհի. ցընծացէք այսօր Քրիս-
տոս յարեաւ ի մեռելոց:

Ի տօնի անտման:

Մի ամենասուրբ Մարիամ, ոմ
ամենախոնարհ կոյս, քուկին մե-
ծագոյն սրբութեանդ ու մաքրու-
թեանդ համար այնչափ հաճոյ ե-
ղար Աստուծոյ առջեւը, որ մինչեւ
քեզ իրեն մայր ընտրեց, ու բո-
լորերկնի եւ երկրի թագուհի ըրաւ:
Մեծապէս կ'ուրախանամ սո՛ւրբ
Աստուածածին՝ տեսնելով զքեզ
այսօր աստուածամայրութեան գե-
րագոյն շնորհքին արժանի եղած.
որ միածին որդին Աստուծոյ եր-
կինքը թողուցեր, ու անապական
արգանդիդ մէջ քու արիւնէդ իրեն
մարմին առեր, մարդ եղեր է ինձի

Համար: Հողին սուրբ բոլորովին
վրադ ինչաւ, ու անոր շնորհքը
քեզի հովանի եղաւ: Հայրն երկ-
նաւոր քեզ իրեն սիրելի դուստր
ընտրեց. իսկ որդին Աստուծոյ բո-
վանդակ ի քեզ ու քուկդ եղաւ:

Խոնարհութեամբ առջիդ ինկած
կ'ողջունեմ քեզ Գաբրիէլ հրեշ-
տակապետին հետ: Ողջոյն ընդ
քեզ կոյս Մարիամ, լի շնորհօք:
Ո՛վ մայր Աստուծոյ, որչափ որ
անարժան ըլլամ շնորհքիդ, ասանկ
ուրախալի օր մը իս մի մերժեր ո-
ղորմութենէդ: Կոյս գթած, մարմ-
նաւոր իշխանները իրենց իշխա-
նութեան հասած օրերնին՝ բանտի
մէջ եղողները կ'արձրկեն, մահա-
պարտներուն կը ներեն. իսկ դուն
հզօր թագուհի երկնից եւ հրեշ-
տակաց, աստուածամայրութեան
շնորհաց աթոռը նստած՝ պիտի չո-
ղորմիս ինձի: Չարաչար մեղքերովս
սատանային գերի ինկայ. ու Աս-
տուծոյ արդար վճռովն ի մահ

դատապարտուած եմ. դուն այսօր
աստուածամայրու թեան իշխանու
թիւնովդ երկրնց ուր վրաս ողորմած
ձեռքդ. ու ազատելով իս գերու
թենէ՛ ընդունէ՛ քեզի մշտնջենաւոր
ու հաւատարիմ ծառայ: Ա՛վ կոյս
լի շնորհօք, լըց ուր սիրտս պէսպէս
շնորհքներով. ինչու որ չէ թէ
միայն իմ կորսնցուցած շնորհքս
դուն գտար, հապա նոյն իսկ բո-
վանդակ շնորհաց տէրը ու գանձը
քու քովդ է:

Աւրախ լեր կոյս անարատ, որ
բոլոր ստեղծուածներու մէջ դուն
միայն մայր Աստուծոյ ընտրեցար:
Աւրախ լեր ս ուրբ Աստուածածին,
որ այսօր որդին Աստուծոյ երկին-
քէն վար ինչաւ, ու քու մաքուր
արգանդիդ մէջ բնակեցաւ: Աւրախ
լեր երջանիկ Մարիամ, որ ամենա-
սուրբ Երրորդութիւնը քեզ անանկ
գերազանց շնորհքներով զարդա-
րեց, որ սերովբէներն ու քերով-
բէները իսկ երանի կու տան քեզի:

Ուրախ լերբերկրեալ կոյս Մարի-
ամ, որ իբրեւ առաւօտ պայծառ
ծաղեցար երկրիս, ու գիշերային
տրտմով թեան խաւարը փարատելով
ամենուն սիրտն ուրախութեամբ
լեցուցիր. անոր համար օրհնեալ
ես դու յաւիտեանս, ամէն :

Շարական :

Խորհուրդն անձառ ծածկեալն
յազգաց եւ յաւիտեանց. յայտ-
նեցաւ իջմամբ հրեշտակապետին
այսօր առ կոյսն Մարիամ. զոր առ
տէրունիմք բարեխօս վասն անձանց
մերոց :

Ի տօնի համբարձման :

Տէր իմ, դուն խոստացար որ մեզ-
մէ ամենեւին չես բաժնուիր. եւ
թէ մինչեւ որ երկինք չերթաս,
մտիթարիչ հոգին չիգար : Անոր
համար թէպէտ մարմնաւոր տես-

լեամբ մեզմէ հեռացար, բայց կա-
թուղիկէ եկեղեցին ուրախու թեան
տօն կը կատարէ, հոգւոյն սրբոյ
մսիթարական շնորհքը վայելե-
լով: Ազազեմ բարերար փրկիչ
որ իզմէ ալ չհեռանաս. չըլլայ
թէ իմ մեղքերս ու չար ակտերս
իմին ու քուկին մէջըդ ամպի պէս
կյնալով՝ քեզ իզմէ զատեն: Մսի-
թարիչ հոգիդ միշտ ինձի հետ
ըլլայ. քուկին սուրբ ազդեցու-
թիւններդ իս միշտ մսիթարեն,
ու լուսաւորեն: Ամէն բարի տուր-
քերը, ու ամէն կատարեալ պար-
գեւներդ վերէն քեզմէ կու գան:
Գուն անոր համար վեր ելար
բարձրացար, որ մեղի աւելի օգնես,
մանաւանդ ինձի որ ամէն երկնա-
ւոր օգնութեան կարօտ եմ:

Այսօր աչկերտներդ առիր ձի-
թենեաց լեռը ելար. մսիթարական
խօսքերով անոնց սիրտ տալէն ետ-
քը՝ ամենասուրբ ձեռքովդ զիրենք
օրհնեցիր: Ի՛նչ ուրախութիւն

ունեցան առաքեալները, երբոր
քեզ տեսան, որ աստուածային
փառօք երկինքը կը վերանայիր.
ինչ խնդուածիւն էր քեզ տեսնա-
լը, որ այնչափ նահապետներու ու
մարգարէներու հոգիներով, ու
բիւրաւոր հրեշտակներու գուն-
դերով երկինքը կը համբառնայիր:

Ա՛խ տէր իմ Յիսուս հոգիս
տրտում տխուր մնացեր է միշտ
աս երկրիս վրայ, ու քեզ բաղձա-
լի փրկիչդ կ'ուզէ. գոնէ տէր ա-
սանկ շնորհաց օր մը խաչակնքէ
վրաս երկինքէն քու օրհնեալ ձե-
ռօքդ. տուր ինծի ալ առաքեալնե-
րուդ տուած օրհնութիւնը: Գի-
տեմ տէր, որ մեզ որբ չես թո-
ղուր. կ'երթաս քու հայրենիքդ,
որպէս զի հոն մեզի համար տեղ
պատրաստես, ու անկէց ետքը ի՞ր
ատենին մեզ հոն կը կանչես. որ-
պէս զի ուր որ դուն ես, մենք ալ
քու ծառաներդ հոն ըլլանք: Ուս-
տի ես ալ աս աշխարհքս մեծ փա-

փաքով կը սպասեմ, որիս արժա-
նի ընես քու անվախճան արքայ-
ութեանդ, ամէն:

Շարական:

Համբարձաւ տէրն մեր Քրիստոս
օրհնութեամբ ընդ ամպս երկնից.
եւ առաքելոցն երկրպագեալ դար-
ձան յերուսաղէմ. միտքանու-
թեամբ վեր առաքէին զաղօթս:

Ի Տ Օ Ն Ի Հ Ո Ք Ե Ք Ա Լ Ս Տ Ե Ա Ն

Առաջին օր:

Կենդանարար սուրբ Հոգի, ինչպէս
որ լուսաւոր լեզուի ձեւով առա-
քելոց վրայ ինջար, անոնց միտքը
լուսաւորեցիր, ու սիրտերնին Աս-
տուծոյ սիրով վառեցիր. անանկ
այ վառէ Հիմա իմ սիրտս. զօրա-
ցուր իմ տկարութիւնս, ու լուսա-
ւորէ միտքս: Առաքեալները յա-
ռաջ քան քուկին գալուստդ, ա-

Նանկ թանձրամիտ էին, մինչեւ
չատ անգամ Քրիստոս զիրենք
յանդիմանեց. բայց երբոր դուն
չնորհօք լուսաւորեցիր, ան ատեն
իմացան՝ թէ ինչ է ժամանակաւոր
բարին ու յաւիտենականը: Այսօր
լուսաւորէ իմ մտքիս թանձր խա-
ւարն ալ, որ ճանչնայ աշխարհային
ունայնութիւնը. մարդկան նկա-
տումը՝ որնոր մեծ բանի տեղ կը
դնէ, արհամարհէ, ու միայն եր-
կնաւոր բարիքը ու առաքինու-
թիւնը մեծ սեպէ:

Արբոր Քրիստոս պիտի մատ-
նուէր, ամէն առաքեալները թո-
ղուցին ու փախան, ու Պետրոս
գլուխ առաքելոց իր երկնաւոր
վարդապետն ուրացաւ. բայց եր-
բոր քեզմով զօրացան, ան ատեն
ամենեւին մեռնելու ալ պատրաստ
էին, նեղութիւնները ու հալա-
ծանքը ուրախութեան արժանի կը
սեպէին: Դուն նմանապէս զիս ալ
չնորհքովդ փոխէ, որ գոնէ կարող

ըլլամ համբերել, ինչ հիւան-
դութիւն, նեղութիւն, կամ փոր-
ձանք որ վրաս գալու ըլլայ: Աեր-
ջապէս ինձի հոգեւորկեանք շնոր-
հէ, ինչու որ դուն ես մեր հոգին
կենդանացրնողը. ինչպէս որ մար-
մինս առանց հոգւոյ մեռած է, ա-
նանկ ալ հոգիս թէ որ զուրկ ըլ-
լայ քու շնորհքէդ հոգեւորապէս
կը մեռնի. անոր համար բոլոր սըր-
տանց կը բաղձամ քեզ ընդունիլ,
ինչպէս որ առաքեալներն ընդու-
նեցան: Ե՛կ սուրբ հոգի, իմ մեղ-
քերուս թողութիւն տո՛ւր, զանա-
զան շնորհքներով իս լեցո՛ւր. ու
արժանիրը՛ է որ քեզ հօր Աստուծոյ,
ու միածին որդւոյն հետ փառա-
ւորեմ յաւիտեանս յաւիտենից,
ամէն:

Հարական:

Մղբիւր կենաց բաշխող շնորհաց
հոգիդ իջեալ ի բարձանց, զանա-
պական պարգեւըս քո բաժանեցեր
յառաքեալսն:

Երկրորդ օր:

Ո՛վ շնորհաբաշխ սուրբ հոգի,
դուն քաղցր մսիթարիչ տրտում
հոգիներուն. դուն գթած բժիշկ
վիրաւորուած սրտերուն. դուն
անվտանգ նաւահանգիստ ալէկո-
ծելոց աս աշխրջբիս ծովուն մէջ:
Ե՛կ ո՛վ խաղաղարար սրտիս, քու
անհասանելի շնորհքներովդ ներսս
խաղաղութիւն ըրէ. եկ ո՛վ սէրդ
աստուածային ու բորբոքէ սրտիս,
մէջը անշիջանելի հուրը, որ մեղ-
քերէս սրբուիմ. լուսաւորէ իմ
խաւարս, ու փորձութեանց հո-
վերը դուն վրայէս ցրուէ. բարի
խորհուրդներ ազդէ մտքիս մէջը,

ու հոգւոյս զօրութիւնները միայն
քու փառացոյ համար ուղղէ, որով
քեզի արժանի ըլլամ:

Ար պաղատիմ քեզի ո՛վ Աս-
տուած իմ սուրբ հոգի, մէյմը
այցելութիւն ըրէ սրտիս, որնոր
մկրտութեամբ աւազանին շնորհաց
իս քեզի տաճար պատրաստեցիր:
Ո՛վ տէր, թէպէտ չունիմ սրտիս
մէջը քու աստուածութեանդ վայ-
ելուչ պատրաստած բնակարան,
որ առաքելոց պէս իմ վրաս ալ
իջնաս, ու միշտ ինձի հետ բնակիս.
բայց կը ջանամ ասկից ետքը քու
շնորհօքդ ամէն երկրաւոր եւ ու-
նայն բաներէն սիրտս հեռացընել,
ու քու սուրբ գալստեանդ սպա-
սել: Չսիրո՞ւմ եմ հասարեալ յիս Աս-
տուած, եւ զհոգի ուղիղ նորոգեալ
է ի՞նչ իմո՞ւմ: Ո՛րչափ որ մեղաւոր
ըլլամ, որչափ որ անարժան ըլլամ,
բաւական է մի միայն շնորհօքդ իս
բոլորովին արդարացընելու: Ո՛վ
բարերար տէր, այսօր հաղարաւոր

մարդկանց մէկէն բաշխեցիր քու
շնորհքդ. ասանկ բարեբախտ օր
մը ե՞ս միայն պիտի անբախտ ու
անարժան գտնուիմ. ամէն շնոր-
հաց աղբիւրին մօտ ըլլալով՝ ծա-
րաւի՞ ետ դառնամ:

Ա՛խ սուրբ հոգիդ Աստուած,
տուր քեզ բոլորովին ինձի, ու
խմցուր ծարուած հոգւոյս անմա-
հարար բաժակէդ. միշտ քու ցան-
կալի ներկայութիւնդ իզմէ ան-
պակաս ըրէ, ու դուն առաջնորդէ
արքայութեան ճամբան, ամէն:

Շարական:

Ա՛նմահարար բաժակ հեղեալ յեր-
կնից սուրբ հոգի. զոր արբին ի
վերնատանն դասք սուրբ առաքե-
լոցն. օրհնեալ ես սուրբ հոգիդ
ճշմարիտ:

Ի տօնի այցելութեան :

Ով գանձապետ աստուածային շնորհաց կոյս Մարիամ, որչափ անհասանելի շնորհքի արժանի եղար մայր Աստուծոյ ըլլալով, որ Աստուած իր ողորմութիւնը քեզի յանձնեց բոլորովին, որ ամենուն ալ առատութեամբ բաշխես: Մէկ անգամ միայն այցելութեան երթալով քու ազգականիդ՝ անբաւ շնորհքներ պարգեւեցիր. սրբուհի եղիսաբէթը հոգւով սրբով լեցուցիր, սուրբ Յովաննէսն արգանդին մէջ սրբեցիր. ու բոլոր տունը երկնային օրհնութիւններով զարգարեցիր:

Ով մայր ողորմութեան, երբ պիտի իմ մեղաւոր հոգւոյս ալ այցելութիւն մ'ընես. գաս տեսնաս խեղճութիւնը, ու շնորհքներով զինքը լեցընես: Ստուգիւ գիտեմ տիրուհի, որ գթած սիրտդ չի գիմանար, շուտ մը կ'ո-

ղորմիս ինծի. ուրեմն մի ուշացր-
ներ քու այցելութիւնդ, ու իմ
անարժանութեանս ու ապերախ-
տութիւններուս մի նայիր: Մաս-
նաւոր շնորհք տ՛ուր երախտագի-
տութեան, որ ճանչնամ քու ըրած
բարիքներդ, ու սրբուհի Եղիսա-
բէթին պէս աղաղակեմ քեզի.
Աւստի է ինծի աս շնորհքները.
ինչ մեծագոյն բարիք է ինծի ե-
ղածը, որ մայրն Աստուծոյ ու թա-
գուհին երկնից իմ աղքատ սրտիս
այցելութիւն կ'ընէ, ու հոգւով
սրբով իս կը լեցընէ: Օրհնեալ
ես ամէնարարածոց մէջ քաղցրա-
գո՛ւթ Մարիամ, ու օրհնեալ ըւ-
լայ քու սիրելի Աստուածորդիդ.
որ քեզ գերագոյն իշխանութեան
ու փառքի հասցուց, ու ասանկ
ողորմած սիրտ մը տուաւ քեզի:

Ի այց աւելի մեծագոյն շնորհք
մը կը խնդրեմ քեզմէ ս՛ուրբ
Աստուածածին, մահուանս ատենն
այցելութիւն մ'ըրէ ինծի. ինչու որ

չատ կարօտ եմ՝ ան ետքի ներդու-
 թեան ատենս քուկին ներկայ-
 ութեանդ: Մայր ես իմ փրկու-
 թեանս, մայր ես երկնային դան-
 ձուց. քու խնդրուածքդ պարապ
 չ'երթար, դուն բարեխօս եղիր ին-
 ծի, ու փրկէ իս գթած ամ տիրամայր,
 ամէն:

Հարական:

Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի.
 որ բարեխօսդ ես միշտ աշխարհի.
 քեզ երանեն ամենայն ազինք:

Ի Տ Օ Ն Ի Վ Ա Ր Գ Ա Վ Ա Ռ Ի Ն

Առաջին օր:

Ի՛նչ անպատմելի երջանկու թեան
 արժանի եղան տէր իմ ան երեք
 առաքեալները, որ թափօր լերան
 վրայ քու աստուածու թեանդ լոյսն
 իրենց յայտնեցիր. մինչեւ առա-
 քեալները խելւրնին կորսընցուցին,

ու չէին գիտեր ինչ կը խօսէին:
Թէ որ մարմնաւոր լոյս մը՝ որ փա-
ռաւորեալ մարմինէդ ծագեցաւ,
անանկ սքանչելի ու զմայլելի եղաւ
անոնց, որ ամէն բան մոռցան, ու
կը խնդրէին քեզմէ, որ միշտ հոն
մնան. արդեօք ինչ պիտոր ըլլաս
ո՞վ Աստուած իմ դուն բոլորովին
արքայութեան մէջ, ու ինչ մեծ
երանութիւն է քեզ հոն տեսնալը:

Ահազեմ տէր իմ Յիսուս,
լուսաւորէ այսօր անճառելի լու-
սովդ միտքս, որ սուրբ մտածու-
թիւններով երկինք վերանայ, ու
հոգեւոր բաները սիրէ: Գիտեմ
տէր, որ միտքս քանի որ երկրաւոր
բաներու հետ է, չիկրնար հոգեւո-
րին համն առնուլ. արքայութեան
փափաքը ունենալ. անոր համար
վառէ սիրտս երկնային սիրով, որ
աս աշխրոքիս փառքը, պատիւն ու
ունայնութիւնը միտքս կուրացը-
նելով իրեն չքաշէ: Արդեօք պիտ-
որ ըլլայ տէր, որ սիրտս ամենե-

ւին կարող չըլլայ քեզմէ բաժ-
նուիլ. կարող չըլլայ քեզմէ ի զատ
բան մը սիրել. ու քեզ արքայու-
թեան փառքին մէջ տեսնալով՝
միշտ զմայլիլ յաւիտեանս յաւի-
տենից, ամէն:

Շարական :

Վրիստոս Աստուած մեր՝ շնորհեա
մեզ ընդ Պետրոսի եւ ընդ որդ-
ւոցն Զեբեթեայ, արժանաւորիլ
քում աստուածային տեսլեանդ:

Երկրորդ օր :

Մի սուրբ արքայութիւն, ո՛վ եր-
կնային հայրենիք, երբոր քեզ կը
յիշեմ, քու անպատմելի գեղեց-
կութիւններդ կը մտածեմ, սիրտս
վեր կ'ելլէ, ու արցունքս չեմ
կրնար բռնել: Ո՛հ տէր, աս ան-
ցաւոր երկրիս վրայ սիրտս մխի-
թարութիւն մը չունի, քեզմէ ի

զատ ինչ բանի որ կը բաղձամ,
ինչ որ կ'ուներնամ, ամենեւին
սիրտս չիճանգչիր, միշտ իր արա-
րիչը կը փնտռէ, ու քեզ կ'ուզէ:
Ասանկ որք մնացեր եմ տէր աշ-
խարհքիս մէջ. ու գիշեր ցորեկ քու
ցանկալի գալստեանդ կը սպասեմ:
Վայ ինձ, զի ընդ երկար եղեւ
պանդխտութիւն իմ:

Մեր է տէր քու անսուտ խոստ-
մունքդ, թէ երկար ատեն իս որք
պիտի չիձգէիր, գայիր պիտոր իս
քու քովդ առնուիր: Տէր, երբ
պիտի ծագի ան երջանիկ օրը, որ
քեզ իմ փրկիչս աչօք բացօք
տեսնամ, ու քու աստուածային
տեսովդ զմայլիմ: Տէր, երբ պիտ-
որ ըլլայ, որ քեզի հետ անլու-
ծանելի սիրով միանամ, ու յաւի-
տեանս քեզմէ չիբաժնուիմ: Տէր,
երբ պիտի երկինքը քեզ անդա-
դար օրհնեմ ու փառաբանեմ
ամէն հրեշտակներուն ու սուրբե-

րուն հետ. ու ճշմարտապէս ըսեմ
ես ալ. Տէր Բար-ոտ է Ռդ ասո լինել:

Այն տէր, ասչափ ըրած հառա-
չանքներս ու հեծ ութիւններս պա-
րապ չանցնին. քու գթած սրտիդ
մէջ գութ մը ձգեն, որ վրաս խըղ-
ճալով բարի մահուամբ մը աս
արտասուալի աքսորանքէն ազա-
տես, ու սուրբ արքայութիւնդ
ընդունիս: Ցանկամ ելանել ի
մարմնոյս, եւ լինել ընդ քեզ տէր
իմ Յիսուս ամէն:

Շարական:

Հառաչեցի զանլուելի զհեծ ու-
թիւնն առ բարեգութն Աստուած.
եւ լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ.
եւ եհան զկեանս իմ յապակա-
նութենէ:

Առաջին օր:

Ո՛վ հրաշափառագոյն թագուհի
 երկնից բարեգութ կոյս Մարիամ,
 խոնարհութեամբ ակնուհոյ ոտքն
 ինկած՝ կ'երկրապագանեմ քեզի,
 որ սերովբէներէն ու քերովբէ-
 ներէն վեր բարձրագոյն իշխանու-
 թեան ու շնորհաց հասեր ես: Լսէ
 այսօր հառաչանքիս ձայնը, որ աս
 թշուառ աշխրոքիս արքայանաց
 մէջ՝ անմխիթար սրտով արցունք
 թափելէն ուրիշ բան մը չունիմ:
 Մայրողորմութեան, գթած աշուր-
 ներդ խեղճ մեղաւորիս վրայ դար-
 ձուր երկինքէն, ու մի անարժան
 համարիր իս շնորհքիդ: Ո՛վ կոյս
 ողորմած երկինք վերացար, որպէս
 զի տեսնալով անկից իմ կարօտու-
 թիւնս՝ աւելի օգնես ինձի:

Ի՛նչ անպատմելի ցնձութիւն
 եղաւ արդեօք երկինքը, երբ որ
 բոլոր հրեշտակները, սուրբերն, ու

նոյն ինքն միածին որդիդ քեզ մեծ
փառօք առին երկինք տարին: Ի՛նչ
անուշ մեսեղիքներու ձայն կը
լսուէր հրեշտակներուն ու սուր-
բերուն բերնէն, որ միաբերան կը
կանչէին. Գու բարձրութիւն վե-
րին Երուսաղեմի. դու ցնծութիւն
արքայութեան, դու տիրուհի մեր
եւ թագուհի: Օրհնեալ ըլլայ
ամենասուրբ Երրորդութիւնը Հայր
Որդի եւ Հոգին սուրբ, որ քեզ
աս աստիճան փառաց հասցուց, ու
մեզի թագուհի ըրաւ: Ահա ասկից
վերջը երանի տան քեզի ամէն ազ-
գերը ո՛վ երջանիկ Աոյս. ինչու որ
արքայութեան մէջ քու Աստուած-
որդւոյդ աջ դին նստեր ես, ու
երկնից գանձերը քեզի յանձ-
նուեր է:

Աս ալ գթած տիրամայր, իմ
անարժան ձայնս կը խառնեմ հրեշ-
տակաց օրհնութեանցը հետ, ու
մեծապէս կ'ուրախանամ քեզ ա-
սանկ փառաւորեալ տեսնալուս:

Յիշէ իս բարեգո՛ւթ Մարիամ, ու
ասանկ շնորհաց օր մը թող մի
տար, որ քու ողորմութենէդ զրկը-
ւիմ: Գիտեմ, որ ամէն բանի կարող
ես, ու քու խօսքդ Աստուծոյ առ-
ջին պարապ չ'անցնիր. անանկ է նէ
տո՛ւր ինձի ճշմարիտ զղջում, Աս-
տուծոյ սէրն ու բարի մահ. ու
արժանի ըրէ իս, որ երկինք քեզ
օրհնեմ ու բարեբանեմ սուրբե-
րուն հետ, ամէն:

Հարական:

Ար անմարմին բնութեամբ աս-
տուածութեան քո տէր. միացար
մարմնով յարգանդի Աուսին ան-
յեղապէս գոչով. այսօր փոխեցեր
զուրախութիւնդ երկնի եւ երկրի
յանտրտում ի կեանսդ. աղաչանք
մօր քո ողորմեա՛ մեզ որդի Աս-
տուծոյ:

Երկրորդ օր :

Ո՛վ կոյս տիրածին, քանի որ քու
 Աստուածորդիդ երկինք համբար-
 ձեր էր, սիրտդ անհանգիստ էր.
 Հոն կը բաղձայիր ըլլալ, ուր որ
 քու սիրելի որդիդ էր: Թէպէտ
 ամէն օր հրեշտակները քեզ կը
 մխիթարէին, եւ նոյն ինքն Քրիս-
 տոս քեզի այցելութիւն կ'ընէր.
 անանկ ալ ծանր էր քեզի աս աշ-
 խարհքս մնալ, ու աս մարմնոյս
 հետ կապուած կենալ: Անոր հա-
 մար մեծ ուրախութիւն ու անպատ-
 մելի սրտի ցնծութիւն ունեցար,
 երբոր աւետիս առիր, թէ քու
 որդւոյդ արքայութիւնը կը հրա-
 լիրիս: Աւ հազիւ թէ հոգիդ ա-
 ւանդեցիր քու Աստուածորդւոյդ
 ձեռքը, փառաւորեալ մարմնովդ
 մէկտեղ բազմութեամբ հրեշտա-
 կաց երկինք վերափոխեցար:

Իսկ ես մեղաւորս քու առջիդ
 ինկած կը խնդրեմ, որ իմ սիրտս

ալ վառես, որպէս զի բաղձայ ար-
քայու թիւնը տեսնելու: Գունն աս
աշխրոքիս մէջ այնչափ հոգեւոր
մսխիթարութիւն ունեցար, բայց
ան ալ քեզի բաւական չէր երեւ-
նար. իսկ ես ամենեւին զուրկ ը-
լալով հոգեւոր մսխիթարութենէ՝
թէ որ կարելի ըլլար, չէի ուզեր
մեռնիլ, ու աս աշխրոքիս մէջ կ'ու-
զէի յաւիտեան ապրիլ: Գունն ամէն
ըռպէ կը փափաքէիր, թէ երբ պի-
տի գայ ան ետքի վայրկեանը. իսկ
ես ամենեւին եւ ոչ կ'ուզեմ միտքս
բերել, ինչու որ խղճմտանքս մա-
քուր չէ. ու անպատրաստ ըլլալուս
չեմ գիտեր՝ թէ ինչ պատասխան
պիտի տամ գործածներուս համար:

Քեզի կը դիմեմ այսօր սո՛ւրբ
Աստուածածին, օգնէ յուսահա-
տելոյս, ու ողորմէ: Աստուծմէ ետ-
քը դուն ես իմ յոյսս ու փրկիչս.
քեզի յանձներ եմ հոգւոյս փրո-
կութիւնը, ու զքեզ ունիմ ինձի
բարեխօս ու միջնորդ: Արքայու-

Թեան մէջ այնչափ շնորհքներու
հասար, մինչեւ Աստուած իր ողոր-
մութեան գանձը քեզի տուաւ,
ինձի ալ՝ որ սրտանց քեզ այնչափ
կը սիրեմ, աս ուրախական օրս
առատութեամբ բաշխէ: Պահէ՛ իս
մայր ողորմած ամէն փորձանք-
ներէն, սրտիդ գութը վրայէս ան-
պակաս ըրէ, ամէն:

Հարական:

Ը, յօր յուսապատար խնդու-
թեամբ եւ յաւէժաբար հնչմամբ,
նուագեմք քեզ հողեղէնքս ընդ
հրաբուն սեռիցն. տօնախմբելով
զխիշատակ կուսի աղախնոյ եւ մօր
քոյ վասնորոյ հրճուողական ձայ-
նիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ
զնոր զօրհնաբանութիւն:

Ի տօնի ծննդեան Աուսին:

Ի ոլոր աշխարհք մեղաց մթու-
թեամբ պաշարուած խեղճ մնացեր
էր, դուն միայն հիանալի Աոյս
իբրեւ ուրախարար առաւօտ ծա-
ղեցար մարդկային բնութեանս.
ու նախաստեղծին Ադամայ տրտ-
մական անէծքը՝ քու անճառելի
ծննդեամբդ վերցուցիր, ու մեզի
օրհնութեան աւետիս բերիր: Բա-
ցուեցան այսօր աստուածային շնոր-
հաց դռները, ու ցօղեցին երկինք
Աստուծոյ օրհնութեան ու ողոր-
մութեան անձրեւը. ու փշաբեր
անիծեալ երկիր մարդկային՝ բուս-
ցուց այսօր անմահութեան տունկը:

() օրհնեալ ես Աոյս երջանիկ, որ
ամէն ստեղծուածոց մէջէն դուն
միայն հրաշալի սրբութեամբ ա-
ռանց մեղաց ծնար: Օրհնեալ ես
Աոյս երջանիկ, որ յառաջ քան
ծնանիլդ՝ Աստուծոյ մայր ընտրը-
ւեցար: Օրհնեալ ես Աոյս երջանիկ,

որ մեզի փրկու թեան աւետիս պար-
գեւեցիր, ու օրհնու թեամբ մեզ
լեցուցիր: Օրհնեալ ես Աղյս եր-
ջանիկ, որ քուկին արժանաւոր
արդեամբդ ու խոնարհու թեամբդ՝
Աստուծոյ սիրտը շարժեցիր, ու
սուրբ սիրով Աստուծոյ որդին
քու մաքուր արգանդդ քաշեցիր:

Ո՛վ օրհնեալ Աղյս, կ'աղաչեմ՝
կը պաղատիմ քեզի, տո՛ւր ինձի
սուրբ աւազանին շնորհքը, որնոր
արդէն կորսընցուցի, ու մեղաց
խաւարը փարատէ վրայէս: Մխի-
թարէ հոգիս ալ՝ որ ամէն շնորհքէ
զրկուած՝ ողորմելու թեան մէջ ին-
կեր է, ու քեզի սո՛ւրբ Աստուա-
ծածին կը դիմէ. քու հրաշափառ
ծննդեանդ օրը հոգեւոր պար-
գեւներ շնորհէ ինձի, որ բարի
ապրիմ, ու քեզի միշտ հաւատա-
րիմ որդի ըլլամ, ամէն:

Շարական :

Արգեցէք որդիք սիոնի երգ նոր ի
ծնրնդեան մօր Տեառն. քանզի որ
ծնաւ զանժամանակն ի հօրէ ծրն-
եալն այսօր ծնաւ յամուլարգանդէ.
տուք օրհնութիւն տուողին մեզ
զմայրն լուսոյ :

Ի պատիւ անուան Մարիամն :

Արբոր քու սուրբ անունդ կը յի-
շեմ ո՛վ ամենասիրելի Մարիամ,
բոլոր սիրտս կը բորբոքի սիրովդ,
ու հոգիս ծարաւիաբար քեզ կը
խնդրէ : Ո՛վ սէր իմ Մարիամ,
աս արտասուելի աքսորանքիս մէջ
քեզմէ ի զատ չունիմ ինձի բարե-
խօս ու պաշտպան. ուրեմն մի
զրկեր իս մեղաւորս մայրական
խնամքէդ. ցրցուր իմ վրաս ալ
քու հրաշալի անուանդ պտուղը :
Ո՛վ մայր իմ Մարիամ, գիշեր
ցորեկ քու սուրբ անունդ կանչե-

լէն չեմ դադրիր. երբոր գժոխքը միտքս կու գայ, Մարիամ կ'աղաղակեմ. երբոր երկնից արքայութեան փառքը կը մտմըտամ, մեծ փառաքով մը Մարիամ կը կանչեմ: Տես մայր ողորմութեան, ու ողորմէ ինձի, ու փրկէ իս ամէն փորձանքներէն. ինչու որ դձուն ես բոլոր իմ յոյսս ու ապաւէնս, ու մի միայն օգնականս:

Ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր կոյս Մարիամ, շնորհք բրէ ինձի, որ մեռնելու ատենս բոլոր սրտանց մեծագոյն ջերմեռանդութեամբ ինձի օգնական կանչեմ քու բաղձալի անունդ Մարիամ: Ո՛վ Մարիամ, կենացս ետքի ընկէն օգնութիւն հասիր ինձի, ու մտիթարէ իս քուկին ներկայութեամբդ. թէ որ միայն յիշելը քու անունդ անչափ քաղցրութեամբ ու սիրով սիրտս կը լեցընէ, հապա ինչ անպատմելի ուրախութիւն պիտի ըլլայ քեզ տեսնալը

ո՛վ ցանկալի Մարիամ: Ա՛յ սէր իմ
 Մարիամ, գիշեր ցորեկ սիրտս ան-
 հանգիստ է. մեծապէս քու տեսոյդ
 կը կարօտի. աչքէս թափած ար-
 ցունքներս քու սիրոյդ համար գութ
 ձգեն սրտիդ մէջ. ո՛վ ողորմած
 Մարիամ, սուրբ անուանդ ար-
 դեանցը համար ըլլայ առ իս
 որդւոյդ արքայութիւնը, որ հոն
 քու փառաւորեալ անունդ Մա-
 րիամ օրհնեմ ու գովեմ, ամէն:

Հարական:

Մարգարէից հանդիսարան եւ
 գրաւական կենաց մարդկան Մա-
 րիամ Աստուածամայր. ընդունա-
 րան եօթնարիւիեան շնորհաց. իս-
 րիսխ յուսոյ հաստատութեան.
 զուգաթիւ աւուրց դարուցս ան-
 ցաւորաց. օրհնութեամբ երգով
 եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն
 զյիշատակ ծննդեան քո ի մօրէ:

Առաջին օր:

() Երհնեալ ես ո՛վ երկրպագելի խաչափայտ, որ որդին միածին Յիսուս անմեղ գառն Աստուծոյ քու վրագ պատարագուեցաւ, ու աշխարհքիս ամէն մեղաց ծանրութիւնը բոլորովին վերցուց: Օրհնեալ ես փայտ կենաց եւ յոյս փրկութեան, որ աշխարհքիս ծովուն մէջ եղողները սուրբ արքայութեան ճշմարիտ ու ցանկալի նաւահանգիստը կը հասցընես: Առաջին կենաց ծոր մեզի մահաբեր պտուղ բերաւ. բայց դուն նոյն իսկ կեանքը մեզի պարգեւեցիր: Երջանիկ ես միշտ սուրբ խաչ, որ իմ Յիսուս փրկիչս իս սիրելուն համար բոլոր արիւնք վրագ թափեց, որով ամէն երանութեան արժանի եղար:

Ճիմա բազկատարած կ'աղաչեմ քեզի ո՛վ սուրբ խաչ, օգնական եղիր ինձի, ու զօրացուր տկարու-

Թիւնս, որ չար սատանային փոր-
ձանքներուն դէմ դնեմ, ու աշ-
խրբքիս զանազան ձախորդու թիւն-
ներուն սիրով տանիմ, ու յաւի-
տենական վարձք ստանամ: Գուն
ողորմած Յիսուս, կնքէ վրաս եր-
կինքէն պատուական խաչովդ, ու
օրհնէ մարմնոյս ամէն զգայա-
րանքները, որ չըլլայ թէ անոնցմով
քեզ վշտացընեմ:

Շարական:

Սուրբ խաչն օգնական հաւատա-
ցելոց կանգնեցաւ ի յերկրի յաղ-
թող թշնամւոյն. եկայք ժողո-
վուրդք երկրպագեսցուք:

Երկրորդ օր:

Վանի անգամ որ տէր իմ աչքս
կը վերցընեմ, սուրբ խաչիդ կը
նայիմ, կը լսեմ սրտիս մէջ անուշ
ձայն մը. թէ անչափ սիրեց քեզ

Յիսուս, մինչեւ քու սիրոյդ համար
մեռաւ, մի մոռնար բարի փրկիչդ :

Այս տէր, ինչպէս մոռնամ քու-
կին ըրած բարերարութիւններդ
ինձի. սուրբ խաչին նայածիս պէս
միտքս կու գան բոլոր քաշած չար-
չարանքներդ, ու սիրտս անշիջա-
նելի սիրով կը բորբոքեն : Հազար
փառք ու գոհութիւն քեզի, օրհ-
նեալ ըլլայ քու գթութիւնդ .
սուրբ խաչիդ բարեխօսութեամբը
իս պահէ ու պահպանէ, ու մի մատ-
ներ չար թշնամւոյն ձեռքը :

Արկրպագանեմ սուրբ խաչիդ
մարդասէր փրկիչ իմ, ու կը խըն-
դրեմ անոր աներեւոյթ զօրու-
թիւնը, որ հոգւոյս ու մարմնոյս
պահապան ըլլայ : Բովանդակ յոյսս
սուրբ խաչիդ վրայ դրած եմ, դուն
առողջացուր հոգւոյս հիւանդու-
թիւնները : Քեզի կը դիմեմ ո՛վ խա-
չելեալ Յիսուս, ու խաչիդ ոտքը
կը փաթթուիմ. դուն տէր շնոր-
հք տուր ինձի, որ աս աշխարհիս

մէջ քեզի հետ խաչակցելով՝ ան-
դիի աշխարհք ալ արքայութեան
մէջ սուրբերուն հետ ուրախակից
ըլլամ, ամէն :

Հարական :

Խաչի քո Քրիստոս երկրպագեն
արարածք ամենայն որ ի փրկու-
թիւն մեզ կանգնեցաւ . սա եղիցի
մեզ պահապան յաղթող . ապրե-
ցուցանել զմեզ ի պատրանաց
թշնամւոյն :

Ի տօնի ընծայման :

Փառաւորեալ երջանիկ Աոյս, լսէ
մեղաւոր հոգւոյս աղաչանքը . ու
ան անպատմելի սրտիդ մխիթարու-
թեանը համար՝ որ քեզ բոլորովին
տաճարին մէջ Աստուծոյ ընծայե-
լովդ ունեցար, բաց ինծի շքնոր-
հաց գանձերը, ու մխիթարէ սիրտս :
Ո՛վ ամենասիրելի մայր, դուն ինչ-

պէս որ պզտիկուց քեզ Աստուծոյ
ընծայեցիր, ես ալ կը փափագիմ
իմ բոլոր մնացած կեանքս քեզի
ընծայել. անանկ որ միտքս միշտ
քու ըրած բարիքներդ յիշէ. սիր-
տըս միշտ քեզ սիրէ, ու լեզուս
անդադար քեզ օրհնէ:

Ա՛ղաչեմ ո՛վ ողորմած տիրուհի
իմ, ընդունէ իս անարժանս մայ-
րական սիրով, որ արդէն քեզի որ-
դեգիր եղած եմ. ու աս օրս նորէն
իս քեզի կ'ընծայեմ: Օրհնէ մայր
սուրբ խեղճ որդիդ, ու աղատէ ա-
մէն փորձանքներէն. հզօր պաշտ-
պանութիւնդ վրայէս անպակաս
ըրէ, ու քու քաղցր աչուրներիդ
իզմէ մի դարձրներ: Ա՛վ բարե-
գութ Մարիամ, բոլոր յոյսս դուն
ես. քու գթած ձեռքդ կը յանձ-
նեմ հոգիս, ամէն:

Հարական:

Ան քեզ ապաւինիմք սուրբ Աստուածածին, բարեխօսեալ անդադար առ որդիդ քո եւ Աստուածներ. փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Ի տօնի անարատ յղութեան:

Ո՛վ ամենամաքուր կոյս Մարիամ, այնչափ սիրելի եղար Աստուծոյ առջին, որ առանց արատի մը սրբութեամբ յղացար, ու ամէն շնորհքներով ու մաքրութեամբ զարդարուեցար. իբրեւ գեղեցիկ արուսեակ մը լուսաւոր առաւօտ ծագեցիր մեզի: Մեծապէս կ'ուրախանամ ու կ'օրհնեմ քու անարատ յղութիւնդ մայր Աստուծոյ, որ ամենասուրբ Երրորդութիւնը իբրեւ Նոյի տապանը քեզ միայն ազատ պահեց աս ողորմելի աշխրոքիս մեղաց ջրհեղեղէն. ու նոյն

իսկ բոլորից տէրն ի.քեզ բնակե-
լով՝ Աստուծոյ բարկութիւնն ին-
ջեցուց, ու մեղաց ջրհեղեղը ցամ-
քեցուց:

Ո՛վ գթած Աոյս, քուկին սքան-
չելի անարատ յղութեանդ օրը
շնորհք մը կը խնդրեմ քեզմէ
մայր ողորմութեան, որ մեղքերուս
աղտոտութիւնը սրբես, ու մաք-
րութեան շնորհք տաս ինձի, որով
քեզի ու քու միածնիդ հաճոյ ըլ-
լամ: Գիտես դուն իմ թշուառու-
թիւններս. մեղօք յղացայ, մեղօք
ծնայ ու մեղօք ալ կեանքս անցու-
ցեր եմ. դու անարատ մայր, քու-
կին գթութիւնդ վրայէս պակաս
մի ըներ, ապա թէ ոչ բոլորովին
կը յուսահատիմ, ու ստոյգ կը
կորսուիմ: Ո՛վ ամենասիրելի Մա-
րիամ, սիրտս բոլոր քեզի կու տամ,
դուն մաքրէ ամէն արատներէն՝ որ
յաւիտեանս քուկդ ըլլայ, ամէն:

Հարական :

Ընթառամ ծաղիկ անդատագարս
շառաւիղ վերաբուսեալ յարմա-
տոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս
կանխաւ վերագոչեաց եօթնար-
փեան շնորհաց հոգւոյն ընդունա-
րան գոլ, Աստուածածին եւ կոյս
զքեզ մեծացուցանեմք :

Ա Ղ Օ Թ Բ

Ս . ԱՍՏՈՒԵԹԵԹՆԵՏ

Ե Օ Թ Ը Խ Ն Գ Ո Ւ Թ Ե Ա Ն Ը

Առաջին խնդութիւն :

Մեծապէս կ'ուրախանամ սո՛ւրբ
Աստուածածին, յիշելով առջի
խնդութիւնդ, որ ունեցար Աս-
տուածամայրութեան աւետիս ա-
ռած ատենդ. ամենակալն Աստուած
բոլոր արարածոց մէջէն քեզ միայն
իրեն մայր ընտրեց, ու անբաւ

չնորհքներով լեցուց, ու սերով-
բէներէն ու քերովբէներէն աւե-
լի քեզ բարձրացուց: Անոր հա-
մար կ'աղաչեմ քեզի սուրբ տիրա-
մայր, ուրախացուր այսօր իմ սիր-
տըս ալ՝ մաքրելով խղճմտանքս
ամէն ըրածներէս. ու սիրտս բոր-
բոքէ արքայութեան սիրովը, որ
աս աշխրդբիս ունայնութիւնները
մէկդի ձգելով՝ միշտ Աստուծոյ
տեսոյն փափաքի սիրտս, ամէն:

Ողջոյն քեզ Մարիամ:

Երկրորդ խնդութիւն:

Մեծապէս կ'ուրախանամ սուրբ
Աստուածածին, յիշելով ան ծայ-
րագոյն խնդութիւնը, երբոր եր-
կնի եւ երկրի արարչին մայր եղար.
Երկինքը չէր բաւական զինքը
տանելու, դուն գիրկդ առիր, ու
մայրական խնամքով մեծցուցիր:
Ինչ մեծ ուրախութիւն էր սրտիդ,
որ արքայութեան փառքը ու եր-

կնից ցնծութիւնը միշտ հետդ ունէիր, ու անով կը զմայլէիր: Խոնարհութեամբ ոտքդ ինկած կը խնդրեմ մայր Աստուծոյ, մի՛ զըրկեր սիրտս հոգեւոր ուրախութենէ. շնորհք ու բարբոքեալ սէր տուր ինձի, որ սուրբ հաղորդութիւն առած ատենս ճշմարտապէս Յիսուսը սրտիս մէջն ընդունիմ, ու երկնային ցնծութիւններով լեցուիմ:

Աղջոյն քեզ Մարիամ:

Երրորդ խնդութիւն:

Մեծապէս կ'ուրախանամ սուրբ Աստուածածին, յիշելով ան մեծ ցնծութիւնդ, երբոր տեսար Աստուածորդիդ յարութիւն առնելէն ետքը փառաւորեալ աստուածային լուսով, ու անպատմելի խընդութիւնով լեցուեցաւ սիրտդ: Ուրախ լեր մայր փրկութեան, որ բոլոր աշխրբքիս փրկագործու-

Թեանը պատճառ եղար. ու երկնից դռները մեզի բացիր, որ մեր նախահայրը մեզօք փակեց: Հիմա մասնաւոր շնորհք մը տ՛ուր ինձի ո՞վ գթած Մարիամ, որ մեռեալ հոգիս կենդանանայ, ու մեզաց տրամուծիւնները թող տալով՝ ուրախուծեամբ քեզ օրհնէ, ամէն:

Ողջոյն քեզ Մարիամ:

Չորրորդ խնդուծիւն:

Մեծապէս կ'ուրախանամ ս՛ուրբ Աստուածածին, յիշելով ան մեծ խնդուծիւնդ, երբոր քու միածին որդիդ քեզ առաւ, ու անձիւ հրեշտակներով սուրբերով երկինք վերացուց: Ո՛վ հզօր թագուհի, նայէ՛ մէյմը երկինքէն վրաս, ու այսօրուան ունեցած ուրախուծեանդ ու փառացդ համար բարեխօս եղիր ինձի, ու մի մոռնար իս ողորմած մայր, որ աս արտասուելի աքսորանքիս մէջ քու տեսուչ

Թեանդ խիստ կարօտ եմ: Մանա-
ւանդ կ'աղաչեմ քեզի մայր ողոր-
մութեան, յիշէ աս չորրորդ խըն-
դութիւնդ, որով սիրտդ յաւի-
տեանս լեցուեցաւ. ու օգնութիւն
հասիր ինձի մեռնելուս ատենը
ու քու ցանկալի ներկայութիւնովդ
ուրախացուր իմ հոգիս ալ, ամէն:
Ողջոյն քեզ Մարիամ:

Հինգերորդ խնդութիւն:

Մեծապէս կ'ուրախանամ սուրբ
Աստուածածին. յիշելով երկինքն
ունեցած անպատմելի մեծութիւնդ
ու խնդութիւնդ, որ որդիդ միա-
ծին քեզ իր աջ կողմը նստեցուց-
ու ամենասուրբ Երրորդութիւնը
անհասանելի շնորհքներով քեզ
լեցուց, որ քու կին ճառագայթ-
ներովդ բոլոր ան երկնային դրախ-
տը կը զարդարես ու կը պայծա-
ռացրնես: Ա՛վ մայր, երբ որ քեզ
ասանկ փառաւորեալ կը յիշեմ,

սրտիս ուրախութենէն աչքիս ար-
ցուքը չեմ կրնար բռնել: Ա՛վ
քաղցր Մարիամ, ողորմէ՛ խեղճու-
թեանս, ու իս քովդ ա՛ռ, լեցո՛ւր
սիրտս քուկին փառքովդ:

Աղջոյն քեզ Մարիամ:

Վեցերորդ խնդութիւն:

Մեծապէս կ'ուրախանամ սո՛ւրբ
Աստուածածին, յիշելով ան մեծ
խնդութիւնդ, որ ունեցար ար-
քայութեան մէջ, երբոր Հայրն
երկնաւոր՝ Որդին միածին՝ եւ
սուրբ Հոգին քեզ երկնի եւ եր-
կրի թագուհի ըրաւ. ու անճառե-
լի փառքով անանկ պսակեց՝ որ ա-
մէն հրեշտակներն ու սուրբերը
երանի կու տան քեզի, ու միշտ
կ'օրհնեն իրենց արժանաւոր թա-
գուհին: Ա՛վ ցնծութիւն մեր ամե-
նեցուն, երկինքը կ'ուրախանայ
քեզ իրեն հետ ունենալուն. եր-
կրի վրայ մենք ալ կ'ուրախանանք

յիշելով քու փառքիդ մեծութիւնը, ու անդադար շնորհակալ կ'ըլլանք ու կ'օրհնենք զԱստուած, որ ասանկ գերագոյն աստիճան քեզ բարձրացուց: Ո՛վ մայր ողորմութեան, աս խնդութեանդ համար շնորհք սո՛ւր ամենուն ալ, ու իմ խեղճ սիրտս ուրախացո՛ւր քու մայրական գթութեամբդ, ամէն:

Ողջոյն քեզ Մարիամ:

Եօթներորդ խնդութիւն:

Մեծապէս կ'ուրախանամ սո՛ւրբ Աստուածածին, յիշելով ան մեծ խնդութիւնդ ու իշխանութիւնդ, որ Աստուած բոլորովին քու ձեռքրդ յանձնեց իր ողորմութեան ու շնորհաց գանձը. որպէս զի առատութեամբ բաշխես ամէն կարօտներուն: Ուրեմն ո՛վ գթած մայր, դուն ես մեղաւորաց յոյսը, խեղճ հոգիներու բարեխօս, ու անմխիթար վշտացելոց ուրախու-

Թիւն: Մեծ ցնծութիւն է քեզի
ողորմիլը. ու որոնք որ քեզի կ'ա-
պաւինին, ստոյգ փրկութեան կը
հասնին: Ահա քեզի կը դիմեմ ո՛վ
գանձապետ աստուածային գթու-
թեան, բոլոր մեղքերուս թողու-
թիւն շնորհէ, ու շնորհք տո՛ւր
ինձի, որ հաստատուն յառաջա-
դրութիւն դնեմ ասկից ետքը միշտ
Աստուծոյ շնորհաց մէջ ապրելու,
ու քեզի հաւատարիմ ծառայ ըլ-
լալու: Քիտեմ մայր ողորմութեան,
թէ որչափ պիտի ցնծութիւն ու-
նենայ սիրտդ իս արքայութեան
մէջ տեսած ատենդ. ուրեմն ուրա-
խացո՛ւր քու սիրտդ իս փրկու-
թեան հասցընելովդ, ու ուրախա-
ցո՛ւր իմ սիրտս ալ երկնից փա-
ռաց մէջ քեզ տեսնալու արժանի
ընելով, ամէն:

Աղջոյն քեզ Մարիամ:

Աղօթք ամենայն սրբոց :

Ո՛վ ցանկալի սուրբք Աստուծոյ,
ո՛վ ճշմարիտ որդիք վերին Երու-
սաղեմի, դուք աս աշխրբիս մէջ
յաղթեցիք չար թշնամին, ու
ողորմելի մահկանացու կեանքը
երկնից արքայութեան հետ փո-
խեցիք, ու Քրիստոսի ձեր զօրագրու-
խին պէս չարչարուեցաք . բայց
հիմակ երկնային դրախտին մէջ
յաւիտեանս կը վայելէք, ու ան-
դադար հրեշտակաց հետ կ'օրհնէք
ամենասուրբ Երրորդութիւնը :

Ո՛վ երջանիկք Աստուծոյ, յի-
շեցէ՛ք իս մեղաւորս ալ, որ աս
թշուառ երկրիս վրայ խեղճ մնա-
ցեր եմ, ու բարեխօս եղէք առ
Յիսուս փրկիչ ինձի համար . ու
ամէն չար փորձանքներէն ու մեղաց
առիթներէն պահելով՝ ձեր սուրբ
գնդին մէջ իս խառնեցէք : Ո՛հ կ'ա-
ղաչեմ, հասնի ձեր ականջը ըրած
հառաչանքներս ու խնդրուածներս,

ձեր մաքուր ձեռքովը Աստուծոյ
առջին հանեցէք իմ սրտիս փա-
փաքը ու անարժան աղօթքներս,
որ ձեր միջնորդութեամբը Աստու-
ծոյ ողորմութեանը արժանի ըլ-
լամ: Ամէն մէկերնիդ արեգակի
պէս կը փայլիք արքայութեան մէջ,
իս ձեր ճառագայթովը լուսաւո-
րեցէք, որ յաւիտեանս յաւիտե-
նից կը վայելէք ան անճառ ուրա-
խութիւնը, իմ սրտիս ալ նոյնը
շնորհեցէք:

Ղուն ո՛վ սուրբդ սրբոց Մայր
ողորմութեան, քեզի կը դիմեմ՝
բոլորով սրտիւ . ինչու որ քու
աղաչանքդ միշտ Աստուծոյ ըն-
դունելի է ու Աստուծոյ գթու-
թեան գանձը քու ձեռքդ է: Եր-
կինքը բոլոր սուրբերը երանի կու-
տան քեզի ու կ'օրհնեն, որ ամե-
նուն փրկութեան պատճառ եղար:
Ո՛վ թագուհի ամենայն սրբոց,
պաշտպան եղիր ինձի ու մայրա-
կան գութդ վրայէս պակաս մի ը-

ներ, օգնէ ինձի քուկին շնորհքովդ,
ու արժանի ըրէ ի հանդերձեայն
սրբոց հետ քեզ փառաբանելու,
ամէն :

Աղօթք առ սուրբն Յովսէփ :

ՄՎերջանիկ Աստուածահայր սուրբ
Յովսէփ, երբոր քու փառքդ ու
Աստուածահայրութեան մեծ պա-
տիւղ կը յիշեմ, բոլոր սիրտս կը
բորբոքի քու սիրովդ, ու կը բաղ-
ձամ միշտ քեզ գովել: Երանելի
էիր երկրի վրայ, ինչու որ զԱս-
տուած քեզի հնազանդ ունէիր, ու
երկնային գանձը քեզի յանձնած
էր Աստուած: Աւելի երանելի էիր
մահուանդ ատենը, որ Յիսուսը
ու Աստուածածինը երկու կողմից
ունէիր, եւ ուրախութեամբ Յի-
սուսին ձեռքն աւանդեցիր սուրբ
հոգիդ. ու հիմա երկինքը մեծա-
գոյն փառքով կը ցնծաս Յիսու-
սին ու սուրբ կուսին հետ:

Քեզի կ'աղաչեմ ու կը պա-
ղատիմ ո՞վ հայր սուրբ, բարե-
խօս եղիւր ինձի, ու պաշտպանէ
իս ամէն վտանգներէն հայրական
իշխանութեամբդ: Զերմեռանդ
սրտով քեզի կը դիմէ սովեալ հո-
գիս. լեցնուր իս զանազան շնորհք-
ներով, ու Յիսուսէն մաքրութեան
շնորհք խնդրէ ինձի համար որ
քեզի պէս սուրբ ու արդար
ապրիմ: Նայէ մէյմը երկինքէն
գթած հայր, ու ամենեւին իս մի
մոռնար, օգնութեան հասիր ինձի
նեղութեան ատենը, մանաւանդ
ան ետքի ատենը, որ պիտի ա-
մենէն ալ անօգնական մնամ ան
հոգեվարութեան մէջ, ու հոգիս
մեծ տագնապ պիտի կրէ Աստուծոյ
դատաստանը յիշելով: Գուն ո՞վ
սուրբդ Աստուծոյ, մի թողուր իս
ան ատենը. մխիթարէ հոգիս քու-
կին ներկայութիւնովդ, որ բարի
մահուամբ հոգիս քու մաքուր
ձեռքդ աւանդեմ կանչելով սրբ-

տանց Յիսուս, Մարիամ, եւ սուրբ
Հայր Յովսէփ, զսիրտս եւ զհոգիս
ձեզ յանձն առնեմ :

Աղօթք առ սուրբն Յովհաննէս
մկրտիչ :

Մեծ ջերմեռանդութեամբ սրտի
քեզի կը դիմեմ ո՛վ սուրբ Յով-
հաննէս մկրտիչ, որ իբրեւ արու-
սեակ արդարութեան արեգականն
Քրիստոսի ծագեցար երկրի վրայ.
ու Յիսուսի փրկչին կարապետ ե-
ղար, ու ամենուն անոր գալստեան
աւետիսը տուիր : Անչափ շնորհաց
արժանի եղար՝ որ յառաջ քան
ծնանիլդ սրբուեցար, ու առանց
արատի մը ծնար. ետքն ալ հրեշ-
տակի պէս անապատի մէջ սրբու-
թեամբ ապրեցար, բոլոր ժողովուր-
դեան ապաշխարութիւն կը քարո-
զէիր : Ամենէն աւելի երանութեան
արժանի, որ քու ձեռքովդ Յոր-
դանան գետին մէջ Քրիստոսը
մկրտեցիր : Ո՛վ սուրբդ Աստուծոյ,

քու հրաշափառ տօնախմբու-
թեանդ օրը իմ անգեղջ սրտիս
դարձ տօնը, ու ապաշխարութեան
չնորհք պարգեւէ, որ բոլոր մեղ-
քերս աղէկ մը խոստովանիմ, ու
Աստուծմէ թողութիւն առնում:
Քուկին խիստ ճգնութեանդ նայե-
լով՝ մէկդի թողում աշխարհային
ունայնութիւնները, որոնք որ կան-
ցնին կ'երթան. ու ասկից ետեւ
ջանամ երկնից արքայութեան հա-
մար աշխատիլ, որ յաւիտեանս կը
մնայ: Ո՛վ երջանիկդ Աստուծոյ,
բարեխօս եղիր ինձի համար առ
Քրիստոս, ու մտքիս լոյս տօնը, որ
չար սատանային խաբէութիւննե-
րուն մտիկ չընեմ, քու միջնոր-
դութեամբդ հալածուին երթան,
ու սուրբ հրեշտակները իս պահ-
պանեն, ամէն:

Աղօթք առ սուրբ Պետրոս եւ Պօղոս:

Ո՛վ երանելի սուրբ առաքեալք
Քրիստոսի, ձեր երկնային վարդա-
պետութեամբը բոլոր աշխարհք
լուսաւորեցիք, ու Քրիստոսի սուրբ
հաւատքը ամէն երկիր քարոզե-
ցիք, ու ձեր սուրբ արիւնը թա-
փելով՝ նմանող եղաք փրկչին
Յիսուսի: Ո՛վ սուրբ առաքեալք
Աստուծոյ, երկինքէն լսեցէք մեր
անարժան աղօթիցը, ու բարեխօս
եղէք Աստուծոյ: Քրիստոս ձեզի
տուաւ երկնից բանլիքը, բացէք
մեզի երկնից դռները. Քրիստոս
փրկիչն մեր ձեզի յանձնեց աշ-
խարհիս վրայ մեր մեղքերն արձը-
կելու ու կապելու իշխանութիւնը.
անոր համար մենք՝ որ ծանր մեղաց
կապերու տակ մնացեր ենք, ձեր
առջին ինկած կը խնդրենք, որ մեր
մեղաց ծանրութիւնը թեթեւցը-
նէք, գերութեան կապերը արձը-
կէք, մեզ Յիսուսին հետ հաշտեցը-

նէք: Ո՛վ երջանիկ առաքեալք,
 սուրբ եկեղեցւոյ մշտնջենաւոր
 խաղաղութիւն պարգեւեցէք. դուք
 այսօր երկինքէն լոյս մը ծագեցէք
 ամէն հերետիկոսներուն ու հեր-
 ձուածողներուն սիրտը, որ գան
 միանան ի մի հօտ եւ ի մի գլուխ
 եկեղեցւոյ, ինչպէս որ փրկիչն մեր
 աղաչեց իր երկնաւոր հօրը. ու
 միաբան օրհնենք զԱստուած, ի
 յաւիտեան ամէն:

Աղօթք առ սուրբն Ստեփանոս:

Պարծանք սուրբ հաւատոյ, առա-
 ջին մարտիրոս եւ վկայ Քրիստոսի
 ո՛վ սուրբ Ստեփանոս. այսօր սուրբ
 եկեղեցին ցնծութեամբ քու յի-
 շատակդ կը կատարէ, որ յայտ-
 նապէս քարոզեցիր Քրիստոսի
 սուրբ հաւատքը՝ ու պատուական
 արեամբդ երկնից արքայութիւնը
 գնեցիր: Բացուեցաւ երկինքը քե-
 ղի համար, ու տեսար անհասանե-

լին մարմնաւոր աչօք որդին միա-
 ծին մեծ փառքով նստեալ ընդ
 աջմէ Աստուծոյ հօր: Թշնամիներդ
 քեզ կը չարչարէին, դուն Յիսու-
 սին պէս կ'աղօթէիր անոնց համար.
 անոնք քեզ կը քարկոծէին, դուն
 ձեռուրներդ բացած քարկոծող-
 ներուն թողութիւն կը խնդրէիր:
 Ո՛վ նահատակ բարի. արտասուօք
 կը պաղատիմ քեզի, ինչպէս որ
 առաջին պտուղ եղար եկեղեցւոյն
 Քրիստոսի, անանկ ալ առաջին բա-
 րեխօս եղիր քրիստոնէից համար
 առ Յիսուս փրկիչ. թէ որ քար-
 կոծողներուն համար աղօթեցիր,
 հիմա մենք գետինն ինկած կ'աղա-
 չենք քեզի, նայէ մեր խեղճու-
 թեան, երկնային օրհնութիւններ
 խրկէ մեզի: Խնդրէ Աստուծմէ, որ
 սուրբ եկեղեցւոյ հաստատութիւն
 տայ, ամէն հոգեւոր պաշտօնեայ-
 ները հոգւով սրբով լեցունէ,
 ու հաւատացելոց ալ սէր եւ մի-
 ութիւն պարգեւէ, ամէն:

Աղօթք առ սուրբ Հայրն Գրիգոր :

Մ՛ի երանելի սուրբ Գրիգոր, գուն
քու անտանելի չարչարանքներովդ
մեր ազգին լուսաւորիչ եղար,
Քրիստոսի չարչարանաց պակսու-
թիւնը քու մարմնոյդ վրայ կրեցիր,
ու Քրիստոսի արեան գինը մեզի
համար շահեցար, ու մեր ազգին
հայր եղար աս աշխարհքս՝ անչափ
բազմութիւնը մկրտելով, ու ամե-
նուն քրիստոնէական հաւատոյ
մասունքը սորվեցընելով : Իսկ ան-
դիւ աշխարհք նոյնպէս անդա-
դար աղօթող ու բարեխօս ես
Աստուծոյ մեր ազգին համար : Հի-
մա ես ալ՝ որ քու հոգեւոր զա-
ւակդ եմ, կ'աղաչեմ քեզի այսօր
հայր սուրբ, որ քու յիշատակդ
կը տօնենք, ինձի համար հզօրբա-
րեխօսութիւն ընես Աստուծոյ առ-
ջին, թէպէտ ես իզմէ արժանիք
մը չունիմ քեզի որդի սեպուելու :
Դուն անչափ երախտաւոր էիր

մեր ազգին, որ քեզի զանազան տանջանքներ տուողներուն համար Աստուծմէ թողութիւն կը խնդրէիր. քու համբերութիւնդ ու անյիշաչարութիւնդ ինծի օրինակ ըլլան, ու մտքէս վրէժխնդրութեան հոգին հանեն: Այսօր քու կին միջնորդութեամբդ սուրբդ Աստուծոյ, որ Աստուծոյ առջին խիստ զօրաւոր է՝ շնորհք խնդրէ ինծի, որ ճշմարիտ քու զաւակդ սեպուիմ. ու արքայութեան մէջ քեզի պարծանք ըլլամ: Մասնաւորապէս կը խնդրեմ՝ որ լուսաւորիչդ հոգեոց, որ Աստուծոյ առջեւը բարեխօս ու պաշտպան կենաս մեր ազգին. ու մեզ Աստուծոյ արդար պատիժներէն խալըսես: Վթա՛ծ հայր օրհնէ՛ մեզ երկինքէն, որ քեզի պէս սուրբ ու բարեգործ ըլլանք. ինչպէս որ քու աղօթքդ մեզի հաւատոյ լոյսը պարգեւեց, անանկ ալ շնորհէ՛ մեզի հաւատքը կենդանի պահելու հարկաւոր ե-

զածները. այս ինքն՝ սէր Աստուծոյ
ու ընկերին, ու ամէն տեսակ բա-
րեգործութիւնները, ամէն:

Աղօթք առ սուրբն Յակովբ Մծբնայ
հայրապետ:

Այս օրով աստուածահաճոյ սուրբդ
Աստուծոյ, որ քու յիշատակդ կը
տօնենք, քու հրաշալի պատկերիդ
առջին ինկած կ'ազաչենք, որ հայ-
րական գթութեամբ աչուրներդ
մեզի դարձնես, ու տեսնաս մեր
խեղճութիւնը: Քանի որ աս աշ-
խարհիս մէջն ենք, ու մեր թշուառ
մարմնոյն կը ծառայենք, արժանի
ենք՝ որ Աստուած ալ իր արդա-
րութեամբը մեզ անդադար պա-
տուհասէ զանազան հիւանդու-
թիւններով մանաւանդ ժանտա-
մահով մեզ պատժէ: Գուն միայն
հայր սուրբ, քու սուրբ աղօթ-
քովդ մեզ խալըսէ, ու աստուա-
ծային բարկութիւնը ինջեցնուր:

Պահէ մեզ ժանտամահէն, որ շըլ-
լայ թէ առանց աղէկ պատրաս-
տութեան, ու Աստուծոյ հետ հաշ-
տուելու մեղաց մէջ մեռնինք, ու
Աստուծոյ դատաստանին պարտա-
ւոր մնանք: Օրհնէ քրիստոնեայ
ժողովուրդը, որ օրէ օր աճին ու
բազմանան. մեր դաշտերուն ու
ջուրերուն առատութիւն պար-
գեւէ, որպէս զի հաւատացեալնե-
րը սով ու նեղութիւն չքաշեն:
Մաղաչենք քեզի ո՛վ սուրբդ Աս-
տուծոյ, որ մեռնելու ատեննիս
մեզ անօգնական չթողուս. քու
բարեխօսութեամբդ մեզ արժանի
ընես ընդունելու ամենասուրբ հա-
ղորդութիւնը եւ ուրիշ մահուան
թոշակները, որ միտիթարեալ սըր-
տիւ ու սրբութեամբ մեռնելու
արժանի ըլլանք, ամէն:

Աղօթք առ սուրբն Անտոնն ճգնաւոր:

Ո՛վ երանելի սուրբ Տայր Անտոն,
Ճարդկային բնութենէս վեր հրաշ-
շալի սրբութեամբ փայլեցար. ու
անտանելի ճգնութիւններ քաշեց-
ցիր լերանց մէջ. ու Եգիպտոսին
անապատը դրախտի նման սուրբ
ճգնաւորներով զարդարեցիր, ու
գլուխ ճգնաւորաց կոչուեցար: Ո՛վ
սուրբ Անտոն, իս մի՞ զրկեր քու
պաշտպանութենէդ, ու ընդունէ
իս քեզի հոգեւոր զաւակ. շնորհք
ու զօրութիւն խնդրէ Աստուծմէ
ինձի համար, որ սատանային փոր-
ձութիւններուն կարող ըլլամ
քաջութեամբ միշտ դէմ կենալ,
որ իս Աստուծոյ աչքէն հանելու
կը ջանայ: Տո՛ւր ինձի ո՛վ երանելի
Տայր սուրբ ան վառեալ սէրը, որ
ես ալ բորբոքիմ Աստուծոյ սիրո-
վը քեզի պէս, որ ամէն աշխար-
հային բաները ոչինչ սեպեցիր.
պղտիկուց աշխարհքը թող տուիր,

անապատ գացիր, ու հոն անհա-
մարնեղուծիւններուն ու փորձու-
ծեանց համբերեցիր: Աղաչեմ
քեզի՝ խնդրէ ինձի համար ալ ան
շնորհքը, որ գոնէ սիրտս աշխր-
քիս բաներուն չկապեմ. ու սա-
տանային փորձուծեանցը դէմ
կենամ, ու մարմնոյս ուղածները
չկատարեմ: Պահէ՛ մեզ նաեւ կրա-
կէն ու ամէն չար պատահմունք-
ներէ, որպէս զի արգելք չըլլան
մեր յառաջադիմութեան: Սուրբ
Անտոն, մեզ բոլոր քեզի կը յան-
ձնենք, մեր հոգին ու մարմինը, ու
ամէն բաներնիս դուն պաշտպանէ,
պահէ, ամէն:

Աղօթք առ սուրբն Անտոն պա-
տուացի:

Ո՛վ սիրելի սուրբդ Աստուծոյ,
անանկ առաքինութիւններով փայ-
լեցար աշխրաքիս մէջ, ու անչափ
շնորհքներու արժանի եղար, որ

քու սրբութեանդ անունը ամէն
երկիր տարածուեցաւ: Աղաչեմ
քեզի ջերմեռանդ սրտով ո՛վ սուրբ
Անտոն, մասնաւոր շնորհք մը
խնդրէ Յիսուսէն ինձի համար, որ
գէշ վարքս փոխեմ. ու միայն հո-
գիս փրկելու ջանամ: Գուն քանի
որ կենդանի էիր, սիրտդ Աստուծոյ
սիրովը վառուած էր, ու միշտ մե-
ղաւորներուն դարձին ծարաւի է-
իր. հիմա երկինքէն սուրբդ Աս-
տուծոյ բարեխօս եղիր ինձ մեղա-
ւորիս, ու սրտիս զեղջ տո՛ւր: Ա-
մէն մեղքի վտանգներէն իսպահէ,
ամէն տեսակ փորձանքներէն իս-
ազատէ. բանիս գործքիս յաջո-
ղութիւն տո՛ւր, ամէն տեղ պաշտ-
պան կեցիր ինձի թէ ծովու՝ եւ
թէ ցամաքի մէջ: Ինչպէս որ կեն-
դանութեանս՝ անանկ ալ մահուա-
նրս ատեն իսմի թողուր, օգնու-
թեան հասիր, որ Աստուծոյ շնոր-
հաց մէջ հոգիս աւանդեմ:

Աղօթք առ սուրբն Աննա:

Արջանիկ ես ո՛վ սրբուհիդ քու
ազնիւ զաւակովդ, որ առանց ա-
րատի մը արժանի եղար ծնանելու
զկոյսն Մարիամ Աստուծոյ մայրը՝
երկրիս օրհնութիւնը՝ ու երկնից
ցնծութիւնը: Սրտիդ ան մեծ ու-
րախութեանը համար՝ որ ունիս
արքայութեան մէջ իբրեւ մայր
երկնից թագուհւոյն, նայէ մէյմը
ինձի մայրական աչօքդ, ու տես
հոգւոյս խեղճութիւնները: Մայր
սուրբ, քու առջիդ ինկած լալով
կը պաղատիմ, մի՛ թողուր ա՛լ աս
ողորմելութեան մէջ, ու քեզ սի-
րող հոգիս մի՛ երկար ատեն զրկեր
չնորհքներէդ: Գուն մաքրէ՛ սիրտս
ամէն երկրաւոր ունայնութիւննե-
րէն, ու Աստուծոյ սիրովը լեցո՛ւր,
մտքիս լոյս տո՛ւր, որ սատանային
խաբէութիւններուն չհետեւիմ:
Իս քեզի կը յանձնեմ ո՛վ սրբու-

Տի, դուն արժանի ըրէ տեսնելու
սիրելի զաւակդ ու Յիսուսը, ամէն:

Աղօթք առ սուրբ Հոսիփօսիմէ եւ
Գայիանէ:

Ո՛վ սուրբ հարսունք երկնաւոր
փեսային քրիստոսի իմաստուն
կուսանք, ձեր հաւատոյ ու սրբու-
թեան լուսովը բոլոր Հայաստան
լուսաւորեցիք. ու ճշմարիտ մայր
եղաք մեզի մկրտութեան սուրբ
աւազանէն մեզ Աստուծոյ որդի
ծնանելով: Ձեր թափած անմեղ
արիւնովը Աստուծոյ սիրարի գութ
շարժեցիք, ու սուրբ Լուսաւորչին
հետ գործակից եղաք մեր փրկու-
թեան: Ո՛վ երանելի կուսանք,
սիրտս բոլորովին բորբոքեալ ձեզի
կը կարօտի. ու աչուրներս երկինք
վերցուցած ձեզ բարեխօս կը կան-
չեմ, ձեր սուրբ յիշատակին օրը
բացէք ինձի երկնային շնորհաց
գանձերը. վառեցէք սիրտս աւ-

տուածային սիրով, որ բոլոր աշխարհք մէկդի ձգելով միայն Աստուծոյ հաճոյ ըլլալու ջանամ: Ամէն հաւատացեալներուն համար բարեխօսեղէք, որ քրիստոնէաբար ապրին, ու արքայութեան արժանի ըլլան, ամէն:

Աղօթք առ պաշտպան սուրբն:

Ո՛վ փառաւորեալ սուրբդ Աստուծոյ, երկնային փաստաբան ու բարեխօս մեղաւոր հոգւոյս. քեզի կը դիմեմ բոլորով սրտիւ, ինչու որ դուն ես իմ օգնականս ու պաշտպանս Աստուծոյ առջին, ու քուկին աստուածահաճոյ աղօթիցդ կը յանձնեմ հոգիս ու մարմինս: Ո՛վ ընտրեալդ Աստուծոյ, կը ճանչնաս իմ տկարութիւնս, գիտես իմ կարօտութիւնս, անոր համար իս մի թողուր, ու ազատէ ամէն փորձանքներէն: Թէ որ ձախորդութիւն մը հանդիպելու ըլլայ

ինծի, մօտ եղիր, ամէն գործքիս
մէջ դուն եղիր ինծի բարի խոր-
հրդատու. մեղացառիժներու մէջ
գտնուելու ըլլամ, դուն իս յափըշ-
տակէ չար սատանային ձեռքէն:
Ո՛վ պաշտպան իմ, դուն ցրցո՛ւր
ինծի արքայութեան նեղ ճամբան,
ու ձեռքէս բռնելով առաջնորդէ
առ Յիսուս փրկիչ մեր, որ հոն
չնորհակալ ըլլալով քեզի՝ միա-
տեղ ուրախանանք յաւիտեանս,
ամէն:



Ա Ղ Օ Թ Բ

ԱՌ ԵՕԹՆ ԽՈՅՍ ՅԱԻՈՅ

ԱՄՏՈՒԱԺԱՄՕՐ :

Առ կոյսն ցաւագին :

Հայր երկնաւոր, նայէ երկինքէն
աս սուրբ ողջակիզին՝ որ ցաւագին
մայրը իր մեռեալ մէկհատիկ որ-
գին ձեռուրներուն վրայ առած
քեզի կը մատուցանէ. ու ինքն ալ
խաչին տակը կենդանւոյն զոհ ե-
ղեր է, ու անտանելի ցաւերու մէջ
կ'այրի կը տոչորի: Ա՛վ անմխիթար
սուրբ Աստուածածին, արիւննե-
րու մէջ թաթխուած՝ ու բոլորո-
վին խոցոտուած մարմինը աննման
որդւոյդ գիրկդ առեր՝ մինակուկ
նստեր կու լաս, ու անհուն ցաւե-
րու ծովուն մէջ ընկղմեր ես
անմխիթար: Մէյ մը Յիսուսի վէր-
քին պատուածներուն կը նայիս,
մէյ մը ան փշեղէն պսակին աչքդ

կը դարձընես, ու անոր գոց աչուը-
ները տեսնելով՝ դուն ալ սաստիկ
ցաւերու մէջ մթնցեր ես: Ա՛խ
մայր ցաւագին, ալ սիրտս չիդի-
մանար քեզ ասանկ խեղճ տես-
նալուս. աղբիւրի նման արցունքիդ
ձայնը հիմա կը լսեմ, որ լալով
կը կանչես. Գարձէք իմ ցաւերուս
նայեցէք, թէ աշխրոքիս մէջ եղած
է ցաւ մը իմ ցաւերուս նման: Ո՛վ
վշտագին սուրբ Աստուածածին
բաց ինձի ալ սրտիդ դառն ցաւերը
ու խոցէ սիրտս սրով քու ցաւոցդ:
Աւելի կ'ընտրեմ քեզի հետ լալը
քան բոլոր աշխրոքիս ուրախու-
թիւնը: Ա՛ուզեմ քու ոտքիդ տա-
կը իմ մեռեալ Յիսուսիս վրայ լա-
լով մեռնիլ, ու ամենեւին անկից
չբաժնուիլ, ամէն:

Առաջին ցաւ :

Այլ ամենասուրբ Տիրամայր, յիշէ ան մեծ ցաւդ, որ Սիմէոն ծերունիին գուշակու թեամբը սրտիդ մէջ ունեցար. թէ պիտոր օր մը գար՝ որ քու սիրելի որդիդ չարչարուի ու մեռնի. ու աս իբրեւ սուր մը սիրտդ պիտոր անցնէր: Մեծ խոց եղաւ աս գթած սրտիդ, ու տրտմութեամբ քեզ լեցուց, որ երեսուն իրեք տարի միշտ կրեցիր: Այն ցաւագին մայր, ես ալ որչափ սուրեր խոթեր եմ քու սրտիդ, ու մեծագոյն ցաւերու պատճառ եղած եմ քեզի դէմ մեղք գործելովս: Բայց հիմա սրտանց ամէն բրածներուս վրայ կը զղջամ, ու կ'աղաչեմ՝ որ սիրելի որդւոյդ հետ իս հաշտեցրնես, որ Յիսուսը ըլլայ ինծի նշան կանգնելու, ու յաւիտենական փրկութեան հասնելու: Աս առջի խոցդ յիշելով սուրբ Տիրամայր, կը խնդրեմ

քեզմէ, որ ինձի խոնարհութեան
 ու համբերութեան շնորհք տաս,
 որ ամէն բանի մէջ իս Աստուծոյ
 կամացն համակերպելով՝ քեզի
 նմանող ըլլամ, ամէն :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ Մարիամ :

Երկրորդ ցաւ :

Ո՛վ վշտագին սուրբ Աստուա-
 ծածին, յիշէ երկրորդ քաշած
 ցաւդ, որ Հերովդեսին հալածու-
 մէն վախնալով՝ գիշերանց ելար
 Եգիպտոս փախար : Ի՛նչ խեղճ ու
 ծանր բան էր, որ նորածին որդիդ
 դիրկդ առած սուրբ Յովսեփին
 հետ՝ առանց պատրաստութեան
 լեռնէ լեռ ան երկար ճամբան
 կ'երթայիր : Ո՛վ տրամալից Աոյս,
 մեծ եղաւ իրաւցրնէ ցաւոցդ դառ-
 նութիւնը. բայց երանի՛ թէ, ես
 ալ նորէն քու սրտիդ տրամու-
 թեան պատճառ չըլլայի Յիսուսը

սրտիս մէջէն հալածելով: Արխոս-
տովանիմ ո՛վ սուրբ Տիրամայր, որ
չասանգամ շերովդեսէն վար
չեմ մնացեր, չար կիրքերս կատա-
րելով իբրեւ թէ Յիսուսին մեռ-
նիլը ուզեր եմ: Ա՛վ մայր ցաւա-
գին, շնորհք մը տո՛ւր ինձի այսօր,
որ ամէն արատներէն մաքրելով
սիրտս՝ քեզի ու քու սիրելի որդ-
ւոյդ բնակարան մը զարգարեմ, որ
իմ սրտիս մէջ մտնաք բնակիք ի
յաւիտեան, ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Աղջոյն քեզ Մարիամ:

Երրորդ ցաւ:

Ա՛վ տրտմալից մայր, ամենէն մեծ
եղաւ աս ցաւդ մայրական սրտիդ:
ինչու որ ուրիշ քաշած կսկիծնե-
րուդ ատենը սիրելի Յիսուսդ քու
միակ սրտիդ մխիթարութիւնը
միշտ հետդ էր, հիմակ ան կոր-
սընցընելով գրեթէ զքեզ ալ
դառն ցաւերու մէջ կորսնցուցիր:

Ի՛նչ ցաւագին օրեր եղան քեզի
ան իրեք օրը ո՛վ մայր վշտագին,
որ չորս դին ինկած անձկալի զա-
ւակդ կը փնտռէիր, գիշեր ցորեկ
անմխիթար լալէն չէիր դագրիր:
Ետքը տաճարին մէջ գտար, ու
ցաւած սրտով բացիր իրեն ներսի
խոցդ. ո՛վ որդեակ, ատ ի՛նչ բան
ըրիր դուն մեզի: Ա՛վ ցաւագնեալ
մայր, թող տո՛ւր, որ ես կանչեմ
ասանկ Յիսուսին ոտքն ինկած.
դուն քիչ մը ատեն Յիսուսին տե-
սութենէն զրկուեցար, բայց միշտ
սրտիդ մէջ կը կրէիր. իսկ ես մե-
ղանչելով բոլորովին Յիսուսը կոր-
սընցուցի, ու հոգիս խեղճ մնացեր
է: Ա՛խ մայր ողորմութեան, աս
երրորդ քաշած ցաւդ այսօր յի-
շելով կը պաղատիմ քեզի, ինձի
անանկ շնորհք մը տաս, որ ճշմար-
տապէս գտնամ իմ Յիսուսս, ու
մէյ մ՛ալ չկորսընցընեմ, ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Աղջոյն քեզ Մարիամ:

Չորրորդ ցաւ:

Մի մայր ցաւագին, ինչ սոսկալի
ցաւեր զգաց մայրական սիրտդ,
երբոր տեսար սիրելի որդիդ ան-
գութ թշնամեաց ձեռք ինկած, ի
մահ դատապարտուած, ողջ տեղ
մը չէր մնացեր բոլոր մարմնոյն
վրայ, գլուխը փշէ պսակ կապած՝
կոնակը մէկ ծանր խաչ բեռնա-
ւորեր էին, ու չուանով կապած
քաշկոտելով կը տանէին գողգո-
թա լեռը խաչելու: Թէ որ ուրիշ
կանանց սիրտը չգիմանալով անոր
խեղճ կերպարանքին կու լային
կ'ողբային. արդեօք քու խանդա-
կաթ սիրտդ ինչ մահաբեր ցաւեր
կրեց: Այս ցաւալից Մարիամ, մեղ-
քերս ալ Յիսուսին մեծ խաչ եղեր
են, ու ատ կսկծելի շարչարանք-
ներուն պատճառ. հիմա աս չորրորդ
ցաւդ յիշելով՝ համբերութեան
չնորհք կը խնդրեմ, որ ես ալ իմ
խաչս սիրով գրկեմ, ու Յիսուսին

Ետեւէն երթամ մինչեւ գողգոթա
լեռը. այսինքն՝ մինչեւ որ մեռնիմ:
Ո՛վ սուրբ Տիրամայր, տո՛ւր ինձի
վիրաւորուած սիրտ մը, որ հետդ
ցաւիմ, ու քեզի պէս խաչին տա-
կէն չհեռանամ, ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ Մարիամ:

Հինգերորդ ցաւ:

Ո՛վ մայր լի ամէն ցաւերով, ահա
խոցուեցաւ մայրական սիրտդ սի-
մէոնեան սրով, ու բոլորովին ցա-
ւերու մէջ ընկղմեցար, երբոր տե-
սար Աստուածորդիդ խաչին վրայ
իրեք անխնայ գամերէն կախուած,
ու ան կուսածին մարմինը արիւն-
ներու մէջ թաթխուած: Երկնի
եւ երկրի մէջ խաչուեր կեցեր, ու
մէկ գուժ շարժող մը չկայ. մար-
դիկ զինքը խաչեր են, Հայր Աս-
տուած ալ բոլորովին թող տուեր
է, միայն դուն ո՛վ վշտագին սուրբ

Աստուածածինն ամէն ցաւերն ալ
սրտիդ մէջ ժողվեր ես, խաչին
տակը կեցեր կ'այրիս կը տոչորիս
կենդանի: Ա՛խ մայր ցաւագին.
արեւը խաւարեցաւ, ու քարերը
չդիմացան. բայց քու կենացդ ա-
րեւը ինչպէս չիմթնցաւ, ու մայ-
րենի սիրտդ ինտոր քաշեց ատչափ
ցաւերը: Ա՛վ մայր, ոտքդ ինկած
կ'աղաչեմ՝ պատուէ իմ քար դար-
ձած սիրտս, ու լեցնուր դառն ցա-
ւերով, որ ես պատճառ եղայ մա-
հուանը Յիսուսին: Մի մայր, մի
գոցեր ինծի դէմ սրտիդ գուժը,
ինչու որ իս քեզի յանձնեց որդիդ
ու ցաւերովդ իս քեզի որդի ծնար.
դուն իս պաշտպանէ, ու քեզի ար-
ժանի որդի ըրէ:

Մայր մեր որ յերկինս:

Աղջոյն քեզ Մարիամ:

Վեցերորդ ցաւ:

Ո՛վ մայր ցաւագին, ինչ սաստիկ
ցաւ ունեցար, երբ որ մեռեալ որդ-
ւոյդ կողը տէգով զարկին՝ մին-
չեւ սիրտը պատուեցին. [Ժէպէտ
Յիսուսին սիրտը վիրաւորեցաւ, այլ
ցաւը քու սիրտդ անցաւ: Ո՛վ
անմխիթար մայր, նստէ ալ խաչին
տակը, գիրկդ ինչ մեռած մարմինը
սիրական որդւոյդ, գուցէ անով
սիրտդ պաղըշտկի. այլ ախո՛ս,
դարձեալ նոր ցաւերով սիրտդ
վիրաւորեցաւ: Յառաջ միայն տես-
նելով կը ցաւէիր, հիմա ձեռքով
անթիւ վէրքերը կը շօշափես,
պատուած սիրտը կը տեսնաս, ու
վիրաւորուած գլուխը ձեռքիդ վրայ
դրեր ես: Ասկից ալ աւելի ինչ
կսկիծ ու տանջանք կրնար ըլլալ
քեզի մայր սուրբ, որ շարունակ
մարտիրոսութիւն քաշես, ու կեն-
դանի մնաս: Ո՛վ մայր վշտագին,
մեծապէս կը ցաւիմ որ իմ մեղ-

քերս պատճառ եղան քու որդւոյդ
մահուանը, ու քեզի ասանկ խիստ
ցաւեր հասցուցին. ո՛վ Տիրամայր
սրտիս արտասուլաց շնորհք տուր,
որ քու ոտքիդ տակը լամ ողբամ,
ու արցունքներովս ցաւած սրտիդ
մխիթար ըլլամ, որ մեռած ատենս
դուն ալ իս մխիթարես. ամէն:

՛այր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ Մարիամ:

Եօթներորդ ցաւ:

Ո՛վ ցաւագին մայր, ո՛վ կրնայ
պատմել մայրենի սրտիդ ան ետքի
քաշած ցաւը, երբ մեռեալ որդիդ
գրկէդ առին՝ որ սուրբ գերեզմանը
դնեն. թէպէտ խիստ պատուաւոր
եղաւ թաղումը բայց անկից բաժ-
նուիլդ բոլորովին դառնութիւն
էր սրտիդ: Ամէն դիաց ցաւերով
լեցուեցար, ու բոլոր ցաւերուդ
անմխիթար ցաւ եղաւ ան տրտմա-
զին տեսիլը, երբ որ ետքի անգամ
նայեցար սիրական որդւոյդ, ու

աչքիդ առջեւէն ալ յաւիշտա-
 կելով՝ գերեզմանին գուռը գոցե-
 ցին: Ա՛խ ցաւագնեալ մայր, ո՛ւր է
 անգին գանձդ, ո՛ւր է սրտիդ մսի-
 թարուծիւնը, ո՛ւր է սիրելի որ-
 դիդ, ինտո՞ր բաժնեցիր սիրտդ
 քեզմէ. տրամուծեամբ գերեզմա-
 նին մօտ նստեր կու լաս. եւ ո՛վ
 կրնայ քեզ մսիթարել, որ երկնի
 եւ երկրի ցնծութիւնը քեզ անանկ
 սգոյ մէջ ընկրղմեր է: Ա՛վ մայր
 սուրբ, հիմա քու եօթը խոցդ առջիդ
 դնելով՝ ոտքդ ինկած կը խնդրեմ,
 Յիսուսին շարչարանաց ու քու
 ցաւոցդ համար ողորմիս մեղաւոր
 հոգւոյս, բոլոր ըրածներուս թո-
 դութիւն տաս: Յիսուսին մահը
 սրտիդ մէջ գուծ ձգէ վրաս, ու
 ցաւերդ դժօխքէն զիս փրկեն, ու
 բարեխօս ըլլան ինձի, որ աս աշ-
 խարհքս միշտ ցաւերդ յիշելով՝
 երկինքը քեզի հետ ուրախանամ:

Հայր մեր որ յերկինս:

Աղջոյն քեզ Մարիամ:

Ա Ղ Օ Թ Բ

Յ Ի Ս Ո Ի Ս Ի Հ Ի Ն Գ

Վ Է Բ Ք Ե Բ Ո Ի Ն

Չախ ոտքին վիրացը :

Խոնարհութեամբ գետինն ինկած
կը համբուրեմ՝ ոտից սրբազան
վէրքը ո՛վ ողորմած փրկիչ իմ .
ու կ'ազաչեմ քեզն՝ որ միջնորդու-
թեամբ սուրբ վէրքիդ ամէն մեղ-
քերուս թողութիւն տաս, որ մին-
չեւ հիմահինգ զգայարանքովս քե-
զի դէմ մեղանչեցի : Ո՛վ բարի Յի-
սուս, աս պատուական վիրացդ
համար պահէ իս ամէն փորձանք-
ներէն չար թշնամւոյն, որ ի քեզ
միայն կենդանի ըլլամ :

Ի պատիւ աս սուրբ վէրքիդ ո՛վ
Յիսուս՝ կը նուիրեմ քեզի ամէն
քաշած վշտերս ու նեղութիւններս
աս աշխրբքիս մէջ : Խառնէ տէր

իմ աս անարժան ընծաս քու դառն
խաչիդ ու չարչարանացդ հետը ու
չնորհք տո՛ւր ինձի, որ ամէն դըժ-
բախտութիւններուն սիրով տա-
նիմ, ու իս սուրբ կամացդ յանձ-
նեմ միշտ:

— այր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ Մարիամ:

Աջ ոտքին վիրացը:

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, քու
այջ ոտքիդ սրբազան վէրքին հա-
մար ան ամէն մեղքերուս ներումն
չնորհէ, որ իմ գարշելի մտածու-
թիւններովս քեզ վշտացուցի:
Գուն տէր իմ, ցաւագին փշեղէն
պսակիդ արդեամբը մտքիս երկ-
նային սուրբ մտածութիւններտո՛ւր,
ու հոգւոյն սրբոյ շնորհքովը իս
լեցո՛ւր. սուրբ ազգեցութիւններդ
վրայէս անպակաս ըրէ, որ ասկէց
ետքը միայն քեզի հաճոյ ըլլալու
ջանամ:

Ի պատիւ աս սուրբ վէրքիդ ո՛վ
փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, կ'ա-
ռաջագործեմ իբրեւ քու քու ձեռ-
քէդ ընդունիլ ամէն բան, թէ
յաջողութիւն եւ թէ ձախորդու-
թիւն, թէ բարեկամ եւ թէ
թշնամի: Գու տէր, քու հայրա-
կան նախախնամութեամբդ իս հո-
գա՛, ու մի թողուր՝ որ երբէք քեզ-
մէ բաժնուիմ:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ Մարիամ:

Չախ ձեռքին վիրացը:

Ողջ լեր ո՛վ վիրաւորեալ ձեռք
Յիսուսի, մեծագոյն փափաքով ու
սիրով կը համբուրեմ, ու քեզ
կ'օրհնեմ: Միջնորդութեամբ աս
սուրբ վէրքիդ կ'աղաչեմ տէր իմ,
որ ալ չյիշես մեղքերս՝ որ չար
կիրքերովս՝ անժուժկալութեամբս՝
ու բարկութեամբս հոգիս աղտե-
ղեցի: Ո՛վ սիրելի Յիսուս, քու ա-

մենազօր ձեռքդ դիր վրաս, ու իս
պահպանէ, որ կարող ըլլամ թշնա-
միներուս ձեռքէն խալըսիլ:

Ի պատիւ աս սրբազան վէրքիդ
ո՛վ ողորմած Յիսուս, սրտանց մե-
ղայ կը գոչեմ, ու կը զղջամ ամէն
շար գործքերուս վրայ: Գուն բա-
րերար տէր, քու անդին արեամբդ
լուս, ու մաքրէ հոգւոյս աղաոտու-
թիւնը, որ դատաստանին օրը ո-
ղորմութեանդ արժանի ըլլամ:

Հայր մեր որ յերկինս:

Ողջոյն քեզ Մարիամ:

Աջ ձեռքին վիրացր:

Ո՛վ ամենաբարի Յիսուս, սուրբ
ձեռքիդ վէրքը ըլլայ ինձի հայելի
մը, որուն մէջ տեսնամ իմ մեղա-
ցըս մեծութիւնն ու շատութիւնը,
անմխիթար լամ ու ցաւիմ: Ա՛խ
ողորմած տէր, խառնէ աս թափած
արցունքներուս հետ կաթիլ մը
վերաւորած ձեռքիդ արիւնէն, ու

ընդունէ աս նուէրս քուկին ար-
գարութեանդ ունեցած անթիւ
անհամար պարտքերուս տեղը: Չա-
նազան մեղքերով վիրաւորուած
հոգիս դուն կենդանարար վէրքե-
րովդ բժշկէ ու մաքրէ. ու զօրու-
թիւն տձւր հոգւոյս, որ միայն քու
սուրբ կամքդ կատարէ:

Ի պատիւ սրբազան վէրքիդ գը-
թած Յիսուս հաստատէ սրտիս մէ-
ջը քու սուրբ երկիւղդ ու աս-
տուածային ներկայութիւնդ, որ
միշտ բարի ապրիմ, ու առաքինու-
թեանց ետեւէ ըլլամ: Շնորհք ալ
տձւր՝ որ ամէն գործքս ի փառսքո
ընեմ:

Հայր մեր որ յերկինս:

Աղջոյն քեզ Մարիամ:

Յիսուսին կողին:

Ա՛խ վիրաւորուած կող Յիսուսի,
երբորկը գառնամ քեզի կը նայիմ,
իմ սիրելի փրկչիս կաթոգին սիր-

տը կը տեսնեմ, որ բոլորովին աս-
տուածային գթութեամբ ու սիրով
լեցուած՝ իմ կորսուած հոգիս
կ'ուզէ:

Ա՛յլ քաղցր սիրտ Յիսուսի, ա-
մենէն աւելի ցաւ եղած են քեզի
մեղքերս, ու անտանելի տրտմու-
թեան մէջ ձգեր են: Թշնամինե-
րէդ անգամ մը միայն վիրաւորե-
ցար. բայց իզմէ բիւր անգամ
խոցուեցար: Որչափ ալ անարժան
ըլլամ տէր քու շնորհացդ, միշտ
ցաւագին սիրտդ գթութիւն կ'ա-
ղաղակէ. հինգ սուրբ վէրքերդ
միջնորդ կ'ըլլան ինձի համար, քա-
շած ցաւերը ու թափած արիւն-
ները արդարութեանդ առջին կը
հանեն: Գութ շարժեն քեզ վրաս
քու սուրբ վէրքերդ. առ իս վի-
րաւոր սրտիդ մէջ, ու պահէ ամէն
թշնամիներէն. թող մի տար ա-
մենեւին, որ քեզմէ բաժնուիմ:

— այր մեր որ յերկինս:

Աղջոյն քեզ Մարիամ:

Աղօթք առ խաչելեալն Քրիստոս :

Տէրիմ Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, դուն ձեռուըներդ տարածեցիր խաչին վրայ, ու ինծի համար դառն չարչարանքներ քաշեցիր . կ'աղաչեմ ու կը պաղատիմ քեզի հիմա, օգնութիւն ըրէ ինծի : Քեզի կը դիմեմ տէր իբրեւ աղքատ մը մեծատունիդ, ողորմելիս ողորմածիդ, հիւանդս բժըշկիդ, անօթիս կենաց հացիդ, ու ծարաւիս առ աղբիւրդ կենդանութեան, որ ամենեւին չես ցամաքիր, իբրեւ արարած իր արարչին, ու վերջապէս իբրեւ խեղճ մեղաւոր մը իր բարերար փրկչին : Ո՛վ քաղցր Յիսուս, ես ինքիրմէս կըխոստովանիմ քու առջիդ իմ ըրած ամէն չարութիւններս : Անօրէնութեամբ յղացայ . եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ . իսկ դուն իս լուացիր ու սրբեցիր . ես դարձեալ մեղանչելով՝ նորէն աղտոտեցի քու ա-

րեամբդ լուացուած հոգիս. ու իբրեւ ապերախտ ու անշնորհք մարդու մը պէս՝ քեզմէ այնչափ բարիքներ ընդունելէն ետքը ելայ քեզ նորէն մեղօքս անարգեցի ու վշտացուցի :

Այլ դու գթած տէր, ողորմէ անարժան որդւոյդ, որ անչափ ցաւերով ու չարչարանքովդ ծնար ի կեանս: Մի նայիր մեղքերուս, որով քու բարութիւնդ ոտքի տակ առի. այլ յիշէ քու մեծ սէրդ, որով իս ստեղծեցիր: Ընդունելի ըլլայ քեզի աս աղաչանքս տէր իմ Յիսուս, գթած վրաս ողորմութեամբդ. ու մի դարձրնէր քու կին երեսդ իմ ցաւագնեալ հոգիէս. որովհետեւ ինձի համար չդարձուցիր սուրբ երեսդ զարնողներէն ու թքնողներէն:

Վիտեմ տէր որ մեղաւոր եմ, ու մեղօքս բիւր անգամ արժանի եղայ դժոխքին. թէ ես ինձմէն չեմ բաւական յանցանքներուս

Հատուցումն ընելու, իմ հատուցումն քու սուրբ արիւնդ է, ու քաղցր մարդասիրութիւնդ, որ բոլոր աշխրոքիս մեղքը քու անմեղ ուսիդ վրայ կը բառնաս: Դու տէր իմ, մի խնդրեր մեղաւորիս մահը. եւ մի ուրախանար անոր կորսուելուն. ինչու որ անոր համար մեռար, որպէս զի մեռածները կենդանացընես: Ո՛վ բարի Յիսուս, ո՛վ կրնայ անյոյս ըլլալ ու տարակուսիլ քու ողորմութեանդ վրայ, որ մեր ապերախտներուս համար մեռար, որպէս զի Աստուծոյ հետ դարձեալ հաշտեցընես: Թէ որ առանց իմ աղաչելուս վրաս ի դուժշարժեցար որչափ աւելի հիմա, որ մեծ կարօտով կը խնդրեմ ողորմութիւնդ:

Վիտեմ տէր իմ Յիսուս, որ խիստ ողորմած ես. ան դառն ցաւերուն մէջ խաչէն կախուած թշնամեացդ համար աղօթեցիր, դրախտին դուռն աւազակին բա-

ցիր, միայն ես պիտի զուրկ մնամ
քու ողորմութենէդ: Ախ տէր,
խաչիդ ոտքն ինկած լայով կ'աղա-
չեմ, ողորմէ ինձի, ու սուրբ չար-
չարանքներովդ հոգիս մխիթարէ,
ու ընդունէ ան երջանիկ աւազա-
կին պէս երկնից արքայութիւնը:

Երգ տետոն՝ Աերսեսի:

Նորոգող տիեզերաց՝ որ զգեցու-
ցեր մեզ լոյս փառաց. արկար ըզ-
քեւ ի զինուորաց՝ քղամիդ կար-
միր նախատանաց. մերկեա՛ յինէն
ըզքուրձ մեղաց՝ ըզտրտմագոյն ա-
րեամբ ներկած. եւ ըզգեցո՛ զու-
րախալին՝ ըզպատմութեանն իմ զա-
ռաջին:

Նրկնաւոր թագաւորիդ՝ ի ծու-
նրր իջեալ խաղ առնէին. ծած-
կեալ ըզգլուխրդ կռփէին՝ եւ ե-
զեգամբք հարկանէին. եւ զիմ ան-
կեալ մինչ ի գետին՝ ի հնազան-
դել կամաց չարին, մի թողուցուս

խաղալ սովին՝ այլ կանգնեացես զիս
վերըստին:

Բամեալ բոլորըդ քո մարմին՝
յետ վրճրոյ դատաւորին. սաստիկ
էառ զհարուած գանին՝ վասըն գա-
նից նախաստեղծին. զիս որ յոտից
մինչեւ ցըգլուխ՝ ցաւօք նեղիմ ան-
հրնարին. առողջացո՛ դարձեալ
կրկին՝ որպէս շնորհօք աւազանին:

Արբափայլ պճնեալ զարդուն՝
զոր զգեցուցեր Ահարովին. փո-
խան պրսակ ի փշոց եդին՝ մշակք
այգւոյն Իսրայելին. ըզփուշ մե-
ղաց հանցես յինէն՝ զոր յիս եհար
իմ թշնամին. եւ ողջացո՛ զխայ-
թուած վիրին՝ զի սպիք մեղացըն
ջընջեսցին:

Ետուն ըմպել քեզ ըզլեզին՝
եւ զքացախն ի ծարաւին. արբեր
կամաւ զի քաղցրասցին՝ ճաշակք
պտղոյ դառնագունին. ըզդառնու-
թիւն թունաւորին՝ զոր ի մասունս
հոգւոյս արկին. հերքեա՛ ի բաց

Հանդերձ սովին՝ եւ քաղցրասցի
տէր քո ի սմին:

Ստեղնեալ ծառոյ մահաբերին՝
այն որ բուսաւ ի մէջ դրախտին,
փոխան բարձեր ըզփայտ խաչին՝ ի
գողգոթա հաներ տեղին, զիմ առ
ի մեղս անկեալ զոգի՝ եւ ծանրա-
գոյն բարձօղ բեռին, բարձ ի յու-
սիգ ըստ ոչխարին՝ հան ի յերկինս
յուխտեալ տեղին:

Ի յուրբաթու ժամ երրորդին՝
բեւեռեցար տէր ի խաչին, լուծեր
զյանցանս նախաստեղծին՝ եւ կա-
պեցեր ըզթրշնամին, զիս ամրացո՞
ընդ հովանեաւ կենդանարար քո
նըշանին, եւ ի ծագելն յարեւելից
լուսաւորեա՛ լուսով նորին:

Արանեալ աւազակին՝ բացեր
ըզդուռն ադին դրախտին, ըստ հա-
ւատոյ սրտի նորին՝ կատարեցեր
ըզխնդրելին, տուր եւ ինձ տէր
ընդ նրմին՝ լըսել ըզնոյն պատաս-
խանին, այսօր ընդ իս իցես յա-
դին՝ ի հայրենիս քո առաջին:

Նարբառելով զէլի էլին՝ հիմունք երկրի տատանէին. եւ վարագոյր հին օրինին՝ վերուստ ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին՝ շարժեալ զանշարժ սիրտըս ի բարին. ընդ պատառիլ վարագուրին՝ զիմ պատառեալ ըզգիր պարտին:

Մրեգական լոյս քօղ արկեալ՝ խաւարանայր միջօրէին. եւ գերեզմանըք բանային՝ մարմինք սրբբոցըն յառնէին. ընդ խաւարիլ լուսաւորացն՝ մաքրեալ յինէն զգործ խաւարին. ընդ մեռելոցն որք յառնէին՝ կանգնեալ զմեղօք մեռեալ հոգիս:

Սոր սիրոյ պատուիրանին՝ գործով լըցող եղեր բանին. աղօթելով առ հայր յերկին՝ թողուլ ըզմեղս որ ի խաչին. ինձ որ հոգւովս հաւատացեալ՝ երկրպագեմ քեզ միածին. թող ըզլուծումըն հրամանին՝ մի յիշեսցեն մեղքն առաջին:

Սարսեցին սանդարամետք՝ ի յա-
 ւանդելն առ հայր զհոգիդ: որ ի
 դրժոխս իջեր ներքին՝ ի բանտ մա-
 հու եւ խաւարին. կապեալ զիշ-
 խանըն մահածին՝ հաներ զհոգիսն
 որ ի բանտին. եւ զիս հանցես տէր
 ընդ նոսին՝ բանտէ մեղաց աղջա-
 մրղջին:

Մղբերացն անապական՝ որ յես
 մահուն անմահարար. բղխեալ ի
 քէն վըտակ կրկին՝ ի նորոգումըն
 կողածնին. բաց ըզբերան իմ յար-
 բուցումըն քո արեան կենարարին.
 լուս գարձեալ յաւազանին՝ թէ ոչ
 շնորհօք այլ արտասուօք:

Յանմահիդ մեռանելոյ՝ զմեռեալ
 հոգիս կենդանացո՛. թաղմամբ ի
 նոր գերեզմանի՝ զթաղեալս ի մե-
 ղըս վերածեա՛. ի գբի ներքնումն
 իջանելով՝ ի գբոյ մեղաց վերաբե-
 րեա՛. ի ստուեր մահու բնակելով
 լուսաւորեա՛ եւ զիս հոգւով:

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ՛
 բանդ որ ընդ հօր ի սկզբանէ. որ

կամաւոր վասըն մարդկան՝ կրեցեր
մարմնով զայս ամենայն. ինձ լսելի
արա՛ ըզձայն՝ յարքայութեանըդ
քո կոչման. ընդ ժողովոց անդ
անդրանկացն՝ օրհնել ըզքեզ միշտ
յաւիտեան:

Աղօթք առ Յիսուս:

Տէր Յիսուս Քրիստոս, որ ինձի
համար խաչին վրայ մեռար, քու
գթած ձեռքդ կը յանձնեմ հիմա
ու մահուանս ժամը իմ խեղճ հո-
գիս: Չիյտեմ տէր, երբ պիտի իս-
քեզի կանչես, երբ պիտի ազատես
հոգիս աս մահկանացու կենաց,
միայն յոյս ունիմ որ շնորհաց մէջ
գտնուիմ:

Աը դողամ տէր, երբոր անհա-
մար մեղքերս միտքս կու գան,
քուկին արդար դատաստանդ կը
մտածեմ. բայց քու ողորմութիւնդ
անչափ է, անոր համար սուրբ վեր-
քերդ, անգին արիւնդ, պատուա-

կան խաչդ ու մահդ միշտ հոգւոյս
մխիթար ու օգնական ըլլան:
Ո՛վ գթած Յիսուս, երբոր հոգիս
մահուան դուռը կը հասնի, ու ա-
մենէն անօգնական կը մնայ. երբոր
թշուառ մարմինէս կը բաժնուի,
կ'աղաչեմ քեզի Յիսուս, դուն ըն-
դունէ հոգիս, ու թող մի տարոր՝
յաւիտեանս կորսուիմ, որ քու ա-
րեամբդ փրկեցիր:

Սաղմոս:

- Ե քեզ տէր յուսացայ, մի ամա-
չեցից յաւիտեան:
- Դու ես պաշտպան իմ տէր. եւ ի
ձեռս քո յանձն առնեմ զհո-
գի իմ:
- Ընձն իմ նովաւ կեայ. եւ զաւակ
իմ ծառայեցցէ նմա:
- Քեզ սաղմոս ասացից Աստուած
ապաւէն իմ Աստուած ողոր-
մութեան իմոյ:

Հարական :

Յոյս իմ ի մանկութենէ իմմէ . մի
թողուր զիս տէր Աստուած իմ :
Յոյս իմ ի ժամանակի ծերութեան
իմոյ . մի թողուր զիս տէր Աստուած
իմ : Յոյս իմ ի միւսանգամ գալըս-
տեանն քո . մի անտես առներ զիս :

Աղօթք բարի մահ խնդրելու սուրբ
Աստուածածնէն :

ՄՎ քաղցրագութ մայր Յիսուսի
կոյս Մարիամ , օգնական ու պաշտ-
պան անճարակ մեղաւորներուն լի
գթութեամբ եւ ողորմութեամբ .
անուշ աչքովդ նայէ ողորմելոյս
վրայ . հասիր ինձի օգնութիւն՝ քա-
նի որ մահս չէ եկեր մօտեցեր իմ
քովս , որ չըլլայ թէ յանկարծակի
ու առանց պատրաստութեան ել-
լեմ աշխրդքէ : Աղաչեմ քեզի
մայր ողորմութեան՝ Յիսուսին քա-
շած չարչարանքներուն ու մահուան

սիրոյն համար, պահէ ու խնամէ
 իս, որ հիմակուրնէ հեռանամ մեղ-
 քէ, փախչելով սատանայէն ու իր
 ամէն չար գործքէն. ճշմարիտ զըղ-
 ջմամբ՝ կատարեալ խոստովանու-
 թեամբ՝ ու արժանաւոր ապաշխա-
 րութեամբ հաշտուիմ Յիսուսին
 հետ: Աղորմէ ինձի երանուհի մայր
 Աստուծոյ՝ ան սոսկալի ատենը մեռ-
 նելուս օրը, երբ որ շունչս բռնուի,
 ու լեզուս կապուելով չիկրնամ
 աղաչել քեզի. աչուրներս մթըն-
 նան, ու ականջներս խուլնան, ան
 ատենը մի մոռնար իս մայր անա-
 րատ, այլ միտքդ բեր հիմակուան
 աղաչանքս որ կ'ընեմ քու մայրա-
 կան գթութեանդ. ու հասիր ին-
 ձի օգնութիւն. որպէս զի խալը-
 սիմ սատանային փորձանքներէն.
 ու անուշ մահուամբ քու ձեռքդ
 աւանդելով իմ հոգիս, արժանի
 ըլլամ արքայութեան ու մասնա-
 կցութեան սիրելի ծառաներուդ, որ

քեզի հետ կը վայելեն զԱստուած
յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք սրտին Յիսուսի:

Տէր Յիսուս Քրիստոս, ո՛վ կրնայ
պատմել քու սրտիդ քաղցրու-
թիւնը ու մեծագոյն սէրը մեր վրայ
որ իբրեւ ողորմութեան աղբիւր
մը բացիր մեզի սիրտդ, որ ամէնք-
նիս ալ հոն դիմենք, ու շնորհք-
ներով լեցուինք: Ո՛վ քաղցր սիրտ
Յիսուսի, որչափ ուրախութիւն է
քեզի, երբոր աշխարհասէր սիրտ
մը քեզի դարձած կը տեսնես, ու
քու սրտիդ ապաւինած:

Ո՛վ աստուածային սիրտ Յի-
սուսի, ծարաւի է հոգիս քեզի,
ու մեծ փափաքով քեզ կը փրն-
արուէ: Աւուէ, բորբոքէ սիրտս քու
սուրբ սիրովդ, որ քեզմէ ուրիշը
չսիրէ: Ո՛վ գթած սիրտ փրկչին
իմոյ, թէպէտ շատ անգամ քեզ
թողուցի, ու գացի աշխրաբիս ու-

նայն քաներուն հետ սիրտս կա-
պեցի. ա՛խ, հիմա մեծ ցաւ է ինձի,
լալով կը պաղատիմ ո՛վ քաղցր
Յիսուս, ընդունէ իս նորէն սրտիդ
մէջ, ու պահէ՛ որ ալ քեզմէ չհե-
ռանամ: Տես տէր վիրաւորուած
սիրտդ բացեր ինձի կը սպասես,
ու անուշ ձայնով իս քեզի կը
կանչես. մեղօք բեռնաւորուած
հոգիս քու կին սրտիդ մէջ հանգ-
չեցընել կ'ուզես: Ա՛վ ողորմած
Յիսուս իմ, ահա սիրտս բոլորո-
վին քեզի կու տամ. ա՛ռ ու սուրբ
սրտիդ հետ մէկ ըրէ, որ միշտ ի
քեզ կենդանի ըլլամ, ամէն:

Պատրաստութիւն մահուան:

Ա՛վ տէր իմ Յիսուս, քանի որ
զգայարանքներս ողջ են, ու միտքս
վրաս է, հիմակուրնէ հոգիս քեզի
կը յանձնեմ. ու ան ատենն ընե-
լու աղաչանքներս սուրբ խաչիդ
ոտքն ինկած լալով քեզի կը մա-

տուցանեմ: Ար խոստովանիմ տէր,
որ մեղաւոր եմ, շատ անգամ քեզ
վշտացուցած եմ. բայց մեծ յոյս
ալ ունիմ՝ որ դուն ես իմ գթած
փրկիչս, որ իմ փրկութեանս հա-
մար խաչին վրայ մեռար:

Արբոր տէր անցած կեանքս կը
մտածեմ. չիյտեմ, թէ ինչ երե-
սով քու առջիգ պիտի երեւամ.
ու ինչ պատասխան պիտի տամ
քեզի: Ա՛հ տէր, գետինն ինկած
կ'աղաչեմ, մի խնդրեր մեղաւորիս
մահը, այլ քու ողորմութեամբդ
ջնջէ ամէն մեղքերս: Մանաւանդ
օգնէ ինձի ան անմխիթար ժամը,
երբոր մեռելի մը պէս ամէն զգայ-
ութիւններս պիտի դադրին. լե-
զուս գոցուած կարող պիտի չըլ-
լամ քեզի աղաչել. աչուրներուս
լոյսը պակսելով՝ չկարենամ պիտ-
որ սուրբ խաչիդ նայիլ: Մօտ
եղիր ան ատենը բարի Յիսուս, ու
քուկին արեամբդ փրկած հոգիս
մի տար սատանային ձեռքը: Երեւ-

նանքու առջիդ իմ աղօթքներս,
երկնցո՛ւր վրաս բարերար ձեռքդ.
ու վեր հանէ աս ողորմելի աշխար-
քէս, որ կախուելով խաչէն՝ խոս-
տացար իս քեզի ընդունելու:

Դուն ողորմած տէր տո՛ւր ու-
րախօթիւն աչուրներուս որ չնայ-
ին դարձեալ իմ մեղքերուս. ա-
զատէ իս քու անուանդ փառացը
համար: Յըցո՛ւր ինձի քու բարու-
թիւնդ որ միշտ բնակիմ քու տանդ
մէջ երկնից արքայութիւնը, ու հոն
օրհնեմ զքեզ յաւիտեանս, ամէն:

Այլ աղօթք առ Յիսուս:

Աղորմած փրկիչ իմ Յիսուս քրիս-
տոս, որ քու պատուական արեամբդ
իս երկնից արքայութեան որդի
գրեցիր, թող մի տար իս, որ աշ-
խարհիս ունայնութեանցը մտիկ ը-
նելով՝ քեզմէ բաժնուիմ: Յիշէ
տէր իմ ինձի համար քաշած ցա-
ւերըդ ու ըրած հառաչանքերդ

ան դառն խաչին վրայ, ու օգնէ
ինձի ան ետքի ներդուժեան ատենս.
Քու սուրբ չարչարանքներդ երկ-
նաւոր հօրդ առջին դնելով՝ մեղ-
քերուս թողուժիւն ընդունէ:

Այս տէր իմ, կ'աղաչեմ՝ քեզի
լալագին. աս Յիսուս անուշ անունը
բերնիս ետքի խօսքն ըլլայ. քու
սրբազան մարմինդ խեղճ հոգւոյս
կերակուր ըլլայ. քուկին ըրած
հառաչանքներդ իմ ետքի ակարս
ըլլան. քու անուշ նայուածքդ իմ
ետքի տեսուժիւնս ըլլայ, ու քու
վերաւորուած ձեռուրներդ ինձի
օգնական ըլլան, ու իս յաւիտե-
նական դատապարտութենէ խա-
լըսեն: Ո՛վ բարի Յիսուս, դուն
առաջնորդէ ինձի երկնից արքայ-
ութիւնը, ու կենաց ճամբան ցը-
ցուր ինձի. ահա քեզի կու գամ,
որ յաւիտեանս քեզի հետ ըլլամ:

Խաչեցեալ տէր իմ, ահա իմ
կեանքս ու մահս քեզի կը յանձ-
նեմ, ընկալ զիս, ու օգնութիւնդ

վրայէս պակաս մի ըներ: Աղաչեմ
քաղցր Յիսուս փրկիչ իմ, մեռած
ատենս միսիթարական ձայնդ լսե-
լու արժանի ըրէ: Այսօր ընդ ի՞նչ
ցե՞ս ի դրահարին:

Սաղմոս:

Լուիցէ քեզ տէր յաւուր անձ-
կութեան. օգնական եղիցի
քեզ անունն Աստուծոյ Յա-
կովբայ:

Լուաքեսցէ տէր զօգնութիւն ի
սրբութենէ իւրմէ. եւ ի Սիոնէ
ընկալցի զքեզ:

Յիշեսցէ տէր զամենայն պատա-
րագս քո, եւ զուխտս քո ըն-
դունելի արասցէ:

Տացէ քեզ տէր ըստ սրտի քում.
եւ զամենայն խնդրուածս քո
կատարեսցէ:

Յուսացաւ ի տէր՝ եւ փրկեսցէ
զնա. զի կամի զնա:

Մտտուած՝ զկեանս իմ պատմեցից
քեզ, եդից զարտասուս իմ
առաջի քո. որպէս խոստա-
ցար դու ինձ:

Դարձցին թշնամիք իմ յետս
իւրեանց. յաւուր յորում
կարդացից առ քեզ:

Աղօթք հիւանդներու համար:

Մի գթած եւ բարեգութ տէր
իմ, որ քու սիրելի որդիքներդ աս
աշխրոքիս մէջ փորձելու համար
անոնց զանազան խաչեր կը խրկես.
որպէս զի մեր սիրտն աս խաբեբայ
աշխրոքիս հետ չկապուի: Ես ալ
հիմակ որ այսպիսի ծանր հիւան-
դութեան մէջ կը նեղիմ, իմ
կամքս քու ամենասուրբ կամացդ
հետ կը միտքանեմ. ու սրտանց կը
խնդրեմ քեզմէ, որ աս խաչին
հետ խրկես միանգամայն համբե-
րութեան շնորհք ալ, որ քաշած
նեղութիւնս անհամբերութեամբ

անպտուղ չըլլայ: Գիտեմ որ աս
աշխարհիս մէջ նեղութիւն ունե-
նալը իբրեւ թէ նշան մըն է քեզի
սիրելի ըլլալու, փրկարար միջոց
մըն է մեր մեղքերը աս աշխարհիս
մէջ քաւելու. որոնք որ անգիի
աշխարհք երկայն ատեն ծանր
ծանր տանջանքով հազիւ պիտի
կարող ըլլայինք քաւել: Անոր
համար ես ալ կ'աղաղակեմ Գաւիթ
մարգարէին հետ. Պատրաստ է սիրտ
իմ, Աստուած իմ, պատրաստ է
սիրտ իմ: Իմ բոլոր յոյսս ու մխի-
թարութիւնս ան է, որ քու ամե-
նասուրբ կամքդ իմ վրաս կա-
տարուի:

Թէպէտ տէր իմ հոգիս յօժար
է քու ամենաբարի կամքդ փառա-
ւորելու. բայց տկար մարմինս կը
համարձակի առջեւդ քու միած-
նիդ աղօթքը քեզի կրկնելու, որն-
որ գեթ սեմանի պարտէզը արեան
քրտինք թափելով ըրաւ: Հայր
երկնաւոր, կ'ուզես նէ՛ անցնի իզ-

մէ աս բաժակը : Ա՛ռ զես նէ՛ ողոր-
մէ՛ չդիմանալու ցաւերուս, դադ-
րեցո՛ւր սաստիկ կսկիծը. ինչու որ
չատ դիւրին բան մըն է քեզի իմ
Տիւանդուծիւնս առողջացընել :
Բայց չըլլայ թէ իմ կամքս ընես,
հապա ինչ որ է քու կամքդ՝ ան
ըլլայ, որ ինձի ալ միանգամայն
ստուգիւ օգտակար է : Գուն աղէկ
գիտես որն է ինձի ու յաւիտե-
նական փրկուծեանս օգտակարը .
իմ մտածածս ու ուզածս շատ
հեղ թէ հոգւոյս եւ թէ մարմնոյս
փնասակար է : Անոր համար ո՛վ
արարիչ իմ բազմագուծ, ես կը
հնազանդիմ բոլորովին քու կա-
մացդ. ու կ'աղաչեմ, որ աւելի իս
աշխրոքիս մէջ պատժես զանազան
Տիւանդուծեամբ եւ ուրիշ խա-
չերով, քան թէ հոս տեղս խնայե-
լով՝ անդիի աշխարհք արդարու-
ծեամբ իս դատես :

Սարգմնոս :

Ողորմեան հնձ տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեան զանձն իմ, զի
խռովեցան ոսկերք իմ :

Թոյլ արա հնձ զի հանգեայց. մին-
չեւ երթեալ իցեմ. ուստի
ոչ գտանիցիմ :

Գու ես համբերութիւն իմ տէր՝
տէր յոյս իմ ի մանկութենէ
իմմէ :

Շարական :

Ես ասացի տէր ողորմեան հոգւոյ
իմոյ բազմամեղի. որ բնակեալդ ես
ի յերկինս եւ յանմարմնոց փա-
ռաբանիս. յիս մարդասիրեան բազ-
մագութ փրկիչ եւ փարատեցո՞
ղցաւս անձին իմոյ :

Խօսք ի դիմաց հիւանդին ի խորոց
սրտէ ընդ Յիսուսի:

Ո՛վ անուշ փրկիչս, որ ձիթ ենեաց
լերան վրայ հոգեվարի քրտինք
քրտնեցար, ինծի ալ ողորմէ. ու
ինչպէս որ քեզի համար երկինքէն
հրեշտակ ինչեցուցիր քեզ զօրա-
ցընելու համար. անանկ ինծի ալ
վերէն երկինքէն ղօրութիւն ու
մխիթարութիւն խրկէ, որ աս նե-
ղութեան կարող ըլլամ դիմանալ
ու իս քու ամենասուրբ կամացդ
յանձնեմ:

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, գիտեմ,
որ աս արտաքին մարմնական նե-
ղութիւնները ներքին իմ հոգիս
մաքրելու համար կը խրկես. պատ-
րաստ եմ յօժար սրտով քու սի-
րոյդ համար աս նեղութիւնը տա-
նելու: Միայն ինծի դիմանալու
ուժ տո՛ւր, որ աս հիւանդութիւնս
ի փառս քո քաշեմ, ու արքայու-
թեանդ արժանի ըլլամ:

Ար գոհանամ քեզմէ մարդա-
սէր Յիսուս, որ ինձի յանկարծա-
կան մահ չիտրկեցիր. հապտանանկ
հիւանդութիւն մը տուիր, որ
պատրաստութիւն տեսնելու ատեն
ունեցայ: Շնորհակալ կ'ըլլամ մե-
ծապէս, ու կը նուիրեմ քեզի բո-
լոր քաշածներս. ու կ'աղաչեմ՝ որ
ջնջես իմ ամէն չար գործքերս,
որոնք աստուածային աչացդ հաճոյ
չեն, ու հոգիս քու անգին արդեամբ
բըդ զարդարես:

Ար գոհանամ քեզմէ ո՛վ փրո-
կիչ իմ, որ իսարժանի ըրիր հիւան-
դութեան ցաւեր քաշելով քե-
զի նմանելու: Գուն անմեղ գառն
էիր, ու քեզի պէտք եղաւ՝ որ ա-
ռաջ չարչարուիս, ու այնպէս ար-
քայութիւն մտնես. իսկ ես՝ որ մե-
ղաւոր եմ, ու զԱստուած շատ
հեղ բարկացուցեր եմ, ինչպէս
առանց նեղութիւն մը քաշելու
երկնից արքայութիւն կրնամ
մտնել:

Տէր իմ, քու բարութիւնդ յաւիտեանս կ'օրհնեմ. ինչու որ պղտիկութենէս սկսեալ այնչափ բարիք ընդունած եմ քու բարերար ձեռքէդ. հիմակ աս հիւանդութեան ցաւերուս համար ինչպէս կրնամ տրտունջ ունենայ: Քուկին ձեռքէդ կ'ելլէ հիւանդութիւնն ու առողջութիւնը. դուն տուիր, ու դուն առիր. քու կամքդ օրհնեալ ըլլայ:

Ուժ տուր ինծի տէր իմ, աս դժուարին ու դառն ատենս. զօրացուր հաւատքս, յոյսս ու սէրս. ինչու որ որչափ ցաւերս կը սաստկանան, այնչափ ալ ուժս կը պակասի: Ո՛վ արարիչ իմ, քու ստեղծուածդ երեսէ մի ձգեր, ինչու որ դուն ես մինակ իմ զօրութիւնս ու մխիթարութիւնս:

Բաց ինծի տէր իմ, քուկին դառն չարչարանաց եւ մահուան գանձը, որ անով հոգիս մխիթարութիւն գտնէ. արժանի ըրէ իս

ապաշխարութեան շնորհքին, որ հոգւոյս արատները մաքրուին, ու արժանապէս ընդունիմ վերջին թողակը, քու ամենասուրբ մարմինդ ու արիւնդ: Քու սուրբ ներկայութիւնդ իմ հոգւոյս ամէն թշնամիները փախցընէ, ու անոնց փորձութիւնները՝ որ սաստիկ իսկը չարչարեն՝ բոլորովին վրայէս փարատէ:

Ո՛վ քաղցր Յիսուս, զօրացճուր իմ անկատար սէրս, որպէս զի թէ՛ առողջութեան՝ ու թէ՛ հիւանդութեան ատենը միշտ քեզ ամէն բանէն աւելի սիրեմ. ինչու որ դուն ես մինակ սիրոյ արժանի, ու դուն իս սիրելէդ մարդ եղար, ու խաչին վրայ մեռար: Լսէ հիմակուան իմ սրտիս հառաչանքը, ու իս աս ետքիդ առն ատենս թող մի տար:

Ո՛վ հինգ վերք Յիսուսի մահացելոյ, թափեցէք ձեր փրկարար արիւնը իմ հոգւոյս ու իմ հինգ

զգայարանացս վրայ, որ անով կատարելապէս մաքրուիմ ու զօրանամ, ու անոր ուժովը աս ետքի պատերազմիս ատենը թշնամիներուս յաղթեմ, ու յաղթութեան պսակը Աստուծոյ ձեռքէն առնում, ամէն:

Աղօթք հոգեվարքներու համար:

Տէր Յիսուս, տես, որ կենացս իրիկունը մօտ է, մեր քովը կեցիր ո՞վ լոյս տիեզերաց, որ կենդանի ճառագայթ ես հօրն յաւիտենականի. վշտացածներուն մսիթարութիւն, մահուան մօտիկ եղողներուն զօրութիւն, ու մեղաւորներուն փրկիչ:

Օգգէ մտքիս մէջ շնորհաց լոյսը, ու հոգւոյն սրբոյ հրովը սիրտս վառէ: Ար հրաժարիմ ամէն չար խորհուրդներէն, ամէն մեղքերէն, ու ամէն բանէն, որնոր քու հաճութեանդ դէմ է:

Թող մի տար փրկիչ իմ, լոյս իմ, եւ զօրութիւն իմ, որ սատանայական փորձութիւնները ու մութ եւ յուսահատական խորհուրդները իմ մտքիս մէջ տեղ ընեն, ու իս շփոթութեան մէջ ձգեն աս վերջին ու դժուարին ատենս. հոգիս որնոր քու պատուական արեանդ գինն է՝ յաւիտենական կորստեան վտանգի մէջ իյնայ:

Մի մահկանացու մարմին, գիտեմ որ հող պիտի դառնաս, ուսկից որ ստեղծուեցար. գիտեմ որ փրկիչս կենդանի է, ու ետքի յարութեան օրը իս պիտի դարձեալ յարուցանէ: Ան ատենաս մարմինս իմ Աստուածս ու արարիչս պիտի տեսնէ:

Աստուած իմ, քու կդ է իմ հոգիս, քեզի կենդանի է յաւիտեան. քու մահաբեր վէրքերդ իմ հոգիս զօրացրնէ, քու ամենազօր կարողութիւնդ անոր հովանի ըլլայ. որ-

պէս զի աս ետքի դժուարին պատերազմի ատենս չար թշնամւոյն խաբէութենէ ապահով ըլլայ, ու անոր բոլոր ճիգը պարապ հանէ քուկին ամենայաղթ ու ամենազօր սուրբ խաչիդ օգնականութեամբը:

Վի խաչեցեալ փրկիչ իմ, քու չպատմուելու քաշած ցաւերուդ համար՝ որնոր զգացիր, երբ որ սուրբ հոգիդ անմեղ մարմինէդ բաժնուեցաւ ազատէ իս աս ժամուս ամէն պատիժներէն ու տանջանքներէն, որոնց որ իմ մեղացս համար արժանի եմ:

Վի քաղցր փրկիչ իմ, ան սիրոյն համար, որնոր պատճառ եղաւ քեզի բոլոր չարչարանացդ ատեն այնչափ սաստիկ կսկիծներ քաշելու, արձրկէ իս մարմնոյս կապէն. ընդունէ իմ հոգիս, ու երկնային ուրախութիւնը մտցուր: Բայց յաւիտենական կենաց դռները, որպէս զի սուրբերուն հետ միշտ արժանի ըլլամ ուրախանալ:

Ես կը բաղձամ հոգիս աւանդել, ինչու որ ատ է քու ամենասուրբ կամքդ: Կը բաղձամ աշխրոքէս ելլել, որպէս զի կարող չըլլամ ալ քեզ մեղօք վշտացընել, ու միշտ հարկաւ քեզ սիրեմ: Ե՞րբ պիտի ըլլայ, որ քեզ իմ արարիչս երեսանց տեսնելու ու սիրելու արժանի պիտի ըլլամ:

Արդ արձակեա՛ւ զծառայ քո ի խաղաղութիւն. եւ մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում: Յիսուս փրկիչ աշխարհի, ողորմէ ինձի, ու իս ալ հոն տա՛ր, ուր դուն առաջուց գացիր մեզի տեղ պատրաստելու համար, ու խոստացար որ դարձեալ կու գաս մեզ տանելու համար:

Ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Թէպէտ անարժան եմ քու աստուածային դէմքդ տեսնելու, բայց յոյս ունիմ որ քու անսահման ողորմութիւնդ ինձի կատարեալ թողութիւն պիտի տայ: Ո-

զորմէ ինծի ո՛վ Յիսուս, ու զօրու-
թիւն տո՛ւր ինծի, որ կարող ըլ-
լամ մինչեւ ետքի շունչիս տուր-
եւառութեան ատենը՝ քու սուրբ
քաղցր անունդ յիշել, ամէն:

Սաղմոս:

Մերձեցաւ անձն իմ ի հող, տէր
կեցո՛ զիս ըստ բանի քում:

Երի տէր Աստուած իմ. բարձր
եղիցի ձեռն քո. եւ մի մո-
ռանար զտնանկս:

Տեսանես դու զնա. ի սրամտու-
թիւնս հայիս. մատնել զնո-
սա ի ձեռս քո. ի քեզ թո-
ղեալ է աղքատն, եւ որբոյն
դու ես օգնական:

Յիշեա՛ տէր զգթութիւնս քո՝ եւ
զողորմութիւնս քո՝ որ ե՛նն
յաւիտենից:

Օ մեղս մանկութեան եւ զանգի-
տութեան իմոյ մի յիշեր. այլ
յիշեա՛ զիս տէր ըստ ողորմու-

Թեան քում, վասն քաղցրու-
Թեան քո. զի քաղցր եւ ու
ղիղ ես տէր:

ՄՆա չափով եղեր զաւուրս իմ.
եւ կար զօրութեան իմոյ որ-
պէս ոչինչ է առաջի իմ. սա-
կայն ամենեւին ընդունայն է
ամենայն մարդ մտեղի:

Պանդուխտ եմ ես առաջի քո.
նժդեհ եւ անցաւոր որպէս
ամենայն հարք իմ:

Թոյլ արս ինձ, զի հանգեայց,
մինչչեւ երթեալ իցեմ, ուս-
տի ոչ եւս գտանիցիմ:

Մեղութիւնք սրտի իմոյ բազում
եղեն յոյժ. եւ ի վշտաց իմոց
հան զիս:

Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն
իմ, թէ ոչ դու տէր. կամ
կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ
ի քէն:

Մայեաց առ իս, եւ ողորմեա՛ ինձ
զի միամօր եւ աղքատ եմ ես

Գարձ անձն իմ ի հանգիստ քո.
ղի տէր օգնեաց քեզ :

Գու ես պաշտպան իմ տէր եւ ի
ձեռս քո յանձն առնեմ զհո-
գի իմ :

Հարական :

Դամանակ դարձի իմոյ եհաս ի
յերկիր. արդ տէր ընկալ զծառայս
քո. եւ հոգի քո բարի առաջնոր-
դեսցէ ինձ ի յերկիր ուղիղ : Խոս-
տովանող հոգիս. որ ելից զունայ-
նութեան ընթացս աշխարհի. արդ
տէր ընկալ զծառայս քո. եւ հոգի
քո բարի առաջնորդեսցէ ինձ ի
յերկիր ուղիղ : Ի վերջնումս աւուր՝
յորժամ առնես զայցելութիւն
քոյոց սիրողաց. յայնժամ ինայեւ
ի ծառայս քո. եւ հոգի քո բարի ա-
ռաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ :

Այլ աղօթք :

Ո՛վ Յիսուս Քրիստոս, որ մեր
փրկութեան համար խաչին վրայ
կախուեցար, ու ան ետքի հոգե-

վարքութեան ատենդ ցաւագին
սրտով երկնաւոր հօրդ աղաղա-
կեցիր. ահա մենք ալ գետինն ին-
կած լալով քեզի կը կանչենք ո՛վ
գթած Յիսուս, ողորմէ աս հոգ-
ւոյս, որ քեզի գալ կը փափագի:
Մի յիշեր տէր մարդկային տկա-
րութեամբ ըրած մեղքերը, այլ
յիշէ քու անհուն գթութիւնդ,
ամենասուրբ կոյս Աստուածածնայ
ու սրբոց բարեխօսութիւնը ասոր
համար: Նայէ տէր իր թափածար-
տասուաց, տես իր սրտին զզջումը.
խրկէ երկինքէն սուրբ հրեշտակներ
ըր, որ զինքը զօրացընեն, ու հո-
գին առնուն արքայութիւն տանին:
Ո՛վ Աստուած ողորմութեան, մի
դատեր ասոր հոգին քու արդա-
րութեամբդ. այլ գթութեամբդ
քաւէ, ու շնորհացարժանի ըրէ,
ամէն:

Աղօթք քաւարանի հոգիներուն:

Ո՛վ Աստուած ողորմութեան, եւ տէր կենդանեաց եւ մեռելոց, կ'ազազեմ քեզի պաղատելով, քու արարչական սիրովդ ողորմէ մեր ննչեցելոց: Յիշէ տէր, որ դուն անբաւ գթութեամբդ ստեղծեցիր, ու միածին որդւոյդ դառն չարչարանքներովն ու մահուամբը փրկեցիր, ու արքայութեանդ ժառանգը ըրիր. բայց հիմա անոնց ողորմութեանդ դուռը, ու ազատէ ան սոսկալի տանջանքներէն, որ իրենց մեղացը համար արժանաւորեցան: Լսէ ողորմած տէր, անոնց ողորմուկ ձայնը, որ գիշեր ցորեկ անմխիթար քեզի կ'ազազակեն, առ Յիսուսին արիւնէն կաթիլ մը, ու խառնէ անոնց թափած արցունքներուն հետ, որ աստուածային արդարութեանդ բաւական հատուցում ըլլայ:

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, քու

սրտիդ մեծագոյն տրտմութեանը
համար՝ որ գեթ սեմանի պարտեզին
մէջ քաշեցիր, ազատէ քաւարանի
մէջ եղած հոգիները: Ո՛վ փրկիչ
իմ Յիսուս, քու կին խիստ ձաղա-
նացդ, փշեղէն պսակիդ, ու ցա-
ւագին նախատանացդ համար ա-
զատէ մեր ծնողաց, եղբարց ու
բարեկամաց հոգիները: Ո՛վ փրկիչ
իմ Յիսուս, քու սրբազան
վէրքերուդ, ու թափած անգին
արեանդ համար ազատէ քաւարա-
նէն ամէն ննջեցեալները, մանա-
ւանդ անյիշատակ հոգիները, որ
մեծապէս օգնութեան կարօտ են:
Գթած Յիսուս, դուն ամենուն ալ
յաւիտենական հանգիստ պար-
գեւէ. ու բարեխօսութեամբ
գթած մօրդ քու սուրբ տեսու-
թեանդ արժանի ըրէ, որ քեզ
սրբոց հետ միշտ փառաւորեն,
ամէն:

Հարական:

Ահեղ խորհուրդ քահանային
բազկատարած կայր ի բեմին ա-
ռաջի սուրբ սեղանոյն. հուր շի-
ջանի խաւարմերժի. տրտմեալ հո-
գիքն ուրախանան. զի թողութիւն
մեղաց լինի. ողորմած տէր ողոր-
մեա՛ հոգւոցն մեր ննջեցելոց:

Աղօթք նեղութեան տտենը:

Ո՛վ հայր գթութեան եւ Աստու-
ած ողորմութեան, նայէ խեղճու-
թեանս, ու լսէ սրտիս հեծութիւն-
ները. աչուրներս քեզի կը վերցը-
նեմ, ինչու որ քեզմէ ի զատ մէկէ
մը մտիթարութիւն չունիմ: Նե-
ղութիւնները չորս գիս առեր են,
դու ես տէր իմ միակ յոյսս. քա-
շած նեղութիւններս քեզի յայտ-
նի են, ու մինակ քու ձեռքդ կըր-
նայ աս վէրքը բժշկել: Գուն ա-
ղէկ գիտես տէր իմ սիրտս, ու

կը տեսնես տկարութիւնս. անոր
համար ես ալ ամենասիրելի որդ-
ւոյդ հետ կ'աղաչեմ քեզի. Հայր,
անցն' զբաժանիս զայս յինէն. Բայց ո՛չ
որդես ես կասիմ, այլ որդես դու:

Բայց թէ որ տէր իմ ուզես
վրաս ներդութիւն խաւրել. ինչ
կարող եմ քեզի դէմ գանգատ
ընել. որովհետեւ մեղանչելուս հա-
մար դժոխքի արժանի էի: Ա՛րչափ
որ վիշտ տաս ինձի տէր աս աշ-
խարհքիս մէջ, ամէնն ալ քիչ են,
մանաւանդ շնորհք են. ինչու որ
անով ըրածներուս ներում կը
շնորհես, ու պատիժները կը քա-
ւես: Օրհնեալ ըլլաս ո՛վ բարե-
գութ Աստուած իմ, որ աս ներդու-
թիւնը ինձի խրկեցիր. շնորհակալ
կ'ըլլամ ու երկիրպագանեմ քու
մարդասիրութեանդ եւ աստուա-
ծային խնամոցդ. ու աս անմխիթար
սիրտս քու ձեռքդ կը յանձնեմ:
Ա՛վ ողորմած տէր, ուժ տուր ինձի,
որ սիրով համբերեմ: Յիսուսին

չպատմուելու չարչարանքներն օրինակ ըլլան ինձի, ու աս քաշած պզտի նեղութիւնս ալ անոր չարչարանքներուն հետ քեզի կը նուիրեմ, որ քեզի հաճոյ ու ընդունելի ըլլան, ամէն:

Սաղմոս:

Աստուած Աստուած իմ, նայեա՛ առ իս. ընդէր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմէ վասն բանից յանցանաց իմոց:

Ի քեզ անկայ ես յարգանդի, յորովայնի մօր իմոյ. դու ես Աստուած իմ:

Մի ի բացեայ առնիր յինէն. զի նեղութիւնք մերձեալ են. եւ ոչ ոք է որ օգնէ ինձ:

Մինչեւ յերբ տէր մոռանաս զիս ի սպառ. մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Օտար թիր եւ յայեաց տէր յիրաւունս իմ, Աստուած իմ եւ

տէր իմ ի դատաստանս իմ.
Եւ իրաւ արա՛ ինձ ըստ ար-
դարութեան քում տէր Աս-
տուած իմ:

Մի ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ, եւ մի ասասցեն ի սիրտս
իւրեանց, թէ վա՛շ վա՛շ ան-
ձանց մերոց զի ընկլուզաք զնա:

Ընդէր տէր կացեր ի հեռաստանէ,
անտես արարեր ի դէպ նե-
ղութեան ժամանակի:


Նեղութիւնք սրտի իմոյ բազում
եղեն յոյժ. եւ ի վշտաց իմոց
հան զիս:

Ողորմեա ինձ տէր, զի առ քեզ
աղաղակեցի, զօրհանապազ
ուրախ արա՛ զանձն ծառայի
քո, զի առ քեզ տէր համ-
բարձի զանձն իմ:

Օ ի դու տէր քաղցր եւ ուղիղ
ես. բազում ողորմ առ ամենե-
սեան, որք կարդան առ քեզ:

ՅԱԻԵԼՈՒԱՄ

Ա Ղ Օ Թ Ի Յ



ՄԱՂԹԱՆԲ

ԱՌ ՍՈՒՐԻ ԿՈՅՍՆ

Ողջ լեր թագուհի՛ մայր ողորմու-
թեան, կեանք, քաղցրութիւն եւ
յոյս մեր, ողջ լեր. առ քեզ գո-
չեմք աքսորեալ որդիքս Եւայի,
առ քեզ հառաչեմք հեծելով եւ
ողբալով յայսմ՝ արտասուաց վայ-
րի. արդ՝ ո՛վ բարեխօս մեր դարձո՛
առ մեզ զաչս ողորմութեան քոյ.
Եւ զՅիսուս զօրհնեալ պտուղն
որովայնի քո՛ յետայսր աքսորանաց
ցոյց մեզ, ո՛վ գթած, ո՛վ բարե-
գութ, ո՛վ քաղցր կոյս Մարիամ:
Աղաչեա՛ վասն մեր սուրբ Աս-
տուածածին, զի արժանի լիցուք
խոստմանցն Քրիստոսի. Ամէն:

Ողջոյն թագուհի երկնաւորաց.
մայր թագաւորին հրեշտակաց,
ո՛վ Մարիամ ծաղիկ կուսանաց,
որպէ՛ս զվարդ եւ զշուշանս, սփռեա
զաղաչանս մեր առաջի որդւոյ քոյ

վասն փրկութեան հաւատացելոց .
Ամէն :

() րհնեսցէ զմեզ սրբուհի կոյս
Մարիամ հանդերձ գթած զաւա-
կաւն իւրով . Ամէն :

Բարեբանութիւն առ սուրբ Աստուա-
ծածինն :

Տէր ողորմեաց .

Քրիստոս ողորմեաց .

Տէր ողորմեաց .

Քրիստոս լուր մեզ .

Քրիստոս անսա՛ մեզ .

Հայր երկնաւոր Աստուած . ողոր-
մեաց մեզ .

Արդի փրկիչ աշխարհի Աստուած .
ողորմեաց մեզ .

Հոգիդ սուրբ Աստուած . ողոր-
մեաց մեզ .

Սուրբ Երրորդութիւն մի Աստու-
ած . ողորմեաց մեզ .

Սրբուհի Մարիամ . աղօթեա՛ վասն
մեր .

Սուրբ Աստուածածին	աղօ.
Սուրբ Կոյս Կուսանաց	աղօ.
Մայր Քրիստոսի	աղօ.
Մայր աստուածային շնորհաց	աղօ.
Մայր մաքուր	աղօ.
Մայր սուրբ	աղօ.
Մայր անարատ	աղօ.
Մայր անբիծ	աղօ.
Մայր սիրելի	աղօ.
Մայր սքանչելի	աղօ.
Մայր արարչին	աղօ.
Մայր փրկչին	աղօ.
Կոյս իմաստուն	աղօ.
Կոյս յարգոյ	աղօ.
Կոյս քարոզելի	աղօ.
Կոյս հղօր	աղօ.
Կոյս գթած	աղօ.
Կոյս հաւատարիմ	աղօ.
Հայելի արդարութեան	աղօ.
Ըթող իմաստութեան	աղօ.
Պատճառ մերոյ խնդութեան	աղօ.
Ընօթ հոգեւորական	աղօ.
Ընօթ պատուելի	աղօ.

Անօթ ընտիր աստուածայաշ- տու թեան	աղօ .
Այրդ խորհրդական	աղօ .
Աշտարակ դաւ թեան	աղօ .
Աշտարակ փղոսկրեայ	աղօ .
Տուն ոսկեղէն	աղօ .
Տապանակ ուխտի	աղօ .
Դուռն երկնից	աղօ .
Աստղ առաւօտեան	աղօ .
Առողջութիւն հիւանդաց	աղօ .
Ապաստան մեղաւորաց	աղօ .
Ախիթարիչ վշտացելոց	աղօ .
() գնական քրիստոնէից	աղօ .
Թագուհի հրեշտակաց	աղօ .
Թագուհի նահապետաց	աղօ .
Թագուհի մարգարէից	աղօ .
Թագուհի առաքելոց	աղօ .
Թագուհի մարտիրոսաց	աղօ .
Թագուհի խոստովանողաց	աղօ .
Թագուհի կուսանաց	աղօ .
Թագուհի ամենայն սրբոց	աղօ .
Թագուհի առանց արատոյ մե- ղաց յղացեալ	աղօ .
Պահպանիչ որդեգրաց	աղօ .

Գառն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի. խնայեա՛ ի մեզ
տէր.

Գառն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի. անսա՛ մեզ
տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի. ողորմեաց՝ մեզ :
Յիսուս լո՛ւր մեզ . Քրիստոս անսա՛
մեզ :

Աղօթք:

Աստուած անճառելի ողորմու-
թեան, որ ոչ միայն մարդ, այլև
որդի մարդոյ լինել հաճեցար. եւ
ճնանելով ի կուսէ զմայր ի յեր-
կրիստացար, որ զԱստուած ունէիր
հայր ի յերկինս. տո՛ւր մեզ աղա-
չեմք՝ զյիշատակ նորա յօժա-
րութեամբ կատարել, զմայրութիւն
նորա գերագոյն յարգանօք պա-
տուել, գերազանցագոյն վսեմու-
թեան նորա զմեզ խոնարհու-

Թեամբ հպատակել, որ զքեզ
հոգևով սրբով յղացաւ. զքեզ
կուսուԹեամբ ծնաւ. եւ զքեզ ի
յերկրի ինքեան հնազանդ կալաւ՝
զտէրդ մեր Յիսուս Քրիստոս: Ար
կենդանի ես եւ Թագաւորես ընդ
հօր եւ ընդ սրբոյ հոգւոյն ի յա-
ւիտեանս:

Ընդ հովանեաւ պաշտպանու-
Թեան քո ապաւինիմք սուրբ Աս-
տուածածին, զաղաչանս մեր միան-
տես առներ ի կարիս մեր. այլ միշտ
փրկեա՛ զմեզ յամենայն վտանգից՝
փառաւորեալ եւ օրհնեալ միշտ
կոյս:

Ընկանիմք առաջի քո Աստուա-
ծածին, եւ աղաչեմք զանարատ
զկոյսդ: Բարեխօսեա՛ վասն ան-
ձանց մերոց, եւ աղաչեա՛ զմիա-
ծին որդիդ: Փրկել զմեզ ի փոր-
ձուԹենէ, եւ յամենայն վտանգից
մերոց:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Առ Սուրբ կոյս Աստուածածինը:

Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, եւ ցըն-
ծութիւն աշխարհի ծնար զԲանն
Աստուած աղաչեմք: Մայր սուրբ
բարեխօսեա:

Մղաչեա վասն մեր զառ ի քէն
զմարմնացեալն Աստուած, որ խո-
նարհեցաւ ի հայրական ծոցոյ,
էառ մարմին ըստ մարդկային բնու-
թեանս՝ առնել խաղաղութիւն
յերկինս, եւ յերկրի. աղա:

Մղաչեա: Ներել մեզ՝ անտես
առնել զյանցանս մեր, եւ տալ
օգնականութիւն ընդդիմակաց լի-
նել հակառակամարտիցն ի պատե-
րազմի. աղա:

Մղաչեա: Զի լուեսցեն պատե-
րազմունք, դադարեսցին յարձակ-
մունք թշնամեաց, տնկեսցի սէր
եւ արդարութիւն ի յերկրի. աղա:

Աղաչեա: Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց՝ առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղա:

Աղաչեա: Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ՝ շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից՝ պահել անարատ մինչեւ յօրերեւելոյ գալստեան իւրոյ. աղա:

Աղաչեա վասն մեր Արքուհի զմիածին քո զՍրգին: Եւ վասն հոգւոցն հանգուցելոց ընդունել յարքայութիւնն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն. աղա:

Յիշեա տէր եւ ողորմեա:

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Տուր մեզ, Տէր Աստուած մեր:

Օ, անձինս մեր եւ զմիմեանս

տեառն Աստուծոյ ամենակալին
յանձն արասցուք :

Քեզ տեառնդ յանձն եղիցուք :

Ողորմեաց մեզ , տէր Աստուած
մեր , ըստ մեծի ողորմութեան քում ,
ասասցուք ամենեքեան միաբանու-
թեամբ :

Տէր ողորմեա , Տէր ողորմեա ,
Մայր սուրբ բարեխօսեա առ Տէր
վասն մեր :

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւա-
տացելոյ ի Քրիստոս զոր արարեալ
է տեառն Ներսեսի Հայոց կաթո-
ղիկոսի :

Հաւատով խոստովանիմ , եւ եր-
կիրպագանեմ , քեզ հայր եւ որդի
եւ սուրբ հոգի , անեղձ եւ անմահ
բնութիւն . արարիչ հրեշտակաց .
եւ մարդկան , եւ ամենայն եղելոց .
ողորմեա՛ քո արարածոցս :

Հաւատով խոստովանիմ , եւ
երկիրպագանեմ քեզ , անբաժա-

նելի լոյս, միասնական սուրբ եր-
րորդութիւն՝ եւ մի Աստուածու-
թիւն, արարիչ լուսոյ՝ եւ հալա-
ծիչ խաւարի. հալածեալ ի հոգւոյ
իմմէ զխաւար մեղաց՝ եւ անգի-
տութեան, լուսաւորեալ զմիտս իմ
ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ
ի հաճոյս, եւ ընդունել ի քէն
զխնդրուածս իմ. եւ ողորմեալ ինձ
բազմամեղիս:

Հայր երկնաւոր՝ Աստուած
ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ
քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչ-
խարին, մեղայ յերկինս՝ եւ առաջի
քո. ընկալ զիս որպէս զանառակ
որդին՝ եւ զգեցո՛ ինձ զպատմու-
ճանն զառաջին՝ զոր մերկացայ մե-
ղօք. եւ ողորմեալ քո արարածոց,
եւ ինձ բազմամեղիս:

Արդի Աստուծոյ՝ Աստուած
ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայ-
րական ծոցոյ, եւ առեր մարմին ի
սրբոյ կուսէն Մարիամայ, վասն
մերոյ փրկութեան. խաչեցար՝ եւ

Թաղեցար՝ եւ յարեար ի մեռելոց՝
եւ համբարձար առ Հայր, մեղայ
յերկինս՝ եւ առաջի քո. յիշեա՛
ղիս որպէս զաւազակն՝ յորժամ
գաս արքայութեամբ քով. եւ
ողորմեա՛:

Հոգի Աստուծոյ՝ Աստուած
ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան,
եւ ի վերնատունն. եւ լուսաւորե-
ցեր զիս մկրտութեամբ սուրբ ա-
ւազանին. մեղայ յերկինս՝ եւ ա-
ռաջի քո. մաքրեա՛ զիս վերստին
աստուածային հրով քո՝ որպէս
հրեղէն լեզուօք զառաքեալսն. եւ
ողորմեա՛:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ
մտօք իմովք՝ հոգւով եւ մարմնով
իմով. մի յիշեր զմեղս իմ զառա-
ջինս վասն անուանդ քում սրբոյ.
եւ ողորմեա՛:

Տեսօղ ամենայնի՝ մեղայ քեզ
խորհրդով բանիւ եւ գործով.
ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց.

եւ գրեա՛ զանուն իմ ի գպրու-
թեան կենաց. եւ ողորմեա՛ :

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ՝
կամաւ եւ ակամայ, գիտութեամբ
եւ անգիտութեամբ. թողութիւն
չնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ
աւազանին մինչեւ ցայսօր՝ մեղու-
ցեալ եմ առաջի աստուածու-
թեանդ քո զգայարանօք իմովք,
եւ ամենայն անգամօք մարմնոյս.
եւ ողորմեա :

Մենախնամ տէր՝ դիր պահա-
պան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝
ոչ եւս հայիլ յարատ. եւ ական-
ջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս
չարութեան. եւ բերանոյ իմոյ՝ ոչ
խօսիլ զստութիւն. եւ սրտի իմոյ՝
ոչ խորհիլ զչարութիւն. եւ ձե-
ռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւու-
թիւն. եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի
ճանապարհս անօրէնութեան. այլ
ուղղեա՛ զչարժումս սոցա լինել ըստ
պատուիրանաց քոց յամենայնի.
եւ ողորմեա :

Հուր կենդանի Գրիստոս, զՏուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց. եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել՝ եւ խօսել՝ եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց՝ ի բանից՝ եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛:

Վամեցօղ բարեաց՝ Տէր կամարար՝ մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա՛:

Մըքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօրացո՛ զսիրտ իմ՝ ատել զմեղս. եւ սիրել զքեզ

միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա՛:

Իննամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո՝ զհոգի եւ զմարմին իմ՝ ի պատրանաց մեղաց՝ ի փորձութեանց դիւաց՝ եւ ի մարդոց անիրաւաց՝ եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա՛:

Պահապան ամենայնի Քրիստոս՝ աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան՝ եւ ի գնալ ի ճանապարհ, ի ննջել՝ եւ ի յառնել. զի մի՛ երբէք սասանեցայց. եւ ողորմեա՛:

Լստուած իմ, որ բանաս զձեռն քոյ, եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛, եւ պատրաստեա՛ զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա՛:

Ղարձուցիչ մոլորելոց՝ դարձո՛ դիս ի չար սովորութեանց իմոց ի

բարի սովորութիւն, եւ բեւեռեալ
ի հոգի իմ զսոսկալի օր մահուն,
եւ զերկիւղ գեհենոյն, եւ զսէր
արքայութեանն, զի զղջացայց ի
մեղաց, եւ գործեցից զարդարու-
թիւն, եւ ողորմեալ:

Մղբիւր անմահութեան՝ աղբե-
րացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս
ապաշխարութեան, որպէս պոռնը-
կին. զի լուացից զմեզս անձին իմոյ՝
յառաջ քան զելանելն իմ յաշ-
խարհէս, եւ ողորմեալ:

Պարգեւիչ ողորմութեան՝ պար-
գեւեալ ինձ ուղղափառ հաւատով
եւ բարի գործով՝ եւ սուրբ մար-
մնոյ եւ արեան քո հաղորդու-
թեամբ դալ առ քեզ, եւ ողորմեալ:

Վարերար տէր՝ հրեշտակի
բարւոյ յանձնարասցես զիս, քաղ-
ցրութեամբ աւանդել զհոգի իմ,
եւ անխռով անցուցանել ընդ չա-
րութիւն այսոցն, որք են ի ներքոյ
երկնից, եւ ողորմեալ:

Մյս ճշմարիտ Քրիստոս՝ ար-

Ժանաւորեա՛ւ զՏոգի իմ ուրա-
խութեամբ տեսանել զլոյս փառաց
քոց ի կոչման աւուրն. եւ հանգ-
չել լուսով բարեաց՝ յօթեվանս
արդարոց՝ մինչեւ յօրմեծի գալըս-
տեան քո. եւ ողորմեա :

Վատաւոր արդար յորժամ
գաս փառօք հօրդատել զկենդա-
նիս եւ զմեռեալս. մի մտաներ ի
դատաստան ընդ ծառայիս քո, այլ
փրկեա՛ զիս յաւիտենական հրոյն,
եւ լսելի արա ինձ զերանաւէտ կո-
չումն արդարոց յերկնից արքայ-
ութիւնդ. եւ ողորմեա՛ :

Մենողորմ տէր՝ ողորմեա՛ ա-
մենայն հաւատացելոց ի քեզ, ի-
մոց եւ օտարաց, ծանօթից՝ եւ
անծանօթից, կենդանեաց եւ մե-
ռելոց. շնորհեա՛ եւ թշնամեաց ի-
մոց եւ ատելեաց զթողութիւն որ
առ իս յանցանաց. եւ դարձո՛ զնոսա
ի չարեացն, զոր ունին վասն իմ,
զի ողորմութեան քում արժանի
եղիցին. եւ ողորմեա՛ :

Փառաւորեալ տէր՝ ընկալ զազանս ծառայիս քո՝ եւ կատարեալ ի բարի զինդրուածս իմ, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, եւ Յովհաննու մկրտչին, եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, եւ սրբոց առաքելոցն՝ եւ մարգարէից՝ եւ վարդապետաց՝ եւ մարտիրոսաց՝ եւ սրբոց հայրապետաց՝ եւ ճգնաւորաց՝ եւ կուսանաց եւ ամենայն սրբոց քոց. երկնաւորաց, եւ երկրաւորաց եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Լ Ի Թ Ա Ն Ի Ա

Ի Պ Ա Տ Ի Ի

ԱՆԱՐԱՑ ՅԶՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԿՈՒՍԻՆ
ՄԱՐԻԱՄՈՒ

Տէր ողորմեաց .

Քրիստոս ողորմեաց .

Տէր ողորմեաց .

Յիսուս լուր մեզ .

Քրիստոս անսա մեզ .

Հայր երկնաւոր Աստուած . ողորմեաց մեզ .

Որդի փրկիչ աշխարհի Աստուած

ողոր .

Հոգի Սուրբ Աստուած

ողոր .

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած

ողոր .

Ընարատ Աոյս ի մէջ Համօ-

րէն կուսանաց

աղօթեա

վասն մեր .

Լ՛նարատ Կոյս ի յղութեան աղօթ .

Լ՛նարատ Գուստր Հօր Աս-
տուծոյ աղօթ .

Լ՛նարատ Մայր Որդւոյն Աս-
տուծոյ աղօթ .

Լ՛նարատ Հարսն Հոգւոյն
Սրբոյ աղօթ .

Լ՛նարատ Տաճար Ամենա-
սուրբ Երրորդութեան աղօթ .

Լ՛նարատ պատկեր իմաս-
տութեան Աստուծոյ աղօթ .

Լ՛նարատ արշալոյս Արեգա-
կանն Արդարութեան աղօթ .

Լ՛նարատ եւ կենդանի տա-
պանակ ուխտի եւ տեղի
Հանգստեան Յիսուսի
Քրիստոսի աղօթ .

Լ՛նարատ բողբոջ արմատոյն
Դաւթի աղօթ .

Լ՛նարատ Ճանապարհ որ
տանիս առ Քրիստոս աղօթ .

Լ՛նարատ Կոյս որ յաղթե-
ցեր մեղաց աղօթ .

- Լ՛նարատ կոյս որ խորտա-
կեցեր զգլուխ վիշապին աղօթ .
- Լ՛նարատ Գշխոյ երկնի եւ
երկրի աղօթ .
- Լ՛նարատ Գուռն երկնային
Երուսաղեմի աղօթ .
- Լ՛նարատ գանձապետ շնոր-
հացն Աստուծոյ աղօթ .
- Լ՛նարատ աստղ ծովու աղօթ .
- Լ՛նարատ աշտարակ պատե-
րազմոզ եկեղեցւոյ աղօթ .
- Լ՛նարատ վարդ ի մէջ փշոց աղօթ .
- Լ՛նարատ ձիթենի ի խոր-
հրդաւոր դաշտին Աս-
տուծոյ աղօթ .
- Լ՛նարատ օրինակ ամենայն
կատարելութեանց աղօթ .
- Լ՛նարատ պատճառ երջան-
կութեան մերոյ աղօթ .
- Լ՛նարատ Սիւն հաւատոց
մերոց աղօթ .
- Լ՛նարատ աղբիւր աստուա-
ծային սիրոյ աղօթ .

- Լ՛նարատ եւ անվրէպ նշան
փրկութեան աղօթ .
- Լ՛նարատ կանոն կատարեալ
հնազանդութեան աղօթ .
- Լ՛նարատ խարիսխ ազա-
տութեան մերոյ աղօթ .
- Լ՛նարատ լոյս հրեշտակաց աղօթ .
- Լ՛նարատ պսակ նահապե-
տաց աղօթ .
- Լ՛նարատ փառք մարգա-
րէից աղօթ .
- Լ՛նարատ ուսուցիչ առա-
քելոց աղօթ .
- Լ՛նարատ զօրութիւն մար-
տիրոսաց աղօթ .
- Լ՛նարատ ապաւէն խոս-
տովանողաց աղօթ .
- Լ՛նարատ մաքրութիւն կու-
սանաց աղօթ .
- Լ՛նարատ խնդութիւն յու-
սացելոց ի քեզ աղօթ .
- Լ՛նարատ փաստաբան մե-
ղաւորաց աղօթ .

Անարատ ախոյեան յա-
հարկութիւն հերետի-
կոսաց աղօթ .

Անարատ տուն մաքրութեան
եւ զգաստութեան աղօթ .

Անարատ թագուհի յղա-
ցեալ առանց արատոյ մե-
ղաց աղօթ .

Անարատ մայր եւ խնամա-
կալ փոքրիկ հասարակու-
թեան մերոյ աղօթ .

Պառն Աստուծոյ, որ բառ-
նաս զմեզս աշխարհի
խնայեա ի մեզ Տէր

Պառն Աստուծոյ, որ բառ-
նաս զմեզս աշխարհի
անսա մեզ Տէր

Պառն Աստուծոյ, որ բառ-
նաս զմեզս աշխարհի
ողորմեաց մեզ :

Ավ կոյս, ամենեւին սուրբ եւ
ամենեւին անարատ, բարեխօս լեր
վասն մեր, զի արժանի լիցուք

խոստմանցն Յիսուսի քրիստոսի
Որդւոյ քոյ:

Աղօթք:

Եստուած ամենակալ եւ յա-
ւիտենական, որ շնորհեցեր եկե-
ղեցւոյ քում տօնել զփառս անա-
րատ յղութեան Մօր Միածնի
որդւոյ քո. աղաչեմք զքեզ, զի
որք միանգամ զնոյն մեծարեալ
պատուիցեն յերկրի, եւ յաւի-
տենական երջանկութեան արժա-
նասցին յերկինս. ամէն:

Մայր կոյս, որ սուրբ գտար
միշտ յորմէ եւ իցէ, եթէ ի կա-
մաւորական եւ եթէ ի սկզբնական
արատոյ. քեզ յանձն առնեմ եւ
աւանդեմ զմաքրութիւն սրտի
իմոյ:

Ես աղօթեալ Քրիստոսեանցոցն
ըսողներուն՝ Պիոս Թ. Սրբազան Քա-
նանայապետոյ՝ հարիւր օրոսան ներո-
ղութիւն շնորհած է, է 26 Նոյ. 1854:

Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ առ սուրբ Աստուածածինն :

Եւ արդ ի վերայ այսքանեաց յուսահատութեանց եւ ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ հոգւով թախծութեան իսպառ, աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին. հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստնմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ շքնչական, ծառ կենացն անմահից բոցեղէն սրովն պարունակեալ, ի բարձրեալն Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագոր-

ծեալ, բնակութեամբ Արդւոյն
 յարդարեալ եւ տաղաւարեալ.
 միածինն Հօր եւ քեզ անդրանիկ,
 որդի քո ծննդեամբ եւ տէր ա-
 ըրարչութեամբ. ընդ անաղտ մաք-
 րութեանդ եւ անբիծ բարի, ընդ
 անարատ սրբութեանդ եւ խնա-
 մակալ բարեխօս: Ընկալ զմաղ-
 թանս այսր աղերսանաց քում
 դաւանողիս, եւ մատո՛ ընծայեա՛
 ընդ նմին խառնեալ զբանն իմ
 նախնի մեծիդ ներբողի ի քոյդ
 պաղատանս. հիւսեա՛ միացո՛ զմե-
 ղուցելոյս դառն հեծութիւն ընդ
 քումդ երջանիկ եւ խնկաւորեալ
 հայցուածոց, տո՛ւնկդ կենաց
 պտղոյն օրհնութեան. զի ի քէն
 միշտ օգնեալ եւ բարեգործեալ.
 եւ ի մաքրական քո ծնելութիւնդ
 ապաւինեալ եւ լուսաւորեալ, կե-
 ցից Քրիստոսի որդւոյ քո եւ
 տեառն:

() Ժանդակեա՛ թեւոցդ աղօ-
 թիւք, խոստովանեալ մայրդ կեն-

դանեաց, եւ յեւրիցն իմ յերկրէս
հովտէ, առանց լլկանաց հետեւել
ի կեանս օթեւանացդ պատրաս-
տութեան. զի թեթեւացի կա-
տարածն իմ ինձ ծանրացելոյս ա-
նօրէնութեամբ: Արասցես տօն
ինձ բերկրութեան զօրն իմ տագ-
նապի, ողջացուցիչ երկանցն Եւայի.
բարեխօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛, զի
ըստ անճառելի մաքրութեանդ եւ
ահա զբանիդ հաւատամ զընդու-
նելութիւն: Արտասուօք օգնեա՛
վտանդեցելոյս, գովեալդ ի կա-
նայս. ծնունբ խոնարհեցո առ իմ
հաշտութիւն, ծնողդ Աստուծոյ
ընդ իմում թշուառիս հոգա՛, խո-
րան բարձրելոյն. ձեռն տուր ան-
կելոյս, տաճար երկնային՝ փա-
ռաւորեա՛ զօրդիդ քո ի քեզ՝ Աս-
տուածօրէն ինձ հրաշագործել
քաւութիւն եւ ողորմութիւն,
աղախին Աստուծոյ եւ մայր, բար-
ձրացի պատիւ քո ինեւ եւ ցուց-
ցի փրկութիւն իմ քեւ:

Աթէ զիս գտցես՝ տիրամայր,
Թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի, Թէ
զկորուսեալս շահեսցիս՝ անարատ,
Թէ զհարթուցեալս յանձանձես-
ցես՝ երջանիկ, Թէ զամաչեցեալս
յառաջ մատուցես՝ բարեշնորհ,
Թէ յուսահատելոյս ինձ միջնոր-
դեսցես՝ միշտ սուրբ կոյս, Թէ
զմերժեալս ընտանեցուցես՝ մե-
ծարեալդ յԱստուծոյ, Թէ յիս
ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ
անիծից, Թէ զծփեալս հաստա-
տեսցես՝ հանգիստ, Թէ ի խոռ-
վութեանցս յուզմանց փոխեսցես
զիս՝ խաղաղարար, Թէ վրիպելոյս
ինձ հնարաւորեսցես՝ գովեալ,
Թէ վասն իմ մտցես ի հանդէս՝
մահու նահանջիչ, Թէ զդառնու-
թիւնս իմ անուշեսցես՝ քաղցր-
ութիւն, Թէ զբաժանման իմ
խտրոց քակտեսցես՝ հաշտութիւն,
Թէ զանմաքրութիւնս իմ բարձ-
ցես՝ եղծման ընդոտնիչ, Թէ զմատ-
նեալս մահու փրկեսցես՝ կենդա-

նի լոյս, թէ զլալեացս ձայն հատ-
ցես՝ բերկրութիւն, թէ զխորտա-
կեալս կազդուրեսցես՝ դեղ կե-
նաց, թէ ի կործանեալս յիս ակ-
նարկեսցես՝ հոգելից, թէ ողոր-
մութեամբ ինձ պատահեսցես՝
կտակ նուիրեալ: Օրհնեալ միայն
ի շրթունս ամբիծս լեզուաց եր-
ջանկաց, ահա՛ կաթիլ մի կաթին
քումդ կուսութեան յանձն իմ
անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ,
մայրդ բարձրելոյ տեառն Յիսու-
սի արարչին երկնի, եւ բնաւին
երկրի, զոր անձառապէս ծնար
բովանդակ մարմնովն, եւ համայն
աստուածութեամբն, որ փառա-
ւորեալ է ընդ հօր, եւ հոգւոյն
սրբոյ էութեամբ, եւ անքննու-
թեամբ մերոյին բնութեամբս միա-
ցելով, յամենայն եւ յամենայ-
նում, մի յԵրրորդութենէն. նմա
փառք յաւիտենից յաւիտեանս.
ամէն:

Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ ա-
ղերս մաղթանաց խօսք ընդ Յիսուսի:

Լ.ՅԼ դու նայեա՛ ամենակարող
տէր իմ Յիսուս, յաթողոյ փա-
ռացդ եւ շնորհաց, տալով անար-
ժան քո ծառայիս զանխռով միտս՝
ի յոյս հանդերձեալ քո յուսոյդ:
Տես տէր թէ որքան վտանգիմք
յաղցաւոր կենացս կրից ի զա-
նազան հողմոց բքաբեր շնչմանց
երեքալեանն խռովութեամբ,
թշուառացեալ մտացս երեւեալ:
Չունիմ տէր, պտուղ գործոց
քեզ նուէր հաշտութեամբ. քան-
զի զոր ունել կարծէի՝ մաշեալ
պակասեաց՝ ի քում ահաւորու-
թեանդ եկեալ գիտութիւն: Եւ
ես մերկ եւ թափուր, կիսամեռ
եւ ոգեկործան միայն զմարդասի-
րութեան ոտիցդ կախիմ, բունն
հարեալ զգմանէ, եւ ոչ երբէք
զթողուլն ախորժեմ: Հան զիս ի
չարս շաւղաց. զորս բերանով ի-

մով աղարտեմ: Եւ ուսո՛ ինձ զճա-
նասպարհս քո ուղիղս, որում կա-
մօք սրտիս վկայեմ: Անկայ ի մա-
հիճս մեղաց, եւ ես ինձէն զգար-
չութիւն մեղացս բողոքեմ: Տո՛ւր
զբժշկութիւն աստացեալ հոգւոյս,
որ առողջացուցանել զայլս խաբեմ:
Զուխտս հոժեալս բանի յեկեղե-
ցիդ անդրանկաց առաջի ամենայն
երկիւղածաց քոց նուիրեմ: Աե-
րիցեն տնանկք, եւ յագեսցին ի
սմանէ, եւ օրհնեսցեն զքեզ, որ
զտէրդ խնդրեն: Զաղօտացեալ քո
լոյս բարեկամացն քոց ցուցանեմ.
յիշեսցեն սովաւ, եւ դարձցին առ
տէրդ՝ որք ի ծագաց երկրէ քումդ
գիտութեան փափագին: Քեզ
փառք՝ պարծանք եւ գրաւ աշ-
խարհի՛ ի յերկինս փառաւորեալ,
յաւիտեանս յաւիտենից:

Այլ աղօթք նորին ներսեսի:

Այլ շուրջ պատեալ ի տարա-
կուսանացս յամենայն կողմանց
սրտիւ շաղախեալքս, եւ ունկրն-
դրութեան կարօտեալքս՝ նայիմք
առ քեզ փորձ տկար բնութեանս
քահանայապետդ Յիսուս: Ա՛վ որ
վասն մեր մեղս եղեր, զի մէք լի-
ցուք վասն քո արդարութիւն: Ա՛վ
որ վասն մեր երկրաւոր եղեր, զի
մէք լիցուք վասն քո երկնաւորք:
Ա՛վ որ վասն մեր հաց եղեր, զի
մէք իճաշակելն զքեզ՝ սրբեսցուք:
Տո՛ւր զպարարեալ վշտօք մարմին
քո՝ ամենայն սրտի սրբարար կե-
րակուր: Մատուռակեան՝ զարեան
քոյ վտակ անմեղ կայլակեալ՝ որդ-
ւոց մարդկան անմեղութեան զմայ-
լումն: Չգեան զփրկական քո զխաչդ
ըօղելոցս ի ծով աշխարհիս առ
քեզ վերածիչ: Աարօտացաք շնոր-
հի սփռեան: Լքաք ի գործոց՝ քա-
ւեան: Խարխափեմք զխաւար՝ ճա-

ոագայթեա՛: Աորժանեցաք ի հա-
 ւատոց՝ հաստատեա՛: Գու ես յոյս.
 դու ես լոյս. դու ես կեանք. դու
 ես քաւութիւն. դու ինքն եւ ան-
 մահութիւն: Քեզ սպասեն յե-
 ցեալքս ի շնորհս քո: Ի քէն կա-
 րօտին առնուլ փրկութիւն խառ-
 նեալքս ի մարմինդ քո: Զքեզ
 ունին քաւիչ քահանայ՝ գնեալ
 արեամբ հօտս քո: Հայեաց յա-
 մենեսեան: Միռեա՛ զտարակու-
 սանս մեր քոյին վաստակովքդ:
 Հանդարտեցո՛ զխռովութիւնս մեր՝
 քոյին խաղաղութեամբդ: Հանգո՛
 զաշխատանս մեր ի քոյ օթեվանսդ,
 ուր դու գնացեր ո՛վ տէր. եւ
 իոստացար: Արժանացո՛ զքոյսս՝
 փառաւորել զքեզ այդր ընդ հօր,
 եւ ընդ սուրբ հոգւոյդ յաւի-
 տեանս. ամէն:

Աղօթք նորին հայրապետի առ խա-
չելեայն Յիսուս :

Մ, ո քեզ ակնարկեմ. աղբիւր
ջրոյ կենդանւոյ, եւ աղաղակեմ,
թէ ընդէր է ինձ սրբութեան ծա-
րաւիլ, երբ դու ես իմ սրբութիւն.
կամ ընդէր փափագիմ մաքրու-
թեան, մինչ դու ես իմ մաքրու-
թիւն: Այսու հետեւ ուսեալ, ե-
թէ դու ես իմաստութիւն՝ մեզ
Աստուծոյ տուեալ արգարու-
թիւն, եւ սրբութիւն, առ քեզ
ծարաւիմ, քեզ փափագիմ, քեզ
տուփամ, տուր իմ ծարաւեալ ոգ-
ւոյս զքեզ զովացումն՝ աղբիւր
ջրոյ կենդանւոյ խաղաղացելոյ ի
կեանսդ յաւիտենից: Ծարաւիմ
ըմպել ի կրկին վտակաց կողիդ,
որով եւ սրբեալ սիրով քո զմայ-
լիմ: Քաղցնում ուտել զմարմինդ,
որով կենդանացեալ անմահ ես
լինիմ: Փափագիմ ողջագուրել
զխոցուած ձեռացդ, որով հասեալ

առ քեզ պսակիմ: Տոփամ՝ ակնարկել զդէմսդ, որոյ ապտակաւն ի վիրաց իմոց բժշկիմ: Աղղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ: Նուաղեցաւ հոգի իմ ի քո անճառդ սիրոյ: Տոչորեցայ յառ քեզ տոփանացդ՝ ո՞վ վասն իմ խաչեալ: Թալկացայ, յորժամ առ քեզ ակնարկեմ՝ ո՞վ վասն իմ ապտակեալ: Եւ աղղակեմ, ցոյց ինձ զդէմս քո. լսեցո՞ ինձ զբարբառ քո, զի ձայն քո քաղցր է, եւ դէմք քո գեղեցիկ: Ե՛րբ եկից՝ երեւեցայց քեզ: Արդ՝ լուր ինձ, եւ արբեցո՞ զիս վաղվաղակի քո գիտութեամբդ եւ սիրով, զի եւ յինէն, որ հաւատամ ի քեզ, բղխեսցեն աղբիւրք ջրոց կենդանութեան:

Աղօթք առ Տէրն մեր:

Տէր Աստուած բարձրեալ ամենակալ՝ լոյս անքննին, մեծութիւն ահեղ, գթութիւն անսահմանելի,

մարդարսիրու թիւն օրհնաբանելի,
Յիսուս Աստուծոյ կենդանւոյ միա-
ծին որդի: Որ սքանչելարուեստ
հրաշիւք անպարագիրդ էակ վասն
մեր եղեր մարդ ի Կուսէն: Որ ա-
րեամբդ քո զմեզ ստացար, եւ
մարմնովդ կերակրես: Որ կար-
գեալ զայս խորհուրդ անճառելի
ուխտ կենաց անփոխադրելի սահ-
մանեցեր: Որ յանուն զենման՝
միշտ յիշատակաւ քո չարչարա-
նաց առ հայր քո բարերար աղօ-
թել զմեզ համարձակեցեր, եւ
զայս առբն շնորհաց քան զամենայն
գործոց քոց զսքանչելիսն մեծա-
ցուցեր, լոր մեզ բազմագուժ
մարդասէր, տոր զպարարեալ
վշտօք մարմինդ քո ամենայն սրտի
սրբարար կերակուր, զի զքեզ
ունին քաւիչ քահանայ գնեալ
արեամբ հօտս քո հայեա՛ յամե-
նեսեան, հանգո՛ղաշխատանս մեր ի
քո օթեվանսդ, ուր գնացեր Տէր
եւ խոստացար: Արժանացո՛ զքոյս

փառաւորել զքեզ այդր ընդ Հօր
եւ ընդ սուրբ հոգւոյդ ի յաւի-
տեանս. Ամէն :

Այլ աղօթք :

Աստուած, որ մեզ ի ներքոյ հրա-
շալի խորհրդոյ զյիշատակ չար-
չարանաց քոց թողեր, տճւր մեզ
աղաչեմք. զսուրբ խորհուրդս մար-
մնոյ եւ արեան քո այնպէս յար-
գել զիզպտուղ փրկագործութեան
քո հանապազ զգասցուք ի մեզ.
որ կենդանի ես եւ թագաւորես
ընդ Հօր եւ սուրբ հոգւոյդ ի յա-
ւիտեանս. Ամէն :

Ներգործութիւն հաւատոյ :

Ես հաստատուն կը հաւտամ, ին-
չու որ Աստուած որ է անսխալ
ճշմարտութիւն՝ ասանկ յայտնեց
սուրբ կաթուղիկէ եկեղեցւոյն,
ու անով մեզի ալ կը սորվեցընէ,

Թէ Աստուած մէկ է, ու երեք հա-
ւասար՝ բայց զանազանեալ անձն
ունի, որ կը կոչուին Հայր, Արդի
ու Հոգին սուրբ: Եւ Թէ Արդին
Աստուած մարդ եղաւ Հոգւոյն
սրբոյ զօրութեամբը մարմին ու
հոգի առաւ ամենամաքուր կոյս
Մարիամու արգանդին մէջ. եւ Թէ
մեզի համար խաչին վրայ մեռաւ.
յարեաւ ու երկինքը վերացաւ,
ուսկից որ պիտի գայ աշխրոքիս
վերջը, Թէ մեռեալները ու Թէ
կենդանիները դատելու համար.
որ արդարներուն յաւիտենական
արքայութիւն տայ, ու մեղաւոր-
ներուն դժոխք: Անոր համար կը
հաւտամ ամէն բանին, որնոր նոյն
սուրբ եկեղեցին կը հաւտայ ու կը
սորվեցընէ:

Ներգործութիւն յուսոյ:

Ո՛վ Աստուած իմ, որովհետեւ
ամենակարող ես, անչափ բարի ու

ողորմած, կը յուսամ որ տեսան
մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիս-
տոսի չարչարանաց արդեամբը իս
յաւիտենական կենաց արժանի
կ'ընես, ինչպէս որ խոստացար
դուն ամենուն ալ, որոնք որ բարե-
պաշտութեամբ քրիստոնէաբար
կ'ապրին. որ ես ալ քու օգնակա-
նութեամբդ առաջադրեմ նոյնը
կատարելու:

Ներգործութիւն սիրոյ:

Ո՛վ Աստուած իմ, որովհետեւ
գերագոյն ու բոլորովին բարի ես,
կը սիրեմ քեզ բոլոր սրտանց ա-
մէն բանէն վեր, ու պատրաստ եմ
ամէն բան կորսընցընելու, քան
թէ քեզ վշտացնել. ու քու սի-
րոյդ համար կ'ուզեմ սիրել նաեւ
ընկերս իմ անձինս պէս:

Ներդործութիւն զղջման:

Ո՛վ Աստուած իմ, որովհետեւ
ծայրագոյն բարի ես, անոր համար
ամէն բանէն վեր քեզ կը սիրեմ,
կը զղջամ ու կը ցաւիմ ճշմար-
տապէս քեզ վշտացընելուս, ու
հաստատուն կը յառաջադրեմ
քու սուրբ շնորհօքդ ասկէց ետ-
քը ալ չմեղանչել, ու մասնաւո-
րաբար մեղաց պատճառներէն
փախչիլ:

ՅԱՆԿ ԱՂՕԹԻՑ

Աղօթեալ առաւօտեան անկողինէն եւ շաբաթ արեւը :	1
Աղօթեալ շնորհակալութեան :	4
Աղօթեալ երեկոյեան :	14
Շաբաթեան արեւմտեան հասարակ աղօթեալ :	21
Շաբաթեան արեւմտեան աղօթեալ ի պատիւ Կոստանդնուպոլսոյ :	47
Աղօթեալ սրբոց պատարաստիցն :	67
Աղօթեալ արեւմտեան հասարակաց եւ արեւելեան հասարակաց :	102
Պատարաստութեան խորհրդանշան ընդհանուր :	105
Աղօթեալ զհոգեւորականաց շնորհակալութեան համար :	113
Աղօթեալ զհոգեւորականաց եւ արեւելեան հասարակաց շնորհակալութեան :	124
Աղօթեալ արեւմտեան աղօթեալ արեւմտեան հասարակաց շնորհակալութեան խորհրդանշան ընդհանուր :	129
Պատարաստութեան առաւօտեան հասարակութեան :	171
Աղօթեալ շնորհակալութեան հասարակ արեւմտեան շնորհակալութեան եւ արեւելեան ընդհանուր :	184

Աղօթք յիշատակս շարժարանաց Քրիստոսի :	209
Աղօթք որեքոնական փօնից :	
Ի փօնի թննդեան Քրիստոսի :	213
Սրբ փարի :	216
Ի փօնի անուանադրութեան Յի- սոսի :	219
Ի փօնի յայտնութեան :	221
Ի փօնի Վերարութեան :	224
Ի փօնի արեարն ընդարարակի :	227
Աղօթք ի Տիմ ալահա :	
Առաջին կերակի :	230
Երկրորդ կերակի :	236
Երրորդ կերակի :	242
Չորրորդ կերակի :	248
Հինգերորդ կերակի :	254
Սեցերորդ կերակի :	259
Օսկաղարդ :	264
Առաջ երկուշաբթի :	266
Առաջ երեքշաբթի :	271
Առաջ չորեքշաբթի :	278
Առաջ հինգշաբթի :	283
Առաջ ուրբաթ :	289
Առաջ շաբաթ :	294

Ի քօնի զարհիւն : Աւազիւն օր :	300
Երկրորդ օր :	302
Երրորդ օր :	306
Ի քօնի աւերման :	309
Ի քօնի հասթարյման :	312
Ի քօնի հոգեգալարեան : Աւա-	
զիւն օր :	315
Երկրորդ օր :	318
Ի քօնի այցելութեան :	321
Ի քօնի վարդազարհիւն : Աւազիւն օր :	323
Երկրորդ օր :	325
Ի քօնի վերադրման : Աւազիւն օր :	328
Երկրորդ օր :	331
Ի քօնի ծննդեան կոտորիւն :	334
Ի պարտաւորեան Մարիամոն :	336
Ի քօնի խաղիւն : Աւազիւն օր :	339
Երկրորդ օր :	340
Ի քօնի ընծայման :	342
Ի քօնի անարար յղութեան :	344
Աղօթք Աստուածածնայ Եօթը	
խնդրութեանը :	346
Աղօթք ասեկայն սրբոց :	354
Աղօթք արարին Յովսէփ :	356

Աղօթք + արարքն Յովնաննէս Տիրարիչ :	358
Աղօթք + արարքն Պետրոս էս Պօղոս :	360
Աղօթք + արարքն Ստեփանոս :	361
Աղօթք + արարքն հայրն Գրիգոր :	363
Աղօթք + արարքն Յակովբ Մժեմայ հայրապետ :	365
Աղօթք + արարքն Անտոն Տփնասոր :	367
Աղօթք + արարքն Անտոն պա- պոսապի :	368
Աղօթք + արարքն Աննա :	370
Աղօթք + արարքն Հովնիսիէ էս Գայիաննէ :	371
Աղօթք + արարքն պապական արարքն :	372
Աղօթք + արարքն Խոյս ցասոց Կոստին :	375
Աղօթք + Յիսոսասի հինգ վերաբերուն :	387
Աղօթք + արարքն իսկիւնն Քրիստոս :	393
Աղօթք + արարքն Յիսոսասի :	405
Պատրաստութիւն Տահրասան :	406
Աղօթք + հիւանդներոս համար :	411
Աղօթք + հոգեվարմաներոս համար :	419

Աղօթք + աւարանի հոգիներուն :	427
Աղօթք ներդո-նեան ապեւնը :	429
Յաւելո-ւած աղօթից :	
Ո՛ղջ լէր Ռաբո-հի :	435
Տեր ողորօեաց :	436
Հաւատարմ խոսարողանի՛ճ :	443
Լիճանիա անարատ Յղո-նեան Ս . Կո-սին :	452
Աղօթք արքայն Գրեգորի Նարեկա- ցոյ ար-ւոտ-րէ Աստուածա- ձինն :	458
Արքայն Ներսէօի զանազան աղօթք :	463
Աղօթք աւ արեւ Տեր :	468
Ներգործո-նի-ն հաւատոյ, յո- ւոյ, սիրոյ եւ զղջման :	470









